



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Թ. Պատկանալսէս.
Պատճարոյնէ Հայրս Ազգի
Հայրս սեպտ Պատճարոյնէր.


Մ. Պատճարոյնէր. 1863թ.

Ըստ

938

3 11 B

5.5



Տո ծովանոցն Լասպրեբոս
Արեւմտայն

5 OCT 2011

123

ՊԱՏԱՐՈՒԹԻՒՆ


Հ Ա Յ Ո Յ

Ա Ջ Գ Ի

ԱՆՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

9(247.925)
7-29

1863



Ա. Այսպիսով

125 464

6 2012

938

ws.

ՀԱՅՈՑ ԱԶԳԻ

ՊԵՏԱՌԻԹԻՒՆԸ

Աշխատանքի վերջը



1863

ՍԱՆԿՏՊԵՏԵՐՈՒՐԻ

1863

ՍԱՆԿՏՊԵՏԵՐՈՒՐԻ

1863

501

2



4-920 80302

23446400230

Дозволено Ценсурою. С-Петербургъ, 22 мая 1863 г.



938-2012
4860 | 38 | 18933

4-920 80302

501

И. ПУБЛИКАЦИИ И ПРОДАЖА ПЕЧАТНЫХЪ ДѢЛЪ.

ՀԱՅՈՅ ԱՊՏԻ ՊԵՏԱՌԻԹԻՒՆԸ

1

Հայաստանի գիրքը, սահմանքը, տարածութիւնը, գետերը, լճերը կամ
ծովակները, լեռները, բերքը, աշխարհագրական հին բաժանմունքը,
Թագաւորների կամ իշխանների ցեղապետութիւնը:

ՀԱՅՏԱՏՏՆԸ Ասիայի արևմտեան ծայրումը լինելով, ուր որ տիեզերաց այս լայնատարած մասը բաժանվում է Եւրոպայէն՝ իւր հիւսիսային կողմը ունի Կովկասու սարերը և Սև-Ծովի հարաւահայեաց եղերքը, արևելեան կողմը ունի Կասպից ծովը և Պարսից երկիրը, որ առաջ ասվում էր Մարաց կամ Մեդաց երկիր. հարաւային կողմը ունի Պարսից երկրի սահմանակից Ասորեստանը, Ասորոց Միջագետքը և Ասորիքը. իսկ արևմտեան կողմը՝ այն երկիրները, որ կան Հելլէսպոնտոսի, Պրոպոնտոսի և Կոնստանտնուպոլսոյ նեղուցի արևելեան ծովեղերքումը: Առհասարակ համարվում է Հայաստանը շրջապատած այս ծովերէն, արևելեան-հիւսիսէն՝ Կասպից ծովէն, արևմտեան-հարաւէն՝ Միջերկրեաց ծովի արևելեան ծայրէն և հարաւային կողմէն՝ Կարսի-Ծովէն և Պարսկային ծոցէն:

Հայաստանի երկայնութիւնը արևելքէն մինչև արևմուտք է իբր 16 աստիճան. լայնութիւնը՝ հիւսիսէն դէպի հարաւ իբր 5 աստիճան և պարունակում է իւր մէջ իբր 25,000 քառակուսի մղոն աշխարհագրական:

Հայաստան իւր մէջ ունի արևմտեան Ասիայի երեւելի գետերը՝ Եփրատ և Տիգրիս, որ միացած ընկնում են Պարսից ծոցը, Երասխ, որ կուր գետի հետ միաւորուած՝ մտնում է Կասպից ծով, և փոսի կամ Ռիոն, Ճորոխ, Իջիւ, և Աւլի գետերը, որ հոսում են Պոնտոսի ծովը:

Լճերն են՝ Արշակունի, Արշուի, և Սեանայ ձկնառատ ծովակը, և այլ մանր ձկնաբեր և աղեհան լճեր: Ունի հանքեր և հանքային ջրեր և ջերմուկներ, ձկնորսութեան տեղեր և զովարար ամառանոցներ:

Գլխաւոր լեռներն են՝ Միջ ու փոքր Մասիս, Արագած, Ծաղկալեւան, Նայաս, Սեպուհ, և այլ միաշար գոտիք լեռանց, որ Հայաստանը հաւասարում են աշխարհի մի քանի բարձր երկիրներին:

Կեանարոյս բերքն նոյն են, ինչ որ Կասպից, Պոնտոսի և Միջերկեայ ծովերու, Հայաստանի սահմանակից, ծովափնեայ երկիրներն ունին, որոց մէջ գլխաւորքն են՝ ցորեն, հաճար, գարի, ընդեղէնք, բազմատեսակ արմտիք, բրինձ, բամբակ, ապրեշում, տորոն, լեղակ, կարմիր որդան, աղ, պաղլեղ, խաղող, ուստի և գինի աղնիւ ու առատ, կանանչարօտ և սիդաւէտ հովիտներ, անտառներ, աղնիւ փայտեր, օգտակար և համեղ արմատներ, խաշնդեղ, անխոն, ծխախոտ, մեղր, մեղրամոմ: Ծառոց պտուղք՝ խնձոր, տանձ, սերգևիլ, ծիրան, դեղձ, նուռն, նուշ, յունապ, թուղ, սալոր, դաման, ալոշ. ևս և՛ սեխ, ձմերուկ, վարունգ, և այլն: Կենդանիները և գաղանները՝ ոչխար, այծ,

կողմերու, գոմէշ, էշ, ջորի, ձի, ուղտ, աղուէս, արջ, գայլ, բորենի, և այլն: Քաշուները և հաւերը ընտանի հաւ, բաղ, սաղ, հնդկահաւ, փասխան կամ հայկահաւ, սիրամարգ, սոխակ, բաղէ, անգղ, ցին, արծիւ, և այլ սուրբ և անսուրբ թեաւորներ և գեղեցկափետուր և քաղցրաձայն թռչնակներ *):

Այս ընդարձակ երկիրը, որ իւր սկիզբէն մինչի մեր ժամանակները զանազան փոփոխութեանց և բաժանմանց տակ է ընկել՝ այժմ երեք մասն է արած: Հիւսիսային մասը, որ Սև և Կասպից ծովերու մէջ է և հին ժամանակները կոչոււմ էր Ալիւն Հայս, այժմ բոլորովին կայ Ռուսաց տէրութեան ներքոյ և սլաւոնակոււմ է Մեծ-Հայք ասած՝ Հայաստանի տասն և հինգ աշխարհների ութ աշխարքը, որք են:

1) Արցախ կամ Փոսք Սիւնիս, որ Խաչենոյ երկիր-էլ է ասոււմ, և այժմ Սղեախ և Քանձակ քաղաքներով մասն է թիֆլիզու գաւառապետութեան:

2) Տայս, որ Ախալցխու և Օզուրգէթի երկիրը, և մասն է Քութայխի գաւառապետութեան:

3) Գուգարս, որ է Սոմխէթի, Խերթվիսու, Ախալքալաքի, Ծալկայի և Կոռու հողերը, որ այժմ թիֆլիզու և Քութայխի գաւառների մասն են:

4) Արարիս, որ է այժմեան Կուխի կամ Եարի Եամախու գաւառապետութեան մասն:

*) Մենք գիտութեամբ այստեղ յիշեցինք Հայաստանի այն սովորական բերքերը, որք մարդուս կեանքի պիտոյից և վայելչութեան համար անենահարկաւորն են: Մեծագոյն մասը Հայերի, իրանց հայրենիքէն շատ դարերէ ի վեր դուրս գնացած լինելով և նորա մասին շատ անգամ ոչինչ և հազիւ երբէք միայն պղտոր դաղափար ունենալով, ևս և լսելով կամ կարդալով տգէտ ճանապարհորդների պատմածքը՝ այն կարծիքն ունին, որ Հայաստանը աղքատ է բերքերով. այն ինչ քաջ յայանի է (պատմութիւն լմացողին), որ Հայաստանը ոչ միայն իւր դրացի, այլ և հեռաւոր աշխարհների համար, իւր ծաղկած օրերումը, միշտ եղել է մթերաբանոց:

5) Անի, որ է Մեանայ և Շուշու երկիրը կամ Ղարաբաղ:

6) Փայտաշարանի ճամն, որ է Սալեանի Մուղան դաշտի և Լանքարանի հողերը:

7) Երասխի ճամն, որ է Երեանայ, Կողբայ և Շիրակայ՝ այն է Շուրադէլի և Ալէքսանդրուպօլի հողը, որ այժմ Երեանայ և Թիֆլիզու գաւառներու մասներն են:

8) Վասպուրականի ճամն, որ է Նախիջևանը, Հին-Ջուղայ, Օրդուբադ, Արուլիս, և այլն, և է մասն Երեանայ գաւառի:

Եյս Բուսայ բաժնի Հայաստանի հարաւային սահմանն է Երասխ գետը, որով Պարսից բաժնէն է զանազանվում, իսկ արեւմտեան սահմանն է Մեծ-Մասիսը, Բայազիդը, Կաղզուանը, Կարսը, Արդասանը և Բաթումը, որով Օսմանցոց Հայաստանէն է բաժնւիւմ: Պարսից ձեռումը մնացել է միայն հարաւային Հայաստանի արեւելեան կողմը, որոյ մէջ կան այս աշխարհները. 1) Վասպուրականի ճամն, որ ասվում է Խոյսը և Մարանդու երկիր: 2) Պարսիստան, որ է Սալմաստու, Արմեայ և Մարաղու երկիրը: 3) Փայտաշարանի ճամն, որ է Արդաւիլու հողը: 4) Վասպուրական կամ Հատրբէյան, որ է Թաւրիզու և նորա շրջակայ երկիրը: Իսկ Տաճկայ կամ Օսմանցոց ձեռին են հարաւային Հայաստանի արեւմտեան երկիրները, որք են.

1) Երասխայ ճամն, որ է Կարս կամ Ղարս, Հին Վանանդայ գաւառումը, Անիի սուերակը՝ Շիրակայ գաւառումը, Կաղզուան կամ Կակիզուան՝ Արշարունեայ երկրումը: Վաղարշակերտ, այն է Ալաշկերտ՝ Բագրեանդ գաւառումը. Բայազիդ, Հին Բարենից՝ Կաղովիտ գաւառումը:

2) Տուրանէի ճամն կամ Տարն, որ է Մշու երկիրը կամ Մալազկերտը, այն է Մանազկերտ, Հարք գաւառումը:

Խալաթ՝ Բզնուենեաց երկրումը. Էրճին-Քալայ, որ է
Արճէշ՝ Խոսխոսուենեաց երկրումը, և այլն:

3) Վասպուրականի մասն, որ է Վանայ երկիրը, Տոսք
գաւառումը:

4) Մոհի, ուր են Մոկս և Զոխ գեղերը:

5) Կորճայի իբր Կորճ Հայք կամ Կորդ Հայք, ուր է
Զուլամերկը:

6) Եղճնի, որ է Դիարբէքիրու կամ Տիգրանակերտի
երկիրը:

7) Չորրորդ Հայք, կամ Ծոփայ աշխարհ, որ է Խար-
բերդու, Բալուայ և Մուֆարղինու երկիրը, որ է
Քիւրդիստան:

8) Բարձր Հայք, որ է Արղրումի, այսինքն՝ Կարնոյ
երկիրը, ուր է Բայբուրդ կամ Բաբերդ՝ Սպեր գա-
ւառումը:

Եյս ութ երկիրը ունին Օսմանցիք Հայաստանի
Մէջ Հայք ասացեալ բաժնի մէջ՝ տասնուհինգ աշխար-
քէն: Իսկ Փոքր Հայք ասած երկրումը ունին՝

9) Մեջմէտ Հայոց, ուր են Մծրին կամ Նսերին և
Եղեսիայ այն է՝ Ուռհայ քաղաքները:

10) Հայոց Ատրէի, ուր է Հալէբ քաղաքը:

11) Կելեքի, որ է Թարսիս, Աղանայ, Գարամանիս:

12) Երրորդ Հայք, որ է Մարաշու երկիրը:

13) Եւաջին Հայք, որ է Կեսարիա կամ Ղայսերի,
հին Կասպաղսկիա, որոյ հարաւակողմեան լերանց մէջ
է այժմեան Ջեթթուս կամ Ուլնիա քաղաքը:

14) Երկրորդ Հայք, որ է Սվաղ կամ Սերաստիա:

Եյս աշխարհներէն զատ Թուսաց տէրութեան ներ-
քոյ կան Կողքիս, որ է Քուլթայիս, Վիրք կամ Վրաս-
տան, որ Արցախայ սահմանակից է, և Կասաբ, որ է
Դարբանդ, և Աղուանք՝ որ է Ղուբայ, Բաբու և Եա-
մախի, որ երբեմն էին Հայաստանի մասն և գաւառ:

Մեծ Հայքը, որ բնիկ Հայոց երկիրն է, սկսեալ
Կովկասու սարերէն մինչև Տիգրանակերտ և Կաս-
պից ծովէն մինչև Յփրատ, երևում է, որ Հայկայ և նո-
րա որդոց և թոռանց ժամանակն է ձևացած. քոքր
Հայքը, որ մէկ Յփրատ գետով է Մեծ Հայքէն բաժ-
նւում, Արամի ժամանակը. Միջուգետք Հայոց՝ Պա-
րոյրի և Տիգրան Երուանդեանի. Ասորիք Հայոց՝ Ար-
շակունեաց. իսկ Կիլիկիա՝ Ռուբենեանց:

Եյս երկիրների մէջ հինգ անգամ սկսեց Հայոց ինք-
նագլուխ տէրութիւնը և հինգ անգամ վերջացաւ: Առա-
ջին անգամը Հայոց պայազատութիւնը սկսաւ ՀՍԾԳԷՆ,
որ որդւոց յորդիս տևեց մինչև Անուշաւան և աս-
վում է Նահապետաբեան Հայհաղանց: Անուշաւանէն յետ
սկսան Հայկայ ցեղէն քաջարիք՝ այն նահապետութիւնը
յաջորդել, ոմանք ժառանգարար և ոմանք սրոյ
բռնութեամբ, և շատն-էլ ազդի ընտրութեամբ, որ և
տևեց մինչի Սկայորդին, որ արմատ է համարւում
այն թագաւորական ազգատոհմին, որն որ նորա որ-
դին Պարոյրը դրեց հիմն՝ Ասորեստանեաց աւերակ-
ներու վրայ: Այս թագաւորութեան ցեղը տևեց մին-
չև Վահէ, և նորա մահով վերջացաւ՝ Ալէքսանդր
Մակեդոնացւոյ արշաւանքին: Զկնի նորա Հայաստա-
նումը, որ սակաւ միջոց մնաց մակեդոնական կու-
սակալներու ձեռին՝ ընծիւղեցաւ նոր Հայկազանց թա-
գաւորութեան ցեղ, որ վերջացաւ Արշակունեաց ձե-
ռով: Ահա՛ այս առաջին ինքնագլուխ թագաւորու-
թեան ժամանակը, որ տևեց Հայկէն մինչի Վաղար-
շակ՝ երկու հազար տարիի չափ, ասվում է առաջին
հարստութիւն Հայհաղանց:

Երկրորդ հարստութիւնը, որ է Արշակունեաց՝ սկսեց
ՉՐԶՐԵՇՍԳԷՆ, որ էր Պարթևաց ցեղէն, և շարունա-
կեց որդւոց յորդիս մինչև Արտաւազդ 1-դ: Սորամէն

անցաւ նորա հօրեղբօր Արշամի ձեռք, որ հասուց
մինչև իւր թոռն Անանին: Յետոյ Սանատրուկ, որ
Արգարու քրոջ որդին էր, Արշակունեաց նոր աղգա-
տոհմի արմատ դարձաւ. և այս ցեղն-էլ տևեց մինչև
Պապ թագաւորի որդիքը՝ Արշակ ու Վաղարշակ: Սո-
ցա յետևէն նստաւ մէկ անձանօթ Արշակունի խոս-
րով, որոյ եղբօրորդին Արտաշէս վերջին կամ Ար-
տաշիր ընկաւ աթոռէն: Արշակունեաց թագաւորու-
թիւնը տևեց Հայաստանումը հինգ հարիւր ութսուն
և երեք տարի:

Երրորդ ժամանակն էր Մարտիանիւրոս, Կիւրապատիւ-
նիւրոս և Ռաբիէանիւրոս կառավարութեան միջոցը, որ ինչ-
պէս փոխարքայ կամ կուսակալ՝ Հայաստանը պահում
էին Պարսից, Յունաց և Արարներու իշխանութեան
տակը՝ չորս հարիւր յիսուն և երկու տարի:

Չորրորդ ժամանակն էր Բագրատունեաց հարստու-
թիւնը, որ Աշոտ 1-դ Բագրատունիէն տևեց մինչև
Գագիգ 2-դի բռնուիլը, հարիւր իննսուն և չորս տարի:

Հինգերորդ ժամանակն էր Ռուէնիւնաց հարստու-
թիւնը, որ Ռուբէն 1-դ իշխանէն սկսած՝ տևեց եր-
կու հարիւր իննսուն ու վեց տարի՝ մինչև Ասոն 6-դի
բռնուիլը:

Իսկ Հայոց ազգի պատմութեան վեցերորդ շրջանը
պիտի համարենք այն անիշխանութեան օրերը, որ
սկսած Ասոն 6-դի բռնուելէն՝ շարունակվում է մինչև
այս 1863 ամս, և ահա՛ չորս հարիւր ութսուն և եօթը
տարի է, որ Հայոց ազգէն պակսեցան երևելի իշ-
խանները և մելիքները, և Հայաստանը երեք մասն բաժ-
նուեցաւ:

The first part of the document is a list of names and titles, including the names of the authors and the titles of their works. The names are written in a cursive hand, and the titles are in a more formal, printed style. The list is organized into columns, with the names of the authors on the left and the titles of their works on the right.

The second part of the document is a list of names and titles, similar to the first part. It also consists of columns of names and titles, written in the same cursive and printed styles.

The third part of the document is a list of names and titles, continuing the pattern of the previous sections. It features columns of names and titles, maintaining the same handwriting and formatting.

The fourth part of the document is a list of names and titles, following the same structure as the previous sections. It contains columns of names and titles, written in the same cursive and printed styles.

The fifth part of the document is a list of names and titles, completing the series of lists. It features columns of names and titles, consistent with the rest of the document.

ՀԱՅՈՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՄԿՁԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆՆ

ՀԱՅԿԷՆ

ԴԻՒՑՍՁՆՍԿՍՆ ԺՍՄՍՆՍԿ

(2350 տ. Բրիտանոսի Ժնոնիքին յաստղ) :

2

Հայկի գաղթելը Սենաարէն. Բէլի հետ պատերազմելը և սպանելը նորան :

ՔրՀԵՂԵՂԷՆ յետ, երբ որ Նոյի որդոցմէն բազմացան մարդիկ և ոսկի դարը անցուցին Մասեայ սարի չորս կողմը, և յետոյ տեղի նեղութեան պատճառաւ մեծ բազմութեամբ հեռացան այն տեղերէն և գնացին Սենաար դաշտը, և այնտեղ շինեցին Բաբելոն և այլ քաղաքներ, և մէկ մեծ ու բարձր աշտարակ, որ լեղուներու խառնակուելու պատճառաւ մնաց կիսակատար. աշտարակ շինողների գլխաւորներէն մէկը, Յարեթի թոռան Փորգոմի որդի՝ ՀՍՅԿԸ, երբ որ Ներբոզ երկաթի թագ դրեց, և թագաւորեց Բաբելոնումը, չրկամենալով նորա ձեռքի տակ մնալ, ժողովեց իւր որդիքը, հարսուները, թոռները, թոռնեաները և եղբարքը և նորանց ազգատոհմը, և զաւակուները, և զստերքը, և փեսաները և ուրիշ շատ մար-

2

դիկ, որոնք որ եկան և նորա հետ միացան, թողեց Քա-
րելոնի երկիրը, ելաւ Ներքողի վիճակէն և դարձաւ
դէպի Մասիա: Բայց դեռ չբնասած այդ սարին՝ ճա-
նապարհումը մէկ ծովակի ափին կամեցաւ բնակուիլ,
վասն որոյ մէկ դաստակերտ շինեց, անունը դրաւ Հայ-
հաշէն և այն դաւտը կոչուեցաւ Հայք (Խլաթի և Մա-
լաղկերտի միջոցը): Նոյի զաւակներէն առաջացած
մնացած մարդիկ կային, որ այնտեղ բնակուած՝ ո-
մանք վայրենի, ոմանք-էլ մարդավարի կեանք էին ան-
ցուցանում: սորա-էլ եկան և կամաւոր հնազանդու-
թիւն ցոյց տուին Հայկին: Իսկ որոնք որ ինքնայօժար
չի հնազանդեցան՝ նուաճուեցան, և այսպէս Հայկ
դրեց իւր ինքնադլուխ տէրութեան հիւմքը: Իւր հօր-
եղբայր Ասանաղը և իւր եղբայրները՝ Քարէլոս, Կովհաս,
Սէրէս, Լէհոս, Մովհան, Հէրայ ու Բարդ և իւր որդիքը՝
Արհնակ, Խոս և Մանասաղ, և Արմենակի որդիքը՝ Ար-
մայիս ու Կարմոս և Խոսայ որդին Բարդ նորա տէրու-
թիւնը տարածեցին, ինչպէս դէպի հիւսիս ու արև-
ելք, նոյնպէս և դէպի հարաւ ու արևմուտք և սկը-
սան իրանց ձեռքի տակ գանուած ժողովաւքը խնա-
մել խաղաղութեամբ:

Բայց այս խաղաղութիւնը երկար չի տ'եց. Ներ-
քող կամ Քէլ երբ որ լաւ Հայկի փախչելը և իր երկ-
րէն հեռանալը՝ առաջ իւր որդոցմէն մէկին դեսպան
ուղարկեց նորա մօտ և հրաւիրեց, որ յետ դառնայ,
և իւր երկրումը ինչտեղ-էլ որ կամենայ՝ բնակուի-
րայց որ Հայկ սկանջ չի դրաւ Ներքողի սնտոգամին՝
Ներքող ժողովեց իւր զօրքը և մեծ բաղմութեամբ
եկաւ Հայկի վրայ, որ բռնութեամբ հնազանդեցնէ:

Ներքողի հետ եկած ամբոխը միայն խաժամուժ
խուժան չէր, այլ իւր որսակից բնիկ բներն էին, որոնց
հետ Ներքող սկսել էր իւր քաջութիւնը, աշխարհի

երեսէն գաղանները կոտորելով, և սառել էր Ասորի
ստապի Ասորի, որոնք ներածագութեան ու զինաշար-
ժութեան մէջ վարժուած էին: Այն ժամանակի գլու-
խաւոր զէնքն էին նեան ու աղեղը և սարսաքարը,
և եթէ նեար լինէր փոքր ինչ մեծ, երկայն ու հաստ
ասվում էր նիզակ կամ տէգ: Կարելի է, որ ինքը
Ներքող թուր-էլ ունենար, կամ վահան, կամ զրահ
իւր անձին սաշտպանելու համար, կարելի է թէ նորա
զօրապետներէն սմանք ևս ունենային. բայց մնացած
զօրքը, բայց նեա ու աղեղէն և սարսաքարէն, ու-
րիշ զէնք պիտի չունենար, և թրերն-էլ պիտի շատ
կարծ լինէին:

Հայկի զօրքն-էլ քան զայն աւելի չէր զէնքով զար-
դարուած: Ինքը Հայկը մէկ առիւծի մօրթի ունէր
տկլոր մարմնու վրայ ձգած, որ նորա համար համ
զրահ էր. համ վահան, ձեռին ունէր մէկ աղեղն և
նեաներու կապարձք ուսին: Նորա զօրքը, որ երեք
հարիւրէն աւելի չէր, նոյն Ներքողի որսակիցներէն
լինելով՝ գաղանների դէմ շատ էին կռուել և կարելի
է թէ, նեանէն զատ, ձեռքերումն ունենային մէկ մէկ
հաստ հաստ բիր: Ահա այսպէս էր Հայկի սաարաս-
տութիւնը, երբ որ Ներքող հասաւ նորա երկիրը:

Ներքող՝ Քամայ թոռնեան, Քուշայ օրդին, որ այս
պատճառաւ Քարքուշ-էլ է ասվում և Քէլ, էր այնժա-
մանակուայ հսկաների մէջ երեսելին: Հայկ, որ նոյն-
պէս քաջ էր, իւր անձին և զաւակների աղատութիւնը
սաշտպանելու համար, գնաց անվեհեր նորա դէմ
իւր սակաւ, բայց միաբան զօրքով, որ մտքերումը
դրել էին կամ յաղթել, կամ մեռնել: Մէկըմէկու
հանդիպեցան այն ծովակի կշտին, ուր որ Հայկ և իւր
գերդաստանը բնակուել էին: Ներքողի և Հայկի զօր-
քերը տեսան իրանց հին ծանօթներին, որոնց հետ մի

ժամանակ գաղաններ էին որսում. ճակատամարտը
խմբուեցաւ, սլատերազմը բացուեցաւ. Ներքողի զօրքի
շատութիւնը ոչինչ սգուտ չունեցաւ, երբ որ Հայկ նո-
րան հանդիպեցաւ. Հայկ իւր երեքթեւեան ներտը հաս-
ցրուց Ներքողի երկաթապատ կուրծքին. Ներքող
գետնին վէր ընկաւ մեռած և նորա զօրքը ցրուեցաւ:
Այնժամանակ այս ծովակի անունը դրուեցաւ Աղւի-
ճաք, որովհետև նորա սպիւրումը Հայկը յաղթեց Մար
Ներքողին: Ասնայ ծովակէլ ասուեցաւ, որովհետև այն-
տեղ վանուեցաւ Բէլայ զօրքը. Բնուանայ ծով յե-
տոյ կոչուեցաւ, Խոռայ որդոյ Բաղի անունով, որ
իւր ժառանգութիւնը այն ծովակի արևմտեան կողմը
ստացաւ: Այնուհետև Հայկի անունով այն աշխարքը
ասուեցաւ ՀՍՅՍՍՍՅՆ. և ինչպէս Հայաստանը, նոյնպէս
և նորա բնակիչքը Հայկի որդոյ հետ մէկ աղգ կազ-
մելով՝ կոչուեցան ՀՍՅԲ:

Այս որովհետև այս սլատերազմի մէջ մեծ երեսպար-
զութիւն արին Ասնայ, որ Հայկի հօրեղբայրն էր,
և նորա որդիքը և բոլոր աղգատոհմը, այն սլաւաճա-
ռաւ, երբ որ Հայկ սկսաւ կարգադրել իւր նոր տե-
րութիւնը, քաղաքական անտեսութիւնը սլահեց ձե-
ռումը և ժառանգութեամբ հասուց իւր որդոյ. բայց
զինուորական գործերը յանձնեց Ասքանազին և նորա
զաւակներին, առանց կաստական՝ առանձնազարմու-
թեան: Թէպէտ զինի ժամանակաց, երբ որ հայկազանց
տունը ունեցաւ թագաւորութիւն, Արարատի անու-
նով, Ասքանազի ցեղը այնպէս խառնուեցաւ և միա-

*) Կաստա խառնական բառ է և նշանակում է ցեղ, տոհմ: Բայց
այստեղ և այլուր պիտի հասկանալ պէտքէս արտօնութիւններ ունեցող դա-
սակարգ ժողովուրդի, ինչպէս որ ունեին հին Եգիպտացիք, ուր որ ոչ մի
կաստայի անգամ իրաւունք չունէր մտնել միւս կաստա. Եթէ վաճառա-
կան էր՝ բոլոր կեանքը պիտի վաճառական մնար՝ ինչպէս ինքը, նոյնպէս և
նորա որդիքը:

ւորուեցաւ Հայկայ ցեղի հետ, որ այնուհետեւ Հայկ-
 եան և Ասքանաղեան ասելը մի և նոյն նշանակութիւն
 ունեցաւ և Հայերը ընդհանրապէս սկսան ասուել Աս-
 քանաղեան, թորգոմեան, Յարեթեան, և Արամ-
 աղնեան միօրինակ, սակայն զինուորութիւնը այնպէս
 սերիականութիւն էր դարձել Ասքանաղեան ցեղին, որ
 մինչև Քարիլոնի առման ժամանակը, և նորամէն յե-
 տոյ-էլ, երբ որ Լուսինայի շէնքը Հայոց ասիում էր Ա-
 րարատիան, զինուորութիւնը մասնաւորապէս անուան-
 վում էր Գոմար Ասանատիան: (Երեմ. ԾՅ. 27)

3

Հայկի յաջորդքը — Երմենակ, Երմայիս, և այլք:

ՀՅՅԳԻ ասէն ու երկիւղը շատ տարիներ մնաց շքր-
 ջակայ ազգերի վրայ, այնպէս որ՝ Հայկէն յետ նորա
 որդիքը օխտը-պորտ տիրեցին խաղաղութեամբ Հայոց
 ազգի վրայ և մէկ թշնամի դլխահար չունեցան, և այս
 պատճառաւ կարողացան ազգը խնամել, և անդորրու-
 թեան մէջ պահելով Հայաստան աշխարհը, զանազան
 քաղաքներ և գեղեր շինելով՝ զարգարել: Նոյնպէս և
 Հայկի եղբայրները Հայաստանի հիւսիսակողմը իրանց
 համար ժառանգութիւն ստանալով՝ դարձան հիմնա-
 դիր զանազան տէրութիւններու և նախահայր հզօր
 ազգերու: Քարթլոս Արաստանի ազգապետ յայտ-
 նուեցաւ. Կովկաս՝ Կովկաս սարի բնակիչներու՝ իւր
 անունը տալով այն սարին, որ Սարմաախա էր աս-
 վում. Աելոս՝ Աէկղի ազգի և Եգրէս՝ Եգերացոց կամ
 Կողքիացոց:

Ինչպէս Հայկը, նոյնպէս և նորա ժառանգ և յաջորդ անդրանիկ որդին ՍՐՄԵՆՍԿԸ՝ շատ քաղաքներ շինելով, իւր որդւոց կալուած տալով՝ հաստատ մէկ տեղ չլիկեցաւ: Արագած լեռան (Ալագէղ), Արագածոտն և Սօսեաց անտառը Արմենակի յիշատակներն են: Հայկի և Արմենակի գերեզմանները անյայտ են:

Բայց Արմենակի որդի և ժառանգ ՍՐՄԵՅԻՍԸ շինեց իւր համար առանձին քաղաք և իւր անուամբ կոչեց Արմաշ: Հայաստանի տէրութիւնը, որ Հայկէն սկսած չունէր այնպիսի անուն, որ նորա տէրութեան նշան լինէր, ասլում էր Նահապետիան և նորա արթուր և գայիսոնը, (եթէ այնժամանակները գիտէին թէ ինչ է արթուր, ինչ է գայիսոնը)՝ ասլում էին Նահապետիան, և ինքն աղգի գլուխը, զորօրինակ՝ Հայկը, Արմենակը, Արմայիսը ասլում էին Նահապետ, իւր նախահայր: Նահապետ էր Խոռն-էլ, Մանաւաղն-էլ, Բազն էլ, Կաղմոսն-էլ, որին Հայկ պատերազմէն առաջ տուել էր կալուած և երկիր: Այս մասնաւոր նահապետներին աղգապետ և ցեղապետ պէտք է տսել, որ նահապետ անունը մնայ մէկի վրայ, որն որ ժառանգութեամբ ստանում էր աղգի ընդհանուր կառավարութիւնը և նորա հովանաւորութեան տակն էին լինում միւս մասնաւոր աղգապետները մանաւանդ այժմ, երբ որ Արմայիս իրան համար առանձին Արմաշի քաղաքը շինեց և այնտեղ հաստատուն իւր բնակութիւնը հիմնեց, որ այնուհետև նորա և յաջորդների կենդանութեան ժամանակը պիտի լինէր բնակարան և յետ մահու՝ գերեզման:

Կարծում ենք, որ այնժամանակուայ խաշնագարման և հողագործ սրարդ սովորութեամբ տիրապետական նշանը աւելի ցուպ կամ հեծան պիտի անուանուէր, քան գայիսոն կամ գաւաղան. եթէ նրա-

տարանը դահ ասեին, կարելի էր, քան աթոս, որ
կարծենք դեռ ևս չըդիտեին. և կտապարտ թիւնը՝ ս-
ւելի խելքի մտտիկ է, որ ասեին խնամք, քան թէ
սանձ, կամ այլ այսպիսի սխառտանշանի ցուցակներ,
որ մեր ազգը իւր շրջակայ ազգերէն սովորեցաւ:
Սովորեցաւ ենք ասում, որովհետեւ եթէ մեր ազգը
այդ բաներէն հասկացողութիւն ունենար՝ ո՛վ պիտի
բռնէր Հայկի ձեռքը, եթէ նա կամենար Ներքողի
նման գլխին թաղ դնել. թող երկաթէ չըլինէր թագը՝
սղնձէ կամ մորթիէ լինէր. բայց յայտնի է, որ շէին
ուզում սովորիլ: Ինչ որ մէկ հայր, տան տէր ունէր
իւր տան վրայ, նոյնպէս և ցեղապետները՝ իրանց ցե-
ղերի վրայ և ազգապետները՝ իրանց ազգատոհմի
վրայ, նոյնը նահատար ունէր բովանդակ ազգի և
երկրի վրայ, միայն պարտք խնամք տանելու. աւելի
հովիւ էին ժողովրդեան, քան թէ տէր: Այս պատ-
ճառաւէլ տէր ունէին քաղաքներ և գիւղեր շինելու,
որ անխնամ, վայրենի դաշտերի մէջ թափառական
ժողովուրդը մէկ տեղ ժողովուի, պատասխարուի և ըն-
կերական կեանքին ընտելանայ:

Քաղաք շինելը, կարծում ենք, որ մէկ փոքրիկ
կամ բնդարձակ տեղ դաշտի մէջ կամ սարերի հո-
վիտներումը արմատապատ կամ պարսպապատ էին ա-
նում, և այն պարսպի մէջ մարդիկ իրանց ընտանեաց
կենայու. համար դեանափոր խշախք էին շինում, վրան
ձածկում, և այսպիսի մէկ քանի դեանափորը ասվում էր
գեղ, այլ ուր որ հարիւրաւոր էին լինում այն դեա-
նափորները ասվում էին քաղաք. պարիսպնէլ, կար-
ծում ենք, որ մէկ հրաշակերտ շինուած լինելու չէր.
բարձրութիւնը առաջին նուազին այնքան էր, որ մարդ
չըկարողանար վրայէն ընդոստ ցատկել. Արմաւիրը
մեզ օրինակ, որոյ պարիսպները ոչ այլ ինչ էին, եթէ

ոչ քարը քարի վրայ դրած և շարժախով մէկզմէկու հետ
տնդայրած որմներ, որ Հարմայի ժամանակը հար-
կաւոր համարուեցաւ հիմքէն շինել կոփածոյ քարերէ:
Այլ թէ ի՞նչ տեղէ հնարեցին գիւղ, քաղաք, պարիսպ
բառերը, որովհետև ոչ գիւղ ունէին, ոչ քաղաք և ոչ
պարիսպ. մեզ այնպէս է թուում, որ Քարիլոնի երկ-
րումն էին տեսել և կամ Քարիլոնէն յետ դառնալու
ճանապարհին. մանաւանդ որ Ներքողի շինած քաղաք-
ներու մէջ մէկի անունն էլ Խալախ էր կամ Քալաք
և միւսինը՝ Քալանէ կամ Քաղանէ, ուր որ աշտա-
րակը շինեցին:

Այս Քալաքի կամ Քալանէի անունը գրին առաջին
շինած բնակու թեան վրայ, որ յետոյ ամեն բաղձադու-
մար և մանաւանդ պարսպապատ բնակու թիւններու
վրայ-էլ գրուեցաւ: Արայ լեզուի մէջ քալաքը այժմ
էլ են պահում, և կարծում ենք, որ իսկապէս «քա-
ղաք» բառի արմատն է: Այս խօսքէն և ոչ «քաղելով հա-
ւաքուելէն» է դուրս եկել քաղաքը, որ յետոյ վիւնը
դատ ձեւացուցին: Նոյնպէս պարիսպը կամ պատը՝ պար
և պատել խօսքերէն: Քեզ կամ գիւղ բառը պիտի
գեղ, գեղեցկութիւն բառէն լինի յառաջացած, և ոչ
գոյ եղ կամ իւղ խօսքերէն, զբօսանաց տեղ, զուարճալի
տեղ, ուր որ մարդ ամեն զբաղանքը կրմտանայ. բայց
կարելի է թէ գեղ անունը և նորա պատճառը Քե-
ղածէն ծագեցաւ, որ Արմայիսի թոռն էր՝ Ամասիայի
որդին, առաջ ինքը գեղ կամ գեղեցկութիւն ունենա-
լու պատճառաւ՝ Քեղամ կոչուեցաւ, յետոյ նորա ա-
նունով մէկ շէն՝ գեղ ասուեցաւ: Սա իւր նախնեաց
նման թէպէտ շատ քաղաքներ շինեց, բայց շատի վրայ
էլ իւր անուան նշանը թողեց. Քեղասի կամ Քեղամէ,
Քեղ լիան, Քեղամայ թով, Քեղարչունի քաղաքը և ձուկը,
և այլն: Կարծելի է թէ՛ սորամէն յետոյ մասնաւոր

կալուածները գեղ սասուկցան, որ առաջ, դուցէ թէ, շէն էին ստվում, կամ կալուած, կամ դաստակերտ, կամ այլ անուն էին կրում, որ այժմ մեզ համար կորած է հնութեան սրտաճառաւ: Անգը կամ արտը, կարելի է թէ, մինակ վարուցանքի տեղը չէին նշանակում, այլ բնակուելու խրճիթներն-էլ էին ցոյց տալիս, որոց մէջ աւելի հոգ կամ խոց խօսքերը կարող էին հոգ հնչել: Գաստակերտը ունի իւր վրայ Պարսից Չինոյ լեզուի կնիքը, քառս—ձեռն և հոս—շինել, ձեռակերտ, իւր ձեռքով, կամ ձեռքով շինած, հիմնած, և ոչ բնական այր կամ խորափիս: Ագարակն-էլ պիտի յետ ժամանակաց մտած լինի Կատին լեզուի ager կամ acra խօսքերէն:


938-20/2

Արմաւիրի նահապետաց բնակուելու քաղաք դասնալը տուեց Հայերին փոքր ինչ ազգութեան ձև, ամենին մէկ դիւսի հետ միաւորելով, որ եթէ Հայկի ու Արմենակի կմախքն-էլ այնտեղ բերէին ու թաղէին՝ աւելի պինդ պիտի կապուէին մէկզմէկու հետ: Տուրուբերանը, ուր որ Հայկաշէնն էր, ոչ լեզուով, ոչ հին սովորութիւններով չէր սերտ միաւորվում Արմաւիրի հետ: Կարելի է թէ՛ Հայկն-էլ, Արմենակն-էլ այնտեղ էին թաղուած և Տուրուբերանցիք և նոցա շրջակայ երկիրների բնակիչքը պարծենալով էին նայում իրանց հնութեան վրայ, որ Արմաւիրը գեռ ևս չունէր: Թէպէտ և Արմաւիրի մօտէն վաղող Գեհոն գետը Արմայիսի մէկ որդու Երասաի անունով Երասի սասուկցաւ, և միւս որդու Եարայի անունով՝ Երասի գաւառը կոչուեցաւ, իսկ անդրանիկ որդու՝ Ամասիայի անունով, որ ժառանգեց հօր նահապետութիւնը, Կոյի տապանի նստած սարը սասուկցաւ Մասի: ՍԲՍԻՍ նահապետական գահի յաջորդութիւնը թողեց ԳԵՂԱՄ որդուն: Գեղամն-էլ ժառանգութիւն տուեց իւր



ՀՐԲՄՍՅ որդուն, իսկ Սիսակ որդուն տուեց Քեղարքունին և Քեղամայ ծովը, մինչև Երասխ դեպը: Սիսակի անունով Քեղամայ ծովը ասուեցաւ Սիսակ և նորա կալուածները կոչուեցան Սիսակ, որով և ինքը դարձաւ Սիւնեաց տան կամ Սիսականաց ցեղապետ:

Մինչև այս ժամանակ Հայաստանի խաղաղութիւնը դրդուած չէր. բայց Հայերը, որ Հայկի ձեռի տակ դեռ ևս սակաւաթիւ լինելով՝ զօրեղ և ահեղ էին, այս խաղաղութեան օրերը համարեալ հազար տարի սլատերազմ չունենալով՝ թէպէտ շատ բաղձացել էին և զանազան ազգերէ մէկ Հայոց ազգ էին ձուլուել, բայց իրանց հայկազնեաց արիութիւնը և քաջութիւնը մոռացել էին, այնպէս որ՝ Հարմայի ժամանակը Հայաստանի շրջակայ ազգերը՝ Մարբ, Միջագետացիք և Գամիրք սկսան Հայոց երկիրները ոտնակոխ անել և շատ տեղեր-էլ առին և այն կողմի Հայերին հարկատու արին. և տեսնելով Հարմայի տկարութիւնը, որ փոխանակ նրանց դէմ զօրքով կանգնելու՝ սկսաւ իւր քաղաքի սլատերը սնդապնել տաշած մեծ մեծ քարերով՝ ծաղրական անուն դրին իրանց լեզուով, այսինքն **Զահ**, որ նշանակում է կին-մարդ կամ կնամարդի: Բայց Հարմայի յիշատակի անմոռանալի լինելը այն մասին է աւելի, որ իւր ազգի նահապետ և նահապետութեան յաջորդ և ժառանգ թողեց իւր որդուն՝ **Արամին**:



ՄԲՄԲ. — Նիւքարին սպառուհասելը. Բարշամի հետ մղած մարտը և յաղթութիւնը. Պայ Արխան յաղթելը. Սրամի աշխարհակալութիւնքը. Շամիրամ զշխոյի ասպատակութիւնը. Սրայ դեղեցկի սպանուիլը. Կարդոս, Մուշաւան և Չարմայր:

Արք որ իւր հօր Հարմայի նահապետութիւնը յաջորդեց ՄԲՄԲ, չրկամեցաւ իւր նախորդաց նման քաղաքներ շինելով ժամանակ անցուցանել. այլ նախնեաց շինածը սրահել և սրահսրանել: Տեսաւ որ իւր հայրենի երկրի հարևան աղգերը օրըստօրէ առաջ դալով իւր սեփական կալուածների սահմանադրութիւնները քանդել են և Հայոց աղգի աղատութիւնը, որ Հայկի ձեռքով հաստատուած էր, սկսել են խախտել, փոխանակ իւր կեանքը դրօսանքով, ուտելով, խմելով և որսորդութեամբ փտանելու, կռուասէր չըլինելով՝ առժամանակ մի դարեկը դրաւ իւր նախնեաց խաղաղասիրութիւնը և լաւ համարեց քաջագործութեամբ հաստատել իւր աշխարհի մէջ խաղաղութիւնը, քանիք հարկ տալով, որով թշնամեաց ընչաքաղց աղահու թիւնը միայն սկստի սրէր և Հայկի անունն և նորա անուան ահն ու երկիւղը, որ հաղար տարի անցնելով մոռացուել էին, նորինորոյ շըրջակայ աղգերու միտքը բերել տալ և իւր անունն-էլ աղգասիրական և սխրալի գործքերով աշխարքի երեսին դովելի անել, քան սպարսաւելի:

Մեծ հանդիսարաններ կային այս վեհադն նահապետի առջև բացուած. արուեստները, անուտուրը, հողագործութիւնը և խաշնարուծութիւնը կարօտ էին սորա հօր ձեռքով ղնցուելու, որ հաղարամեաց ան-

շարժութեան փոշիի տակէն դուրս գային: Պատրաստական շարժառիթներէլ կային. Հայաստանի շատ տեղերը թշնամիների ձեռքին էին. նրանց հարկաւոր էր հեռացնել, Հայերի գործունէութեան ասպարէզը լայնացնել, Հայերի վրայէն հարկատուութեան լուծը վերացնել և առուտուրի ճանփաներով այնքան տուածն էլ յետ բերել:

Երամ իւր դիտաւորութիւնը յայտնեց Հայաստանի ցեղապետներին և ազգապետներին, վառեց նոցա սրտի մէջ ազգի և հայրենեաց սէրը և նոցա ձեռքով ժողովեց մինչև յիսուն հազար քաջ երիտասարդներ, որոնք միայն որսորդութեան մէջ էին տեսել նետ ու աղեղը, և նոցա հետ միասին սկսաւ Հայաստանի մէջ մտած թշնամիներին հալածել:

Մարաց վայրենի ազգի մէկ ցեղապետը, անունը Նիւսար և մականունը Մարէօ, այսինքն՝ Մեղայի կամ Մար, Ասորեստանի միապետութեան լուծը նշկահելով՝ այնքան զօրացել էր, որ Հայաստանի արևելեան հարաւակողմը գրաւել էր և Հայերի վրայ հարկ էր դրել: Այնժամանակները Հայաստան դեռ ևս փող կամ ստակ չունէր և չէր-էլ իմանում. բայց այն ոչխարի հօտերը, տաւարի սնդեաները, գրասաներու երամակները, ևս և՛ ցորենի, գարիի, բրինձի և բամբակի բեռներն-էլ Հայերի համար ծանր լուծ էին, որ ամեն տարի պիտի տային Մար Նիւսարին:

Երամ իւր առաջին արշաւանը սորա դէմ ուղղեց, որովհետև Արմաիրին շատ էր մօտեցել: Հայոց և Մարաց բանակը դէմուդէմ կանգնած էին: Մէկ օր առաւօտը, դեռ ևս չըլուսացած՝ Մարաց զօրքի վրայ վազելով թշնամիներուն ցիրուցան արաւ և Նիւսարին բռնեց. բայց սրովհետև այն ցրուած Մեղայիք կարող էին միւսանդամ ժողովուրի և ուրիշ առաջնորդ

ընտրել ու միւսանգամ Հայաստանը աստատակել՝
Արամ ժամանակ չբռնեց նրանց դարձեալ միասին
հաւաքուելու, սկսաւ ետեւներէն ընկնիլ և ջարդելով
փախոյնել: Ալ որ Արամի և նորա քաջերի սուրէն ա-
զատուեցաւ՝ կարողացաւ փախչել Մարաստան. այնժա-
մանակ Մարաց երկրի և Ատրպատականի մէջ բացո-
րոշող սահման դրուեցաւ, որով այս կողմէն այն կողմը
և այն կողմէն այս կողմը միայն առուտուրի համար
կարող էին անց կենալ:

Այսքանը լաւ էր: Բայց Արամ իւր երիտասարդա-
կան թափին հպատակելով՝ իւր վեհանձնութեան ա-
նարժան գործ գործեց: Նիւքարին, փոխանակ Մա-
րաստան թողնելու կամ իւր բնիկ Նինոս թագա-
ւորին յանձնելու՝ տարաւ Արմաւիր և արեան ծա-
րաւի վայրենիներու նման՝ ճակատին ցից զարնել
տուաւ և սարսափ աշտարակների մէկի վրայ բարձրա-
ձայր ձողէն կապել տուեց, որ ամեն անցուդարձ ա-
նողները տեսնեն ու վախենան:

Այս առաջին պատերազմը որ յաջողակ աւարտեց,
ձեռնամուխ եղաւ միւսին. բայց էլ այնպիսի անգթու-
թիւն չարաւ: Ասորեստանի մոսպետութիւնը, որ
հաղարամեաց պատերազմներով արդէն շատ փոփոխու-
թիւններու տակ էր ընկել և մէջը առաջացել էին
շատ աստամբներ, որոնք ինքնագլուխ թագաւո-
թիւն էին սնում. բայց փոքր ինչ հարկ տալով միա-
պետութեան, այս միջոցներումը համախմբուել էր
Նինոս փառասէր ինքնակալի ձեռումը, որ այն աստա-
մբներու դէմ անդադար մտքառելով՝ կազմել էր
մէկ այնպիսի հզօր և անսարսելի բանակ, որ նորա-
նով ուղում էր բովանդակ տիեզերաց տիրապետել:
Այնժամանակուայ տիեզերքն-էլ նեղ ու անձուկ էր.
Ասորեստանի և Բաբելոնի երկիրը, որ մէկ խօսքով Մի-

Մեզոպոտամիա (Mesopotamia) է ասվում, համարեա թէ կենտրոն էր այն ժամանակի տիեզերաց, այնտեղէն դէպի հիւսիս աշխարհը վերջանում էր Կովկասի սարերով, դէպի հարաւ՝ չէր հասնում անգամ Հիմալայեան սարերուն, դէպի արեւելք՝ Կասպից ծովը և դէպի արեւմուտք՝ Միջերկրեաց ծովը և Եգիպտոս էին աշխարհի ծայր: Համերոսի աշխարհն-էլ քան զայս լայնատարած չէր, որ միջակէտ դնելով Յունաստանը, զուգահեռարար Միջերկրեաց ծովի դրա թեամբ ծաւալուելով՝ մէկ տասնորակ ձուռած էր պատկերացնում տիեզերքը: Ալէքսանդր Մակեդոնացին Գոնուսիս գետը կարծել էր եղերք աշխարհի: Շամիրամի Հնդկաստանը չենք կարծում թէ այն լինի, որն որ այժմ ունի այդ անունը, ո՛վ դիտէ, թէ որ գաւառի անունն էր Հնդկաստան: Եթովպիա Երասխի գետերեաց մէկ տեղի անունն էր, ուրաի որ Մովսէս Գեհոնին ձանխաց էր տուել անց կենալու:

Նինոսի հպատակ բռնաորներու մէկը՝ Բարշամ Բարեւացին, որ շատ տարի առաջ Հայաստանի սահմանագլուխը խրամատելով մտել էր Աղձնեաց աշխարհ և հարկի տակ էր դրել Հայերին և կամենում էր Ծովաց աշխարհ-էլ մտնել, որ հասնի մինչև Հայկազէն և Քելայ մահուան վրէժը առնու, անդադար ասպատակ սփռելով՝ մեծ մեծ վրասներ էր տալիս Հայերին: Արամ սորա դէմ էր ուղում ուղղել իւր երկրորդ արշաւանը. բայց մէկ անակնկալ դիտուած փոքր ինչ յերա թողուց: Նինոս լսելով Արամի քաջութեան համբաւը և Նիւքարի հետ արած յաղթութիւնը,

*) Միջագետք ասելով պէտք է խմանալ երկու գետերու մէջ կեցած երկիր. բայց սլասոնդ պիտի խմանալ Տիգրիս և Եփրատ գետերու մէջ տասնորակ և լայնածաւալ գաղտնախորը:

փոխանակ ուրախանալու և իւր զօրութիւնը Քարշամի
դէմ ուղղելու, որ իւր դիւսահարներու մէկն էր, կա-
մեցաւ Արամի վրայ երթալ իւր մրցակիրթ և յաղ-
թակիր զօրքով և Հայաստանը նուաճել: Բայց Նինոսի
բարեկամները և խոհական խորհրդակիցները համո-
զեցին նորան, որ նա Արամի նման քաջի բարեկամու-
թիւնը նախընտիր դնէ, քանթէ նորան իւր դէմ թըշ-
նամի ունենալը: Եւ Նինոս, որ ամեն հին պատմու-
թեան դրքերը բնաջինջ էր արել, որպէս զի ամեն
պատմութիւն իւր դործերէն սկսուի՝ շատ ամուր
չըկեցաւ իւր դիւսաւորութեան վրայ, այլ դեսպան ու-
ղարկելով Արամի մօտ՝ նորա հետ բարեկամութեան
դաշնադրութիւն արաւ, և Հայկի եօթներորդին ըս-
տիպուեցաւ պարզեցնելով փառապարդել, թէ և Ներ-
բողի արիւնը վրէժխնդրութիւն էր սահանջում: Եւ
այնուհետև Ասորեստան և բոլոր Միջագետք ճանա-
չեցին, թէ ո՞վ է Արամ, և սովորեցան նորա իսկական
անունը, որ առաջ ծաղր անելով՝ Բարդանէս էին կան-
չում, իբր Զանի որդի, կնամարդոյ զուակ:

Բայց ոչ Նինոսի հետ արած դաշնադրութիւնը,
ոչ Ասորեստանեայց հետ ունեցած բարեկամութիւնը,
ոչ միապետի պարզեած շինդըն ու ոսկի սպանները և
ոչ բարդանէսի տեղ Արամ ճանչնալը կարողացան նո-
րան զինաթափ անել, որ նա Քարշամի դէմ չերթայ՝
թէպէտ և փոքր ինչ ուշացրել էր: Արամ նպատակ
ունենալով ազգի օգուտը և առտուութի լայնացնելը,
որ Քարշամ մեծ նեղութեան մէջ էր դրել՝ արշաւեց
իւր քաջարի Հայերի հետ նորա վրայ: Քարշամ մեծ
պատերազմ տուեց, բայց այս պատերազմի մէջ սպա-
նուեցաւ և նորա զօրքը շարաշար ջարդուեցաւ: Արամ
նորա երկիրներէն շատ տեղ Հայաստանի հետ միա-
ցուց և յանձնեց կողմէականաց, ինչպէս որ Նիւքարի

ձեռքէն սուածները յանձնել էր Միւնեայ կամ Միսականայ:

Հայաստանի հարաւային կողմերը այսպէս թշնամեայ ձեռքէն ազատելով և Հայերի առուտուրը Ասորեստանեայց լայնածաւալ միասկտութեան մէջ սպառնալով՝ Արամ տեսաւ, որ Հայերի վաճառաշահութեան համար սուելի հարկաւոր էր Միջերկրեայ ծովին մօտենալը. վասնորոյ կամենալով ցոյց տալ աշխարքին իւր բարի և ազգաշէն դիտաւորութիւնը, մտքի մէջ դրեց արեւմտեան կողմէն մէքիչ Հայաստանի սահմանները առաջ մղել: Այս դիտաւորութիւնը առաջ տանելու համար՝ կար առձեռն պատրաստ առիթ: Սև և Միջերկրական ծովերի միջոցումը, որ այժմ Փոքր Ասիա է կոչվում, բնակուած էին վայրենի Գամիրք՝ Կապադոկների հետ խառը. բայց սոցամէն-էլ և անդր՝ Միջերկրեայ, Արքիպելագոսի*, Արտաոնտոսի, Առափորոնի և Պոնտոսի ծովերու ափանց բնակիչքը խալառ անձանօթ էին Արամին և Հայերուն, և բարձր սարերով ու լայնարձակ դաշտերով մէկզմէկէ բաժնրված լինելով՝ կարելի է որ կարծիք-էլ էին տալ՝ ս, թէ այն կողմերը անմարդաբնակ են բոլորովին: Գամրայ աշխարքումը Նդիպտացոյ դաղթականութեան առաջնորդներու մէկը՝ Պայ Ահի Գաղթայ զօրանալով սկսել էր պատրաստութիւն տեսնել, որ մանի Հայաստան աշխարքը՝ Ծովայ կողմէն: Արամ չքսպասեց, որ թըշնամին գայ և ոտնակոխ անէ Հայաստանը՝ ինքը իւր զօրքով անց կացաւ Նփրատ գետը, որ Միջին Հայոց արեւմտեան սահմանադրուխն էր: Այնտեղ Պայ Արիս

*) Սրքիպելագոս Յունաց խօսք է, որ բառական թարգմանութեամբ «գլխաւոր ծով» է իմացվում. արիս կամ արքի—գլխաւոր, պիս (ուստի և արքայ) պելագոս—ծով. բայց այստեղ և այլուր՝ խուճք, մողով կըղզիներու կամ «կղզիակոյտ» պիտի հասկանալ:

կազմ և պատրաստ կեցել էր, որ Արամին տայ ճա-
կատամարտ: Այլ էր որ այն ժամանակներումը մէկ
կռիւը կամ մէկ մենամարտը վերջացնում էր արշա-
ւանը: Պատերազմը գրգռուեցաւ: Հայերը յաղթեցին.
Պայ Աբիս բռնադատուեցաւ փախչել Միջերկրեայ ծովի
մէկ մերձակայ կղզին, որ կարծում ենք, թէ պիտի լինի
Կիպրոսը, ուր որ կային ուրիշ Եշխատացի գաղթա-
կաններ-էլ և ուստի որ ինքը Պայ Աբիս պիտի եկած
լինէր ցամաքագետին և Քամրայց մէջ բուն դրած. կա-
րելի է, որ նորա բերած գաղթականքն էին Կապա-
դոկք, որոնց Մովսէս յիշում է և Հրեայք Կարգուիչ
են կոչում:

Արամ այս Քամրայց աշխարքը Եիրատէն մինչև
Ալիս գետ միաւորեց Հայաստանի հետ փոքր Հայս ա-
նունով, որոյ մէջ կային չորս աշխարք՝ Առաջին Հայք,
Երկրորդ Հայք, Երրորդ Հայք և Կապադոկիա: Սոցա
պատճառաւ Ծոփայց աշխարքը ասուեցաւ Չորրորդ
Հայք. բայց նա Մեծին Հայոց տասնուհինգ աշխարհ-
ների մէջն է:

Արամ այս նոր տիրապետած երկիրներու բնակ-
չաց հրամայեց որ թողուն իրանց վայրենի կենցաղա-
վարութիւնը և սկսեն հայերէն խօսել: Այս Քամրայց
խաժամուժ խուժանէն շատերը, որոնք չըկամեցան
իրանց վայրենութիւնը թողուլ և հայերէն սովորիլ՝
փախան և Կիլիկիայի սարերումը բնակուեցան, բայց
և շատերը, որոնք յօժարեցան մնալ՝ հայացան, թէ-
պէտ և իրանց լեզուի բրտութիւնը հայերէնի մէջ-էլ
կարողացան զետեղել: Քամրայց երկրի և բովանդակ
նոր Հայաստանի կուսակալ կարգուեցաւ Մշակ՝ Արամի
սիրելին, որ այնտեղ իւր անունով Մաժակ քաղաքը
շինեց, այն է Կեսարիա, այժմեան Ղայսերին:

Օտարմանք է, որ Արամ ոչ Կիլիկիային ձեռնա-

մութիւն եղաւ և ոչ կամեցաւ ծովերու մօտ երթալ.
երեկ նա-էլ այլոց նման Ալիս գետը կարծեց աշխարքի
ծայր: Այնուեղ նորա դէմ կանգնող չլիար. մէկ տեղ
յաղթուած չէր. ինչու իւր աշխարհակալութիւնը
թողուց կիսակատար: Կամայ ահամայ սյուսէս սիտի
կարծեմք, որ երբ առջևը թշնամի չըտեսաւ կանգնած,
Արամ յետ դարձաւ իւր հայրենիքը՝ ազգին խնամք
տանելու և իւր դարնեաց շուքումը հանդէսը:

Արամի նահապետութիւնը ժառանգեց իւր որդին
ՄԵՅ, որ իւր սքանչելի գեղեցկութեան համար՝ գե-
ղեցէ ասուեցաւ: Այլ սորա գեղեցկութիւնը դարձաւ
սրտոճառ իւր տարածամ մահուան և Հայաստանի
դժբաղդութեան: Ետիցամ, որ նոյնպէս իւր գեղեցկու-
թեան սրտոճառաւ սյրիացել էր և դարձել էր կին
Նինոսի ընդդէմ իւր կամայ և միսանգամ սյրի մնա-
ցել, իւր վերջին ամուսնոյն զոհելով առաջին սիրու-
կան մարդու յիշատակին, լսելով Արայի գեղեցկու-
թեան համբաւը՝ կամեցաւ նորա կին լինել. բայց երբ
Արայ իւր բնիկ աղդասիրութեան և հայկադնեաց ող-
ջախոհութեան սրտոճառաւ չէկամենալով դժբեւ
մուսնական ուխտին՝ չէյօժարեցաւ Միջագետաց դըշ-
խայի իղձը կատարել. Ետիցամ, որ սրտոճառ էր
որոնում Ներրողի մահը վրիժակել՝ սրտերազմ բա-
ցեց Հայերու դէմ: Այս սրտերազմի մէջ Ետիցամի
վրայ աչք ունեցող քաջ երիտասարդները Արայի վրայ
բիւրաւոր բաղմութեամբ յարձակելով՝ կարեւիւր խո-
ցեցին: Արայ ողջակէզ գնաց իւր ողջախոհութեան
և իւր ամուսնական դաշին հաւատարմութեան: Այն
տարը, որն որ տեսաւ Արայի մահը, իւր Մուսիս
անուան վրայ՝ ստոյցաւ Արայի կոչումն. իսկ այն դաշ-
տը, որ սաստեցաւ Արայի արիւնով ասուեցաւ Ա-
րայապահան:

Անդուծիւն կայ ազգի մէջ (որ պատմութեան էլ սեփականութիւն է դառել), թէ Անայ սարի գլխի քաղաքը Շամիրամ է շինել և իւր անունով Շամիրամիւր է կոչել. բայց կան ոմանք-էլ, որ ասում են, թէ այն արև պաշտած քաղաք է՝ Շահ Մեր Կրու: Միջագետաց ամեն հրաշակերտները այս մեծագործ թաղութեան են ընծայեալ: Ինչ զարմանք է, որ յիրաւի Շամիրամ աստուածացուցած լինի Արային և նորա անդրկքը կամ անասապատները Արև անունով Շամիրամիւր պաշտած լինի: Չարեւանդն-էլ նոյն է, իբր պաշտեցին զարև անդ. Քաղրեւանդն-էլ հետու չէ, որպէս թէ բազ արեւու անդ: Բայց այս այն ժամանակ պիտի պատահած համարուի, երբ որ Սարէականութիւնը Հայաստանի մէջ մտաւ:

Արան-էլ Հայերի համար կարող էր լինել այն, ինչ որ Զիմշիզ Պարսից համար էր և ինչ որ Ապուլը Յունաց համար: Հայոց դիւցարանութիւնը շատ նշաններով ցոյց է տալիս, որ օտար ազգաց աստուածներուն առաջ հայացրել են, յետոյ այն հայ անուան տակը պաշտել: Երբ որ Զենդաւեստի Արմզդին կամ Յունաց Արէսին ուղեցան պաշտել՝ Արամին կոչեցին Արամապը և Հրատ՝ կայծակներու համար, և օտարազգի աստուած չրնդունեցին Հայերը:

Արայի մահէն յետ, թէ և Շամիրամ տուեց նորա որդուն ԿՐԻՍՏԻՆ Հայոց նահապետութիւնը, բայց երկար ջրակեց Հայաստանի խաղաղութիւնը: Նիւնուաս իւր մօր Շամիրամի դէմ ասպատակութիւն հանեց, Շամիրամ յաղթուած՝ փախաւ Հայաստան: Կորդոս կամեցաւ օգնել իւր բարերարին, բայց երկրի և ազգի գլխահարին, և նորա հետ մեռաւ պատերազմի մէջ: Այս անցքերը Հայոց երգարանները շատ տարի նուազեցին յուսումնասիրութեամբ տարի մէջ:

Կարգոսի որդի սօսանուէր ՄՆՈՒՇՆԻՄՆԸ մանկութեան հասակի մէջ գերի գնաց Նինուէ ու Քարիւնն : Հայաստան միւսանգամ ընկաւ Ասորեստանի լուծի տակ, և այնքան ժամանակ մնաց, մինչև որ Նինուէս յետ դարձուց Անուշաւանին իւր հայրենի նահապետութիւնը : Եւ որովհետև Անուշաւան մեռաւ անորդի՝ Հայկազանց նահապետութիւնը, որ սկսել էր Հայկէն և որդոց յորդիս տասն-պորտ տակել էր մօտ հազար հարիւր յիսուն տարի (այսպէս՝ Հայկ, Արմենակ, Արմայիս, Ամասիայ, Քեղամ, Հարմայ, Արամ, Արայ, Կարդոս, Անուշաւան) միջակտուր եղաւ և ժառանգութիւնը անցաւ ուրիշ ցեղապետութիւններու ձեռք :

Անուշաւանի յաջորդները, որոնք Հայոց նահապետութիւնը պայազատեցին՝ պատմութեան մէջ չունին մէկ մասնաւոր յիշատակ, այլ միայն անունները կան : Նոքա ազգը և երկիրը խնամելով և աշխարքը խաղողութեան մէջ պահելով՝ դուրս են ընկել պատմութիւնէն, որ առաջուան դարերումը միայն աշխարհաւոր սրածութեանց և արիւնհեղութեանց էր արբանեակ, այն պատճառաւ մենք այժմ չենք իմանում, թէ նոքա ինչ գործեր են գործել, ո՞րքան ժամանակ են նահապետական գահի վրայ մնացել և ազգը ինչպէս են կառավարել. նոյնպէս՝ ինչ իրաւունքով են ազգի նահապետութիւնը ստացել. եղել են մէջերը այնպիսի նահապետք, որ ազգէն լինէին ընտրուած, կամ հօրմէն որդին լինի ժառանգած կամ իրանց քաջութիւնը կամ բռնութիւնը լինի նրանց համար ճանապարհ բաց արած : Ենորհակալ ենք պատմիչներէն, որ դոնէ անուններն-էլ լինի պահել են և մենք իմանում ենք, որ Անուշաւանէն յետ նահապետ են նրատել Պարէտ, Արբակ, Զաւան, Փառնաս, Սուր, Հաւանակ, Ղաշտակ, Հայկակ Կ-դ, Ամպակ, Առնակ, Եա-

ւարչ, Նորայր, Վատամ, Կար, Գոռակ, Հրամտ, Ըն-
ձակ, Գղակ, Հաւրոյ, Չարմայր, Պերձ, Արբուն, Հոյ,
Յուսակ, Կայպակ, Սկայորդի:

Այս անունները կարգալու ժամանակը՝ կարծում
ենք թէ մէկ անմարդաբնակ, աւաղուտ, քարքարուտ
անապատի մէջ ման ենք դալիս համ մենակ, համ ան-
նպատակ և յանկարծ հասնում ենք մէկ դալարաղուարձ
հովիտ, որտեղ որ յոյս է դալիս մեր սրտի մէջ, թէ
այս կանաչ արօտի մէջ փոքր ինչ հանգիստ կրգտնենք
մեր անհանգիստ ճանապարհորդութենէն. բայց ինչ
զարհուրանք է դալիս մեր վրայ, երբ որ տեսնում ենք
ամեն կողմը դիակունք թափած, զէնքեր կտորտած,
արխներ ճապաղուած և հողելարքների վերջին հորն-
տիւնէն լալում է թէ՛ „Մ ենք ենք այն երեսուն հաղար
„Հայաղգի երիտասարդները, որ մեր հայրենիքէն
„հեռացանք, մեր ընտանեաց ծոցէն զրկուեցանք, ե-
„կանք այս օտար աշխարք՝ միայն մեր նահապետի
„քաջ անունը հաստատելու համար, օտարի պատե-
„րաղմի մէջ խառնուեցանք և մեր ոսկերքը մեր հայ-
„րենիքէն, սիրական Հայաստանէն հեռու՝ ցիր ու
„ցան արինք“: Այս ողորմ տեսարանը մեր աչքի
մէջ է դնում Չարմայրի անունը, որ պատմութիւնը
պահել է այն պատճառաւ միայն, որ նա գնացել է
Տրոյիայի օգնութիւն Յունաց գէմ, երբ որ ոչ նա էր
Յունաց ճանաչում և ոչ Յոյնք նորան, և այնտեղ զուր
իւր գլուխն-էլ է թողել և իւր երեք բիւր հայաղգի
զօրացն-էլ, որ եթէ իրանց տեղումը նստած լինէին,
և իրանց վարուցանքն անէին՝ Հայաստանը երեսուն
հաղարէն չէր որբանալ և չէր այրիանալ:

Այս հովիտէն, որ մեր յոյսը դատարկ թողաց և
սարսափամբ աթափեցուց, փախչելով հեռանում ենք

և ընկնում նոյն թափառական շրջմովիկ անապատի
խորտարորտները, անդադար յիշելով պատմարաններ
ու անիրաւութիւնը, որ փոխանակ այնքան արեան
խոխոջանքը նզովելու, մարդկան սպանդանոցը՝ ապարէս
առաքինական հանդիսից են առադրել և մարդախոշոշ
սրիկաներին քաջ են կոչել և նոցա մարդկութեան
դէմ արած վնասները մեծագործութիւն են անուանել,
և նոյն մտածութիւններէն չենք կարողանում սփոփուիլ,
դուրս դալ, մինչև որ հասնում ենք ՍԿՅՈՐԴՈՒ անուանը:
Ո՛վ դիտէ, թէ որքան ազգաշէն և աշխարհաշէն
գործեր են մնացել լռութեան մէջ, քանզի Չարմայրը
առաջ կամ յետոյ խաղաղասէր նահապետներէն
յառաջացած, և նորա անունն է գրուել Հայերի
կարմիր արիւնով, որ ոչ թէ ազգասէր նապատակի
համար է շաղախել հողը, այլ ազգաւեր կիրքերու
համար:

Չէ յայտ, թէ Սկայորդին ում որդի էր, բայց երևում է,
որ սորա հայրը կամ անապարծ մարդ էր՝ Թերսիտէսի
հատը, կամ իսկ դիւցազն էր Ս. քիլլէսի նման,
որ տուել էր իւր որդուն այնպիսի չքնաղ անունն՝
Սկայորդի, հսկայի որդի, դիւցազնի ծնունդ:
Եթէ դրած լինէր նորա անունը Սկայահայր,
սիտի ասէինք թէ մարդարեւացել է, որովհետև թէպէտ
Սկայորդու կատարած գործերը մեղմէն ծածկած են
մնացել և մենք չը գիտենք թէ նա իւր փառաւոր
անունը արդարացրել է, թէ ոչ. բայց այս լու իմանում
ենք, որ նորա գործերի մէջ քան զամենը երևելի և
արժանայիշատակ այն է, որ Պարոյր նորա որդի էր
և նա մեր Հայկազանց թագաւորական ցեղի արմատն էր,
որ այնուհետև մինչի Ս. Լէքսանդր Մակեդոնացու
աշխարհակալութեան ժամանակը տևեց Հայաստանի
գահի վրայ փոփոխական բաղդով:

Սկայորդու օրերումը եկան Նինուէէն Սենեքերիս
Ասորեստանի թագաւորի որդիքը՝ Աւարաթը և Սա-
նասար, որք Հայաստանի մէջ հիւրընկալութիւն գտան
և դարձան աղգասկտ Արծրունիներուն, Քնունի-
ներուն և Սանասարներուն:

ՊՍՏՄԵԿԵՆ ԺԱՄԵՆԵԿ

(620—330 Քրիստոսի ճնանալէն առաջ)

5

Պարոյր Հայոց առաջին թագաւորը. Հրաշեայ. Տիգրան 1-դ. նորա մշած
մարտը Սժգազակի դէմ. Տիգրանի բարեկարգութիւնները. Ասազան,
Ասէէ և նորա մահով հայկազեան հարստութեան վերջանալը:

ՊՍՏՄԵՐ, Սկայորդի նահապետի որդին, իւր հօր մահ-
էն յետ՝ դարձաւ նորա ժառանգ և Հայոց աղգի
նահապետութիւնը յաջորդեց: Մարաց աղգը վաղ էր
դուրս եկել իւր թափառական և վայրենի կեանքէն և
ստացել էր թագաւորութիւն և աղգութիւն և Պա-
րոյրի ժամանակը Մարաստանի թագաւորը՝ Կիաքսար
պատերազմ ունէր Ասորեստանեաց Սարգանարալ
թագաւորի դէմ: Այս Կիաքսարը հրաւիրեց Պարոյր
նահապետին, որ իրան ղինակից լինի և խոստա-
ցաւ նորան սալ Հայաստանի վրայ Խազուոր անուն:
Չենք հասկանում, նահապետ անունը ինչո՞վ էր պա-
կաս քանզ թագաւոր անունը, և եթէ Հայաստանին
անշուշտ հարկաւոր էր թագաւոր անունը՝ մի՞թէ

Հայոց աղգը չէր կարող տալ իւր նահապետին, Պարոյր ինչի՛ յօժարեցաւ Մարաց թագաւորէն առնուլ ինչպէս սպարգև. Մարաց թագաւորին ո՛վ էր տուել, բայի իւր աղղէն: Չարմանք:

Պարոյր միտքը չըբերեց Չարմայրի անցքը, գնաց էլի օտարներու սլատերազմի մէջ խառնուելու. իւր հայազգի քաջերին տարաւ Ախաբսարի օգնութիւն. Հայերը և Մարք միասին մտան Ասորեստան, Նինուէ քաղաքը սաշարեցին ու առին: Սարգանարալ և իւր հարձերը իրանց գանձերով արքունական սպարանքի մէջ էրուեցան. սորա ոսկեխառն մոխիրը՝ Բելեսի (որ նոյնպէս օգնական էր Ախաբսարին) սայլերով տարաւ Բարսիլն: Ախաբսար տուեց Պարոյրին արքայական թագ և այնուհետև նահապետական անսլաճոյճ սլարդութեան տեղ՝ մտաւ Հայոց աղգի մէջ թագաւորական շուքն ու փառքը: Արմաւիր, որ հազար տարուայ չափ ժամանակ նահապետութեան մայրաքաղաք էր Հայաստանի, այժմ դարձաւ թագաւորանիստ և աթոռանիստ և այսուհետև պիտի սկսի թագաւորութեան ժառանգութիւնը տևել Սկայորդու տան մէջը և ցեղի մէջը: Ի հարկէ, եթէ Հայոց բնածին բարեխառնութիւնը և չափաւորութիւնը չըզհայանէին արքունական դրանը՝ նախնեաց սլարդութիւնը, Մարաց, Բարելացոց և Ասորեստանեաց շռայլութիւնը շուտ կարող էր մուտ գտնել: Բայց այսու ամենայնիւ Հայաաղգի զօրքը, որ Հայկի ժամանակ տեսանք տկար և մենակ ներս ու աղեղով և հաստ բիրերով զինուած, այնքան ժամանակ անյնեղէն յետ, Արամի ձեռքի տակը այնքան արշաւաններ անեղէն յետ և Չարմայրի հետ Հելլէնացոց դէմ կանգնեղէն յետ և շատ ազգերու հետ տեսութիւն, ծանօթութիւն, յարակցութիւն ունենալէն յետ՝ այժմ Պարոյրի ժամանակը պիտի ունե-

ցած լինին թուր, դրահ, վահան, և այլ հարկաւոր պատերազմական զինուորական կազմութիւններ, թէ և ամենն-էլ թերակատար, որովհետև դեռ ևս թրերը վաղրի նման կարճ էին, վահանները կաշիէ կամ թաղիքէ, և կաճէ վերարկուն էր նոցա դրահը, և հեծելազօրքը սակաւաթիւ: Այս դրութեան մեջ-էլ Պարոյրի օրերը Հայերու զօրութիւնը մեծ էր և անուանի և Պարոյր ինքը քաջ և առաքինի:

Պարոյրի որդին-էլ՝ ՆՐԱՅԵՍՅ, որ իւր հօր թագաւորութեան ժառանգութիւնը ստացաւ, նոյնպէս հզօր էր. բայց նա-էլ այլոց պատերազմներէն չբզուշացաւ, և երբ Նարուզոտոնոս որ՝ Բաբելոնոց թագաւորը կամեցաւ երթալ Երուսաղէմի վրայ, Հրաչեային օգնութիւն հրաւիրեց և նա-էլ դնաց: Երուսաղէմը առին, Յուդայի թագաւորութիւնը կործանեցին և Հրաչեայ բերեց Հրէաստանէն Բաբելոնոսէնց ցեղապետութիւնը:

Հրաչեայ իւր հօր՝ Պարոյրի թագաւորութիւնը թողուց ժառանգութեամբ իւր որդուն՝ ՓՆՌՆՆԻՍՏԻՆ, նա-էլ անցուց իւր որդու՝ ՊՆՃՈՅՃԻ ձեռքը և այսպէս որդոց յորդիս թագաւորեցին՝ Պաճոյճ, ԿՈՌՆՆԿ, ՓՆՌՈՍ, ՀՆՅԿՆԿ 2-7 և ԵՐՌԻՆԵԴ 1-7 սակաւակեաց, որ իւր յաջորդութիւնը տուեց իւր որդուն՝ ՏԻԳՐՆՆ 1-դին: Հրաչեայէն մինչի Տիգրան 1-դը նոյն լոկ անուններու անպատու անտառն է երևում, բայց մենք չենք կարծում, թէ սոքա ամենքն-էլ յիշատակի անարժան մարդիկ էին: Եթէ Յունաց պատմիչք, որոց ձեռքը տուել էր Նախասահմանութիւնը գրիչ անցքերը արձանագրելու համար՝ նոցա գործերը չեն գրել, անշուշտ Զարմայրի արշաւանի վրէժն է, որ կամեցել էն անցայտ թողուլ նորա յաջորդաց գործերն-էլ: Իսկ հայազգի պատմչաց յիշատակարաններու սոփեւքը (որ անհնար

է թէ շքինէին) զո՛հ գնացին ժամանակի սմեհածախ
փոխոխութիւններուն և նոցա սմեհակործան արհա-
ւիրներուն:

ՏԻՔԵՅՆ 1-դ երբ որ նստաւ իւր հայրենեաց թա-
գաւորական աթոռը՝ կամեցաւ Հայոց ազգի միտքը
բերել Հայկի ու Արամի ազգասիրութիւնները: Եր-
կու գլխաւոր դործ դրաւ մտքումը կատարել. մէկ
իւր ազգը զօրացնելով թշնամիներին տկարացնել և
Հայաստանից դուրս հանել, և երկրորդ՝ ազգի աչքը
բանալով՝ Արամի և Պարոյրի հայրենասիրական դի-
տաւորութիւններուն հասցնել, վայրենի ազգերէն բա-
ժանել և հրահանդեալ ազգերու նման մեջերը լու-
սաւորութիւն, բարեկրթութիւն, մարդալարութիւն
և քաղաքականութիւն, ինչ որ Արամ ցանկացել էր և
Պարոյր սերմանել էր՝ արմատացնել: Այս սրտածա-
ռաւ առաջ իւր զօրաց բանակը կարգաւորեց և ձիա-
ւոր զօրքը շատացուց և զօրաց մեջ սպառազինու-
թիւն գործածելը սովորեցուց, և երբ լաւ սխառաս-
տուեցաւ զօրքը՝ ինքը սկսաւ իւր զօրքին զօրալարու-
թիւն անել և Հայաստանի երկիրները, որն որ թրշ-
նամիք օխրատելու էին՝ քիչ քիչ յետ անուլ: Երբ
որ այս կերպով բոլոր Հայաստանը ազատուեցաւ
թշնամիներէն՝ սկսաւ այնուհետև ինքը թշնամիների
երկիրը մանել և համարեալ թէ Արամի բաց արած
ճանիտը դնալով, ուր որ Արամ իւր աշխարհակալու-
թեան վերջ էր արել, այնտեղ Տիգրան սկսաւ իւր
աշխարհակալութիւնը և փոքր Ասիայի ծովեզերեաց
Յունաց ազգին նուաճեց: Այս միջոցները Հայոց Ա-
սորիքն-էլ, որ Պարոյր սկսել էր, Հայաստանի հետ
միտարեց, որով Հայոց տէրութիւնը հասաւ Միջ-
երկրեաց, Պանոսի և Արբիպեղաղոսի ծովամիներին:
Արամհետև այս կողմերը վաճառականութիւնը շատ

ժամանակ առաջ ծաղկել էր, յորդորեց Հայերին, որ
առևտրականութեամբ պարապեն և վաճառականու-
թիւնը շուտ կարողացաւ ճոխութիւն ներս բերել
Հայաստան, թէպէտ և դեռ ևս փողի գործածութիւնը
չըզխտէին. ճոխութեան հետ միասին մտաւ աղղի
մէջ մարդավարութիւն, հրահանգութիւն, բարեկրթ-
թութիւն, ուսելու, խմելու, հագնելու, նստելու
վերկենալու կարգ ու եղանակ: Եւ որովհետեւ ինքը
Տիգրան մէկ գեղեցիկ, խարտեաշ, զուարթադէմ և
վայելչահասակ երիտասարդ էր, նայնպէս և իւր ա-
մուսինը՝ Գարուհի թագուհին մէկ շքնաղ ու հրաշաղի-
տակ պատանեկոհի էր, նոցա օրինակը բաւական էր
աղղին զարթեցնելու համար:

Հայերը, որ շատ ժամանակ առաջ դուրս էին ե-
կած իրանց նախկին վայրենութենէն, Տիգրանի օրը
հասան այն քաղաքակրթութեան աստիճանին, ինչ որ
այն ժամանակուայ կրթութեամբ աղղերը՝ Մարք. Աստ-
րիք, Միջագետացիք, Փիւնիկեցիք և ուրիշ Ասիացի
և Ափրիկեցի աղղերը ունէին գործնականապէս: Մա-
րաց թագաւորութիւնը հասել էր իւր յետին աստի-
ճանին և մօտ էր կործանման: Պարսիկք սկսել
էին աշխարհումը երկել: Նոցա իրանց անյայտ սե-
ղէն հանել էր Ալեքսանդրոս՝ Աժդահակ թագաւորի թոռը,
որ կամենում էր իւր մեծ հօրը կամ պապին թա-
գաւորութենէն զրկել և ինքը նորա տեղը նստել: Եւ
որովհետեւ այնժամանակ Տիգրան մեծ անուն, զօրու-
թիւն և Ասիացի թագաւորներու մէջ երկելի տեղ
ունէր՝ Աժդահակ և Ախւրոս միօրինակ էին ուղում
նորա հետ բարեկամ լինել: Աժդահակ կամենում էր
նորա հետ նոր դաշնադրութեամբ իւր թագաւորու-
թիւնը ամրացնել, այն պատճառաւ ուղեց իւր կնու-
թիւն Տիգրանի քրոջը՝ Տիգրանուհի զշխոյին. Ախւրոս

Խը միտքը չը յայտնելով միայն բարեկամութեան ա-
նունով էր առաջադրում կապակցութիւլ: Տիգրան եր-
կու կողմնէլ շահեց: Աժդահակին հարմարաց իւր
քրոջ գեղեցիկ օրհորդին, իսկ Ախւրոսի հետ կա-
պուեցաւ սերտ բարեկամութեամբ և մտերմութեամբ:

Աժդահակ երբ որ տեսաւ թէ Տիգրան բարեկա-
մութիւն սկսաւ անել Ախւրոսի հետ՝ վախեցաւ, և ո-
րովհետև յոյս չունէր, թէ Տիգրան իւր բարեկամու-
թեան դաշն Ախւրոսի հետ կըլսուէ և իւր հետ կը-
միաւորուի նորա դէմ՝ սկսաւ հնարներ նիւթել, որ
Տիգրանին սպանէ: Տիգրանուհին իմացաւ իւր ա-
սպանորհ ամուսնոյ վատ խորհուրդը. նորա սրտի
մէջ ազդասիրութիւնը զօրացաւ անձնասիրութեան
վրայ. Տիգրանին ծածուկ իմացուց այս դաւաճանու-
թեան խորհուրդները և ինքը մէկ հնարքով վախաւ
եկաւ Հայաստան:

Այնժամանակ, երբ որ Ախւրոս օգնութիւն ուզեց՝
Տիգրան իւր զօրքը միաւորեց Պարսից զօրաց հետ և
միասին դնացին Աժդահակի դէմ: Զակատամարտի
մէջ փեռաց և աներձայ մէկըմէկու հանդիպեցան: Աժ-
դահակ վաղեց Տիգրանի վրայ, բայց Տիգրան գե-
ղարդով ընդունեց իւր քրոջ ապարազը անողին: Աժ-
դահակ Տիգրանի հարուածէն փչեց այնտեղ վերջին
շունչը և այս մենամարտը վճռեց Մարաց միասկեռու-
թեան օրհասը: Մարաց ինքնակալութիւնը փոքր ինչ
յետոյ վերջացաւ Բարելոնի կործանմամբ և նորա ա-
ւերակաց վրայ դրեց Ախւրոս Պարսից միահեծան տէրու-
թիւնը: Տիգրան դարձաւ փառօք Մարաց և Բարելոնի
արշաւանքէն Հայաստան. իւր քրոջ Տիգրանուհին
բնակեցուց իւր նորաշէն Տիգրանակերտ քաղաքումը և
Մարաց երկրէն ու Բարելոնէն բերած գերբներուն
գետեղեց իւր աշխատումը, որոյ հետ միաւորեց Մի-

Չաղեւոք Հայոց ասած երկիրը: Աժդահակի ցեղէն
առաջացաւ Մարացան ազգապետութիւնը:

Յետ այսորիկ Տիգրան աւելի սկսաւ բարեկարգել
իւր Հայրենիքը ազգի ազգի ճէսերով, որոց մէջ կրօ-
նական գործերն-էլ չբխուսեցին նորա աչքէն: Հայերը,
որ Հայկէն մինչև Արամ, ինչպէս որ կարծւում է,
պահել էին Միաստուածապաշտութիւնը, այն ժամու-
նակները սկսել էին մուտ տալ զանազան սնտախա-
պաշտ սովորութիւններու, որոց մէջ աւելի էր Ար-
մենակայ Սոսիներու անտառումը՝ քաջերի բնակու-
թիւն կարծելը, ուր որ Անուշաւանն-էլ էր նուի-
րուած և այնտեղ հմայութիւնք-էլ էին լինում: Միւս
արևելեան ազգերի նման շունենալով մտախոհական
ցնորքի խօթութիւնը, երբ որ սարէականութիւնը
սպրդեցաւ նոցա մէջ՝ Հայերը բարւոք համարեցան
Հայկին պաշտօն մատուցանել, քան Բէլին, Արամին
Արամազդ ստել, քան Արմզդին, և էլի նորան Հրատ
կոչել, քան Արէսին, Արային Արև կանչել, քան Ա-
պողոնին, և այդ պաշտօնը երկնքի կապուտակ կամարի
տակը մատուցանել, քան շինուածների մէջ, որոց
պատերը համարում էին Հայք իրանց քաջերու բանտ,
և տաճարներ չէին շինում, մէկ անգամ աչքերը բա-
բելոնեան աշտարակէն վախեցած ունենալով, որ ոչ
այլ ինչ էին համարում, քանթէ աշտից տեղ:

Այս պաշտօնն-էլ Հայերը, որ անտառների մէջ,
թաւ ծառերի տակ, աղբիւրներու մօտ, սարերու դա-
լարադեղ հովիտներումը և կարկաջասահ վտակների
ափումն էին կատարում, ոչ երկրապագութեամբ էին
այն անում, ոչ աղօթքներ վափաւալով և զոհեր բերե-
լով, կամ խունկ ծխելով, կամ ծառերու վրայ կա-
պերտներ կախելով, այլ ուրախութեամբ սուփրայ
բանալով և այն քաջերու գովասանութիւնը երգելով,

որոյ Տեառ միշտ զու գրնթաց էր լինում աղգային փանդիւղ, պատրաստած կերակուրը ուտելը և կարմիր գինին խմելը և յետոյ փոքր ինչ կարտուելը երգերի ձայնով, էր լրութիւն նոցա պաշտաման, որ միշտ քաջերուն աներկու թասպէս իրանց մէջ էին կարծում և պահում էին ամեն ժամանակ բարեխառնութիւն, չափաւորութիւն և պարկեշտութիւն: Տիգրան այս նախնի սովորութիւնները նորոգեց, և երբ կամենալով այն ծէսերին աւելի փողփիւն տալ՝ բնակչաց մէջ դասակարգ դնելու ժամանակը ուղեց քրմութիւն-էլ ներս բերել: Ազատասէր Հայերը, դուրսէ թէ առանց դիտակցութեան մտաց, կաստական առանձնադարմութեան դուռն ճանաչելով՝ այդ նորաձեութիւնը չըթողին իրանց մէջ արմատանալու:

Տիգրան Ա-դ իւր թագաւորութիւնը թողեց իւր քաջ որդուն՝ ԱՍՏՄԳՆԻՆ, որ Տին ժամանակուան հրականերու նման դիւցազնական ունէ էր: Սորա քաջութիւնները այնքան երևելի էին, որ Արաստանի մէջ նորա անառգատիկերը աստուած էին ճանաչում և պաշտում էին: Բայց Հայերը, որոց մէջ դեռ ևս չէր մտել անդրի կամ դրօշեալ պաշտելը՝ չըպաշտեցին շատ ժամանակ, բայց նորա վրաց դովառանութեան երգերը աղգի մէջ շատ դարերով մնացին:

Ահազանին յաջորդեցին որդոց յորդիս այս թագաւորները՝ ՄԹՄԻՍՆ, ՆԵՐՍԷՅ, ԶԱՐԵՅ, ԱՐԾՈՒ, ԲՍՅԳԱՄ, ԱՄՆ, որ Շամիրամակերտին և Բղնունեաց ծովին տուեց իւր անունը, և Աանայ որդին ԱՍՅԷ, որ Պարսից վերջին Գարեհ թագաւորին օգնութիւն անելով՝ Ալէքսանդր Մակեդոնացու դէմ պատերազմեցաւ և ճակատամարտի մէջ մեռնելով՝ Սկայորդու ցեղը, որ տնել էր երեք հարիւր յիսուն տարի, Հայաստանի թագաւորութեան աթոռէն վերջացուց,

Այստեղ յայտնի երևում է, որ Յունաց պատմիչք շատ անցք, ուր որ Հայերու վրայ խօսք պիտի լինի, իսպառ լռել են, կամ բոլորովին Հայերի գործքը ընծայել են Պարսից: Տիգրան Ախուրսէն առաջ էր փոքր Ասիայի մէջ թագաւորել. Ալիս գետը Արամի դրած սահմանադրութիւն էր Տիգրան նորա վրայ աւելացուցել էր նոր աշխարհակալութիւններ. ո՞ր ճանփով դնաց Ախուրս Արեստի վրայ, որ Տիգրան չիմացաւ. կամ պիտի Ախուրս այն երկիրները առած լինի Տիգրանէն, կամ իսպառ Հայոց թագաւորութիւնը վերջացած լինի: Եթէ դաշնակից էին միմեանց՝ ինչպէս էր կարելի, որ Աստագն Կամբիւսի հետ չըլինէր. Եղիստոսի առման ժամանակը, կամ Առաւան չըլինէր Գարեհ Աշտասպեայ արշաւաններումը Սկիւթացոյ դէմ և մանաւանդ Մարդոնիոսի հետ Աթենացոյ դէմ: Մարտիոնիոսի ճակատամարտումը չըկար Երեսէ, թերմոպիլեա Պատերազմումը չըկար Զարեհ. Թէմիստոկլի ու Ալիմոնի դիմացը կանգնած չէր Արմուգ: Եթէ սոքա Պարսից ամեն գործերի մէջ-էլ գործակից չէին՝ ինչ տեղէն յանկարծ Աստէ գտնուեցաւ Ալէքսանդրի առջև: Զէ: Հերոդոտոս շատ բան գանց է արել և շատ-էլ անունները փոխել է: Ա՛յլ կարող է ստուգել, թէ Մարդոնիոս՝ Գարեհի փեսան ինքը Երեսէ հայոց թագաւորը չէր, որ Հերոդոտոսի դրջի տակէն Մարդոնիոս է դուրս եկել: Տեսնենք Պարսից պատմիչք-էլ ճանաչո՞ւմ են Մարդոնիոսին:

ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ

(150 տ՝ Քրիստոսէն առաջ հինշ 31 տ՝ Քրիստոսէն յիտ)

6

Սրշակունեաց հարստութեան սկիզբը. Վաղարշակ 1-դ. Հայոց պատմութեան գրուելը Մար Սրաս Կատինայէն. Սրշակ 1-դ. Սրտաշէս 1-դ. Տիգրան 2-դ. Միհրդատի պատճառաւ մարտ մղելը Հռոմայեցոց դէմ. Հռոմայեցոց արշաւանքը Հայաստան. Սրտաւազ:

ՄԱԿՍՍԵՆԻ Մակեդոնացու աշխարհաափիւռ հոօրինքնակալութիւնը իւր մահէն յետ չորս քաժին արին. Հայաստանը մնաց Ասորոց Սելևկիացոց քաժնի մէջ, որն որ սակաւ ժամանակ տեւելէն յետ՝ ընկաւ քոլորովին Պարթևաց Մեծ Արշակ թագաւորի ձեռքը, որ Կիւրոսի կործանուած աթոռը նորոգելով՝ թագաւորեց Պարսից վրայ: Այս Մեծն Արշակ տուեց Հայաստանը իւր եղբոր Վաղարշակին և կարգեց նորան Հայոց թագաւոր: ՎԱՂԱՐՇԱԿ 1-դ. Հայաստանի մէջ դրեց Արշակունեաց հարստութեան հիմը. ինքը իւր համար ընտրեց մայրաքաղաք և աթոռանիստ Մծրինը, Պարսից աշխարհին մօտիկ լինելու պատճառաւ, որով ոչ միայն Արմաւիրը, որ երկու հազար տարուան

մայրաքաղաք էր աղգի, այլ և Արտաշատը, որ նորա-
շէն ակթոռանիստ էր, Աննիբաղի Կարթագինեցոց
ղորավարի ձեռագրութիւնով Արտաշատ կուսակալի
ժամանակը հիմնարկած մնացին ինչպէս որք և այրի:

Աղարշակի համար աւանդութիւն կայ, իբր թէ
նա լինելով ՚ի բնուստ հետաքրքիր մարդ, երբ որ
Հայոց աղգի թագաւորութիւնը ստացել է, կամեցել
է իմանալ, թէ Հայաստանը ՚ի հնումն ինչպէս աշ-
խարք է եղել. Հայերը ինչ աղգ են. ո՞վ է եղել սոցա
արմատը կամ աղգի գլուխը. և երբ տեսել է, թէ
Հայաստանի մէջ Հայոց աղգէն իմանալու չէ կարող՝ մէկ
գիտուն Ասորի է գտել Մայ Աբու Կաթնայ անունով,
և նորան մէկ յանձնարարական գրով ուղարկել է իւր
եղբոր՝ Արշակ Մեծ Պարսից թագաւորի մօտ, որ նո-
րա թագաւորութեան հին յիշատակարաններէն կա-
րելի է թէ կարողանայ մէկ տեղեկութիւն քաղելով
պատմութիւն շինել ու բերել:

Մար Աբարը, Արշակայհրամանով՝ նորա գիւան-
ները քրքրել է և մէկ գիրք է գտել, որ իբր թէ
Ալէքսանդր Մակեդոնացու ապսպրանօք է գրուած
եղել, և այս գրքի մէջէն գտել է Հայաստանի և
Հայոց աղգի ծագման և մինչև Արհէ շարունակու-
թեան պատմութիւնը և բերել է Աղարշակի համար:
Հայաստանը մոռացել էր իւր Մասիսը, Նոյի տա-
պանը, իւր Հայկին ու Արամին, իւր Արային ու Չար-
մայրին, իւր Պարոյրին ու Տիգրանին, իւր Արհազ-
նին ու Արհէին. շէն կենայ Աղարշակը, որ Պարթեաց
անապատներէն եկաւ մեր հայրենեաց կորած փառքի
այս յիշատակները կենդանացնելու համար: Մար Ա-
բաւ Կաթնայի համառօտ ցեղարանութիւնը Աղար-
շակի համար ճանապարհ բացեց, որով նա կարողա-
ցաւ Հայոց հնութիւնները նորոգելու միջոցներով

Հայոց վաղնջուց նահապետական տներէն և օտարազգի ցեղերէն Պարսից Մարդաւաններու (satrap)* նման նահապետութիւններ սահմանել: Անհնար է, թէ Տիգրանի և Պարոյրի ժամանակն ևս չըլինէին այն տասնութնգ աշխարքը, որոնք Մեծ Հայք անուանեալ երկիրն են կազմում, այսինքն՝ Տայք, Գուգարք, Աւաիք, Փայտակարան, Արցախ, Սիւնիք, Ատրպատական, Վասպուրական, Կորձայք, Մոկք, Տուրուբերան, Ծովիք, Աղձնիք, Բարձր Հայք և Արարատ, կամ միւս մասին բաժինները, որ Փոքր Հայք են ասում: Բայց Վաղարշակի ժամանակը և՛ս առաւել յայտնի որոշուեցան: Գուցէ թէ Վաղարշակ Պարոյրի և Տիգրանի, կամ լաւ ևս՝ Հայկի և Արամի հին կարգադրութիւնները նորոգեց, բայց սլարթեական ողւով և համբաւը այնպէս մնաց, թէ նոր հնարեց. այսու ամենայնիւ պիտի ասենք, թէ Վաղարշակ մեծ լոյս տարածեց Հայաստանի հնութիւններու մթնութեան վրայ: Հայաստան նոր կերպարանք ստացաւ, նորա մէջ սլարթեական տարրը զօրացաւ, սկսաւ ծաղկիլ, յառաջանալ և սլաղարերել նախնի Հայկաղանց անհետ լինելը:

Վաղարշակի քաղաքական բարեկարգութիւնները առժամանակ միջոցատու կտրուեցան: Մակեդոնական տիրապետութեան համախոհները մէկ Մորիիւլիկէս անունով քաջ արքայորդու դրօշակի տակ ժողովումը՝ կամենում էին Վաղարշակի ձեռքէն նոր սլարթեական կարգերով և ձեւերով կազմակերպած Հայաստանը յափշտակել: Այլ Հայերը, որ զգուած էին

*) Մարդաւան (մարդ—կոյս կամ սահման, սան—պետ, ուրեմն կուսակալ, markgraf) ասելով պիտի հասկանալ Պարսից թագաւորի ընտրած մէկ գաւառի կամ նահանգի կառավարիչը, որ իրան յանձնած ժողովրդի վրայ անկողար իշխանութիւն ունէր, որ ՚ի հարկէ, միշտ շարաշար դորձ էր անում:

Յունաց ազգէն, և՛ս առաւել Մակեդոնացոց ժպրհու թիւնէն՝ օգնեցին թագաւորին: Պատերազմի մէջ սպանուեցաւ Մորփիւլիկէս և թշնամիները նուաճուեցան: Վաղարշակ սկսաւ դարձեալ իւր կարգադրութիւնները և իւր քաներկու տարուան թագաւորութեամբը Հայաստանի շատ փոփոխութիւններու պատճառ դարձաւ, հրապաշտութիւնը նորա մէջ թագաւորեցուց և խաղառ դուրս հանեց ազգի մէջէն նախնի պարզութիւնը, հաւասարութիւնը և աղատասիրութիւնը, և նոյա փոխարէն ներս բերեց օտարացիչ նախարարներու հետ և օտար կրօնի հետ իշխանութիւն և ստրկութիւն:

Վաղարշակի աթոռը ժառանգեց իւր որդին՝ ՄԵՂՍԻ 1-դ, որ 15 տարի քաջութեամբ կառավարեց Հայաստանը իւր հօր հիմնած կարգերու վրայ:

ՄԵՍԵՂԻՍ 1-դ յաջորդեց իւր հօր Արշակի թագաւորութիւնը և սկսաւ քաջագործութիւններու ետեւէն ընկնիլ: Մորա ժամանակը Հայոց Արշակունեաց թագաւորութիւնը հասաւ իւր բարձրութեան վերջին ծայրը: Արուհեան Մեծն Արշակ, որ տուել էր Վաղարշակին Հայոց թագաւորութիւնը, երկրորդական պատիւն էր տուել նրան. իսկ Պարսից թագաւորութեան համար նախագահութիւնն էր պահել: Արտաշէս այդ նախագահութիւնը խլեց Պարսից Արշէղ թագաւորէն և իւր որդուն՝ ՏԻԳՐԵՆԻՆ կարգեց Արարատեան թագաւոր և իւր Արտաշէսայ դուստրը հարսնացնելով Վրաց երկրի բզեշխին՝ Մհերդատին և պակասաւ սարերի կողմը և Պոնտոսի ծովեզերքումը նորան թագաւոր դնելով ինքը կոչուեցաւ «թագաւորների թագաւոր» և բազուկը տարածելով մինչև Արոպոնտոս, ինչ երկիրներ որ կային Պոնտոսի և Միջերկրական ծովերու մէջ, որ Արամի և Տիգրանի ժամանակը Հայաստանի հետ չէին միա-

ւորուել՝ նուաճեց, և 25 տարի թագաւորելէն յետ,
իւր թագաւորանիստ քաղաքէն դուրս սպանուեցաւ՝
իւր զօրքի մէջ մէկ շիւթի և խռովութեան ժամանակ:
Սա էր Հայոց Քսերքսը:

Տիգրան 2-դ իւր հօր ցրուած զօրքը ժողովեց և
սկսաւ իւ հօր կիսակատար թողած դործերը գլուխ
տանել: Փոքր Ասիան (Անատոլու) տուեց իւր քեռ-
այր Միհրդատին, որ քաջ և անվեհեր, բայց և կռուա-
սէր մարդ էր: Միհրդատ սկսաւ Հռոմայեցոց դէմ մա-
քառիլ: Հռոմայեցիք մէկ այնպիսի ազդ էին, որ Նա-
խասասմանութիւնը պիտի տար նոցա բովանդակ աշ-
խարքի վրայ տիրապետութիւնը: Բայց ո՞վ է կարող
գուշակել, թէ Նախասասմանութեան խորհուրդը
հանդերձեալ ժամանակների համար ինչ է: Միհրդատ
անիրաւութեամբ պատերազմ գրգռեց և մէկ քանի
կռուի մէջ-էլ յաղթեց Հռոմայեցոց լեզ էոններուն՝
և նոցա զօրապետներուն. բայց այս յաղթութիւնները
չարին ուրիշ ոչինչ, եթէ ոչ միայն զայրացուցին Հռո-
մայեցիներին և նորանց զօրութիւնը շարժեցին Միհր-
դատի դէմ:

Տիգրան մէկ սխալմունք էր արել, որ Միհրդա-
տին, այն փառասէր և անհանգիստ զօրավարին տուել
էր իւր աշխարհի մէկ կողմի կուսակալութիւնը. երկ-
րորդ սխալմունք ևս այս արաւ, որ նորա գրգռած պա-
տերազմների մէջ ինքն-էլ մտաւ և Հայաստանի բաղդը
գրաւ կշիռի անհաստատ թաթումը: Հռոմայեցիք,
որ Աննիրազին և Պիւռոսին յաղթելէն յետ՝ կամաց
կամաց ոտքերը առաջ դնելով՝ արեւմտեան կողմէն
սկսել էին Իսպանիային, Լուսիտանիային և Քալ-

*) Legion — զօրաբաժին, որ բաղկացած էր լինում 30,000-ից մինչև
90,000 զինուորիկէ:

լիային տիրելու և մինչև Քրիտանիա ձեռքերը երկայնացնելու. արևելքէն՝ Յունաստան, Թրակիա և Փոքր Ասիայի ծովափուկքը գրաւելով՝ մօտենում էին Պարթեաց տէրութեան. Հռոմայեցիք, որ սովոր էին թագաւորներին յաղթել, աշխարհները ձեռներէն յափըշտակել, գանձերը Հռոմ հրել, տեսնելով որ Միհրդատա երկրորդ Աննիրազ գանձալով նրանց դիւին՝ իրանց զինուոյ յառաջադիմութեան սատան է և իրանց աշխարհակալութեան խոչնդակ, առաջ ուղարկեցին նորա դէմ իրանց անյաղթ և բարերաստիկ (Felix) Սիլլա Առուներ լիոսին, որ եկաւ և մէկ քանի պատերազմներէն յետ հաշտութիւն արաւ: Սիլլայէն յետ Հռոմայ Երթակոյտը միւսանգամ ուղարկեց Միհրդատի վրայ ուրիշ զօրապետներ, որ Միհրդատի հանած նոր աղմուկները դադարեցնեն: Այս զօրապետներէն մէկը՝ Լուկուլլոս առաջ մէկ քանի անգամ յաղթուեցաւ, յետոյ այնպէս յաղթեց Միհրդատին, որ Միհրդատա հարկադրուեցաւ փախչել ու գալ իւր աներձագ Տիգրանի՝ Հայոց թագաւորի մօտ: Լուկուլլոս դեսպան ուղարկեց Տիգրանի կուշտ և պահանջեց, որ Միհրդատին սոյ Հռոմայեցոց ձեռքը: Երբ որ Տիգրան յանձն չառաւ կատարել Հռոմայեցոց այս պահանջը, Լուկուլլոս պատերազմ բացաւ Հայոց դէմ: Առաջ Հայերը յաղթեցին, բայց յետոյ Տիգրանի անզգուշութեան պատճառաւ յաղթուեցան. այլ այս անյաջողութենէն յետ միւսանգամ զօրացան և Հռոմայեցոց վրայ այնպիսի մեծ մեծ յաղթութիւններ արին, որ Հռոմայ Երթակոյտը (senatus) ստիպուեցաւ Լուկուլլոսին յետ կանչել և նորա տեղ Պոմպէոս զօրավարին ուղարկել Հայաստան: Այս յաջողակ երիտասարդը յաղթեց Միհրդատին և Հայաստան մտաւ Տիգրանի որդոյ մատնութեամբ. բայց առանց պատերազմի հաշտութիւն արաւ Տիգրանի հետ:

Երբ որ Պոմպէոս փոքր ինչ հեռացաւ Հայաստանէն՝ Միհրդատ միւսանդամ զօրացաւ. բայց այս նորա վերջին ճաշփարատն էր. այսպէս առկայծեալ ճրագը իւր յետին լոյսը կը ծաւալէ, որ շիջանելով իւր շրջակայքը թողու իսպառ իսաւորի մէջ: Միհրդատի զօրավարներէն շատերը և իւր իսկ անդրանիկ որդին Փառնակը ապստամբուելով՝ սկսան նորա դէմ սպտերազմել: Ապերախտ որդու անզգամութիւնը հարկադրեց Միհրդատին իւր կեանքը մահադեղով վերջացնել, և նորա մահը մեծ ուրախութիւն բերաւ թէ՛ Պոմպէոսին և թէ՛ Հռոմայ Շերակուտին. բայց Տիգրանի համար սատճառ դարձաւ, որ միւսանդամ Հռոմայեցոց դէմ սուր հանէ: Քաբիանոս, որ Պոմպէոսի տեղ զօրապետ էր Հռոմայեցոց, չը համարձակեցաւ Տիգրանին ընդդէմ կենալ, փախաւ դէպի Եգիպտոս և Տիգրանի հետ ծածուկ հաշտութիւն արաւ:

Եսս միջոց Հռոմայեցոց տէրութիւնը մեծ մեծ փոփոխութիւններու մէջ ընկաւ: Հասարակապետութեան մէջ երեք զօրապետք զօրանալով՝ բոլոր ինքնակալութիւնը իրանց մէջ բաժնեցին. մէկն էր Յուլիոս Կեսարը, երկրորդն էր Պոմպէոսը և երրորդն էր մեծագանձ Կրասոսը, որ այն մեծ և աշխարհասատ Հասարակապետութենէն կազմեցին Եռապետութիւն (Triumviratus):

Կրասոս, անյադ և ընչաքաղց Կրասոս առաւ Հռոմայեցոց զօրքը ու եկաւ դէպի Հայաստան, որ Ասիայի դանձերով աւելի ճոխանայ: Տիգրան գաշնադրութիւն արաւ Պարսից Արշէղ թագաւորի հետ, յետ դարձուց նորոն այն նախագահութիւնը, որն որ իւր հայրը՝ Արտաշէս 1-դ յափշտակել էր և Հայոց ու Պարսից զօրքը, որ մէկ անուճով Պոմպէոս էր կոչվում, Սուրէն զօրավարի առաջնորդութեամբ հանեց Հռոմայեցոց

դէմ, յաղթեց և՛ Կրասսոսին, և՛ իւր որդուն՝ Պոպ-
լիոսին և համարեա՛ թուր հռոմայեցոց բանակը բնա-
ջինջ անելէն յետ՝ դանձերը առաւ, յետ դարձաւ։
Հռոմայեցիք, որ միշտ անյաջողութենէն զօրութիւն
էին առնում, թէպէտ ուրիշ զօրասպետներ և զօրք-էլ
ուղարկեցին և նոքա-էլ յաղթուեցան, բայց վերջա-
պէս, երբ որ Անտոնիոս սպարապետը եկաւ Հայաս-
տան՝ գործերու կերպը փոխուեցաւ։

Տիգրան Ծ տարի փառաւոր թագաւորելէն յետ՝
իւր յաղթանակաց դափնիներու տակը մեռաւ և իւր
թագաւորութեան յաջորդ թողեց իւր ՄԲՏԱՒԱԶԴ որ-
դուն։ Սա թէպէտ քաջ էր ու հրահանգուած և Յու-
նաց դարութեամբ լուսաւորուած, բայց սարթևա-
կան թեթևամտութիւնը ունենալով՝ բաղդի խաղալիկ
դարձաւ։ Անտոնիոս խորամանկ Հռոմայեցին բռնեց
Արտաւազդին խաբէութենով և դերի տարաւ Եգիպ-
տոս, որոյ թագուհին՝ Կլէոպատրա գլխատեց նո-
րան։ Ահա՛ այս օրինակաւ վերջացաւ այն ցեղը, որն
որ ուղիղ գծով Աաղարշակէն որդոց յորդիս շարու-
նակուեցաւ միշտ այս Արտաւազդը՝ հինգ-սուրա։

Հայոց ազգը Արշակունեաց թերամտութեամբ
օտարաց կռիւներու մէջ խառնուելով, և մանաւանդ ի-
րանց դէմ Հռոմայեցոց անյաղթելի զօրավարներուն ու-
նենալով՝ տկարացաւ, Հայաստանի ոյժը գնաց։ Հայոց
մէջ ըուն դրաւ մէկ վեհերոտութեան ոգի, որ մինչև
այն ժամանակները երեցած չէր։ Հայոց օտարացեղ
իշխաններէն սկսաւ անձնասիրութիւն և անմիաբանու-
թիւն ընծիւղիլ, ազգասիրութիւնը և հայրենասիրու-
թիւնը լուց, ատրանենդութիւնը շատացաւ, և այս
ամէնը յաջողութիւն տուեց Հռոմայեցոց, որ Հայաս-
տանը կարողանան նուաճել։

(31 ամ յառաջ քան զՔրիստոս ինչ 65 ամն իւր Քրիստոսի)

7

Արշամ. Արգար. սորա նամակը առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս գրած.
Յիսուս Քրիստոսի պատասխանը գէշի Արգար. Հակառակաթոռութիւն,
Սնանկ և Սանսարուկ:

Հայոց ազգի բաղաբառական կրթութիւնը կատարելաբար ծուլեցաւ Տիգրան Ա-դի ժամանակը, իսկ ղինուորական փառքը հասաւ իւր վերջին բարձրութեան ծայրը Արտաշէս Ա-դի և Տիգրան 2-դի օրերը: Հայաստանը այս մեծ և բաղձայազ թ, բայց և ընդ նմին թեթևամիտ թագաւորի գերեզմանի մէջ թաղեց իւր նախնեաց առաքինութիւնները: Սորա որդի՝ Արտաւադ Ա-դ այնպէս ժամանակ թագաւորեց, որ Հռոմայեցոց բազմը ամեն տեղ յաջողում էր, ամեն խոջընդակութիւն ցրվում էր, ամեն հակառակորդներուն ոչընչացնում էր և պատրաստում էր սոցա համար մէկ համաշխարհական միապետութիւն: Այս տիեզերական միապետութեան կանգնողը, որ արդէն ասպարիսի մէջ էր, նախանձարեկութիւն չէր անում ոչ Նինոսին, ոչ Սեղոսարիսին և ոչ Ալէքսանդր Մակեդոնացուն, նոցա շաւիղը չէր բռնել, այլ իւր համար մէկ ուրիշ նոր ճանապարհ էր գտել, որով քիչ քիչ հասնում էր իւր նպատակին: Սա էր Յուլիոս

Կեսարի որդեգիրը և ժառանգը, որ նորա՝ եղբրական մահէն յետ՝ Անտոնիոսի դէմ ըմբշամարտի նման էր ոգորում, Հոկտաւիոս՝ երկրորդ եռապետութեան բաժանորդը: Մինչդեռ աշխարհ ամեն սարսափելով մտիկ էր տալիս սոցա մենամարտութեան և սպասում էր ակնապիշ, որ տեսնէ թէ՛ տիեզերքս՝ ամ սիտի աւար մնան, Արտաւաղդի սլարապ մնացած տթոռը նստաւ նորա հօր՝ Տիգրանի եղբօր որդին ՆՐՇՄԸ աղգի ընտրութեամբ: Եւ որովհետև Տիգրանի անսպառնակ սպառնալիքներով մաշուել էր աղգի զօրութիւնը՝ Արշամ կամ չըկամեցաւ միւսանգամ աղգի արիւնը գեանին ջրի նման ՚ի զուր թափուած տեսնել, կամ վախեցաւ իւր նախորդաց օրինակներէն և կամ ճանաչեց Հռոմայեցոց անսպասելի զօրութիւնը և Հռոմին հարկ տալու խոստացաւ: Չըգիտենք լուարաւ, թէ վատ. բայց այսպէս Հայաստանի համար Հռոմայեցոց հետ հաշտութիւն անելով՝ ստակով (փողով) խաղաղութիւն դնեց:

Հայերը արդէն սովորել էին օտար աղգերի ձեռքի տակը նուաճուիլ: Օտար էին Արշակունիքն-էլ, որք Հայաստան ստակի գործածութիւնը ներս բերելով սկսան իրանց հարկերը և տուրքերը աղգէն ստակով սրահանջել և հարկ նոր անունը «ստակատուրք» կոչել և հարկատուներուն ու հալատակներին «ստակատուկ» անուանել, որմէն կրճատութեամբ ձեացաւ սարսափ խօսքը՝ իշխան բառին դիմադրեալ:

Այս օրերումը Հոկտաւիանոս Անտոնիոսին յաղթելով՝ տիրել էր Հռոմայ, և Յգոստոս մականուն ստանալով՝ ինքնակալ կայսր էր հրատարակուել: Անտոնիոս Արտաւաղդի մահուան վրէժը քաշեց նոյն Կլէոպատրաի սրածառով՝ Եգիպտոսի մէջ անձնուսպան լինելով: Արշամ Յգոստոս Կայսեր հետ հաշտ

մնալով խաղաղութեամբ իւր տէրութիւնը սկսեց
20 տարի: Բայց սորա տէրութիւնը միայն Ստորին
Հայաստանի մէջն էր. Վերին Հայքը Հռոմայեցոց ձե-
ռին էր և նորա թագաւորները երբեմն Հռոմայ էին
լինում հպատակ, երբեմն սարթևական Պարսից:

Երշամի որդի՝ ՄԲԳՄԲԸ իւր հօր թագաւորութեան
բաժինը միայն ժառանգեց: Գեռ ևս Արդար մէկ տա-
րուան թագաւոր էր, որ Յգոստոս կայսրը հրամայեց
իւր ընդ ամենայն աիեղերս տարածուած տէրութեան
մէջ աշխարհագիր առնել, որ Ղուկաս Աւետարա-
նիչը իւր աւետարանի մէջ գրել է, և այս ժամանակ
ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ, ազդի մարդկան Փրկիչը, Հրէաս-
տանի Բէթլէհէմ քաղաքումը ծնելով հարկատու ժողո-
վըրդեան թիւը գրուեցաւ: Հայաստան-էլ այս աշխար-
հագրով միւսանգամ Հռոմայեցոց հարկատուութեան
տակն ընկաւ. բայց նորա թագաւորները դեռ ևս այն-
քան ազատութեան նշոյլ վայելում էին, որ կարողա-
նում էին իրանց մասնաւոր թշնամիներու դէմ պա-
տերազմիլ: Այս եղանակ կառավարութեան Հռոմայե-
ցոց դժպէս և անհաճոյ չէր. որովհետև երբ որ իրանց
հպատակները մեկզմեկու հետ սպառերազմելով կըտկա-
րանան՝ նոքա երկուսի վրայ-էլ հեշտ կըթագաւորեն:
Այսպէս՝ երբ որ Յիսուսի Քրիստոսի նոր ծնած ժա-
մանակը Նորան սպանել ուղեցող և Բէթլէհէմի ման-
կանց կոտորող Հերովդէս, Հրէից թագաւորը, Ար-
դարի վրայ ուղարկեց իւր զօրքը, Արդար նորա դէմ
սպառերազմեցաւ և կռուի մէջ սպանեց Հերովդէսի
որդուն՝ Փիլիպպոսին՝

*) Այս Փիլիպպոսի կինն էր Հերոզիազա, որ ամուսնացաւ իւր սաղեր՝
փոքր Հերոզէսին և Յովհաննու Մկրտչի գլու՝ ք կարել տուեց: Այս փոքր
Հերոզէսն էր, որ Քրիստոսին շարշարանաց ժամանակը ծաղր արաւ յետոյ
Զերեթեայ որդոց Յակոբոսի գլուխը կտրեց և յետոյ Յակոբին-էլ բանաւ
զրաւ:

Հերոգէս Մեծը իւր որդու մահու համար սկսաւ
չարախօսութիւն անել Օգոստոս կայսեր առջևը Ար-
գարի համար: Օգոստոս հրաւիրեց Արգարին իւր
մօտ և կամենում էր Հռոմայ մէջ արդելու: Բայց
Արգար գտաւ աղատուելու հնարը և Օգոստոս ճան-
փեց նորան մեծ սխառուով: Այլ երբ որ Օգոստոս
կայսրը մեռաւ և նորա տեղը նստաւ նորա որդեգիր
Տիրերիոսը՝ Արգարու թշնամիները համարձակու-
թիւն գտան: Տեսաւ Արգար, որ Հռոմայեցիներէն
փաս ու անարդութիւն սխալի քաշէ, մանաւանդ հաս-
կանալով, որ Օգոստոսի ժամանակը անյսղ թելի կար-
ծած Հռոմայեցիք էլ առաջուայ սէս ահեղ չեն և կա-
րելի է նրանց-էլ յաղթել և ազդի անկախութիւնը
միւսանդամ ձեռք բերել, միտքը դրաւ Հռոմայեցոց
իշխանութենէն փտարանջել, և այս խորհրդով իւր
աթոռը Մծրինէն փոխադրեց Եդիսիա կամ Աւրհայ
քաղաքը, որն որ շատ աւելի ամրացնելով այն աստի-
ճան բերեց, որ կարողանայ երկարատե սուշարման
դիմանալ:

Այս սխառատութենէն յետոյ՝ Արգար կամեցաւ
Պարսից հետ-էլ սրայման դնել, որ համախումբ սար-
թևական զօրութեամբ Հռոմայեցոց դէմ կանգնի ու
նոցա լուծը թափէ իւր շընքէն: Բայց որովհետև
Պարսից Արշաւիր թագաւորը մեռել էր և տեղը նրա-
տել էր նորա որդին՝ Արտաշէսը, իսկ միւս երկու
որդիքը՝ Սուրէն և Կարէն հակառակութիւն էին
դուրս բերել և ժառանգութեան համար կռիւ էին
բացել, այս սխառատաւ Արգար իւր զօրքը առաւ և
գնաց Պարսկաստան, որ նոցա խաղաղացնէ և միջերը
հաշտութիւն ձգէ: Քանի տարի զեզերելով այն
կողմը՝ հազիւ կարողացաւ հաշտեցնել այս սրայմա-
նով, որ Արտաշէս որդոց յորդիս թագաւորէ, իսկ

նորա եղբարքը՝ Սուրէն և Կարէն և քոյրը՝ Կաշմ,
որ Սպարապետի կինն էր, լինին իշխաններու մէջ
առաջին, և ունենան ՊալՏաւիկ կամ ՊալՏաւ մակ-
անուն, Սուրէնեան-ՊալՏաւ, Կարէնեան-ՊալՏաւ և
Սպայապետի-ՊալՏաւ:

Թէպէտ այսպէս Արգար կարողացաւ այն հաշտու-
թիւնը կարգադրել, բայց իւր աստատմբութեան խոր-
հուրդը չբարոջացաւ զլուխ բերել, որովհետեւ ըն-
կաւ ելեւիանտական ցաւ* և միայն այն արքայորդու
դաշնագրի սլառձէնը հետը առաւ և դարձաւ իւր
թաղաւորութիւնը հիւանդացած:

Արգարի թշնամիները խմայել էին նորա խորհուրդը
և խմայուցել էին Տիրերիտսին, և Տիրերիտս հրա-
մայել էր այն կողմերու կուսակալ՝ Մարինոս իշխանին
քննութիւն և վերահասութիւն անելու: Արգար տե-
սաւ, որ իւր հիւանդութիւնը չի թալնիլ այն նշկա-
հելու խորհուրդը յառաջ տանել, ստիպուեցաւ ժըխ-
տել, և ուղարկեց Մարինոսի մօտ իւր դեսպաններին
և նոցա հետ Պարսից արքայորդու դաշնագրի սլառ-
ձէնը և ցոյց տուեց, որ այն ամեն թշնամեաց խօս-
քերը զրպարտութիւն են: Հռոմայեցիք անմեղ ճա-
նաչեցին Արգարին և նորա ծանր հիւանդութիւնը
տեսնելով՝ միամտուեցան, որ էլ վտարանջութիւն
անել չէ կարող:

Բայց այս թշնամեաց չարախօսութիւնը և Արգարի
դեսպան ուղարկելը ունեցաւ մէկ անակնկալ օգուտ:
Այն օրերը Փրկիչն մեր Յիսուս Քրիստոս, որն որ
կրեաուն չորս տարի առաջ ծնել էր, եկել էր Երուսա-
ղէմ՝ մարդկան ազգի վերկութեան տնօրէնութիւնը
կատարելու և իւր կամաւոր չարչարանքով և մա-

*) Եւէֆանաինա, բորտութիւն կամ քոսութիւն, որ մարդու կաշին
Փզի (elephas, էլէֆաս) կաշիի նման խորշովեցնում, լծումընում է:

Տուամբ Եկեղեցին իրան հարսնացնելու համար: Նորա
սքանչելագործութեան համբաւները հասել էին Ար-
գարի սկանջը, և Արգար իւր բաղամեայ ցաւոց և
հիւանդութեան բժշկութիւն մարդոցմէ շիգտնելով
և Յիսուսի Քրիստոսի հրաշքներուն, (կաղերուն ոտք
տալը, կոյրերուն աչքի լոյս սարգեւելը և մեռածնե-
րուն կեանք շնորհելը) միայն լսելով էր հաւատացել,
և մէկ գիր էր գրել ու դեսպաններու հետ ուղար-
կել էր և յատկապէս պատուէր էր տուել, որ երթան
Երուսաղէմ և այն գիրը տան Յիսուսին:

Գրի մէջ գրած էր թէ՛ «Ես լսելով քո արած
սքանչելիքների համբաւը, հաւատացել եմ, որ դու
կամ՝ Աստուած ես և կամ՝ Արդի Աստուծոյ, և այս
մասին խնդրում եմ, որ դաս և ինձ բժշկես. մա-
նաւանդ որ, ինչպէս լսում եմ, Հրեայք քեզ համար
տրտունջ են անում. լաւ է որ դաս և իմ քաղաքի
մէջ միասին կենանք»: Դեսպանները թագաւորի
հրամանը ճիշդ կատարեցին, և երբ Մարինոս իշխանի
հետ իրանց գործը կատարեցին՝ եկան Երուսաղէմ և
Արգարու նամակը հասցրին Յիսուսին:

Եկողութեան վարդապետ Փրկիչը ընդունեց նամակն
էլ, բերողներուն-էլ, ուղարկողին-էլ և սրատասխանը
գրել տուեց թոմասին և իւր հրաշանորդ անձեռա-
գործ սրտիկերի հետ միասին դարձուց դեսպաննե-
րին: Պատասխանը այս էր. «Ես որովհետև այս օրերս
սխալի կատարեմ այն, ինչու համար որ եկել եմ,
այդ պատճառաւ երբ որ դասնամ Աստուծոյ մօտ,
իմ աշակերտներէն մէկը կուգայ և քեզ բժշկութիւն
կուտայ»: Դեսպանները դարձան Եդեսիա և Յիսուսի
Քրիստոսի գրած թուղթը և նորա հրաշալի նորա-
սքանչ սրտիկերը բերին Արգարի մօտ: Փրկիչի համ-
բարձմանէն յետ, թոմայ աւարեալը իւր եղբօր՝ Թա-

դէտսին, որ եօթանասուն և երկու աշակերտներէն մէկն էր, ուղարկեց Հայաստան: Թաղէոս էլիա Եղեւսիա, և Արգարին, որ արդէն անձեռագործ դաստառակէն գտել էր իւր ցաւերուն թէթևութիւն, բժշկեց և մկրտեց, և Եգեւսիաումը Հայոց Եկեղեցւոյ և քրիստոնէական կրօնի Տիմը դրեց: Հայերը տեսան քրիստոնէական հաւատոյ լոյսը և լսեցին Աւետարանի ձայնը և շատերը դարձան ճշմարիտ ատուածդիտութիւն:

Արգար, որ մինչև այն ժամանակ էր թշնամեաց լեզուի տակ, և Տիրերիոսի առջև կանգնում էր ինչպէս դատուելու մարդ, այժմ իւր հիւանդութենէն առողջացած՝ սկսաւ դրդուել Հռոմայեցոց: Առաջ գանկատեց Տիրերիոսին բոլոր հրէից համար, որ Յիսուս Քրիստոսին սպանել էին, յետոյ յորդորեց կայսեր, որ նորա Աւետարանը ընդունի: Բայց Տիրերիոսն-էլ փոխել էր իւր կենցաղագիտութիւնը: Արգարու այս առաքելապաշտօն գործը, որ ուրիշ ժամանակ պիտի յանդդնութիւն համարուէր, այժմ ունեցաւ Տիրերիոս բռնաւորի առջև իւր աղղեցութիւնը. Պիղատոս ընկաւ քննութեան տակ և դատաւարատեցաւ արսոր: Արգար էլի չըզագարեցաւ և մէկ դիր-էլ դրեց Տիրերիոսին ու մէջը յայտնի ասաց թէ՛ «Գործ Հռոմայ Ծերակուտին է սպանելի», և ոչ ոք չըկարողացաւ ճիկ հանել: Մէկ գիր-էլ դրեց Արգար Ասորեստանեաց Եկրակէ թագաւորին և Պարսից Արտաշէս թագաւորին Սիմոն առաքելալի համար յանձնարարութիւն: Եւ այսպէս 38 տարի թագաւորելէն յետ՝ կնքեց իւր առաքինի կեանքը:

Արգարի մահը Ստորին Հայաստանի մէջ մէկ նոր անմիաբանութեան ողի յայտնեց: Մինչև այնօր լուսած չէր Հայաստանի այս բաժնի մէջը հակառակաթուռ-

Թիւն, որ վերին Հայաստանի մէջ կար դեռ ևս բա-
ժանման ազաջին օրերէն: Այժմ այստեղ-էլ երևեցաւ:
Արգարի որդի ՅԵՄԵՆ Թագաւորեց Եդեսիա և Ար-
գարի քրոջ որդի Սանատրուկի Թագ դրաւ գլխին և
նստաւ Շատարան: Հայոց ազգը, որ մէկ Թագաւորի
Համար ևս քիչ էր՝ ունեցաւ երեք Թագաւոր: Այս
երկու Հակառակաթառ Թագաւորներն-էլ՝ Անանէ և
Սանատրուկ մէկզմէկու ներհակելով՝ նորոգեցին կռա-
պաշտութիւնը և քրիստոնէութեան վրայ Հալածանք
շարժեցին: Այլ Անանը մէկ քանի տարիէն մեռնելով՝
Սանատրուկի Համար ճանապարհ բացեց բոլոր Ստո-
րին Հայաստանին տիրապետելու:

Երբ որ Սանատրուկ տիրեց Արգարի աթոռին,
նորա ցեղը սուրէ անցուց և այսպէս այն ցեղն-էլ, որ
Արշամի հետ Թագաւորութիւն էր ստացել, վերջա-
ցաւ և Սանատրուկ թէպէտ Արշակունի, այլ ոչ Վաղ-
արշակի զարմէն, դարձաւ արմատ նոր Թագաւորական
տան, որ տեւեց մինչև Արշակունեաց հարստութեան
վերջանալու մօտ օրերը: Սանատրուկ առաքելոց,
մարտիրոսաց և իւր խակ դատեր արիւնով զանգեց
Հայաստանը. քսցց Հռոմին հնազանդ լինելով թէ և խա-
ղաղ մնաց 30 տարի, բայց որսի մէջ նետահար մեռաւ:

(65—286 յո Քրիստոսի)

8

Երուանդ 2-դ. Երտաշէս 2-դ. Երտաւազդ 2-դ. Տիրան 1-դ. Տիգրան 3-դ.
Վաղարշ, Խոսրով 1-դ. Կորա մահէն Սնակէն. Տրդատի փախուստը Հռոմ
և վերադարձը:

ՀԵՅՍՏԵՆԸ Արշակունեաց բռնակալութեան տակը
կորցրել էր իւր ազգային անդին փղատութիւնը և
Երտաւազդի մահէն յետ՝ ձեռք ձգեց այն փաղնջուց
անձնիշխանութեան մէկ նշոյլը, Արշամին իւր հաճու-
թեամբ օթոռ նստեցնելով և թագաւորի ընտրու-
թիւնը իւր կամքին հարատակեցնելով: Կարելի է թէ
Արգարին-էլ ազգն էր ընտրել և Անանին-էլ (ինչպէս
որ Ալերին Հայաստանումը Հայերը իրանց կամքով
էին թագաւոր դնում շատ անգամ), բայց յայտնի է
որ Սանատրուկ առանց ազգի հաճութեան նստաւ
օթոռ, և աւելի անհաճոյ բան այն արաւ, որ Արգարի
ազգատոհմը բնաջինջ արաւ և մանաւանդ շատ ան-
մեղ արիւն թափեց կրօնի համար: Այս սղատձառնե-
րով, երևի որ, ազգը հաճ և հաւան չէր Սանատրուկի
գործքին, որ իւր օթոռն-էլ Եղեսիակն Մծբին էր
տարել և այն հին մայրաքաղաքը մեծ մեծ ծախսերով
նորոգել էր. ուստի երբ որ Սանատրուկ մեռաւ, նորա
ցեղէն չուղեցին Հայերը թագաւոր ունենալ, որ էլի
ժառանգական չրդառնայ, այլ մէկ Արշակունի նախա-

բար անուանը ԵՐՈՒՄՆԻ ընտրեցին թագաւոր. և այսպէս ընտրութիւնը միւսանգամ իրոնց ձեռքը առին: Թէպէտ այս Երուանդ 2-դը արժանի էր թագաւորութեան, և ազգը շունէր պատճառ գղջալու նորա ընտրութեան համար. բայց էս-էլ Հայոց մէջ առաջին դիպուածն էր, որ օրինաւոր ժառանգները թողած՝ կողմնական ընտրութիւն արին: Այստեղաց է աւելի կարծւում, որ Սանատրուկի թագաւորութիւնը՝ Հայոց ազգը օրինաւոր չէր համարած, որովհետեւ իւր ընտրութեամբ չէր:

Երուանդ իսկոյն, երբ որ թագաւորութիւնը ստացաւ, Սանատրուկի սերունդը ջնջեց սրով: Այս թէպէտ Արդարի տան արեան տոյժն էր, բայց ազգը սորա մէջ տեսաւ պարթևական խժոժութիւն և մտքումը պահեց:

Սանատրուկի որդոցմէն մէկը ՄԵՏԵՂԵՍ անուանով մանուկ, իւր դայեակը՝ Բագրատունեաց ցեղի նահապետ Ս. Բագրատի ասպետը՝ փախցրեց տարաւ Պարսից երկիր և այնտեղ էր սնուցանում: Երուանդ շատ ջանաց այն առիւծի կորիւնին և նորա սնուցանողին ձեռք ձգել, և երբ տեսաւ թէ չը յաջողեցաւ՝ իւր բարկութիւնը դարձրուց Սմբատի ազգատոհմի վրայ: Հայերը այդ էլ տեսան և մտքերու մէջ տալաւորեցին:

Երուանդ ամեն ժամանակ Արտաշէս մանուկը մտքի մէջ ունենալով և ինքն իրան մտատանջութեան մէջ մղուելով՝ թէ կարող է նա ժամանակով մեծանալ, յաջողութիւն դանել և իւր ձեռքէն մէկ օր-էլ իւր հայրենի ժառանգութիւնը խլել՝ ընաւ հանգիստ չէր կարողանում մնալ. այս պատճառաւ Հռոմայեցոց հետ բարեկամութեան կապերը ամրացուց, Միջագետսց կողմը նոցա տալով և նորա փոխարէն Աերին Հայքը առնելով: Հայերը տեսան, որ Արշակունեաց երկու

մայրաքաղաքն-էլ՝ թէ՛ Մծբին և թէ՛ Եղևսիա իրանց-
մէն օտարայան, մտքերու մէջ այս-էլ դրոշմեցին:

Երուանդ կամենալով փոքր ինչ Հայերու սիրտը
շահել՝ իւր թագաւորական աթոռը էլի հին Հայկա-
ղանց աթոռանիստ մայրաքաղաքը փոխադրեց. բայց
յետոյ պատճառելով թէ՛ Երասխ գետը այն քաղաքէն
շատ է հեռացել՝ շինեց նոր Երուանդաշատ քաղաքը
և շատ ամրութիւններով ասպատակեց, որ եթէ ժամանա-
կով Արտաշէս կամենայ պատերազմ բանալ, նա իւր
համար ամուր վստահարան և ասպատանի ունենայ,
և իւր աթոռը Արմաւիրէն բերեց այստեղ: Հայերը
ճանաչեցին նորա պարթևական թեթևամտութիւնը,
և աչքէ ձգեցին: Երուանդին հարկաւոր չէր ոչինչ դդու-
շութիւն. նորան ազգն էր ընտրել թագաւոր, նա սի-
տի ազգին վստահանար, և ապաւինէր, և ոչ թէ պա-
րիսպներու ամրութեանը. երբ որ տեսան Հայերը թէ՛
Երուանդ թողած ուղիղ ճանապարհը՝ սկսաւ շրջմովիկ
վազվել, ժամանակի սպասեցին, որ իրանց դրած
կուռքը իրանք կործանեն:

Սոցա սպասած ժամանակը հասաւ: Այն միջոցնե-
րումը, մինչ Երուանդ Հայաստանի մէջ քաղաքներ էր
շինում և Արտաշէսի դէմ ամուր պատեր էր կանգ-
նում, Սմբատ՝ որ իւր հաւատարիմ լրտեսներու ձեռ-
քով ամեն ինչ իմանում էր, Պարսից երկրումն Ար-
տաշէսի համար դէպի հայրենի աթոռը ճանապարհ
էր պատրաստում: Այս սրտեռանդ ծառան, որ իւր
դժբաղդ արքայորդու վիճակի հետ կապել էր իւր և
բոլոր Բագրատունեաց ցեղի վիճակը, Պարսից Գարեհ
թագաւորի դրանը մեծ մեծ քաջութիւններ կատա-
րելով՝ մտաւ Պարթևաց իշխաններու աչքը, և երբ
թագաւորը կամեցաւ նորա ծառայութիւնները վար-
ձատրել՝ նա խնդրեց թագաւորէն, որ Արտաշէսին

օգնէ՝ իւր նախնեաց թագաւորութիւնը ժառանգելու: Արդէն ազգը իւր սրտի մէջ ընտրել էր Արտաշէսին թագաւոր և իւր հաճութիւնը իմաց էր արել Սմբատին: Գարեհ թագաւորն-էլ չի ուշացրուց իւր օգնութիւնը. տուաւ Սմբատի ձեռքը որչափ քօրք որ հարկաւոր էր և ճանապարհեց դէպի Հայաստան: Հայոց նախարարները երբ որ լսեցին՝ թէ իրանց չարաբաստիկ նախարարակից Սմբատը Արտաշէսին հետը առած գալիս է, ամենքը սկսան վազել ընդառաջ, որ քանամեաց կամաւոր տարադրուած ծերին տեսնեն, և այն սրտանեկին, որ քանի տարի առաջ ապօրինի էին ճանաչել, ընդունեն իրանց թագաւոր: Գեռ ևս Հայաստան չէր տեսել, որ երկու թագաւոր Հայերին Հայերի դիմաց դրած լինին և Հայերի ձեռքով Հայերի արիւնը թափած լինին: Այս-էլ այստեղ տեսաւ Հայաստան: Երուանդ չըկամեցաւ առանց սրտերազմի թագաւորութենէն ձեռք վերցնել. անձնասիրութեան առջևը լռեց ազգասիրութիւնը: Մէկը գալիս էր, մտքումը ասելով, թէ իմ հօր ժառանգութիւնը ազգը ինձ է տալիս. միւսը ոտքը ամուր դրել էր, թէ ինձ էր տուել ազգը, և այն չէր մտածում, որ նա ազգի սրտին զանազան խոցեր էր դրել, և ազգը՝ որ կարող էր տալ, կարող-էլ էր յետ առնուլ, որովհետև ազգն էր այն երկրի տէրը և Արշակունեաց ևս նա էր կամու ընդունել:

Երուանդ դեռ ևս թագաւոր չըդարձած՝ Սանատրուկի դրանորերաց մէջ առաջինն էր, և մեծ մեծ պաշտօնների մէջ գտնուելով՝ ցոյց էր տուել իւր թագաւորական սրտուոյն արժանաւորութիւնը, և ազգը տուել էր նորան թագաւորութիւնը: Քայց 20 տարի թագաւորութիւն սնելու միջոցը տեսաւ ազգը նորա վատ կողմերն-էլ և զգուշացաւ, և չըկամեցաւ նորա

արիւնաշաղտիս ձեռքումը թողնել իւր սանձը, և երբ
լաւ՝ թէ Սմբատ բերում է Արտաշէսին, փափագա-
նօք դնաց նորա դիմաց: Ինչպէս որ ձիւնի հիւսը
քանի աւելի թաւալեա՝ այնքան աւելի կըմեծանայ,
նոյնպէս Արտաշէսի զօրքը քանի որ աւելի մօտեցաւ
Արարատին՝ այնքան աւելի բազմացաւ. ում որ Սըմ-
բատ մարդ ուղարկեց ու հրաւիրեց, թողին Երուան-
դին և միացան Արտաշէսի հետ. մինչև Արգամ Մու-
րացան նահապետը, որին Երուանդ առեւել էր իւր
երկրորդական գահը, եկաւ Արտաշէսի մօտ այն օրը,
երբ որ պատերազմը պիտի բացուէր: Նրան նայելով
միւս հայ նախարարներն-էլ անցան Արտաշէսի կողմը,
և Երուանդի մօտ մնաց միայն օտարադղի վարձաւոր
զօրքը: Գեռ ևս ունէր Երուանդ այնքան զօրք և հողու-
մէջ այնքան արիու-թիւն, որ Սմբատի դէմ կանգնե-
ցաւ համարձակ, և երբ պատերազմը սկսաւ՝ քաջու-
թեամբ պատերազմեցաւ. բայց մինչև վերջ չըկարո-
ղանալով դէմ առնել հարկադրուեցաւ փախչել և մըտ-
նել Երուանդաշատ մայրաքաղաքի մէջ ամրանալ:
Օգուտ չունեցաւ ոչ քաջութիւնը, ոչ քաղաքի ամրու-
թիւնը և ոչ քսան տարուայ շարունակ պատրաստու-
թիւնը: Եկաւ Արտաշէս աթոռանիստ քաղաքի վրայ
և ուղում էր պատերազմով առնուլ, բայց քաղաքի
բնակիչները, որ աղգի կամքին և հաճութեանը հա-
մաձայն էին՝ իսկոյն անձնատուր եղան, և աղգամիջեան
կռիւը, որոյ սկիզբն ու վերջը եղաւ Երուանդայ
մահը՝ վերջացաւ, և Սմբատ Սանատրուկի թագը
դրաւ Արտաշէսի գլխին:

ՄԵՏԵՆՍ 2-դ իւր աթոռը դրաւ Արտաշատ քա-
ղաքումը, և Ալանաց թագաւորի դուստր Սալմեի գըշ-
խոյին հարսնացուց. այս ամուսնութենէն ծնան վեց
որդի՝ Արտաշատ, Արտաշ, Զարէհ, Մաթան, Տերան և Տեհ-

րան: Քանի անգամ յաջողակ պատերազմ ունեցաւ Ալանաց դէմ և այլ տեղեր, ծաղկեցուց Հայաստանի մէջ ուսումն (Պարսից և Ասորոց դպրութեամբ, դուցէթէ և Յունաց), և արհեստները և վաճառականութիւնը: Քայց երբ որդիքը մեծացան՝ հօր համար ցաւ դարձան:

Արտաւազդ մէկ ամբարտաւան և ամբարիշտ պատանի լինելով՝ առաջ իւր մօրը՝ հրաշագեղ Սաթի-նիկին բամբասանքի տակ ձգեց, իբր թէ Արգամ Մուրացան նահապետին սիրում է, մինչև սկսան Հայերը նոցա վրայ երգեր կապել. յետոյ Արգամի հետ կռւում ելով՝ նորա երկրորդական գահը խլեց, և վերջապէս այն իւր հօր բարերարին և բարեկամին սպանեց և նորա ցեղը սրէ անցուց. սորանով չըբաւականացաւ, իրանց տան և ազգատոհմի փրկչին ու երախտաւորին՝ Սմբատ Քազրատունիին ծերութեան ժամանակը անպատմելի սպերախտութեամբ վշտացուց, և միւս եղբարց հետ միախորհուրդ՝ իւր Մաթան եղբորը սպանել տուաւ, որով իւր հօր ծերութեան ժամանակը շատ դառնութեան ու տրամաթեան պատճառ դարձաւ: Արտաշէսն-էլ մոռանալով որ Պարսից Պարթևաց օգնութեամբ հասաւ թագաւորութեան, Ազրիանոս՝ Հռոմայեցոց կայսեր հետ գնաց պատերազմ իւր նախնի բարեկամաց և դաշնակցաց դէմ և ճանապարհին հիւանդացաւ, և Ա տարի թագաւորելէն յետ մեռաւ:

Նորա երեք որդիքը հետզհետէ թագաւորեցին, առաջ ՄԻՏՄԻՍՉԻ, որ երկու տարիէն յետ՝ Մասեաց սարի մօտ խելացնոր եղաւ և մէկ փոսի մէջ ընկաւ ու կորաւ: Սրան էին սպասում պառաւները, որ պիտի գայ ու աշխարհ տակնուվրայ բերէ: Արտաւազդի տեղը նստաւ ՏԻՐՆՆ 1-դ, որ 21 տարի թագաւորելէն յետ՝

ձիւնի տակ մնաց ու մեռաւ, երևի դբօսանք էր պտըրտում:

Սորամէն յետ՝ ամթող Տասաւ ՏԻԳՐՍՆ Յ-ին, որ 42 տարուան թագաւորութեան մէջ թէպէտ անպտուղ պատերազմներ շատ արաւ և ապարդիւն յաղթութիւններ-էլ ունեցաւ, սակայն նրանցմով չէր կարող իւր անունը այնպէս թողնել աղգի մէջ, ինչպէս իւր սպանած եղբօր՝ Մաժան քրմապետի գերեզմանի վրայ բազին ու իջևանք շինելով, որ ուխտաւորք, անցաւորք և ճանապարհորդք այնտեղ ունենան պատրաստական կերակուր և օթևան. աղղը գին դրաւ նորա այս գործին և գովութեան արժանաւոր համարեց:

Եյս Տիգրանի որդին էր ՎՍՂՍՐԸ, որ Վաղարշապատը շինեց և ամթոռանիստ արաւ, և յետոյ Վաղարշակերտ (Սլաշկերտ) և Վաղարշաւան քաղաքները շինեց և 20 տարի քաջութեամբ թագաւորելէն յետ՝ զոհ գնաց իւր քաջութեան՝ Քասլաց և Խաղրաց դէմ պատերազմի մէջ նետահար խոցուելով:

Խոսրով 1-դ՝ Վաղարշի որդին նստաւ իւր հօր տեղը Վաղարշապատ, և իսկոյն իւր հօր մահուան վրէժը պահանջեց, մեծ պատիժներ տալով Խաղրաց և Քասլաց աղղին: Հռոմայեցիք-էլ եկան սորա վրայ Քարաքալլայի օրերը, բայց Հայոց քաջութեան և միաբանութեան ճաշակը առին ու փախան:

Պարսիկ իշխաններէն մէկը՝ Արտաշիւր Սասանայ որդի՝ Պարթևաց Արտաւան թագաւորէն ապստամբելով՝ պատերազմի մէջ սպանեց նորան, Արշակունեաց տունը այն աշխարհէն վերացուց և Պարսից Սասանեանց հարստութիւնը միւսանգամ Վիւրոսի ամթող հանելով և Չրազեշական մոզութիւնը նորոգելով՝ հզօր թագաւորութիւն արաւ:

Խոսքով պարթևական Արշակունեաց ցեղի վրէժը պահանջելով՝ շատ տարի մեծ մեծ պատերազմներ ունեցաւ Արտաշիւրի դէմ և Պարսից աշխարհի մօտ լինելու համար՝ Ատրպատականումը շինեց Քավրէժ քաղաքը, որ պատերազմների ժամանակը թագաւորի այնտեղ նստելով և այնտեղ զօրաց և զինուց ժողովարան ունենալով՝ կոչուեցաւ Քանձակ Շահաստան. Իսկ Արտաշիւր չըզիմանալով Խոսքովու հարեանութեան՝ թողեց Պարսկաստանը և փախաւ Հնդկաստան, ուր որ շահ Տաշխարը հնարեց:

Վենգաւոր Պարսիկը լսաւ, որ Խոսքով Պալհաւիկ ցեղերին հրաւիրել է իւր հետ միաբանուիլ և Արշակունեաց աթոռը միւսանգամ Պարսից աշխարքումը նորոգել և Պարսեան ցեղը յօժարացել է. այն ցեղը կոտորել տուեց: Քայց կամենալով այդ տեղէն օգուտ էլ քաղել՝ յորդորեց իւր համախոհներուն, որ Խոսքովին մէկ հնարքով սպանեն: Սուրէնեան Պալհաւիկ ցեղի նահապետը՝ Ահալ՝ խաբուելով Արտաշիւրի մեծ մեծ խոստմունքներէն, յանձն առաւ այդ դաւաճանութիւնը, և որպէս թէ Արտաշիւրէն փախչելով եկաւ Հայաստան, և ինչպէս աղգակից պարթև և Արշակունի՝ Խոսքովէն ստացաւ անկեղծ ընդունելութիւն:

Մնաւոր և տմարդի Պարթևը միտք չանելով թէ ինչ հնարքով պիտի ազատուի Հայերու ձեռքէն, որ կարողանայ իւր գլուխը ձգել Պարսկաստան, կամ ինչ իրաւունքով պիտի Արտաշիւրէն վարձ պահանջէ, երբ որ նա նորա վրայ չըկամենայ այլ կերպ նայելու, բայց միայն, ինչպէս սովորութիւն է, դաւաճան, մարդասպան և թագաւորասպան մարդու վրայ նայել, և միտքը չըբերելով թէ Արտաշիւր ինչի՞ պիտի վարձ տայ այն սրիկային, որ դիտէ ձեռք բարձրացնել թագապսակ գլխի վրայ. միայն արագընթաց ձիու ոտքերին

ապաւինելով՝ մէկ օր այնպէս յաջողակ ժամանակ
գտաւ, որ խոսրովին սպանեց ու փախաւ: Քայց Հայերը
չուտ հասան ետևէն և սրախողխող արին Անակին-էլ,
իւր համախոհներին-էլ և բոլոր ազգատոհմն-էլ:
Միայն չորս կաթնիկեր տղայք ազատուեցան իրանց
ծծմայրներու գթութեամբ, որոց մէկն էր Անակի
որդի ԳՐԻԳՈՐԸ, որ իւր դայեկի Սոփիայ յոյն կնոջ
ձեռքով հասաւ Աեօարիա և մկրտութիւն ստացաւ,
քրիստոնէութեան մէջ սնաւ և ամուսնացաւ Մարիամ
անունով յոյն օրիորդի հետ, որ դուստր էր Դաւթի
(Աթանազինէ Եպիսկոպոս). և այս ամուսնութենէն
ծնան Ալեքանդր և Ալիսանդր: Երկրորդն էր Յակոբ
Անակայ միւս եղբօր որդին, որ յետոյ եղաւ Մծբնայ
հայրապետ: Մնացեալ երկուսն էին Հոսէ և Քեղոն-
հոն, որք իրանց ժամանակներումը հանդէս դուրս եկան:

Խոսրովի մահէն յետ՝ Արտաշիր եկաւ Հայաստան:
Առաջին նուագին Հայերը ընդդիմացան. բայց որովհե-
տև աւելի շնորհակալ չէին Պարթևաց կառավարու-
թեն, խորամանկ Պարսիկը կարողացաւ նրանց քիչ քիչ
համոզել, և տիրեց Հայաստանին ու խոսրովի ազգա-
տոհմը ջնջեց: Այս կատարածէն ազատուեցան միայն
խոսրովի մէկ որդին՝ ՏՐԻՍՏԸ և մէկ դուստր՝ Խոսրովի-
գոթոսը: Տրդատին փախցրեց դէպի Հռոմ Մանգակու-
նեաց նահապետ Արտաւազդը, որ զարգացուց իւր
սանին և վերջը Արիկինիոս Հռոմայեցի կայսերակցի
մօտ զինուորական պաշտօնի մէջ կարգեց: Իսկ խոս-
րովիդուխտին առաւ Օտոյ Ամատունեաց նախարարը
և թագաւորական դանձերով մտաւ Անի Աստախու-
բերդը և այնտեղ դաստիարակեց: Արտաշիր այդ եր-
կու ցեղն-էլ կատարեց և շատ սակաւք փրկուեցան:

Տրդատ, որ Հռոմայեցոց բանակի մէջ էր, Արտա-
ւազդի դաստիարակութեան տակ զարգանալով հան-

զիսացաւ քաջ, առաքինի և հմուտ հռոմէական զինուորութեան, և նորանով ոչ թէ միայն Ղիկինիոսին եղաւ սիրելի, այլ և ամեն զօրապետաց առջև դարձաւ անուանի. (Հայերէն լեզուի վրայ Հռոմայեցոց, Պարսից, Յունաց և այլ լեզուներն-էլ սովորելով):

Մէկ օր Քութ կամ Քոթաց ազգի թագաւորը՝ Հոչէ (որ Խասրովի վրիժու սուրէն ազատուել էր, և բազդի բերմամբ վայրենի Քոթաց ազգի մէկ ցեղի թագաւոր էր դարձել, երբ որ այս մարդակերպ դաշնաբարոյ ազգը հետզհետէ ու անդադար արշաւանք էր անում Հռոմայեցոց ինքնակալութեան դէմ) եկաւ Հռոմայեցոց վրայ և Քիոկլեաթիանոս կայսերը հրաւիրեց մենամարտելու: Տրդատ կայսերական զգեստով ծալտած՝ դնաց Հոչէի առջև, մենամարտեցաւ, բռնեց և ուլի նման բերաւ կայսեր առջևը: Ասյսրը իմանալով, որ Տրդատ Մեծին Խասրովու Հայոց Արշակունի թագաւորի որդին է, և Հայաստանը Պարսից ձեռքն է ընկել, տուաւ Տրդատին մէկ քանի լեզէոն, որ երթայ Պարսիկներին Հայաստանէն հանէ, և Հռոմայեցոց իշխանութեան տակը իւր հայրենի աթոռը ժառանգէ: Այս միջոց, երբ Տրդատ իւր հօր սպանողներու որդոյ մէկին յաղթելով, իւր հայրենի թագաւորութեան ժառանգութիւն սկիտի մտնէր՝ Նախասահմանութիւնը միւսին-էլ բերում էր, որ նա-էլ իւր հօր պարքը տայ: Քրիզոր՝ Անակի որդին, որ Աեաարիաումն էր, թողեց իւր տունը, տեղը, կնոջը, զաւակներին և եկաւ Հռոմ, ու իմանալով կամ չիմանալով զինուոր դարձաւ Տրդատի վաշտերու մէջ. երբ Տրդատ թագաւոր սրահուած՝ դուրս ելաւ Հռոմէն, որ գայ Հայաստան, Քրիզորն-էլ նորա պաշտօնատարներու մէկը լինելով նրա հետ ճանիւղայ ընկաւ դէպի Հայոց աշխարհ:

(286-ն Ռնչ- 388 Քրիստոսէն յիս)

9

Տրդատի Հայաստան հասնելը. Առաւորչի շարժարուիւք. Հռիփսիմեանց նահատակութիւնը. Հայոց քրիստոնեաց դառնալը. Տրդատի դորձքերը և մահը. Խոսրով 2-դ. Տիրան 2-դ. Արշակ 2-դ.

Մեռել էր Արտաշէր՝ Արշակունեաց տան թէ՛ Պարսից և թէ՛ Հայոց մէջ քանդողը, և Սասանեանց ցեղապետութեան հիմնողը, և նստել էր նորա որդին՝ Շապուհը (Sapor)։ Սորա նոր աթոռ քաղմած տարիները եկաւ Տրդատ Հռոմայեցոց լեզէոններով, մտաւ Փոքր Ասիայի կողմէն Հայաստան, և հասաւ մինչև Կեսարիա։ Այս տեղը, որ Հայաստանի սահմանադրութիւն կրճամարուէր, եկան Տրդատին ընդառաջ Հայոց նախարարները իրանց զօրքերով, որովհետեւ զլուել էին Պարսից բռնաւորութիւնէն, և սուր-փառք տարան Հայոց աշխարհի մէջ՝ Եկեղեցաց դաւանի Երկիզայ քաղաքի մօտ։ Հետո չէր այս տեղէն Կամախի Անի ամրոցը, ուր որ Օտայ Ամատունեաց նահապետը պահում էր Տրդատի քրոջը Խոսրովիգուխտ օրիորդին, և Հայոց աշխարհի գանձերը, որն որ բերեց նորապսակ թագաւորի առջև։

Տրդատ իւր մէկ հատ քրոջ աղատողին, և Հայոց թագաւորութեան գանձարանը պահող՝ Օտայ նախա-

բարին կարգեց Հայաստանի Հաղարապետ, իսկ իւր
փրկչին և դաստիարակին՝ Մանդակունեաց նահապետ
Արտաւազդին՝ տուաւ Հայոց տէրութեան սպարապե-
տութիւնը: Երբ որ Երիզայէն ճանփայ պիտի ընկ-
նէին դէպի Այրարատ աշխարհքը երթալու՝ Տրդատ
Տրամայեց Քրիզորին, որ առջևը կանգնած էր և միշտ
հաւատարմութեամբ ծառայում էր, ծաղկահիւս պսակ-
ներ և դալարի ոստեր տանել ընծայ Հայաստանի և
Հայոց ազգի սրաշտպան Անահիտ դիւցամօր տաճարը,
որ այնտեղ մօտ էր: Բայց երբ Քրիզոր չըկարաց թա-
գաւորի հրամանը կատարել և հրաժարեցաւ, ասելով
թէ «Ես քրիստոնեաց եմ, և կուռքի համար նուէր
տանելու չունիմ համարձակութիւն», ընկաւ սրատանի
թագաւորի բարկութեան տակ, շատ անտանելի չար-
չարանքներով տանջուեցաւ, և Անակի որդի լինելը
յայտնուելով ընկաւ Արտաշատ բերդի Խոյ Արտաշ
(որ գետնափոր փոս էր) մահապարտի նման:

Այս անցքէն յետ, որ փոքր ինչ Տրդատի ճանփան
արգելեց՝ թագաւորը իւր և Հռոմայեցոց զօրքով
սկսաւ առաջ երթալ, և ուր որ սրատահում էր Պարսից
զօրքին, պատերազմում էր ու յաղթում, և այս-
պէս մեծ մեծ յաղթութիւններով եկաւ մտաւ Ար-
շարշապատ մայրաքաղաք և հայրենի աթոռը նստաւ:
Ալանաց Աշխադար թագաւորի դուստր Աշխեն
հրաւիրեց իւր հարսնութիւն, և այս ամուսնութենէն
ծնաւ Խոսրովը, որ նորա ժառանգն էր: Յետոյ սկսաւ
Հայաստանէն Պարսից զօրքը հեռայնել, և երբ Եա-
պուհ նորա դէմ դուրս եկաւ՝ Տրդատ նրան-էլ յաղ-
թեց, պատերազմը տարաւ Պարսից տէրութեան մէջ
և շատ տեղերու տիրեց, մանաւանդ Ատրպատական
աշխարհում, որով այս կռիւր շատ տարիներ տևեց:

Տրդատի թագաւորութեան տասնուհինգերորդ տա-

րին՝ Գիողլեաթիանոս կայսրը կամեցաւ կուսանաց վանքէն հանել Հովհաննէ կուսին և իրան հարսնացնել: Հովհաննէ իւր մայրապետի և միւս ընկերակցաց հետ միասին փախաւ Հռոմէն: Գիողլեաթիանոս սմեն տեղ հրովարտակներ հասուց, որ ուր-էլ միանգամ գտնեն՝ դարձնեն Հռոմ: Այս հրովարտակներու մէկն էլ եկաւ Հայաստան: Այդ միջոց Հովհաննէն շատ տեղեր թափառելէն յետ՝ հասել էր Վաղարշապատ: Հովհաննէին գտան այգիներու մէկ հատ հնձանի մէջ, Տրդատ կամեցաւ նրան իւր հարսն անել, բայց որովհետեւ նա հարսնացած էր Քրիստոսի՝ չըկամեցաւ Հայաստանի տիկնու թիւնը, այլ սմեն փառքն ու պատիւը արհամարհեց, և երբ Տրդատ ուղեց բռնութեամբ յաղթել՝ նորա Փեայն Յիսուս աներևութապէս օգնեց իւր անարատ որոջին: Մատաղահասակ օրիորդը ըմբշամարտի նման ոգորեցաւ հսկայ թաղաւորի դէմ, յաղթեց նորան և դահլիճներու ձեռքով անթառամ պսակն ընկալաւ, նախ ինքը և ապա իւր երեսուն և վեց ընկերքը: Տրդատի վրայ մէկ տրամութիւն և մէկ թմրութիւն եկաւ և քիչ քիչ այնքան տաստկացաւ, որ մոլեգնութեան մէջ ձգեց նորան և խելացնորութեան հասուց: Մտաթափութեան և կատաղութեան նման մէկ պատիժ եկաւ թաղաւորի, նորա իշխանների և մայրաքաղաքի բնակչաց շատերի վրայ: Այն ժամանակ Խորովիդուխտ պարկեշտ դշխոյի տեսլեան մէջ յայտնութիւն եղաւ, որ Արտաշատի Խոր Վիրապէն հանեն Քրիզորին, և նա ախտացելոց համար բժշկութիւն խնդրէ Սասունոց: Օտոյ ծերունի նախարարին՝ Հայաստանի Հաղարապետին, ուղարկեցին Քրիզորին բերել: Քնաց Օտոյ, հանեց Քրիզորին Խոր Վիրապէն, ուր որ սասնուհինգ տարի թունաւոր զեռնոց մէջ մնացել էր կենդանի, և հասուց Վաղարշապատ: Սուրբ

Գրիգոր առաջ հարցուց սրբոց կուսանաց նահատա-
կութեան տեղը, Հռիփսիմեանց և Քայիանեանց նըշ-
խարհները ամփոփեց, նոցա վրայ վկայարաններ շինեց
և Էջմիածնի հիմքը դրեց: Այս չորրորդ դարու ըս-
կիցքն էր, և ժամանակը հասել էր, որ քրիստոնէու-
թիւնը ամեն տեղ տարածուէր: Սուրբն Գրիգոր իւր
աղօթքով հայցեց յԱստուծոյ Հայաստանի լուսաւո-
րութիւնը և ախտաժեւաց բժշկութիւնը: Թագաւորն
ու իշխանները աղգի հաճութեամբ ուղարկեցին սուրբ
Գրիգորին Արարիա, և այնտեղ սուրբն Ղևոնդ պատ-
րիարքը տուաւ նորան քահանայութիւն և Լւիսկոսու-
սութիւն և սրբոց մասունքներ, և դարձուց Հայաստան:

Սուրբն Գրիգոր քահանայապետական կարգը առ-
նելէն յետ՝ քարոզութեամբ լուսաւորեց Հայոց աղ-
ղին, և այն պատճառաւ արժանաւորապէս ԼՈՒՍՇՒՌԻՉ
կոչուեցաւ. կոոց մեհեանները քանդեց, նոցա տեղը
եկեղեցիներ և վանքեր կանգնեց, և կրօնաւորական
կարգի հիմք դրեց Հայաստանում:

Տրդատ այնուհետեւ երկու մեծ պատերազմ ունե-
ցաւ՝ մէկը Բասլաց աղգի և միւսը Շապուհ Պարսից
թագաւորի դէմ: Քեզուհն, որ պատմիչք ասում են
թէ՝ Անակի եղբօր որդոց մէկն էր, հիւսիսական աղ-
գերու մէկի՝ Բասլաց վրայ թագաւոր էր դարձել, և
ինքը քաջ ու հսկայակերպ երիտասարդ լինելով երեւի
թէ միտքն էր բերել իւր նախնի աղգատոհմի անցքը,
և Շապուհի դրդութեամբ՝ անհամար զօրքով եկել
էր Հայաստանի վրայ. բայց սաստիկ պատերազմի ժա-
մանակը Տրդատի սրին հանդիպելով՝ մեռաւ, որով
իւր հօր արիւնապարտութիւնը հատոյց: Քեզ ևս
Տրդատ Քեզուհնի դէմ զբաղած էր, որ Շապուհն
էլ Պարսից զօրքով սկսաւ միւս կողմէն Հայաստանի
վրայ գալ. այս պատճառաւ Տրդատ էլ Քեզուհնի

արշաւանք որ վերջացուց՝ Շապուհի դէմ դարձուց իւր սուրը. Հայաստանէն հալածեց, շատ Պարսիկ-էլ կոտորեց, և աշխարհը խաղաղացուց:

Թէպէտ Հայաստանը քրիստոնէութեամբ լուսաւորուել էր, բայց օտարացեղ իշխաններէն ոմանք քրիստոնէութիւնը լաւ չէին սրահում, և իրանց հին կուսաշատութեան սովորութիւններէն ձեռք չէին վեր առնում. ոչ Ղուսաւորչի քարոզները և ոչ Տրդատի խրատները օգուտ ունեցան: Տրդատ կամեցաւ թագաւորութենէն հրաժարուիլ: Օտարացեղ իշխանները Ղուսաւորչի որդուն՝ Արիստակեսին սրով մեռուցին. Ղուսաւորչի թոռին՝ Աղուանից Գրիգոր կաթողիկոսին ձիու սրչէն կապած՝ կտոր կտոր արին, և վերջապէս Տրդատ, Հայոց թագաւորների պարծանքը, իւր կեանքը վերջացուց մահադեղով թունաւորուած:

Հայաստանի յաջողութիւնը Տրդատի հետ մտաւ հող: Էլ Արարատ տեանելու չէր Արշակունեաց թագաւորներէն մէկ արժանաւոր ժառանգ Տրդատաց դահին. Տրդատի մահը բացեց իշխանաց աչքը, ամենքը դարձ եկան և դարձան բարի մարդ և բարի քրիստոնեաց, ամբարշտութիւնը և անսխիտանութիւնը հաւաքուեցան թագաւորական աթոռի վրայ: Միմիայն Առամշատուհն էր, որ այն մարդակերպ հրէշներու մեջ երևեցաւ կատարեալ մարդ, բայց մէկ հատ ծաղիկը կարող է դարուն ապահովել: Արշակունեաց թագաւորութիւնը սկսաւ դլորուիլ դէպի կորստեան խորխորատ:

Տրդատի աթոռը, որ նորա մահուամբ պիտի կործանուէր, սուրբ Արթանեսի միջնորդութեամբ և Հոռմայեցոց օգնութեամբ ժառանգեց նորա որդին Խոսրով 2-դ. որ թէպէտ հօր քաջութիւնը չունէր, բայց իւր հօր զօրապետների արիութիւնը նորա թշնամիներին

Հայաստանէն փախցնելով նորա աթոռը հաստատեց, Պարսիկք հեռացան Հայաստանէն սաստիկ կոտորած քաշելով. այլ նոցա փոխանակ եկան հիւսիսական լեռնականք: Ամեն թշնամիներին դրդողը և Հայաստան բերողն էին այն օտարացեղ նախարարները, որք Հայրապետաց մահու պատճառ էին դարձել: Վահան Ամատունին Օշական ասած տեղումը մեծ յաղթութիւն կատարեց թշնամեաց վրայ, և համարեալ թէ խորովին մուսանգամ Հայաստանումը հաստատեց: Խորով իւր աթոռը Վաղարշապատէն դուրս փոխադրեց և Յ տարի անխառաւոր թագաւորութիւն անելէն յետ մեռաւ:

Նախարարները խորովի որդուն ՏԻՐԱՆԻՆ Վրթանէս կաթողիկոսի հետ ուղարկեցին Կոստանտնուպոլիս, որ կայսրը նորան թագաւոր անէ: Դեռ ևս Տիրան չէր վերադարձել, որ Շապուհ իւր Ներսէս եղբորը բազմադունդ զօրքով Հայաստան հասուց, որ Հայոց աշխարքը դրաւէ: Բայց Արշալիր Կամարականը այն զօրքը կոտորեց ու փախցրուց, մինչև որ եկաւ Տիրան 2-դ: Սա առաջ հաշտութիւն արաւ Շապուհի հետ. յետոյ երբ որ Յուլիանոս կայսրը Պարսից վրայ դնաց, Տիրան միացաւ Յուլիանոսի հետ և Պարսից դէմ ելաւ. և Յուլիանոսի սլաակերի համար Յուսիկ Հայրապետին սպանեց: Բայց երբ որ Յուլիանոս մեռաւ, Շապուհ խաբէութեամբ հրաւիրեց Տիրանին իւր մօտ, և աչքերը հանեց՝ Ա տարի անխելք թագաւորելէն յետ:

Շապուհի արտին ցաւ էր, որ Տրդատ, խորով 2-դ և Տիրան 2-դ Հռոմայեցոց օգնութեամբ նստան Հայոց թագաւորութեան աթոռը. դորանով հաստատուով էր Հռոմայեցոց ազդեցութիւնը Հայաստանի վրայ, որն որ իւր հայր Արաաշիրը այնքան թանգ գնով ստացել

էր, և թողել էր իւր ժառանգութիւն. իսկ իւր ձեռքէն
խլել էր Տրդատ. վասնորոյ Հայոց ազգին մէկ բարե-
մարդութիւն անելով, և Հայաստանի վրայ մէկ երախ-
տիք ունենալու մտքով, Տիրանի որդուն ՄՐՇՍԿԻՆ թա-
գաւոր արաւ ու նստեցուց նախնեաց գահը:

Արդեօք գիտէր Շապուհ, թէ ինչ հրէշ է այս իւր
սանը. արդեօք խորամանկ Պարսիկը ծանօթ լինելով
Արշակի վատթար բնաւորութիւններին՝ նենդութեամբ
տուեց նրան թագաւորութիւնը, որ ճեպէ նորա կոր-
ծանումը: Արշակ 2-դ մէկ այնպիսի թագաւորութիւն
արաւ, որ ոչ քան զնա առաջ և ոչ քան զնա յետոյ
գտնուեցաւ նորա նման վատ թագաւոր: Երբ որ Ա-
լինտ կայսեր և Շապուհի մէջ սլատերազմ բորբո-
քուեցաւ, Արշակ միտքը չըբերելով թէ՛ իւր Տրդատ
եղբայրը ընտանեօք, դեռ ևս Տիրան թագաւորի օրե-
րէն, սլատանդ է Հռոմայեցոց ձեռքը, Պարսից կողմնա-
սլահութիւն արաւ: Ալինտ բարկացաւ և Տրդատին
սպանել տուեց, և սլատանդներէն շատերին կոտորեց,
և ապա ուղարկեց Արշակի վրայ Թէոդոս զօրապետին:
Այլ սուրբն Նէփէս, որ նոր էր դարձել ազգի Հայ-
րապետ, Արշակի աղաչանքով գնաց Թէոդոսի առջև,
հաշտեցուց, և կայսեր ազգական Ալիմպիադա գըշ-
խոյին (որ Կոստանդ կայսեր դուստրն էր) Արշակայ
հարսնութիւն բերեց:

Արշակի եղբօր Տրդատայ որդին Քնէլը՝ իւր հօր
ի դուր մեռնելու համար կայսերէն շատ պարգևներ
առած՝ եկաւ իւր սլապի, կուրացած Տիրան թագա-
ւորի մօտ. սա-էլ Քնէլին իւր կալուածներէն շատ ճո-
խութիւններ տուեց, և Սևնեաց ցեղէն մէկ գեղեցիկ
աղջիկ, Փասանջի՛՛ անունով, նրան հարսնացուց: Սորա
հարսանիքի վրայ նախանձուեցաւ Արշակ, և որսի գրօ-
սանքի մէջ սպանել տուեց Քնէլին. և երբ լսաւ, թէ

իւր հայրը Տիրան կոյր թագաւորը Գնէլի համար
տուգ է անում, սենեկապետներու ձեռքով իւր հօրն
էլ խեղդել տուաւ, և յետոյ Փառանձեւին-էլ տուաւ
իւր կնու թիւն: Փառանձեւ ընու թեամբ Արշակին
նմանելով՝ Ալիմպիադա բարեպաշտ թագուհւոյն մա-
հազել տալ տուեց, և շատ երեւելի մարդոց-էլ մահու
սպանձառ դարձաւ, և իւր հօրը՝ Անդեկանին Սիւնեաց
նահապետ անելով՝ Տիգրանակերտի քաղաքապետ կար-
գեց: Արշակ-էլ այս միջոց Հռոմայեցոց թշնամացաւ,
Շապուհի հետ սկսաւ բարեկամութիւն անել, և պա-
տերազմի մէջ Պարսից էր օգնում: Բայց իւր նախա-
րարներու հետ-էլ հաշտ չէր, և սպանձառն այս էր:
Արշակ մէկ քաղաք էր շինել Արշակաւան անունով, և
հրամայել էր որ՝ այնտեղի բնակիչները դատաստանէ ա-
ղատ լինին: Շուտով լցուեցաւ Արշակաւանը փախստա-
կան ծառաներով, սարսակաւորներով և ուրիշ օրէն-
քէ դատաւարտուած յանցաւորներով: Նախարարք
դանկատ տրին Արշակին այն հրամանի համար, բայց
Արշակ ահանջ չըդրեց, և այս սպանձառաւ նախարարք
իրանց զօրքով դնացին և իրանց փախստական վասա-
ւարտներուն սպառուհասեցին և քաղաքը քանդեցին:

Մինչ նախարարները Արշակաւանն էին քանդում
Բայազիդի մօտ, Շապուհ Տիգրանակերտն էր կործա-
նում. որովհետեւ նորա բնակիչք Շապուհին ձանձաղ
չէին տուել անց կենալու: Այնտեղ Անդեկան նախա-
րարն-էլ մեռաւ, և Սիւնեաց տունը անպայազատ գրուե-
ցաւ: Ինքն Արշակ Տիգրանակերտի թշուառութիւնը
անփոյթ անելով՝ Արաստանէն օգնութիւն տուաւ, և
Արշակաւանի քանդող նախարարաց դէմ սպառերազմ
բացեց: Բայց Ներսէս Ամասարականը նախարարաց
գլուխ կանգնեցաւ, և Արշակի զօրքը ջարդեց: Հազիւ
թէ Մեծն Ներսէս կարողացաւ նախարարներին Արշակի

Տես Տաշտեցիները, մէկ-էլ տեսնես, որ Թէոֆոս կայսերական զօրքով գալիս է Արշակի վրայ: Արշակի աղաչանքով սուրբ Հայրապետը գնաց Թէոֆոսի դիմաց և ողորկեց, որ Հայաստանին մնաս չլտայ: Թէոֆոս ընդունեց նորա միջնորդութիւնը և առաւ տարաւ կայսեր մօտ: Ատէս կայսրը սուրբ Ներսէսին աքսորեց մէկ անմարդարնակ կղզի:

Արշակ տեսնելով որ սուրբ Ներսէսը Տեսու է սկսաւ նախարարներէն Արշակունի վրէժը սխալանջել. Վամսարականաց տոհմը ջնջեց, և սյնքան անհամարաւ, որ երբ Եսայուհ Հայաստանի վրայ ուղարկեց Ալանողան նախարարին, Հայոց նախարարները չըկամեցան օգնել Արշակին: Մեծն Ներսէսն-էլ չըկար, որ մէկ Տաշտեթեան հնար գտնէր, և Արշակ ներքը մնալով հարկադրուեցաւ երթալ Եսայուհի մօտ: Եսայուհ աքսորեց Արշակին Անյուշ բերդ, յետոյ Փարսանձեմ թագուհուն բռնեց և զից հանել տուեց, և օտարացեղ ու բացեալ նախարարներու ձեռքով Հայաստանի մէջ շատ աւերածներ արաւ, և շատ ամուր բերդեր քանդեց:

Արշակ այս թշուառութիւնները լսելով, Անյուշ բերդի մէջ յուսահատուելով՝ ինքն իրան սպանեց 18 տարի իւր աղգին և իւր աշխարհին ծանրութիւն լինելով՝ անարժան թագաւորելէն յետ:

ո՞րքան մեծ պատիւ էր Հայոց: Եթէ Եապուհ ընտ-
րէր մէկ Հայկազն նախարար, մէկ բարեպաշտ և բրիս-
տոնէութեան մտերիմ մարդ, և իւր քոյրը նորան
տար և ուղարկէր Հայաստան, Հայերը խնկով մոմով
կ'ընդունէին: Բայց Մեհրուժան Հայերին ասելի էր,
նախ՝ որ օտարացեղ էր, երկրորդ՝ որ ուրացող էր, և
երրորդ՝ որ լաւ հասկացած չէր ոչ Եապուհի պա-
տուէրը և ոչ Հայոց ազգի բնաւորութիւնը: Եապուհ
ասած չէր նուաճել բռնութեամբ. Եապուհ գիտէր,
որ Հայերին բռնութեամբ նուաճել չէր կարելի. ինչ
վայելչութիւն պիտի ունենար իւր քոյրը բռնութեամբ
նուաճուած թաղաւորութեան մէջ. Եապուհի միտքն
այն էր, որ Մեհրուժան սղաքելով, համոզելով և սի-
րով նուաճէ: Այլ Մեհրուժան ընդդէմը արաւ. կար-
ծեց որ՝ արդէն թաղաւոր է Հայաստանի, և սկսաւ
դռնողութեամբ յոխորտալ, և վառեց Հայերի ազգա-
սիրութիւնը և անընկճելի քաջութիւնը իւր դէմ:
Հայերը նորան ճանչցան ազգի թշնամի և կրօնի հա-
լածող: Բայց Եապուհի ընտրութիւնը մէկ դուշակու-
թիւն էր, որ ժամանակաւ Հայաստան պիտի Արծ-
րունեաց տանէն թաղաւոր ունենար՝ միայն Մեհրու-
ժանի ուրացութիւնը փրկանաւորելով:

Եյն միջոց, մինչ Եապուհ ուղուժ էր Հայաստանը
խնամութեամբ Պարսից տէրութեան հետ միաւորել,
Կոստանտնուպօլսի ասթուր նստաւ կայսր Թէոփոսը,
որ յետոյ Մէծէլ կոչուեցաւ: Սա սուրբ Ներսէս Հայ-
րապետին արտորուած տեղէն բերել տուաւ: Սուրբ
Ներսէսը լսելով Հայաստանի անմխիթար դրութիւնը,
խնդրեց Մեծ Թէոփոսէն, որ Արշակե որդի Պապին,
Փառանձեմէն ծնած, (որին՝ Մեծն Ներսէս՝ երկրորդ
անգամ միջնորդ դնալու ժամանակը հետը տարել էր
կայսեր դուռը, և այնտեղ հռոմայեցոց մօտ պատանդ

էր) տայ Հայոց թագաւորութիւնը: Ինչ լաւ բան արած կը լինէր Վաղէս կայսրը, որ երբ սուրբ Ներսէսին աքսորեց, Պապին-էլ սպանել տուած լինէր: Հայոց ազգի անպիտան թագաւորների թիւը մէկով պակաս կը լինէր: Աչ ապաքէն Վաղենտը սպանել էր տուել Տրդատին՝ Տիրանի որդուն:

Թէոդոս լաւ սուրբ Ներսէսի աղաչանքը, և ՊՄՊ արքայորդուն Հայոց թագաւոր դրեց, և հրամայեց իւր Տերենտիոս զօրապետին, որ տանէ Պապին և իւր հայրենի աթոռումը նստեցնէ: Ներսէս ժողովեց Յունաց երկրումը գտնուած բոլոր նախարարներին, և Տերենտիոսի հետ միասին բերին Պապին Հայաստան, և Մեհրուժանին հալածեցին:

Եյս անգամին-էլ Հայերը տեսնելով՝ որ իրանց սուրբ Հայրապետն է ամեն բանի տնօրինողը, ընդունեցին Պապին ինչպէս ազգի ընտրած թագաւոր և կանգնեցան նորա դրօշակի տակը: Եապուհ անթիւ զօրք ուղարկեց Մեհրուժանի օգնութիւն. Թէոդոս կայսրն-էլ Պապին օգնութիւն հասուց. բայց յայտնի էր որ՝ ո՛ր կողմը Հայերն էին, այն կողմը պիտի մնար յաղթութիւնը: Խմբուեցաւ ճակատամարտը Չիրաւ դաշտումը՝ Կողբայ ու Մասիսի միջոցը: Հայերը յաղթեցին: Սմբատ Բագրատունին բռնեց Մեհրուժանին, և շամփուրը սլսակաձև բոլորելով՝ հրաշէկ կարմրեցուց, և որպէս թագադիր ասպեա՝ դրեց Մեհրուժանի գլխին, և այնպէս թագաւոր անելով՝ սպանեց:

Եյն ժամանակը սուրբ Ներսէսը ժողովեց Պապ թագաւորի մօտ նախարարներին, և մէջերը սղայման դրեց, որ թագաւորը բռնութիւն չանէ, իւր հօր արած փնասները հատուցանէ, և նախարարները թագաւորին մտերիմ լինին:

Այսպիսի բարի սկզբնաւորութեամբ եղաւ Պատի
Թագաւորութիւնը: Բայց երբ որ սկսաւ իւր հօր ու
մօր նման բարի ճանապարհներէն հեռանալ, ու նա-
խարարներուն իւր դէմ գրգռել, Մեծն Ներսէս
բռնադատուեցաւ Թագաւորի միտքը բերել նախա-
րարներու հետ արած դաշինքը: Այս պատճառաւ
Պատ մահադեղ տալով սպանեց սուրբ Ներսէս Հայ-
րապետին, և երբ մնաց ինքնագլուխ, Հռոմայեցոց
Թագաւորութիւնէն ապստամբեցաւ, Տերենտիոս զօրա-
պետին Հայաստանէն հալածեց, և փոխանակ նախա-
րարների սիրաբ գրաւելու՝ Եապուհին հարկաւոր
դարձաւ: Թէոդոս հրամայեց Տերենտիոսին, որ Պատին
նուաճէ: Նախարարները չօգնեցին անպիտան Պատին:
Տերենտիոս բռնեց նորան, և հասցուց կայսեր մօտ:
Թէոդոսի հրամանով Պատի գլուխը կտրեցին սակրով
7 տարի Թագաւորելէն յետ:

Թէոդոս Թագաւորը Պատի տեղ դրեց ՎԵՐՍՁԻՍ
քաջ երիտասարդին, որ Յունաստան կեցած ժամա-
նակը մեծ մեծ և արիական սխրագործութիւններով
իւր համբաւը փառաւոր էր կացուցել, և երբ Հայաս-
տան եկաւ, մեծ պատերազմի պատահելով այնպէս
քաջութիւններ արաւ, և այնպէս յաղթութիւններ կա-
տարեց, որ Մովսէս Խորենացին նրան Ա. քիլ լեւսին
նմանեցուց: Վարադդատ, որ Թագաւորական տանէն
ցեղուած լինելով՝ քաջութիւնով Հելլէնացոց դիւց-
ադնին հանդիտացաւ, խելքով ցոյց տուեց, որ զուտ
Արշակունի է: Եթէ հանդարտ նստէր Մեծին Թէո-
դոսի հովանաւորութեան տակը, ինքն-էլ բարերադը
կր լինէր, և Հայոց աղդին-էլ պատճառ կր լինէր բաղ-
դաւորութեան: Բայց ոչ: Եապուհին ապաւինեցաւ
նորա դուստրերէն մէկը իւր կնու. Թիւն ուղեց, և Հռո-
մայեցոց իշխանութեանէն կամեցաւ ապստամբուիլ:

Թէոդոս լսեց, և Տրամայեց իւր զօրասկաներուն՝
Վարազդատին բռնել և ուղարկել Յունաստան :

Վարազդատ իւր կամքով դնաց կայսեր սուաջև, որ
իւր գլուխը արդարացնէ, բայց կայսեր Տրամանաւ
Թուլիս կղզի (Խալանդիա կամ Եոթլանդիա) արսու-
րուեցաւ, չորս տարի թաղաւորելէն յետոյ յմասսա

Թէոդոս կայսրը տեսնելով Հայոց թաղաւորներու
անհաստատ բնաւորութիւնը, կէս արաւ Հայաստանը,
Պատ թաղաւորի երկու որդոց ԵՐԶՍԿԻՆ ու ՎԵՂՍԵՐԶՍԿԻՆ
թաղաւոր նստեցուց, որ մէջերը բաժան բաժան լի-
նելով, մնան Հռոմայեցոց հնազանդ : Այս մեծ վնաս էր
Հայոց և սուրբ մարդու մտածելու գործ չէր : Արշակ
ու Վաղարշակ եկան Հայաստան, և Պարսից զօրքը,
որ Վարազդատ ներս էր բերել, Հայոց աշխարհէն
փախցրին : Վաղարշակ նոյն տարին մեռաւ : Արշակ Զ-դ
մնաց մէնակ թաղաւոր Հռոմայեցոց հստատակ :

Թէոդոս կայսրը, որ Հայաստանը սրտուեց ու կրկին
միաւորուեցաւ ինքնիրան, իւր ինքնակալութիւնն էլ
այնպէս սրտուեց, որ անկարկատելի եղաւ և այն-
պէս սրտուած տուեց իւր երկու անարժան որդոց :
Ասորիոսին մնաց Հռոմը և արևմուտքը, Ա. ընտանիքս ստա-
ցաւ Արաստանունուաջլիս և արևելք : Հռոմայեցոց կայսեր-
րութիւնը երկու բաժին եղաւ՝ Ա. ընտանիքս և Ա. ընտանիքս :

Երևելեան կայսր Արկաղէտոսը Եասլուհի հետ դաշ-
նադրութիւն և հաշտութիւն արած ժամանակը, Հայա-
ստանը, որ Վաղարշակի մեռնելով սրտուած տեղէն միա-
ւորուել էր, միւսանգամ սրտուեց, կէսը պահեց Յու-
նաց իշխանութեան տակը, որ էր Միջագետքը և Փոքր
Հայքը. իսկ մււս կէսը, որ էր Մեծ Հայքը, տուեց
Պարսից : Արշակ Զ-դ, որոյ մայրը Զարմանդուխտը
Բիւզանդացի էր, չրկամեցաւ Պարսից բաժնումը մնալ,
գնաց Փոքր Հայոց և Միջագետաց կողմը թաղաւո-

րել, Հռոմայեցոց հալատակելով: Երան նայելով նախարարներէն-էլ շատերը գնացին: Այս գիտուածներու վրայ բարկացաւ Ծապուհ և Պարսից բաժնի Հայոց վրայ թագաւոր կարգեց Արշակունի Խոսրով նախարարին: Այտուեղ կատարելապէս լրացաւ Հայաստանի սլատառումը:

Հայերը ունեցան երկու թագաւոր, և սկսան մէկ-զմէկու դէմ սլատերադմել: Միայն Արշակի մահը, որ հինգ տարիէն հասաւ, վերջ դրեց համ ազգամիջեան կռուին, համ Սանատրուկի ազգատոհմին: Երբ որ Խոսրով մնաց մէնակ, առանց Ծապուհի խորհրդին դեսպան ուղարկեց Արկաղէոս կայսեր մօտ և խնդրեց, որ Յունաց բաժին Հայաստանն-էլ իրան յանձնէ: Արկաղէոս յօժարացաւ, և Խոսրով ինչպէս Պարսից, նոյնպէս և Յունաց հարկ տալով, սկսաւ միայնակ թագաւորութիւն անել, որով ազգի երկսլառակութիւնն էլ վերացաւ: Բայց երկար չքուեց այս: Երբ որ իմացաւ Ծապուհ, որ Խոսրով Արկաղէոսի հետ բարեկամութիւն է սկսել, մեղադրանք ասլսարեց, բայց կարճամիտ Արշակունին փոխանակ իւր բարերարին առաջ խօսքով համոզելու կամ ներողութիւն խնդրելու, կամ գոնէ Հայոց նախարարներու հետ խորհրդակցելու, Ծապուհի սլատգամաւորներին անարդութեամբ արձակեց, և ինքը Արկաղէոսին դեսպան ուղարկեց, որ բոլոր Հայաստանը իւր իշխանութեան և պաշտպանութեան տակ առնու: Թէպէտ հեռատես մարդ չէր Արկաղէոս, սակայն իւր դրած դաշն չէր կարող ինքը քակտել: Եկաւ Ծապուհի որդի Արտաշիրը Հայաստան: Նախարարները պատրաստ էին իրանց թագաւորին օգնել, որովհետև Հայաստանի միութիւնը, որ արել էր Խոսրով, նրանց հաճոյ էր: Բայց Խոսրով չքհարցուց նախարարներուն, չուղեց

նրանցմէն օգնութիւն. դնաց Արտաշիւրի մօտ, որպէս
թէ անձարացած: Արտաշիւր տարաւ նրան Տիւրոն,
և Շապուհ աքսորել տուեց Անյոյշ բերդ 5 տարի
թաղաւորելէն յետ: Խոսրով դառաւ արմատ նոր ցե-
ղապետութեան, որ տեւեց մինչև Արշակունեաց թա-
ղաւորութեան վերջանալը:

Շապուհ՝ որ Տրդատի թաղաւորութեան առաջին
օրէն սկսած, մինչև Խոսրովի աքսորը ինքնակալու-
թիւն էր անում Պարսից, և որոյ առջև Հայաստանումը
իննը թաղաւորք փոխուեցան, իսկ Յունաստանումը
նոյնքան Հռովմայեցոց կայսերք, (որոց մէջ կային և
Մեծն Կոնստանտինոս, և Մեծն Թէոդոս) հարիւր
տասը տարի թաղաւորութիւն անելէն յետ՝ մեռաւ.
նորա տեղ նստաւ Արտաշիւր 2-դ: Սա Խոսրովի դա-
տարկ մնացած աթոռը տուեց նորա եղբօրը՝ ՎՌՍՄ-
ՇՍՊՈՒՏԻՆ, որ մէկ խելացի մարդ լինելով՝ հաւատա-
րիմ մնաց իւր բարեբարին, և Պարսից հպատակ կենա-
լով՝ Հայաստանը սրահեց խաղաղութեան մէջ, թէ և
Արկաղէոս չը յանձնեց նրան Յունաց բաժնի Հայոց եր-
կիրները: Այն ժամանակուան Հայոց Հայրապետն էր
Մեծն Սահակ Պարթև՝ սրբոյն Ներսիսի որդին,
որուն Խոսրով 3-դ էր կաթողիկոս դրել առանց Շա-
պուհի հաւանութեան, և այս պատճառաւ աթոռէն
մերժվել էր: Սա իւր միամօր դուստրը Սահակա-
նոյշ տուել էր կնութիւն Համաղատ Մաթիոնիոս իշխա-
նին, և որովհետև Հայոց սպարապետութիւնը Սմբատ
Բաղրատունիէն յետ՝ այլոց յանձնուած չէր, Սահակ Հայ-
րապետը՝ երբ որ աղղի դօրծի համար դնաց Տիւրոն,
Վռամշապուհ թաղաւորի միջնորդութեան թուղթը
ձեռին ունենալով՝ շատ շնորհներ Պարսից թաղաւ-
րէն ընդունելու հետ միասին՝ ստացաւ և իւր փեսի
Համաղատափի համար հրաման, որ Հայոց զօրութեան

սպարապետ լինի: Այս Համադասակի որդին էր քաջն
ՉՆՐԻՍՆ (Ստրատելատ և սպարապետ) և նորա եղբարք՝
Համադասական և Հայեան: — Երբ որ մեռաւ Արտաշէր,
և նորա տեղը նստաւ Վռամ՝ Հայոց թագաւորը
Վռամշապուհ իւր խոհեմութենով նրա աչքն-էլ
մտաւ, այնպէս որ՝ երբ Միջագետքի կողմը Յունաց և
Պարսից մէջ խռովութիւն ծագեցաւ, Վռամ Պարսից
թագաւորը՝ Վռամշապուհին յանձնեց, որ երթայ և
այն երկու միապետութեան մէջ ընկած շփոթը խա-
ղաղեցնէ: Վռամշապուհ իւր հանձարեղ մարդաշա-
հութենով ոչ թէ միայն այն կողմերու խռովու-
թիւնը հանդարտեցուց, այլ և Հայոց ազգին մեծ բարե-
րարութեան պատճառ դառաւ: Այն շփոթի ժամա-
նակը շատ դրութիւններ էին պատահում, և Վռամ-
շապուհ գրագրի ներդրութիւն էր քաշում: Երբ որ
վերադարձաւ Հայաստան, ու տեսաւ որ՝ Սահակ և
Միսրոս բոլոր Հայոց եկեղեցւոյ գիտնական եպիսկո-
պոսները և աղագասէր վարդապետները ժողովել են, և
Հայոց գրի համար հոգս ու ջանք են անում, Վռամ-
շապուհ իւր թագաւորական իշխանութեամբ նրանց
հայրենասիրական եռանդը սկսեց բորբոքել, խրա-
խուսել և խնամարկու լինել: Միսրոսի մերը հնար-
վեցաւ. Հայաստանի մէջ առաջ եկեղեցական մատենա-
ներ, յետոյ ուսումնական և խմատասիրական գրքեր
շատցան. Յունաց, Ասորոց և այլ լեզուներէն թարգ-
մանուեցան շատ հին ու նոր շարադրութիւններ. Հայ-
ազգի մանկունք ուղարկուեցան ուսումն անելու, և
Աթէնքէն, Աղէքսանդրիայէն, Բիւզանտիոնէն և Հռո-
մէն բերին շատ ուսումն և շատ դիտութիւններ, և
լուսաւորուեցաւ Վռամշապուհի քսան և միամեայ ար-
դիւնաւոր թագաւորութեան ժամանակը: Բայց Յու-
նաց բաժնի մէջ ջթողին կուսակալները, որ հայերէն
դպրութիւնը աւանդուի:

Վրաստանի մասին յետ Մեծն Սահակ միւս-
անգամ դնաց Պարսից դուռը, ուր որ Վրաս մեռել
էր, և տեղը նստել էր Յուդի 1-ն, և խնդրեց, որ
Խոսրովին Անյոյշ բերդէն հանէ և կրկին թագաւոր
դնէ Հայոց: Սաստիկ արգելուած էր թագաւորի առջև
Անյոյշ բերդի, կամ նորա արքայականի անուանը տալը.
բայց Յաղկերտ 1-ն չկամեցաւ սուրբ Հայրապետի միջ-
նորդութիւնը դետինը դնել. Խոսրով արգելանքէն
աղատուեցաւ, և իւր հայրենիքը դարձաւ. բայց մէկ
տարիէն աւելի չապրեցաւ:

Յաղկերտ էլ չկամեցաւ Հայոց ազգին թագաւոր
դնել Արշակունեաց ցեղէն, այլ իւր որդւոցմէն ՇՍՊՈՒ-
ՀԻՆ անուանեց Հայոց թագաւոր, և ուղարկեց Հայա-
ստան: Հայոց նախարարները թէպէտ սուրով թու-
րով ջնդդիմացան Շասուհին, բայց թագաւորի
տեղ-էլ չդրին. մանաւանդ Հայկազն Առաջ Մոհայեան
ամեն տեղ հետը անարդութեամբ և արհամարհու-
թեամբ վարուելով՝ (մինչև Սասանեան ցեղը կնա-
մարդի անուանելով իւր առջևը) ձանձրացուցին, և
այն աստիճան հասցրին, որ 4 տարի Հայաստանումը
մնալէն յետ՝ ինքնիրէն դնաց Պարսից երկիր. բայց
իւր փոխանորդ Պարսից զօրապետին հրամայեց, որ
նախարարներուն բռնտէ և Պարսկաստան ուղարկէ:
Նախարարները, երբ որ իմացան այս դաւաճանու-
թիւնը՝ Հայկազն Ներսէս ճեշտիպոյն իրանց ա-
ռաջնորդ դրին, Պարսից դէմ սրատերազմեցան, և
Հայաստանէն հանեցին: Սակայն իրանք-էլ դնացին
և իրանց ամուր տեղերը ասլաստանեցան: Հայաստան
մնաց անտէր: Յաղկերտի տեղ թագաւորեց Վրաս 2-դ,
որ զօրք ուղարկեց Հայաստանը նուաճելու: Սուրբն
Սահակ տեսնելով այս շփոթները՝ թողեց Պարսից
բաժին Հայաստանը, և դնաց Յունաց բաժին, և իւր

Թոռն Վարդան Մամիկոնեանին ուղարկեց Կոնստան-
տինուպոլիս: Որովհետև նորա հայրը Համազասպ Մա-
միկոնեանը մեռել էր՝ կայսրը տուեց Վարդանին
ստրատելատու թիւն՝, և հրամայեց որ Յունաց
բաժնի մէջ-էլ Հայերէն դպրութիւնը (գրել կարդալ)
սովորին: Վրամ տեսնելով թէ՛ Հայերը սկսան Յու-
նաց մտաւորութիւլ, վախեցաւ որ Հայաստանը ձեռքէն
կ'երթայ, սկսաւ նախարարներու հետ հաշտուելու
ճանփաներ պըտրտել: Նախարարք-էլ տեսնելով որ
Հայաստանը անգլուխ մնացել է՝ յօժարեցան հաշ-
տուիլ, շուտով ուղարկեցին սուրբ Սահակին Յունաց
բաժնէն բերին, սուրբ Սահակ՝ նախարարներու միա-
բանութիւնը և խաղաղասիրութիւնը հիմք դնելով,
ամենեցուն հաւարեց, որ խորհուրդ անեն: Ամենե-
ցուն հաճութեամբ Սահակ Բագրատունին և Վար-
դան Մամիկոնեանը գնացին Պարսից դուռը, հաշտու-
թիւնը հաստատեցին, և Վրամ շատուհի որդի Արտա-
շէսին, որոյ անունը Վրամ թագաւորը՝ ՄԲՏԱԶԻԷ էր
դրել, առին հետերը, բերին Հայաստան և թա-
գաւոր դրին: Արշակունեաց Հայոց թագաւորական
թագը՝ սուրբ առաքելոց և բաղմաթիւ առաքելակրօն
անձանց և նահատակներու, Ղուսաւորչի որդւոց և
Թոռանց անպարտ արխանի կաթիլներով ճանրացած
էր. չկարողացաւ Արտաշիւր անտակ Արշակունին այն
թագը գլխին երկար ժամանակ պահել, այլ նորա տակը
մնաց, ընկձեցաւ և ճիւղեցաւ, և իւր գլորվելու
ժամանակը կտորեց հայրապետական Ղուսաւորչի ցեղի
գաւաղանը, և իւր հետ միասին կորճանեց սրբթեա-
ղանց հարստութիւնը: ՄԲՏԱԶԻՍ վերջին՝ երխտասար-
գական հասակի մօլու թիւնները, որն որ Պարսից թա-

* Այս անունով Յոյները իւրեանց երեւելի զօրավարներին էին կոչում:

գաւորի դրանք աւելի սնուցել էր և զօրացրել՝ իւր
հետ միասին հանեց արքայական դահլը, և սկսաւ
անարժան գործերով սնարդել իւր արքայան տատի-
ճանն-էլ, և իւր բաղմած նուիրական տեղն-էլ: Առա-
ջին տարիները սրբոյն Սահակայ միջնորդութիւնը
և Առամշապուհի Հայոց ազգի վերայ ունեցած երախ-
տիքը սրաշտպանում էին թագաւորին. բայց երբ որ
ազգի համբերութեան թելը կտրեցաւ, և յուսահա-
տութիւնը հասաւ վերջին ծայրը՝ Արշակունեաց դէմ
հին տաւելութիւնը զարթեցաւ, և փոխուեցաւ յայտնի
թշնամութիւն: Ազգասէր նախարարները կամենալով
ազգի մնացորդը փրկել յետին կորուստէն՝ խորհուրդ
արին, որ երթան միարան և միաբերան խնդրեն Պար-
սից թագաւորէն, որ Արշակունեաց Հայոց թագաւո-
րութիւնը վերայնէ: Այս խորհուրդը յայտնեցին սուրբ
Սահակին-էլ. բայց երբ որ տեսան թէ՛ սուրբ Սահակ
չէ կամենում նոցա հետ միարանիլ՝ իրանք միայն
դնացին, և խնդրէին Առամ Պարսից թագաւորէն, որ
Արշակունեաց աստէն Հայոց խաղաղութիւնը, և Լուսա-
ւորչի ղեղէն հայրապետութիւնը խաւանայ: Նախարարներու
խնդրած առարկան շատ հաճելի և ցանկալի էր Պար-
սից-էլ՝ վաղ ժամանակներէ, բայց նախարարներէն էին
վախենում. վասնորոյ ուրախութեամբ ընկալաւ թա-
գաւորը այս խնդիրը. թէպէտ երկու կողմանց շարժա-
ռիթը և նորոտակը շատ զանազան էին մէկզմէկէ: Առամ
հրաւիրեց իւր դուռը Արտաշիրին-էլ, սուրբ Սահակին
էլ. մէկէն առաւ թագաւորութիւնը, միւսէն՝ կաթողի-
կոսութիւնը, և Պարսկաստան արգելեց. իսկ Հայաս-
տան ուղարկեց մէկ Պարսիկ իշխան Ա. Ե. Մ. Տ. Շ. ա-
պուհ կոչուած՝ մարդպանի (կուսակալ) սրաշտոնով.
բայց հազարապետութիւնը մնաց Առամի Ամսորոտանոց ձե-
ռումը, իսկ սարապետութիւնը՝ Արդան Մամիկո-

նեանի : Այսպէս վերջացաւ Հայոց Արշակունեաց
հարստութիւնը Արտաշիւրի 6-դ տարումը , որ տեւեց
564 տարի . իսկ Հայրապետութիւնը Լուսաւորչի ցեղի
մէջ տեւել էր 132 տարի :

Խորհրդածութիւն .

Հայկի ու Արամի անունը լսելու ժամանակը մեր
նախնիք կարծում էին թէ հասակէն կէս կանգուն
աւելնալով աճում են . այժմ մենք-էլ Տրդատի ու
Առամշտարուհի գործքերը միտքերս բերելու ժամա-
նակը՝ համարում ենք թէ նրանք իրանց հազարամեաց
գերեզմաններէն դուրս են գալիս , և մեր ձեռքէն
բռնած՝ մեզ ուղում են ուղղափառ կրօնի և համադ-
գային լուսաւորութեան տաճար առաջնորդել : Այս-
քան քաղցր է Հայոց ազգի համար սրանց բարի յի-
շատակը : Բայց ախա՛ն որ պատմութիւնը չէ սրահել
այն հաւատիքը , որով հնար ունենայինք ստուգել ,
թէ այն առաքինի նախնիք Հայկ ու Արամ ո՞րքան
կարողացան իրանց բնատուր ձիւրքը ժառանգութեամբ
հաղորդել յեանորդաց , որ մեզ համար մէկ նուիրա-
կան անուամբ Հայկազունք են կոչվում : Մենք այն սրա-
ճառաւ չենք մեղադրում Արային՝ որ Շամիրամի սրբա-
մտութեան զոհ գնաց , և ո՛չ Անուշաւանին՝ որ Նի-
նուասի ձեռքը գերի ընկաւ , և ո՛չ Աւահէին՝ որ Ալէք-
սանդր Մակեդոնացւոյ դէմ խմբած ճակատամարտու-
մը սպանվեցաւ : Ա՛վ կարաց Շամիրամի յաջողութեան
դէմ կանգնիլ , կամ Ալէքսանդրի ճանապարհը ո՛վ
էր կարող խափանել : Չենք մեղադրում Տրդատին-էլ՝
որ Ախարասի հետ այնքան ուրախ բարեկամութիւն
արաւ . ո՛վ էր կարող այն աշխարհակալին , զորոյ հա-

Լիակ ունիւր նախասահմանութիւնը զարդ Յիսուսնէ հաս-
կանալիցուցանելու ասածի նորա զարգ, կանգնիլ հակառակի
Քայց մեղադրում ենք մեր նահապետներու կամ թա-
գաւորներու ոմանց անարգ գործերը, որ յայտնի
ցոյց են տալիս թէ՛ նրանց մտքերէն ջնջված են եղել
Հայկի և Արամի աղափաստութիւնը, և այնպէս
պատճառներով էին իրանց՝ օտարի ազդեցութեան տակ
ձգում, որ բնաւ կարիք չունէին: Պարոյր՝ Մա-
րաց թագաւորէն թագ աննելու համար՝ դնաց նո-
րա դրօշակի տակը կանգնեցաւ: Ինչ էր պատճառը,
միթէ ինքը չէ՞ր կարող իւր գլխին թագ դնել, ո՞վ
էր նորա ձեռքը բռնում, միթէ ազգը չէ՞ր կարող
նրան թագ տալ, ո՞վ էր Մարաց գլխին թագ դրել,
միթէ ազգը պիտի ասէ՞ր թէ «չեմ ընդունում քո թա-
գը, որովհետեւ քեզ քու ազգն է տուել, և ո՛չ օտար-
ները, կամ դու ինքդ դրիր, և ո՛չ թէ ուրիշները»: Ինչ
անհասանելի խորհուրդ կար սորա մէջ. ինչ
խոհեմութիւն էր ծածկվում. ինչի՞ էր իրան կամաւոր՝
օտարի իշխանութեան տակ դնում: Օտարը թէ կա-
րող էր տալ, կարող էր և առնուլ: Այս տգեղ փոք-
րոգութիւնը և մոլար կենցաղագիտութիւնը Հայոց ազ-
գին մեծ փաստակար բան դարձաւ, ազգի աղատութեան
սանձ դառաւ, և մինչև վերջը ազգը այսպիսի անխո-
հեմ կառավարութեան փասաները քաշեց: Մեր ազգի
կառավարիչներէն և թագաւորներէն մէկ քանիսը այս
ախտով հիւանդացած լինելով, և այս անբուժելի ցա-
ւէն մեռնելով, ազգին ընկղմեցին բնաջինջ կորստեան
խորխորատի մէջ: Արշամ՝ Արգար թագաւորի հայ-
րը, որ մէնակ իւր ազգի հաճութեամբ ու կամքով
թագաւոր նստաւ՝ ինչ պակաս էր, ո՞վ կարաց նորա
գլխէն յափշտակել թագը: Աթէ Տրդատի որդուն
Խոսրովին Հայերը իրանք թագաւոր դնէին՝ ո՞վ պիտի

վրէժխնդիր լինէր: Մի՛ թէ Տրդատին՝ թագաւորու թիւնը ստանալու համար օգնող Պիոկլէտիանոսը, կամ նորա յաջորդ Կոնստանտինոսը ասել էին, թէ քու մահէն յետ՝ քեզ յաջորդ ու ժառանգ մենք պիտի ընտրենք, կամ հաստատենք: Չէ՛: Հարկաւոր էր Հռոմայեցւոց կայսրէն խնդրել, և այնպէս Պարսից նախանձը շարժել, որ այնուհետև սալորու թիւն դառնար, որ եթէ Հռոմայեցիք թագաւոր դնէին՝ Պարսից լինէր ընդդէմ, եթէ Պարսիկը դնէին՝ Հռոմայեցիք բարկանային: Յիմար էին Պարսիկք-էլ, Հռոմայեցիք-էլ, որ Հայաստանի սրտուական թագը իրանց ձեռքումը ունենալով, չէին իրանց գլխին դնում, այլ դնում էին անարժան և անխելք Արշակունեաց գլխին, մէկը՝ Տիրանի ու Պապի, և միւսը՝ Արշակի ու Արտաշիրի: Ինչպէս որ թագաւորութեան իշխանութիւնը, նայնպէս և սպարապետութիւնը առնում էին օտար թագաւորութենէն: Մի՛ թէ Աարդանի քաջութիւնը Յունաց կայսրը սարգևեց: Աղորմելի ազգ. ո՛րքան զբրկվել էր իւր օղաւտութենէն, եթէ Պարսիկք ընդունէին նորա սպարապետութիւնը՝ նա սպարապետ էր, ասլա թէ ոչ չէր: Մի՛ թէ Աարդան Պարսից պիտի զօրավարէր: Ա՛չ ասլաքէն նորա դրօշակի տակը Հայերը պիտի կանգնէին. ինչի՞ պիտի չունենային իշխանութիւն իրանց համար զօրավար ընտրելու: Պոքր ինչ յետոյ մարզպանաց ժամանակը-խօ պիտի տեսնենք, որ Ասհան Մամիկոնեանը առանց Պարսից, առանց Յունաց, միայն իւր ազգի կամքով իւր ազգին և աշխարհին կրդտոնայ տէր, սպարապետ, փրկիչ և բարերար: Այս ամեն բաներու ձախողակի երթալու պատճառները՝ Ազարշակի կարգադրութիւններն էին, որ Պարթևաց ու Պարսից և Մարաց և Միջագետաց բռնակալութեան արդերը Հայաստան բերելով, ազգի ձեռները և ոտ-

ները ծանր շղթաներով կապեց: Հայկազանց թագա-
ւորութիւնը՝ մինչևի վերջ գնաց նահապետական կար-
գերով: նահապետները ազգի խնամատար էին, և ո՛չ
հարստահարող: Ազգը առաջին անգամ հարստահա-
րութիւն կրեց Մակեդոնացոց բռնակալութենէն, և
այնքան ատեց Յունաց ազգին, որ յօժարութեամբ ըն-
կաւ Արշակունեաց գերիւր: Այս գրկի մէջ հեղձա-
մղձուկ եղաւ ազգի անկախութիւնը և ազատութիւնը,
ազգը այն աստիճան հասաւ, որ փոքր միւս ևս՝ սխտի
կորցնէր իւր ազգութիւնը: Առաջարկայ թագաւո-
րութիւնը, ըստ երևութին, էր միահեծան, թագաւորն
էր ինքնակալ, իւր աշխարհի վերայ անասման և
անկուար իշխող: Քայց այն տան և հինգ նախարա-
րութիւնը, որն որ Առաջարկ կազմեց տան և հինգ
նախնի նահապետութիւններէն՝ ցոյց են տալիս զի-
նուորական կառավարութեան նշան, որ ամեն մէկ
նախարար իւր երկրի մէջ որպէս թէ մէկ ինքնիշխան
բռնակալ էր: Առաջին Արտաշէս և Տիգրան 2-րորդ
պատերազմները ցոյց են տալիս, որ նոքա ուստեք
կախումն չունէին. երբ սալա այն նախարարները ա-
ռին այնքան համարձակութիւն, որ միահեծան ինք-
նակալութիւնը փոխեցին կազարաւոր իշխանութիւն:
Կամ Պարթևականի ձև էր այս ինքնակալութիւնը (Խոշ-
ոյկ-իւ-կիւն), կամ Պարսից ասիական-կիւնն օրինակե-
ցին. որովհետև յայտնի երևում է, որ նախարար-
ները ունէին այնպիսի մէկ անկախութիւն, որ երբ
կամենում էին՝ թագաւորական իշխանութիւնը կաղ-
դուրում էին, երբ չէին կամենում՝ հարստահարում
էին: Ամեն մէկ նախարար բիւրաւոր զօրք էր կարո-
ղանում ունենալ, և շատ անգամ թագաւորին դէմ
դնել: Քանի որ Արշակունեաց թագաւորները քաջ
էին՝ սլատկառելի էին. Հայոց նախարարներու մէջ չէր

երևում անհնազանդութիւն. թէ լինում էր ուրիշ վը-
տարանջութիւն՝ օտարացեղ նախարարներէն էր լինում,
և ոչ Հայկազունքէն. բայց երբ որ թագաւորները սկսան
անարժանութիւններ գործել, նախարարներն-էլ սկսան
նոցա դէմ՝ ազգին և իրանց անձին պաշտպանութիւն
անել. որով թագաւորները թշնամացան նախարարներ-
ուն, և սկսան նրանց կոտորել:

Հարկաւոր չէր Հայերուն, Տրդատէն յետ, նորա որ-
դուն խորովին՝ թագաւոր դնել. նա թագաւորու-
թեան ընդունակ մարդ չէր: Արշակունեաց բարբը, բը-
նաւորութիւնը Հայոց ազգին քաջայայտ էր. պիտի կա-
ռավարութեան եղանակը փոխէին. բայց օտարացեղ
նախարարները Արթանէս Հայրապետի ձեռքով կարո-
ղացան կրկին միջակտուր եղած թելը կապել, և կար-
ծելով թէ՛ դէպի լաւը կ'երթայ, դէպի աւելի վատը
գլորվել:

Ո՛ւր դնաց կռապաշտ Հայերու քաջութիւնը. ինչի՞
քրիստոնէութիւնը քանի աւելի տարածուեցաւ՝ այնքան
աւելի տկարացան Հայերը: Պատճառն այն էր, որ Տըր-
դատայ սերունդքը միայն թագաւորական անունն էին
ժառանգում. իսկ թագաւորաւայել առաքինութենէն,
քաջութենէն, բարեպաշտութենէն զուրկ էին մնում:
Պատճառն ի՞նչ էր: Այն էր, որ Հայերու կրօնական
խորհուրդները, ժամակարգութիւնը, ճիսակատարու-
թիւնը հայերէն չէր լինում: Արդեօք այսպէս չէր
լինիր Հայերու վերջն, եթէ Առամշապուհի արածը
Տրդատ անէր. երբ որ Առաւորիչն ազգին հաւատոյ
լուսով լուսաւորելու ժամանակը՝ գիտութիւններու և
դպրութիւններու լուսով-էլ լուսաւորելու ջանք դնէր:
Ի հարկէ, Յունաց լեզուաւ Աւետարանը կամ աստուա-
ծապաշտութեան խորհուրդները շատ ստուղ չունե-
ցան, և Հայաստանի քրիստոնէութեան առաջին դարի

սկիզբը, երբ որ Տրդատ փայլում էր բարեպաշտութեամբ՝ լաւ քրիստոնեայ չէին Հայերը, և գլխաւոր պատճառը այն էր, որ դեռ լաւ չէին հասկանում քրիստոնէութիւնը: Խեղճ Հայը կարելի է թէ գնում էր եկեղեցի, յունարէն ժամասացութենէն համ չէր տեսնում, հոգին քրիստոնէութեան մէջ կերակուր չէր գտնում, չէր սխարարւում, քաղցած էր մնում, միտքըն էր բերում կռապաշտութեան ժամանակների վայելչութիւնը, որ քրմաց ամեն տաճը հասկանում էր, և իւր խելքով կռապաշտութիւնը քանզ քրիստոնէութիւնը դերադաս էր համարում: Չրկայ այնպիսի ազգ, որ իսպառ անաստուած լինի. թէ ճշմարիտ Աստուածը չըճանաչէ՝ քարին կամ փայտին Աստուծոյ անուն կուտայ, և Աստուծոյ տեղ կըպաշտէ, մարդուս սիրտը, հոգին սրահանջում են մէկ կրօն, մէկ հաւատք, մէկ ինչևիցէ աստուածապաշտութիւն ունենալ, և իւր ընտրած բարեպաշտութեան մէջ համողուիլ. իսկ առանց նորահոգւոյ մէջ մէկ կենսամաշ դատարկութիւն է տեսնում: Հայոց ազգը՝ քան զամենայն ազգս երկար ժամանակաւ սրահեց իւր վաղեմի աստուածապաշտութիւնը, Նոյն հասարակ. Հայկն-էլ այս հաւատքի համար Բէլին թշնամացաւ, և մինչև Արամի ժամանակը այս էր Հայաստանի կրօնը: Կարելի է թէ՛ Հրէից նման չունէին ճշմարիտ աստուածապաշտութեան վայելուչ խունկեր, մոմեր, որովհետև դեռ ևս ոչ Մովսէս էր դուրս եկել, և ոչ Հրէայք կային. Աբրահամն-էլ նոր էր հրաւիրւել դէպի աստուածապաշտութիւն, և Մեւլքիսեղեկն-էլ դեռ աշխարքի երեսին էր, և նորա քահանայութիւնը անյայտ էր մարդկան. կարելի է, ասացինք թէ Հայերը չունէին այն միջոցներումը՝ արտաքին կրօնական ծէսեր, չունէին տաճարներ, չունէին զոհեր. բայց անհնարին է, թէ երկնքի կապուտ կա-

մարի տակը կամ սաղարթաւոր ծառերու ստուերումը չըլինէին երկրպագութիւն անում, կամ աղօթք և ճնրադրութիւն կատարում, կամ ձեռքերը և աչքերը ջերմեռանդութեամբ դէպի երկինք բարձրացնում իրանց հայրենի Աստուծո՛ւ առջև: Բայց որովհետև այն ժամանակներումը կարող էին համանդամայն չունենալ քահանայութիւն, և ո՛չ կրօնական քարոզչութիւն՝ պիտի անշուշտ ստիպուէին օր ըստ օրէ այն անարատ հաւատքը տեսել աւելորդապաշտութիւններով խանդարուած, և քիչ քիչ նրամէն օտարանալով՝ խաղառ-էլ մոռանալ, և նորա տեղ անստիպապաշտութիւն սովորիլ: Այս անստիպապաշտութիւնները մի թէ չէին կարող նոցա համար բանալ դուռն տարրապաշտութեան, և տարրապաշտութիւնը՝ կռապաշտութեան: Մարաց և Ասորեաւանեաց մօտ լինելով ինչ զարմանք է, թէ Միջագետքէն, Նինուէէն ու Բաբելոնէն ստացած լինին լուծաւորաց պաշտօնատարութիւնը, որ քանի խարութեանց հետ միասին ընդհանրապէս Սափեմիանուիէան էր. և այս մանաւանդ այն ժամանակները, երբ որ Պարսիկք երևեցան աշխարհի երեսին, և Զորասպարէ կրօնը քարոզուեցաւ Ասիայի շատ կողմերը: Այս հանձարեղ օրէնսդիրը իւր քարոզած կրօնը շատ խելօք օրինակներով, իմաստավիր խօսքերով, և խելքի մօտիկ խրատներով և բարոյական վարդապետութիւններով զարդարել էր, և ինչ ձէս որ կարդատրել էր՝ նորա մեկնութիւնն-էլ գովաւանութեամբ կշտին էր: Զէնդ-Աւեստէ կարդացողը զմայլում էր և սիրահարվում նորա քաղցր խօսքերուն, և այնպէս հաստատվում էր նորա մէջ, և այնքան խոր էր արմատացնում իւր խելքումը և իւր մտքումը զբարեշնչական համոզանքը, որ սուրբ Աւետարանի մշակները մեծ դժուարութեամբ էին կա-

բողանում մողութեան արմատը նոցա սրտէն խլել ու
քանցել : Ո՞վ կուտար , ո՞ւր էին Տրդատի օրերումը
այն ուսեալ վարդապետները , որոնք որ սուրբ Սա-
հակի և սուրբ Մեսրոպի աշակերտներէն յառաջա-
ցան , որ եթէ Լուսաւորչի ժամանակը լինէին՝ իհարկէ
կարող էին , քանի որ Հայերու սրտի մէջ աւելի զօ-
րացած չէին Արշակունեաց դէմ բարկութիւնը , (որ
մեր պատմաբանները , չըզիտեմ ի՞նչ պատճառաւ , ան-
միաբանութիւն , ազդատեցութիւն , անճնասիրութիւն ,
փառասիրութիւն , արծաթասիրութիւն են անուա-
նել) , Աւետարանի եղբայրասիրութեամբ նոցա բնիկ
ազդասիրութիւնը կազդուրել , և անտուածսիրու-
թեան հաստարմատ ծառերը տնկելով՝ նորա բարի
պտուղներով լցնել Հայաստանը : Քաջ էր Տրդատը ,
նորա ժամանակակից նախարարներն-էլ քաջ էին . այլ
նրանց մեկզմէկէ օտարացնում էր կրօնը : Տրդատ լու-
սաւորվել էր հաւատով . Քրիստոնէութիւնը թափան-
ցել էր նորա հոգւոյ և սրտի մէջ . բայց իշխանք
սրտով կուտաշտ էին՝ թէպէտ թագաւորի երկիւղէն
արտաբուստ քրիստոնէութիւն էին անում , այլ քրիս-
տոնէութիւնը չէին սիրում , և ի՞նչպէս կարող էին
սիրել , որ չէին հասկանում : Հասկացնողներ կարելի
է՞ թէ կային , բայց հասկացնելու միջոցները չունէին :
Քարողիչներ՝ կարելի է՞ թէ կային կամ դանվում էին ,
բայց քարոզներու լեղուն և նիւթը ի՞նչ էր . ցաւի
յարմար պիտի դեղ գնէին , և խոցի յարմար սպե-
ղանի . Լուսաւորչի Յաննիստիանոսն-էլ գրել էր Ագո-
թանգէղոս Յոյն պատմիչը Յունաց լեղուաւ : Ինքը
Գրիգոր Լուսաւորիչը՝ անունդ էր առել Յունաց մէջ ,
և դիտէր Յունաց լեղուն , որն որ իւր Սովիտ ծծմօ-
րէն սովորեցաւ , Յունաց գրով էր վարժուել , Յու-
նաստան էր զարգացել , և Տրդատի հետ Հռոմ և

Հումայեցոյ բանակի մէջ միացաւ: Ե՛րբ սովորեցաւ նա հայերէն, և Հայոց ազգին ո՛ր լեզուաւ պիտի քարոզէր, որ ազգը հասկանար և բարի պատու բերէր: Առաջին քահանայքը շատը քուրմերէն էին. չըզիտե՞նք միթէ, որ նոքա ժողովրդեան հաճոյքը աւելի կրկատարէին, քան թէ քահանայութեան պաշտօնը: Եւ զիտէին արդեօք այն նորընծայ քահանայք՝ քահանայական կարգի պատիւը: Խւրեանց ապրուստը հայթայթելու համար, իհարկէ որ նոքա, ժողովրդեան, մանաւանդ իշխաններու մոլութիւնները և մոլորութիւնները կը ծածկէին, և այն ցաւը կը մնար նրանց մէջ որդւոց յորդիս: Եկեղեցի եկած ժամանակը պիտի լսէին Յունաց ժամերդութիւն, Յունաց պատարագ, և յունարէն աստուածաբանութիւն. ոչինչ չըհասկացած պիտի դառնային տուն, տանը ծածուկ պիտի խւրեանց կուսաբանութիւնը անէին, և խւրեանց քահանային՝ քրմութիւն անել տային: Անհնար է թէ այսպէս չըլինէր, դո՛նէ ըստ մեծի մասին: Քահանայքը քրմութիւնը զիտէին. ամենեքեան, կարելի է, թէ սարէական ուսումները սովորել էին, ու Աւետարանի ընդհանուր կարգուեցան, բայց Աւետարանը չէին կարողանում հասկանալ կամ հասկացնել, որովհետև իրանց լեզուով դեռ չէր դրուած. ի՞նչ անէր խեղճ ժողովուրդը. որ ճարտուամ էր կրօնական ձէսերու: Իհարկէ որ պիտի Քրիստոնէութիւնը ասէր՝ ինչպէս մէկ ծանր ու անմիտիթար բռն Ահա՛ ազգի և նոր կրօնի մէջ ընկաւ մէկ օտարութիւն: Նոր կրօնի պաշտպան էին թաղաւորութիւնը և հայրապետութիւնը: Կրօնի դէմ ունեցած սառնութիւնը դարձաւ թաղաւորութեան ու հայրապետութեան դէմ, և քիչ քիչ զօրանալով փոխուեցաւ ատելութիւն և յայտնի թշնամութիւն: Մէկ կողմէն Պարսիկք՝ մոգութեան զօրավիգ, և միւս կող-

մէն Յոյնք՝ կրօնական մոլեռանդութեամբ, անդադար
փշելով իրանց հոգևոր և աշխարհական դործակալներ
րու միջոցներով՝ բորբոքում էին այս հրդեհը: Յետոյ
երբ որ աղգն ու թագաւորութիւնը փոխեցին իրանց
դերերը՝ թագաւորները հրդատէն յետ սկսան ցոյց տալ
դէպի քրիստոնէութիւնը անարժան դաղջութիւն. իսկ
աղգի մէջ տարրացաւ բարի քրիստոնէութիւն, ջեր-
մեռանդ աստուածալաշտութիւն: Հայաստանի մէջ ըն-
կաւ նորօրինակ երկալառակութիւն, որոյ հուրը ճա-
րակում էր անընդհատ, այլ սլատճառը չէր հասկաց-
վում, մինչև որ Հայաստանը հասաւ իւր վերջին օրե-
րուն. և Առամշասուհ, առանց այս հանգամանքները
միտք բերելու, առանց դիտաւորութեան, այս կենդա-
նական դեղը դտաւ, բայց ուշ էր, ժամանակը անցել
էր. Հայաստանի խոցը դառել էր անդարմանելի. Մես-
րոպեան գիրը հնարուեցաւ, բայց աղգի աղգութիւնը
արդէն Արշակունեաց ապաշնորհութիւնով կորել էր,
գիրը, դարութիւնը, գիտութիւնը, մնացին վանքերու
քնջումը: Այն վանքերէն երբեմն երբեմն լսվում էր
ձայն, որ շարժում էր աղգասիրութիւնը, դարթեցնում
էր աղգի մէջ նախնեաց հոգին, տաքի վրայ էր կանգնե-
ցնում առաքինի անձանց. բայց այն ձայնը շուտ-էլ էր
լռում, առաքինիք շուտ էին վերանում, և չարերը
շատ անգամ յաղթանակում: Արմատն էր փտած:

Հայոց աղգի՝ այս հանգամանքներու մէջ լինելու
սլատճառաւ՝ խեղճ սլատմագիրն-էլ, փոխանակ վատա-
բաղդ աղգի անցքերու սլատմիչ լինելու, դառնում է
կամ աղգի զրպարտող՝ այլոց սակասութիւնները
նրան ընծայելով, կամ աղգի թշուառութիւններու
եղերերգու: Կայ սլատմութեան մէջ այնպիսի մէկ
թղթոյ երես, որ արատաւորուած չըլինի աղգի բամ-
բասանօք, որ Հայոց աղգը ստացած չըլինի նախա-

տիներ կամ անմիաբան ասուելով, կամ աղղաստեաց,
կամ դաւաճան, կամ օտարներու առջև մարդաստի
ցածութիւն ցոյց տուող: Այս, կային Հայաստանումը
այնպիսի մարդիկ-էլ, բայց նոքա ոչ մէկն-էլ Հայ էին:
Մի՞թէ Արշակունիք, Մամիկոնեանք, Քաղրատունիք,
Արծրունիք, Ամասունիք և սոցա նմանները Հայ էին:
Ոչ: Նոքա օտարացեղ էին, և նոցա պակասութիւն-
ները պիտի չըզրուին Հայկազանց: Այս օտարացեղ
գերդաստաններու անկարգութեանց պատճառով ամեն
տեղ լաւը, առաքինին, աղղասէրը՝ խմել են թշուա-
ռութեան բաժակի մրուրը՝ մինչև վերջը. վատը, աղղ-
աստեայր, աղգի մատնիչը վայելել է փափկութեան
ուղխը: Պարաշար վարձատրութիւն առաքինութեան,
չար ևս հրասույր աղղաւեր խարդախութեանց: Ա՞վ
այնուհետև կրկամենար թողուլ լայն և ընդարձակ ճա-
նասարհը, և երթալ նեղ, անձուկ և փշալի շաւի-
ղով: Բայց թէ յետ այսորիկ-էլ տեսնենք ասպարի-
տում այն օտարացեղ նախարարութեանց մէջէն Վար-
դաններ և Վահաններ, որ աղգի համար իւրեանց
գլուխը զոհ բերած լինին՝ պիտի չըզարմանանք, աղգը
նոցա իւր ծոցի մէջ հիւրընկալելով, արժանի էր, որ
պահանջէր նոցամէն այդպիսի բոլորապտուղ պատա-
րագներ. և նախախնամութիւնը նոցա միջին-էլ դուրս
էր բերում այնպիսի մարդիկ, որ հիւրասէր աշխար-
քին փոքր ինչ իւրեանց պարտքը հատուցանէին, բայց
առանց նոցա-էլ աղգը խալառ չէր ջնջ վեր աշխարքի
երեսէն, որովհետև արդէն սկսել էին երևիլ այնպիսի
մարդիկ, որոնք որ դաստիարակուել էին ոչ թէ կռա-
պաշտ քուրմերու ջուրի մէջ, այլ աստուածասէր,
աստուածապաշտ և աստուածուսոյց վարդապետներու
դպրոցումը. ճախարակուել էին սուտարանական խը-
րատներով, և ստացել էին ժառանգութիւն Հայկի և

Արամայ անունը և արիւնը, որ բիւրաւոր վայրենա-
միտ խաժամուժներու բերաններու մէջ անխնայ դիշատ-
վում էին, և մինչև այսօր-էլ պատուա պատու են
լինում: Երանի թէ այն օտարացեղ նախարարները,
որ մտել էին Հայաստանի մէջ, ամենքն-էլ լինէին
Պարսկանների և Վահանների հողւոյ տէր մարդիկ.
Հայերը չէին անիրաւ դատուիր նոցա դէմ. բայց ինչ-
պէս պիտի կարծուի, նորա Հայ ենք ասելով զուր
էին պարծենում. Հայկի որդիք էին կամենում հա-
մարուիլ, բայց չէին իրանց հօրը նմանում. Արամայ
ժառանգորդ ժառանգակից էին դասել, նորա փա-
ռաւոր ճանապարհով պիտի ընթանային: Արամ վայ-
րենի աղգերուն հրամայում էր հայերէն խօսիլ, ոտքս
հայերէն խօսիլը իրանց համար ամօթ էին համար-
ում, հայերէն սովորիլը՝ ծանրութիւն, հայերէն
կարգալը՝ մէկ պակասութիւն, և չէին հասկանում,
որ Արշակունեաց օրերումը՝ Հայոց նախնիքը, հայե-
րէն չկարգալով տկարացուցին իրանց աղգասիրու-
թիւնը, թուլացան հայրենասիրութեան մէջ, կորու-
սին Հայաստանը, կորուսին աղգութիւնը. Հայն դա-
ռաւ Հրէից հաւասար, և դուցէ թէ՛ քան զնոսա-էլ
շատ ստոր: Ո՞ր դարն էր տակաւին, որ Հայերը հա-
մարուել էին քան զԱսորին-էլ վատ: Եւ ի՞նչ էր
պատճառը: Ասորին պարծենալով մատը սրտին էր
դնում, և ասում էր բարձրաբարբառ, Ասորի՛ եմ,
Ասորի՛: Բայց օտարացեղ նախարարք, որ Հայե-
րու մէջ կամենում էին առաջին տեղը ունենալ, և
առաջին ձայնը դրաւել, օտարներու մէջ վախենում
էին, որ չլինի թէ՛ իրանց Հայ կարծեն: Այս պատ-
ճառաւ՝ Պարսից սուտը աւելի էին ընդունում, քանզ
Հայոց ճշմարտութիւնը. Պարսից և Յունաց դատու-
թիւնը ախորժարար էին խմում, իսկ Հայոց աղգային

քաղցրութիւնը՝ զղուերլով հեռացնում: Ի՞նչ էր այս
ամեն հանգամանքների պատուը: Ահա այս, ծեծում է
Պարսիկը՝ զիմում էին Յունաց մօտ, զլիներուն տա-
լիս են Յոյնքը՝ փախչում էին Պարսկաց կուշտը, դըժ-
նիկէն պատսպարութիւն էին խնդրում, Հայաստանի
սեփական մայրիքը և եղենափայտները արհամարհե-
լով, և թէ երբէք աղղային բնիկ ու ժին վտտահանում
էին՝ էլի իրանց մէջէն էին դուրս դալիս մատնիչները
և դաւաճանները, կամ մէկզմէկու ոտքը սահեցնելու
համար, կամ ամենեքեան միաբանւում էին աղղին
մէկ մեծ վնաս տալու համար: Եւ այս ամեն նոցա
արած թերութիւնները և թիւրութիւնները լովան-
դակ աղղին են նախատինք դառել, և պատմաբանք
չեն կարողացել որոշել թէ՛ ո՞րք են այս բաների պատ-
ճանները, — Հայկադո՞ւնք, թէ՛ օտարացեղք:

Օրհնեալ մարդիկ, եկել էք, մտել էք աղղի հո-
վանաւորութեան տակ, Հայաստանի բարութիւնը վայե-
լում էք, մի՞ թէ քիչ են դրսի թշնամիները, որ ներսն
էլ մէկզմէկու ուտում էք: Փոխանակ այն ծայրի, որոյ
ոտտերու տակը դտել էք սպահովութիւն, արմատը
փորժրելով խախտելու, փոխանակ մէկզմէկու մատնե-
լու, մէկզմէկու կործանելու և կորցնելու, լաւը այն չէ՞ որ
ամենեքեանդ-էլ մէկ հոգի, մէկ միտք, մէկ խորհուրդ
ունենաք, աղղի մէջ դտնուած պակասութիւնները
ուղղելու, աղղին մէկ այնպիսի փրկական ճանապարհ
ցոյց տալու սրտոճատ դառնաք, որ աղղը իւր Արշա-
կունեաց օրերում սոսոցած թմրադեղէն վերահաս
հոգեկան թմրութեանէն սթափի, զգայտանայ, զարթի,
աչքը բանայ, տեսնէ, որ էլ իւր բաղմութեամբ չէ
կարող նետով արևը ծածկել, մնացել է քիչ և ամեն
կողմը ցրուած, ամեն տեղ անարդուած, ամեն տեղ
ապարաղղ և թշուար: Չճարիտ պէտք է ասել, երբ

որ այս ախտերը բռնացան օտարացեղ իշխաններու մէջ՝ նոցա չար օրինակը ճարակուեցաւ Հայկազանց մէջ-էլ . Արշակունեաց հարստութեան զօճը չըկարաց դարման տանել այս վնասներուն . Հայաստանը չուղ-ղուեցաւ . օտարացեղ տարրը պահեց իւր մէջ Պարթևական թոյնը , և Հայաստանի հիւանդութիւնը անբուժելի դառաւ : Ես մէնակ լաւ լինիմ , թէկուղ աղգը , աշխարհը մէկ օրուան մէջ ջնջուի . այս էր Պարթևաց աղգէն Հայաստանի մէջ մնացած վատթար կիրքը , որ օտարացեղները իրանց սեփականել էին , և օր ըստ օրէ աղգի մէջ-էլ տարածոււմ էին , ինչպէս մէկ հայրենի ժառանգութիւն : Այլ այսպէս չէր Հայկի միտքը , երբ որ Հայաստանի հիւմքն էր դնում . այսպէս չէր Արամի խորհուրդը , երբ որ Հայաստանի սահմաններն էր լայնացնում . այսպէս չէր Պարոյրի դիտաւորութիւնը , երբ որ Հայաստանին թագով էր պսակում . այսպէս չէր Տիգրանի մտածութիւնը , երբ որ իւր տէրու-թիւնը Միջերկրեաց ծովի ափերուն հասցնելով , և Միջագետաց երկրումը ոտքը ամրացնելով , Հայաստանի հարաւային և արևմտեան սահմանագլուխները ապահովելով՝ իւր տէրութիւնը ամենին պատկառելի էր անում : Մէկ միտք անենք թէ՛ քանի՞ աղգ խառնուեցան Հայոց հետ , և անունով Հայ դառան , և իրանց կրակով Հայերուն այրեցին , որ եթէ նոքա Հայութիւնը դիմակի նման երեսների վերայ չըդնէին , և Հայերու մէջ չըմտնէին՝ Հայերը իրանց աղգութիւնը անարատ պահած կըլինէին , օտար աղգերի բարքերով , ծէսերով իրանց նախնեաց հայրենաւանդ սովորութեան հիւմքը քանդած չէին լինիր . և Հայկական տարրը լայնածաւալ աշխարհի մէջ չէր նուազիր : Ի՞նչ հարկաւոր էր Հայաստանը Կովկասի սարերէն մինչևի Կորդուայ սարերը ընդարձակել , և Կասբից ծովէն մինչևի Մի-

ջերկրականի ճովափները տիրապետել . երբ որ օտարացեղ նախարարները և իշխանները պիտի մէջը բռնանային, մէկ թագաւորութեան մէջ շատ բռնակալութիւններ կազմէին, Հայերուն իրանց հայրենեաց մէջը ներդէին, և իրանց ներդարութեամբ Հայերու մէջէն եղբայրսիրութիւնը բնաջինջ անէին: Հայերը թէ չունենային եղբայրսիրութիւն, մարդասիրութիւն, ազգասիրութիւն, հայրենասիրութիւն՝ ոչ այնքան ժամանակ կարող էր տեսել Հայկազանց իշխանութիւնը, և ոչ այնքան օտար ցեղեր կարող էին նորա հովանւոյ տակը գտնել հիւրասիրութիւն: Աւետարանի լոյսը պիտի աւելի փայլեցնէր նոցա սրտերու մէջ այն առաքինութիւնները, որն որ ոչ ոք չէ կարող ասել թէ՛ չունէին կռասպաշտութեան ժամանակը: Բայց ի՞նչ տեսանք: Առաջին զոհ դնաց Տրդատի կեանքը . յետոյ Լուսաւորչի որդոց և թոռանց արիւնը . յետոյ ազգասէր Հայերու արևը . յետոյ Հայոց փառքը, սարժանքը, ազգութիւնը, որն որ չըկարաց նորոգել և միւս անգամ ոտքի վրայ կանգնեցնել ոչ Արշակունեաց թագաւորութեան կործանելը, և ոչ Պարթևազանց Հայրապետութեան վերջացնելը: Ոչ սերմն բարի էր սերմանուել, և ուստի բուսան այս որումները: Ա. ք Ենասի արար: Ա. յս թըշնամին մեր մէջն էր: Ա. յն օտարացեղ նախարարները և իշխանները, որ Արշակունեաց ժամանակը ստքերը առաջ դրին, այս ամենը կարողացան անել . Հայերուն շինեցին իրանց ծածուկ թշնամութեան գործիք. ետութիւնը յաղթեց ամեն բարի դիտաւորութեանց . այս էր այն օտարացեղ տարրի բնական կուռքը . սորա առջև զոհեցին բոլոր ազգի բաղդը և յաջողութիւնը: Սոքա էին Հայաստանի շար սատղը, որ Արշակունեաց հետ միասին ծագեցաւ, բայց նոցա հետ միասին անհետ չեղաւ, տակնուվրայ բերեց մեր աշխարհի խաղաղու-

Թիւնը և մեր ամենայն բարի ճառնարկութիւնները :
Երբ որ թագաւորները մտացան իրանց թագաւորա-
վայել խնամքը, նախարարք-էլ բարձի թողի արին իրանց
պատշաճ հնազանդութիւնը և հաւատարմութիւնը . և
այն օտարացեղ տները , որ մէկ անգամ ցնորեցան Տըր-
դատի հետ , այնուհետև մնացին կարօտ բժշկութեան
մինչ իսպառ : Արշակունեաց թագաւորութեան վնասա-
կար լինելը իմացան , բայց իրանց վնասապարտութիւնը
չըկամեցան հասկանալ . Լուսաւորչի ազգի քահանայա-
պետութիւնը անընդունելի քարոզեցին , բայց իրանց
մոլորութիւնները չուզեցին ուղղել : Ինչի՞ Պարսից ձե-
ռումն-էլ չեղան երջանիկ , ինչի՞ Սուրմակներու և Բըր-
քիշոներու գաւազանի տակը չըհովուեցան : Այն աստի-
ճանի հասցրին խեղճ ազգին , որ ինքն-էլ չէր իմա-
նում թէ՛ ի՞նչ է ուղում : Օտարացեղները որ առաջ
թագաւորներու կողմն էին՝ ազգութեան դէմ , յետոյ
սկսան թագաւորութեան դէմ հակառակիլ . երկու
հակառակորդներու մէջ ազգը ոտնակոխ էր լինում :
Պիտի ասէք թէ՛ ազգը ինչի՞ էր թոյլ տալիս : Բայց
ե՞րբ է եղել , որ գլուխը մէկ կողմ երթայ , սոջը այլ
կողմ : Ազգը կորցրել էր իւր ազգութիւնը , իւր ան-
կախութիւնը , օտարացեղները դառել էին նորա գլուխ .
յուսահատութիւնը և վհատութիւնը կոխել էր ազ-
գին : Աերջասպէս ազգասիրութիւնը զարթեցաւ , միա-
բանեցուց նախարարներուն և ազգին , և սոքա ազգի
ազատութեան համար զոհ տուին Արշակունեաց ա-
թոռը , թէսլէտ և սակաւ օգուտ քաղեցին :

1. Die erste Aufgabe ist die Bestimmung der
 2. Die zweite Aufgabe ist die Bestimmung der
 3. Die dritte Aufgabe ist die Bestimmung der
 4. Die vierte Aufgabe ist die Bestimmung der
 5. Die fünfte Aufgabe ist die Bestimmung der
 6. Die sechste Aufgabe ist die Bestimmung der
 7. Die siebte Aufgabe ist die Bestimmung der
 8. Die achte Aufgabe ist die Bestimmung der
 9. Die neunte Aufgabe ist die Bestimmung der
 10. Die zehnte Aufgabe ist die Bestimmung der

ԺԱՄԱՆԱԿ ՄԱՐԶՊԱՆՆԵՐՈՒ ԵՒ ՈՍՏԻԿԱՆՆԵՐՈՒ

(433—859. ա. չ. 426):

ՎԵՐԴԵՆ ԵՒ ՎԵՐԴԵՆԵՍԵՔ:

Մ Ռ. Ս Մ 2-դ Պարսից թագաւորը՝ երբ որ վերջին Արտաշէսին Հայոց թագաւորութենէն հանեց, նորա տեղ ուղարկեց Հայաստանը կառավարելու համար՝ մարզպան անուամբ մէկ Պարսիկ իշխան Վէհ-Մեհր-Շապուհ, որ խաղաղասէր մարդ լինելով Հայաստանը պահում էր անդորր և հանգիստ. բայց այս խաղաղութիւնը երկու պատճառով վրդովուեցաւ. առաջին պատճառն էր հոգևոր իշխանութեան կողմանէ, երկրորդը՝ նախարարներու և իշխաններու: Սուրբ Սահակի տեղ նստող կաթողիկոսները սկսան զանազան անկարգութիւններ անել: Թէ անկարգութիւն-էլ չանէին՝ ո՞վ էր կարող սուրբ Սահակի պակասութիւնը լցուցանել: Նախարարները խնդրեցին Վառմէն, և սուրբ Սահակին Պարսկաստանէն բերին Հայաստան. բայց սուրբ Սահակը չըկամեցաւ միւսանդամ կաթողիկոսութիւն անել, քաշուեցաւ մէկ կողմը, և քիչ ժամանակէն յետ վախճանեցաւ: Սուրբ Մեսրոպին-էլ հա-

սաւ կեանքի վերջը: Հայոց ազգի կաթողիկոս դրուեցաւ սոցա աշակերտներէն մէկը՝ սուրբ Յովնէֆ Հողոյե-Տօյն, որ անցեալ անարժան կաթողիկոսներու դրած խոցին փոքր ինչ սպեղանի հնարեց իւր սուրբ վարքով և լուսաւոր գիտութիւններով, և սուրբ Քրոց ճշմարիտ վարդապետութիւնով: Սորա հայրապետութեամբ վերջացաւ այն հոգևոր կողմանէ ծագած վըրդովումը: Բայց նախարարաց և իշխանաց գլխին ժողովուած խռովութեան ամպրոտները՝ ոչինչ կողմէն փարատման դեղը չըգտան, այլ մէկ անշիջանելի հրդեհի նման սկսան ճարակիլ Հայաստանի մէջ, և տոչորել ազգն ու աշխարքը, մինչև որ Հայաստանը տակն ու վրայ եկաւ. Առաքելոց և նահատակներու արիւնով հիմնած Քրիստոսի սուրբ եկեղեցին քարուքանդ եղաւ, և խեղճ Հայերու արիւնը ազբիւրներու նման խոխոջալով թափուեցաւ:

Արշակունեաց հարստութեան ժամանակը տեսանք մեր նախարարներուն, որ ամեն մէկը՝ մէկ մէկ հատ թագաւորներու նման իշխանութիւն էին ստացել իրանց գաւառներումը և նահանգներումը: Պատմութիւնը յայտնի ցոյց է տալիս, որ երբէք ո՞ր դարի մէջ-էլ որ մտիկ անենք, Հայոց նախարարները՝ երբ որ մէկզմէկու հետ եղել են միաբան, թշնամիներէն յաղթուած չեն նրանց քաջութիւններով. Հայոց թագաւորներն-էլ յաղթուել են միայն այն ժամանակ, երբ որ նախարարները օգնած չեն, կամ թագաւորի հակառակ են եղել. իսկ նախարարներու յաղթուիլը՝ միայն այն ժամանակ է պատահել, երբ որ կամ թշնամին խաբէութիւն է բանեցրել, կամ իրանց մէջէն մէկ քանիսը դաւաճանութիւն են արել. իսկ նախարարներու յաղթող՝ ո՞չ ոք գտնուած չէ բնաւ ին: Նախարարներէն ամեն մէկն-էլ շուտ ճանաչեցին իրանց սեփական ուժը, բայց խորամանկ Պարսից և

յաչաղկոտ Յունաց կենցաղագիտութիւնը թոյլ չտուեց,
որ նորա իրանց քաջութենէն օգուտ քաղէին: Այս
երկու հզօր թագաւորութիւնները, որ ամեն տեղ մէկ-
զմէկու հակառակօրդ էին, մի միայն այս տեղ էին
միաբան, որ Հայոց նախարարներու մէջ միշտ հաստա-
տուն պահեն անմիաբանութեան ոգին. որովհետեւ լա-
գիտէին, որ եթէ նախարարները միաբան լինին, շու-
տով կարող են Արշակունեաց տեղ՝ բնիկ Հայկազն
թագաւոր ունենալ. և այնուհետեւ՝ ոչ Յոյնք և ոչ
Պարսիկք չեն կարող Հայաստանին վնաս տալ իրանց
աղղեցութիւնով: Փառք, պատիւ, ճոխութիւն, ամե-
նակերպ պարգևներ տարափի նման էին իջանում
Քիւզանդիոնի և Տիարոնի դուներէն օտարացեղ նախա-
րարներու վրայ, որոնք որ շահասիրութիւնը գերա-
դաս էին համարում քան զամեն ինչ: Նորա ինչո՞ւ
պիտի իրանց անձնասիրութիւնը զոհէին ազգասիրու-
թեան և հայրենասիրութեան. ո՞չ իրանք էին Հայ, և
ո՞չ Հայաստան էր նոցա հայրենիք. ամեն մարդ կա-
մենում էր Հայերու դիակներէն սանդուխտ շինել, և
Հայաստանի աւերակներու վրայ իւր փառասիրութեան
բազինի հիմքը հաստատել: Հայաստանը սեփեկան
թագաւոր չունէր. ամենեքեան մտքերումը դրել էին՝
նորա անտէր մնացած թագը ստանալ. բայց զանազան
ձանփաներով: Մի միայն մէկն էր, որ ճանաչելով իւր
արժանաւորութիւնը, համարձակ էր գնում դէպի իւր
նպատակը. իսկ միւսները շքեմովիկ շաւիղներու մէջ
էին դանդաչում: Այլ որովհետեւ այն մէկը, որ վըս-
տահ էր իւր անձին և ազգի հաճութեան վրայ, խըտ-
րութիւն չէր անում միջոցներու մէջ, իւր դէմ շար-
ժեց Քրիստոնէական եկեղեցւոյ գթմանութիւնը. կրօնի
սպասաւորքը նորա մէջ տեսան հաւատոյ դէմ մէկ վը-
նասակար խըրտիւն և զգուշացան: Գեռ ևս Արշակու-

նեաց ժամանակը՝ Տրդատէն յեա՝ Հայոց միաՏեծան
Թագաւորութիւնը, որն որ քանի անգամ Հայերը փորձ
փորձեցին ժառանգական յաջորդութենէն փոխել ընտ-
րողական, բայց օտարացեղ նախարարներու սատարու-
թեամբ իսպառ ընկաւ օտար տէրութեանց իշխանու-
թեան տակ, — փոխուել էր մէկ խառն կառավարու-
թիւն. Թագաւորի անունը մէկ ստուերի նման մնա-
ցել էր Հայաստանի մէջ, որն որ Առնատանտինուպօլսոյ
և Տիարոնի միապետութիւնները իրանց Տաճութեամբ,
որին որ կամենում էին՝ նրան էին դէմ անում. իսկ
Հայոց նախարարները մէկ մէկ Տատ ապստամբ բռնա-
ւորներ էին, որ ամեն մէկը իրանց տէրութեան մէջ՝
իրանց երկրի բնակիչներու վրայ մէկ անկողար իշխա-
նութիւն սեփականեցին, նոցա կեանքի և մահու, ըն-
չից և կալուածոց տէր դարձան, և այս պատճառաւ՝
նոցամէն անպայման Տնազանդութիւն ստացան. ամեն
մէկ նախարար երևեցաւ մէկ Տատ բռնակալ, որ
Թագաւորին Թէ ուղենային՝ կրօզնէին, Թէ չուղենային՝
ընդդէմ կրկենային:

Մարդպանն-էլ մէկ անկողար իշխանութեան տէր
մարդ էր, որ նախարարներու և բոլոր Հայաստանի
բնակիչների վրայ իշխող էր կենաց և մահու, ընչից
և կալուածոց: Նախարարները երբեմն Տնազանդ էին
լինում մարդպաններուն, որովհետև իրանց ուղեցածն
էր, բայց երբեմն-էլ դուրս էին քաշում, երբ որ մէկ
անՏամութիւն էին տեսնում, և իրանց դրած կուռքը՝
իրանք էին կործանում, և այս ժամանակը մարդպանը
կամ պիտի զոհ լինէր նոցա արգար բարկութեան,
կամ պիտի փախչելով ազատէր իւր կեանքը: Այս
պատճառաւ մարդպանները՝ որ Դուին վերջին Թա-
գաւորանիստ մայրաքաղաքը իւրեանց Տամար աթո-
ռանիստ էին արել, ջանք էին անում Պարսից Թա-

դառնալով թեան կենցաղագիտութիւնը, Հայաստանի մէջ
հաստատուած պահել, նախարարներուն՝ մէկ զմէկու հետ
կուսակցութիւնով սանձահարել, որպէս թէ երկաթը՝ եր-
կաթով բռնել, կամ կրակը Հայերու ձեռքով սանուլ,
և այնպէս միշտ մէջերը խռովութիւն սերմանելով՝
մէկզմէկէ բաժնում էին, և իրանց-էլ ինչպէս կամենում
էին՝ այնպէս էին հարստահարում :

Հայկազնեաց նախարարները շատ լաւ էին ճանա-
չում, բայց հնարը չէին կարողանում գտնել, որով-
հետև օտարացեղ նախարարները և իշխանները չէին
կամենում Հայկազանց ականջ դնել : Հայկազանց դէմ
ունեցած նախանձը, հակառակութիւնը՝ ձգում էր այս
օտարագրիներին կամսոր կուրութեան մէջ, որ
իրանց ասպագայ փնտրը չբռնեն և չըզուշանան : Սոցա
այսօրինակ կենցաղավարութեան մէջ՝ կաթողիկոսաց
ձայնն-էլ չէր հասնում նրանց ականջներուն. կաթողի-
կոսաց՝ որ մէկ ժամանակ՝ քանի՞ անգամ կործանած
թագաւորութեան հիմնադիր և նորոգիչ դարձան : Ինչ
էին կարող կաթողիկոսները հասկացնել այն նախա-
րարներին, որ քրիստոնէական հաւատքը ստէպ ու-
րանում էին, և Պարսից դէնը ընդունելով Հայութիւնը
թողնում էին . Հայկազնեաց նախարարներն-էլ չէին
կարողանում նրանց սանձահարել, որովհետև օտա-
րացեղները առելի զօրացել էին, և Հայաստանը մնա-
ցել էր աւար կամ Պարսից, կամ Յունաց, կամ ուրա-
ցող նախարարներու, որ հայրենեաց մատնիչ էին դառ-
նում :

Այս ամեն չարիքը սկզբնաւորվել էին դեռ թա-
գաւոր ունեցած ժամանակները, կամ լաւ ևս՝ Արշա-
կունի թագաւորները իրանք էին պատճառ, և հիմնա-
դիր ամեն չարեաց, և այս պատճառաւ-էլ թագաւո-
րութիւնը վերջացուցին՝ յոյս ունենալով, որ նորա

կործանմամբ նրամէն առաջացած չարիքն-էլ կ'անհետանան. բայց այն չարիքը խորն էին արմատացել, և ազդասիրաց յոյսը շատ ժամանակ խաբեց նրանց:

Առամ 2-դ՝ Պարսից թագաւորի տեղ նորա մահէն յետ յաջորդել էր նորա որդին Յազկերտ 2-դ: Սա ունէր իրան խորհրդակից՝ Պարսից տէրութեան հազարապետին, Մեհր-Նեհր^հ իշխանին, որ կրօնամոլ մարդ լինելով, շատ ջատագով էր մոգութեան ազանդին: Սորա խորհրդով Յազկերտ 2-դ թագաւորը ուղում էր Հայաստանը Պարսից տէրութեան հետ անխզելի կապով պնդել՝ Հայոց ազգի մէջ մոգութիւնը տարածելով, որ այնուհետև Յունաց ազգէն իսպառօտարանան. բայց վախենում էր Յունաց կայսերութենէն, որ չլինի՝ թէ կրօնական կապերով Յոյնք ու Հայք մէկ մէկի հետ միաւորուած՝ Պարսից զօրութիւնը ջարդեն. և այս պատճառաւ լռում էր, թէպէտ և մոգերը շատ էին յորդորում: Այլ երբ պատերազմ ունեցաւ Յունաց դէմ և յաղթեց նրանց, և դաշնադրութեան մէջ Յոյնք ձեռները լուացին Հայաստանէն, այն ժամանակը Յազկերտ Յունաց երկիւղէն ազատուելով՝ միայն մէկ քաջայարմար ժամանակի էր սպասում իւր խորհուրդը կատարել: Այս թագաւորի ուղեցած յարմար և դիւրին ժամանակն-էլ եկաւ հասաւ:

Միւնեաց տէրութեան մէջ՝ (որ այժմ ասվում է Սղնախու, Ղարաբաղի և Սևանայ երկիր), երկու երեւելի իշխաններ՝ Ասսակ Միւնեաց նահապետ, և նորա փեսայն Արազվաղան իշխանը, մէկզմէկու հետ ժառանգական կալուածնիրու (~~ժառանգութեամբ~~) վրայ ունեցան հակառակութիւն: Ասսակը լինելով մէկ ճարպիկ, ճարտարահնար և հանձարեղ և քաջ մարդ, ոչ ոք և ոչինչ չկարողացան նրան ստիպել, որ նա իւր փեսի հետ ունեցած վէճը խաղաղութեամբ վերջացնէ: Ար-

բազմազան գնաց Պարսից թագաւորի դուռը, ուրացաւ քրիստոնէութիւնը, որ կարողանաց Վասակէն վերէժխնդիր լինել: Վասակն-էլ վախենալով, որ չլինի՝ թէ Վարազվազանը այն զոհերով զօրանաց և իրան յաղթէ, ինքն-էլ գնաց Պարսից դուռն և ընդունեց մոգութիւնը: Այն ժամանակը Միհր-Ներսէ՛՛՛՛ի աչքերը բացուեցան, Յաղկերտին հասկացուց թէ այս է իսկ քաջադէպ ժամանակը, որ այն երկու ուրացող նախարարներուն գործիք շինէ, և նոցա ձեռքով՝ Հայաստանը Պարսից աղանդը դարձնէ:

Եռաջ խարէութիւնով սկսան նախարարներին Հայաստանէն հանել և Պարսից երկրումը դեգերեցուցանել. բայց նախարարները խարէութեան դէմ, կարողացան նոր խարէութիւն գործ ածելով՝ Պարսից հնարագիտութեան մենքնանները խորտակել: Յետոյ կամեցան բռնութեամբ Հայերուն դարձուցանել, և Վեհ-Միհր-Շապուհի տեղ՝ մէկ Բէն-Շապուհ անունով դաժան մարդ ուղարկեցին Հայաստան մարդպան: Արովհետև Վասակ մտքումը դրել էր Հայկազանց թագաւորութիւնը ոտքի վրայ կանգնեցնել, սկսաւ ոչինչ զոհ չլսնայել նապատակին հասնելու համար. այս սրատճառաւ Բենշապուհը տեսնելով Վասակի մտերմութիւնը՝ իւր ձեռքումը սրատրաստական գործի համարեցաւ նրան, և այնքան չարութիւններ արաւ, մինչև որ Հայերը սուր հանեցին Պարսից գէմ, և պարսից զօրքը Հայաստանէն փախցրին (450):

Վրաց և Աղուանից ազգը, որ Հայոց հետ մէկ էին, և համարեա՛, թէ Հայաստանի մասն էին, Արշակունեաց Հայոց թագաւորութիւնը վերանալու ժամանակը, իրանց թագաւորութիւնը պահել էին, բայց միշտ Հայոցմէն կախումն ունէին, և ինչ որ Հայերը անէին, նոքա-էլ նոյնը էին անում: Հայոց նախարարներու հետ

միասին՝ Պարսից օգնութիւն էին գնացել, և նոցա
հետ միասին նեղութիւններու հանդիպել, և նոցա
հետ միասին իրանց աշխարհը յետ դառել. և երբ
Հայերը Պարսից դէմ դէնք բարձրացրին՝ նոքա-էլ
նոյնը արին: Պարսիկք եկան Աղուանից երկիր:
Վարդան Մամիկոնեան սարսաղետը գնաց Պարսից
դէմ Աղուանից օգնութիւն. Հայաստանումը մնաց մար-
դաւան Վասակ Սիւնին: Վարդան մեծ պատերազմ արա-
Սերութաւ Պարսից իշխանի դէմ և յաղթեց: Սորա հա-
կառակ Վասակը՝ Հայաստանը տակնուվրայ բերեց, ան-
թիւ աւերումն, քանդութիւն և կոտորածներ անելով.
այլ երբ Վարդան յետ դարձաւ Աղուանից երկրէն,
Վասակ փախաւ իւր տէրութիւն՝ Սիւնեաց երկիր,
ուր որ Վարդան զօրք ուղարկեց որ ասպատակեն:

Յաղկերտ միւսանգամ մեծ զօրք ուղարկեց Միհր-
Ներսէհի հետ, որ Հայաստանը նուաճէ: Նորա առ-
ջը կանգնած էր Ներշապուհ Արծրունին, որ լա-
ջարդեւէն յետ, շարտեց Միհր-Ներսէհին դէպի Փայ-
տակարան: Այս տեղ Միհր-Ներսէհին օգնութիւն
հասաւ Վասակ Սիւնին, որ շատ ուրացող նախարար-
ներէն, իւր համար համախոհներ էր գտել (*):

(*) Այս պատերազմը, որ գրել եմ, թէ Ներշապուհ Արծրունին ունե-
ցել է Միհր-Ներսէհի դէմ, չկայ յիշուած ոչ եղիշէի պատմագրութեան
մէջ և ոչ այլուր, բայց գուշակելի է պատմութեան կարգէն. որովհետեւ
Ներշապուհ Արծրունին ուղարկուած էր որ Պարսից գալը խափանէ: Ներ-
շապուհը երեւում է միւսանգամ վերջին ճակատամարտումը. Միհր-Ներ-
սէհը տեսնելով է Փայտակարանումը, Պարսից բանակը յետոյ ասպատա-
կում է Հէր և Ջարեանդ գաւառներումը. այնպիսի հանգամանքներ են,
մէկ մէկու ընդգիմամարտ, որ ով որ իօրը ինչ տեղեկութիւն ունի աշ-
խարհագրութեան, պիտի հասկանայ՝ որ շատ բան պակաս է: Այս կնճիռը
ևս այսպէս եմ լուծանում: Միհր-Ներսէհ հասաւ Սորսպատական. Ներշա-
պուհ Արծրունին, որն որ այն տեղ կանգնեցուցած էր, այնպէս խորտակեց
նրան, որ նա մազապուրծ հասուց իւր զլուխը Փայտակարան, և այն տեղ

Միհր-Ներսէ՛ճ զօրավարութիւնը յանձնեց Մուշկան-Նիւսալաւուրտ իշխանին , և ինքը գնաց Պարսկաստան : Վասակ առաջնորդեց Մուշկան-Նիւսալաւուրտին մինչև Մակուայ մօտ , և այնտեղ հանդիպեցան մէկզմէկու Պարսիկք և Հայք : Հայերը սակաւ էին թուով , այլ ամենեքեան սուրբ հաւատոյ համար սրատրաստ էին մեռանիլ : Պատերազմը բացուեցաւ Տըղ-

Վասակին կանչեց : Պարսից աշխարհէն նոր բանակ եկաւ , ու սկսաւ Հեր և Չարեանդ ասպատակել : Սյս ասպատակներու դէմ Վարդան ուղարկեց Սաանձար Սմատունիին : Երբ որ Պարսից երկրորդ բանակը հասաւ Միհր-Ներսէ՛ճի ձեռքը , նա Մուշկանին սպարապետ դրաւ , և ինքը փախաւ Պարսկաստան : Եթէ Պարսից մէկ բանակը Ներշապուհ Սրժբունիէն ջարդուած չլինէր , ոչ Մուշկանը կըլինէր սպարապետ , և ոչ Միհր-Ներսէ՛ճը յետ կ'երթար . որովհետև եթէ յետ էր երթալու , ինչի՛ էր առաջ բանակի գլուխը կանգնած ուսած ուսած բերում : Ներշապուհ Սրժբունին , իրեն յանձնած գործը կատարելէն յետ , երեսպարզութեամբ դարձաւ Հայոց մեծ բանակը . և նորա տեղ ասպատակներու վրայ ուղարկուեցաւ Սաանձարը : Սյս աւելի այն տեղէն է երևում , որ Հայոց վաթսուն և վեց հազարէն վախենում էին Մուշկանի անթիւ զօրքը : Թող բանան աշխարհացոյցները , և նային , թէ Միհր-Ներսէ՛ճի բանակը իւր փիղերով և իւր այրուձիով , ի՛նչ ճանապարհ գտաւ , որ կռուակի նման յանկարծ Փայտակարանումը երևեցաւ , և Ներշապուհ Սրժբունուն չքայտասեցաւ : Սյգ անհնար էր , որովհետև Ներշապուհ Սրժբունին այն նպատակաւ էր կանգնեցրած Սորպատականումը , որ Պարսից բանակի առջևը կտրէ : Եթէ նա այնքան թմրած մարդ էր , որ այն ահագին բազմութիւնը չըտեսաւ , կամ թէ տեսաւ ու փախաւ՝ նա մահապարտ էր . և Վարդան վերջին սպանբազմումը՝ առաջին դուժարտակը նրան չէր յանձներ , և սրամուծիւնը՝ նորա սխարմունքը կամ փախուստը լուծեան չէր մասնիր : Սաանց մէկ ուրիշ կասկածանաց այսպէս պիտի պատահած լինի անցքը , որ երբ Միհր-Ներսէ՛ճ իւր մեծ բանակով մօտեցաւ Հայաստանի սահմանագլխին , Ներշապուհ Սրժբունին՝ որ Սորպատականումն էր այն պահպանում . զիցուք թէ Գազրէժ քաղաքումն էր նրան սպասում , գնաց ընդ առաջ , սպանբազմեցաւ , մեծ յաղթութիւն արաւ , Պարսից բանակը ցրուեց , և Միհր-Ներսէ՛ճ մէկ բանի զօրքով կարողացաւ Փայտակարան հասնիլ , այսինքն՝ Սալեանի կողմը , մինչ Հայերը՝ Պարսից աշխարհի կողմն էին նրան համարում փախած : Միհր-Ներսէ՛ճը՝ գնաց Փայտակարան , և ոչ ինչպէս անթիւ զօրքի զօրավար . և ճաճուկ մարդ ուղարկեց Վասակի մօտ և նրան կանչեց . ապա թէ ոչ՝ ի՛նչ պէտք էր նրան կանչելը . մի՛թէ Վասակ որ լսած

մուտ գետի մօտ. Հայերը մեծ քաջութեամբ պատերազմեցան. բայց Վարդան թշնամեաց նետերէն խոց ստանալով՝ վախճանեցաւ, և Պարսիկք Տիրեցին Հայաստանին, բռնեցին կաթողիկոսին, շատ եպիսկոպոսներու, քահանաներու և նախարարներու հետ, և գերիներու նման ուղարկեցին Պարսից դուռը: Կաթողիկոսը՝ միւս հողեւորականաց հետ՝ մարտիրոսական

լինէր նորա գալը, պիտի սպասէր նորա Փայտակարան հասնելուն. ոչ ապաքէն նորա պարտաւորութիւնը այն էր, որ Սորպատականումը նրան ընդ առաջ ելանէր, և ոչ թէ սպասէր, որ նա Փայտակարան հասնի, և նրան այն տեղ հրաւիրէ: Եթէ Վարդանանք քնած էին: Սորպատականը ո՞ր տեղ, Փայտակարանը ո՞ր տեղ. Գալթեթէն մինչի Սալեան այնպիսի ծանր բանակի համար մեծ ու երկար ճանապարհ է. և որքան յանցաւոր կ'լինէր Ներշապուհ Սրժբունին, և թէ նրան թողած լինէր բոլոր Սորպատական աշխարհը անց կենալ, ու մտնիլ Փայտակարան: Սհա՛ այս հանգամանքներէն է ստուգվում մեր կարծիքը, որ սրբոյն Եղիշէի պատմագրութեան գողը. որոյ համար պատմութեան մէջ-էլ կայ յիշուած, այս հատուածն է պատմութեան բնագրի մէջէն խանդարել, որովհետեւ պատմութիւնը թէպէտ և հարեանդի ասում է, բայց չէ իմաց անում, թէ այն հանած և կորուստ մատնած հատուածի մէջ Սրժբունեաց համար ինչ գովասանութիւն կար. և ի՞նչ էլ էր կարող լինիլ, բացի այս առարկայէն, ուր որ Ներշապուհի առաքինութիւնները ստորագրելու ժամանակը կարելի է թէ պատմագիրը թոյլ տուած լինի քերթողական թեւերուն փոյր ինչ սաւառնիլ և վերնապարել նորա նախնեաց մեծ ազորութիւնները թուելով: ՍՅԼ թէ այն բարեհոգի աւազակը ի՞նչ շարժառիթ ունէր այն անգին գանձը ական հատանելու, աւանդութիւնը այսպէս է ասում, թէ նա մէկ բաղդախոյզ թափառական մարդ էր, որ Պարսից աղանդով խմորուել էր Հայաստան նոր աղանդներ ներս բերել. բայց Վասպուրականի և Սիւնեաց աշխարհքներումը երես չըզտաւ. և առ նախանձու, երբ որ Եղիշէի պատմագրութիւնը ձեռք գրեց, Սրժբունեաց գովասանութիւնը մէջէն հանեց: Նա ամբողջ բնագիրն-էլ կ'ապականէր, և խապառ բնաջինջ անելով կորուստ կըմասանէր, եթէ մէջը Սիւնեաց աշխարհի և Հայերու համար մէկ գովասանք տեսնէր: Բայց որովհետեւ Վասակի վրէն այնքան ձախողակի բաներ կային գրած, նա որ բարկացած էր այդ երկու ցեղապետութիւնրու վրայ. Սրժբունիներէն իւր վրէժը առաւ պատմագրութեան մէջէն նոցա գովասանքը հանելով, իսկ Սիւնեաց տանէն հանեց իւր վրէժը պատմագրութիւնը աշխարհի երեսին թողնելով:

(Վարդանանց պատերազմի վերայ խորհրդածութիւնէն):

պաակի արժանի եղաւ, և նախարարները շատ տարի
աքսորանաց մէջ մնացին. բայց Վասակը, որ յոյս ու-
նէր և արժանաւոր իսկ էր Հայոց թագաւորութիւնը
նոր ոտքի կանգնելու՝ բանտի մէջ որդնահար մեռաւ:
Յազկերտի մահէն յետ՝ նորա որդին և յաջորդը Պե-
րող թագաւորը՝ նախարարներին յետ դարձուց արսո-
րած տեղերէն, և Ատրվշնասպ մարզպանի հետ միա-
սին Հայաստան դարձուց: Հայոց նախարարները, Հայա-
ստանի աւերմունքը տեսնելով՝ շատ ախտոսացին, և կա-
մենում էին նորոգել Հայաստանը և սուաջին բարե-
կարգութիւնը յետ դարձնել. բայց դեռ մէջերը կային
այն օտարացեղ նախարարներէն մնացած վատ և հայ-
րենեաց մատնիչ անձինք, որ նոցա բարի խորհուրդ-
ներուն հակառակ էին կանգնում: Այն ժամանակը
նոր ծաղկել էր Վահան Մամիկոնեանը, որ սրբոյն
Վարդանայ եղբոր Հմայեակի որդին էր: Սա՛ թէպէտ
և մէկ պատճառաւ Պարսից մուլար դենի դիմայլակաւ
ծածկել էր իւր երեսը, բայց սրտով ճշմարիտ քիստոն-
եաց էր և Հայութեան սիրող. և ժամանակի էր սպա-
սում, որ Պարսից դէմ կանգնի, և Հայաստանը փրկէ:
Վերջապէս՝ այս ժամանակն-էլ հասաւ:

(481—623):

Վահան Մամիկոնեան, Վարդ. Մժէժ Գնունի, Վարդան Մամիկոնեան 2-դ.
Սերապ Բազրատունի, Գաւիթ Սահառունի:

Վրաց ազգի թագաւոր Վախթանկը՝ աստատաբունել էր Պարսից իշխանութենէն, և այս պատճառաւ այն կողմերը շփոթի մէջ էին: Հայոց նախարարները այս ժամանակը յարմար միջոց համարելով խնդրեցին Վահան Մամիկոնեանէն՝ որ իրանց գլուխ դառնայ, և Հայաստանը ազատէ: Վահան, նոցա երդմանը, որ սուրբ Աւետարանի վրայ արին. հաւատաց, և սկիզբն արաւ (481). բայց էլի օտարացեղ նախարարներէն ծագեց երկպառակութիւն և դաւաճանութիւն. նոցա մէջէն Վարադշապուհ Ամատունին գնաց և Ատրվշնասպին իմացուց: Մարդպանը փախաւ, բայց դաւաճան օտարացեղները նորա մօտ ժողովուեցան: Այն ժամանակը ուխտապահ նախարարներն-էլ իրանց մէջ ժողովք արին, Սահակ Բազրատունի ասպետին Մարդպան կարգեցին, և Վահան Մամիկոնեանին սպարապետ նշանակեցին: Աւրացողները, որ ըստ մեծի մասին օտարացեղ նախարարներէն էին, խորհուրդ տուին Ատրվշնասպին, որ՝ քանի որ Հայերը Վրաց հետ միաւորված չեն, երթայ Վահանեանց ցրուէ. նա-էլ նոցա խորհուրդին ականջ դնելով՝ եկաւ Հայերու վրայ շատ զօրքով. բայց Սահակ Բազրատունին և Վահան Մամիկոնեանը ուրիշ ուխտապահ նախարարներու հետ միա-

սին իրանց զօրքով կանգնեցան նոցա դէմ, և Ակոռի
(Ակուռի) դեղի մօտ պատերազմը սկսաւ: Հայոց կող-
մէն ձախ թևի զօրագլուխը Գարջոյլ Խոռխոռունին
անցաւ Պարսից կողմը. բայց այս-էլ շատ աւելի օգուտ
չմերեց Պարսից. Հայերը զօրացան, կոտորեցին Պարսից,
Ատրիշնասալին սպանեցին, և միւսներուն հալածական
արին: Այսուհետև պիտի հաստատուն մնային Վա-
հան Մամիկոնեանի հետ, որ թշնամին չըզօրանար:
Ոտարացեղ նախարարները, որ այն ժամանակը
միայն էին Հայաստանի մէջը երևում, ամենեքեան
ցրուեցան: Վահան պարտաւորուեցաւ ամեն մէկի մօտ
առանձին առանձին հրաւիրակներ ուղարկել, որ դան
հաւաքուին իւր մօտ. բայց շատերը տեղերէն անգամ
չըշարժեցան. հազիւ թէ երկու աննշան Հայկազունք՝
Յոհան Անձևացին և Ներսէս Երուանդունին Վահանի
հրաւերը ընդունելով՝ ճանապարհ ընկան, որ դան հայ-
րենեաց պաշտօնանու թեան համար պատերազմիլ. բայց
Սեւուկ Անձևացեաց նախարարը և Յոհան Մոկաց իշ-
խանը՝ սոցա յետևէն ընկան զօրքով, որ չըթողուն եր-
թալ միանալ Վահանեանց հետ. մէջերը ընկաւ կռիւ.
Յոհան Մոկացին սպանուեցաւ Ներսէս Երուանդունիի
ձեռքով. միւսները ցրուեցան, և այն ուխտարարս նա-
խարարները եկան Վահան սպարապետի մօտ:

Արբ որ դարուներ բացուեցաւ՝ Պարսից տէրութիւնը
Ատրներսէս իշխանին անհամար զօրքով ուղարկեց
Հայաստան՝ Վահանին վրայ: Սիւնեաց իշխան Գդի-
հոնն-էլ Պարսից հետ միացաւ: Վահան առաւ իւր
սակաւաւոր զօրքը, և կաթողիկոսի Յովհան Մանդա-
կունիի և հաւատարիմ մնացած նախարարների հետ
միասին գնաց Պարսից դէմ՝ Հեր և Զարեանդ գաւառը
(Սալմաստու և Մարազու երկիրը). և պատերազմը
սկսաւ: Վահանեանք մեծ յաղթութիւն ստացան. Ատրի-

ներսէ՛հ սպանուեցաւ, և Պարսից զօրքը ցրուեցան և վարատուեցան:

Այս յաղթութիւնէն յետ՝ Միհրան զօրապետը Պարսից բաղձամբոյս զօրքով եկաւ Վրաստան: Վախժանկ Վրաց թագաւորը Վահանի մօտ պատգամաւոր ուղարկեց, իմաց արաւ. Վահան-էլ առաւ Հայոց զօրքը, և դնաց Միհրանի դէմ: Երբ որ պատերազմը սկսաւ, Վախժանկ իւր զօրքը առաւ ու փախաւ. Վահանի ընկերակիցներէն-էլ շատը կամ փախան, կամ Պարսից կողմը անցան. Վահան մէկ քանի մարդով մնաց Պարսից մէջ: Բայց պատերազմը առաջ տարաւ: Անհամար թշնամիներու բաղձութեան մէջ Սահակ Բագրատունի մարզպանը, և Վահանի եղբայր Վասակ Մամիկոնեանը մարտիրոսական սրակի արժանացան. ինքն Վահան իւր ընկերներու հետ միասին դնաց դէպի Տայոց (Ախալցխոս) երկիրը: Թէպէտ Միհրան շատ ընկաւ նոցա յետեւէն, որ կարողանայ Վահանին ձեռք ձգել, բայց հնարը չըգտաւ: Յանկարծ Պարսից տէրութենէն հրաման եկաւ, որ Միհրան յետ դառնայ Պարսկաստան, և դնաց: Վահանն-էլ դնաց Գուին, մտաւ եկեղեցին, և շնորհակալութիւն արաւ Աստուծոյ, որ իւր օգնութիւնը միշտ շնորհել էր Հայոց միաբանութեան:

Միւս տարին (482) դարձանը՝ Չար-Միհր-Հազարաւուխտ Պարսից զօրապետը բիւրաւոր զօրք հետը առած՝ եկաւ մտաւ Հայաստան. և տեղեկութիւն ստանալով որ Վահանի ձեռին Հայոց զօրքը քիչ է, Վազեց Գուին մայրաքաղաքի վրայ, ուր որ Վահանն էր: Վահան չովախեցաւ այն բիւրներէն, դուրս եկաւ Պարսից դէմ, թշնամիներէն շատը ջարդեց, և նոցա թանձրութիւնը պատռելով՝ անցաւ Խաղտեաց (Քութայիսի) կողմը: Դեռ ևս Հազարաւուխտ Վահանին էր պորըրտում, և ահա՛ հրաման եկաւ Պարսից դռնէն, որ նա

իւր ձեռքի տակ ունեցած բանակը տանի Հեփթաղ-
ներու դաշնակից Արաստանի դէմ, որովհետև Պերոզ
Պարսից թագաւորը ինքն-էլ պիտի Հեփթաղաց վրայ
արշաւանք անէր իւր զօրքով: Եապուհ Միհրանեանը
մնաց Հայաստանի վրայ մարդստան, իսկ Գղիհոնը՝ նո-
րան խորհրդակից տրուեցաւ: Այս նոր մարդստանը
սկսաւ Վահանի յետնէն ընկնիլ, և ամեն կողմ զօրք
ուղարկել: Վահան-էլ կամեցաւ այս հանգամանքէն
օգուտ քաղել. այն պատճառաւ Եապուհի ցրուած
զօրաց վրայ սկսաւ ստէպ ստէպ արշաւել, և կտոր
կտոր ջարդել: Տեսաւ Եապուհ՝ որ պատերազմի այս
եղանակը աջողակ է Հայերու համար, լաւ կարծեց իւր
բոլոր զօրքը մէկ տեղ կենտրոնացնել, և Հայերուն իւր
զօրաց շատութիւնով ճմլել: Պարսիկք հաւաքուեցան,
և Երիզայ գեղումը հանդիպեցան Հայոց սակաւաթիւ
զօրաց: Վահան մէկ այնպէս հնարքով շփոթեց Պար-
սից բազմութիւնը, որ սկսան մէկզմէկ ջարդել. բայց
այս պատերազմի մէջ Վահանի զօրքը իսպառ ցրուե-
ցան: Յուսակտուր պիտի լինէր Վահան, այլ նա փո-
խանակ երկիւղ ունենալու կամ փախուստ ածապարե-
լու՝ քառասուն մարդով հազարաւոր Պարսիկներու
վրայ վաղեց, ճղքեց պատուեց նոցա գունդերը, և երբ
նոցա մէջէն դուրս եկաւ՝ սկսաւ նոցա հետ միասին
երթալ իւր ճանապարհը՝ որպէս թէ այն գունդերու
մէկն էր, և այնքան համարձակ էր գնում, որ Պար-
սիկք վախենում էին մօտիկ երթալ դէպի Հայերու
կողմը. որովհետև այնքան կռիւներու մէջ Վահանի
զօրքէն միայն չորս հողի էին պակսել, իսկ Պարսից
մէջէն անթիւք, և նոցա հետ միասին Գղիհոնն-էլ էր
սպանուել, և Միւնեաց զօրքը ցրիւ էին ընկել: Եա-
պուհ տեսնելով որ իւր զօրքը՝ Վահանի միայն անու-
նէն-էլ են զարհուրում, թողեց Վահանին, և գնաց

Բասեն դաւառ, և որովհետև նոյն օրերումը ստացաւ Պերողի մահուան լուրը՝ (Հեփթաղներու դէմ արշաւանի մէջ), երեսը դարձուց Հայաստանէն և քաշուեցաւ դէպի Պարսկաստան:

Պերողի տեղ՝ Պարսից գլխաւորները թագաւոր դրին նորա խաղաղասէր եղբորը Վաղարշին, որ իսկոյն սկսաւ իւր թագաւորութիւնը Տանդարտեցնել. և Հայաստան-էլ ուղարկեց Նիխոր խելացի իշխանին շատ զօրքով, ո՛չ թէ Վահանի Տես կռուելու, այլ ի՞նչ հնարիւք-էլ որ լինի՝ հայերու Տես հաշտուելու: Նիխոր եկաւ Հեր գաւառ (Սալամասա), և իւր իշխաններէն Վահանի մօտ դեսպան ուղարկեց և իմացուց, որ Պարսից թագաւորը Հայերու Տես հաշտութիւն անելու է ցանկանում, և ինքը այն դիտաւորութեամբ է ուղարկուած: Վահան ժողովեց իւր հաւատարիմ նախարարներուն, և նոցա առջևը խօսեցրուց Պարսից դեսպաններին. և ինքն-էլ հինգ հոգի Հայոց նախարարներէն ուղարկեց Նիխորի մօտ, որ այս պայմանները կապեն. ա) որ Պարսից թագաւորը այնու Տեսու Հայերու հաւատքի գործերու մէջ չըխառնուի. Բ) քրիստոնէութիւնը ուրանալու համար մեծութիւն չըպարգևէ ումեք. Գ) դատաստանը ուղիղ անէ: Քանի ժամանակէն յետ՝ Վահան ինքն-էլ դնաց Նիխորի մօտ: Նիխոր մեծ պատուով ընդունելութիւն արաւ Վահանին, և յորգորեց, որ անձամբ երթայ թագաւորի դուռը:

Վահան յօժարեցաւ մարզպանի խորհուրդին սկանջ դնել, և դնաց Պարսից աշխարհ. Վաղարշ թագաւորէն մեծ մեծ սրտիւներ և պարգևներ ստացաւ, և Մամիկոնեանց նահապետութեան նախարար կարգուեցաւ, և Հայոց զօրաց սպարապետ հաստատուեցաւ: Երբ որ Վահան դարձաւ Հայաստան, գնաց սուրբ Էջմիածին՝ Աստուծոյ գոհութիւն արաւ, և ասլա Դուինումը հան-

գըստացաւ: Այս հանգամանքները բերին Հայաստանի
համար մէկ մեծ անդորրութիւն, որն որ այս չարա-
բաստիկ աշխարհը տեսած չէր Արդանանց շիւթի
օրերէն: Անդեկան մարդպանն-էլ, որ մէկ բարեհոգի
Պարսիկ էր, մօտիկ լինելով Ասհանին կենցաղակցու-
թեամբ՝ աչքով տեսաւ և ճանաչեց Ասհանի քաջու-
թիւնը, խմաստութիւնը և աջողակութիւնը, և հոգ-
ւով կատուեցաւ նորա հետ, և երբ որ մէկ արքու-
նական հարկաւոր պաշտօնի համար Անդեկան դնաց
Տիւրոն, թագաւորի առջևը համարձակ ասաց թէ՛
«Քանի որ կայ Ասհան՝ մեծ անխոհեմութիւն է Հայա-
ստան ուրիշ մարդպանի յանձնելը»: Ապա շատ հաւանե-
ցաւ Անդեկանի համոզմանց, և Ասհանին մարդպա-
նութիւն շնորհելու հրովարտակ ուղարկեց: Երբ որ
հրովարտակը հասաւ Հայաստան, ամեն կողմանց Հայե-
րը վազեցին դէպի աւագ եկեղեցին Դուին մայրաքա-
ղաքի՝ Աստուծուն գոհութիւն մատուցանելու համար,
և Հայոց կաթողիկոսը գիտնական Յովհաննէս Ման-
դակունին, որ Ասհանի աշակերտակիցն էր և բարե-
կամբ, և նորա ամեն նեղութեան բաժանորդ և կարե-
կից, այս համազգային ուրախութեան համար մէկ
այնպէս ճառ ասաց, որ արժանի էր իւր հայրապետու-
թեան անուան և Ասհանի նոր ստացած իշխանութեան
Ապարշէն յետ երբ որ կարատ թագաւորը սկսաւ
իւր նախորդի տուած արտօնութիւնները ջրել, և
Հայաստանի մէջ մոգութեան աղանդը սերմանել, Աս-
հան մարդպանն-էլ պարտաւորուեցաւ միւսանդամ հա-
ւատոյ պաշտպանութեան համար վահան գառնալ,
կրկին Պարսից տէրութեան դէմ դէն առնուլ, Պարսիկ
զօրքը կոտորել, մոգերուն ջարդել, և կրակաւուն-
ները աւերել, և այս այնքան առաջ տարաւ, մինչև
որ կարատ թագաւորը սկսաւ հաշտութիւն խնդրել:

Վահան 25 տարի խնամեց Հայաստանը, և սորա յաջորդ կարգուեցաւ իւր եղբայր Վարդը, որ երկու տարի մարդպանութիւն արաւ:

Կարաւ Պարսից թագաւորը Վարդին մարդպանութենէն հանեց, և նորա տեղ Բուրղան Պարսիկ նախարարին՝ Հայաստանի վրայ մարդպան կարգեց: Սորա ժամանակը Հոնաց զօրքը Հայաստանի վրայ արշաւանք արին, և շատ դաւառներ աստատակելով՝ հասան մինչև Սասուն դաւառը: Մէժ Քնունի քաջ իշխանը իւր զօրքով Հոնաց դէմ դուրս եկաւ, և մեծ կոտորած անելով՝ փախցրեց: Կարաւ լսելով Մէժի քաջութեան համբաւը, Հայաստանի մարդպանութիւնը Բուրղանէն առաւ և նրան յանձնեց (518): Մէժ Հայոց երկիրը և ազգը 30 տարի խաղաղութեամբ խնամեց:

Երբ որ Մէժ Քնունեաց նախարարը փախձանեցաւ, Կարաւ Պարսից թագաւորի որդին Խոսրով թագաւորը Հայաստանի մարդպան դրեց Քենշապուհ Պարսիկ իշխանին: Սորա իշխանութեան ժամանակը Մովսէս 2-դ Կաթողիկոսը Հայոց Տոմարը նորոգեց, և Հայոց թուականը դրեց 551 թուին: Այս ազգասէր Հայրապետը տեսնելով, որ Քենշապուհ մարդպանը Հայերուն կամենում է իրանց կրօնէն մոլորեցնիլ և դէպի Պարսից աղանդը որսալ՝ մէկ նամակ գրեց Խոսրով թագաւորին և Քենշապուհին փոխել տուեց: Բայց նորամէն յետ-էլ Հայաստան բարեհոգի մարդպան չունեցաւ, մանաւանդ Սուրէն՝ որ Խոսրով թագաւորի ազգական էր, այնքան դաժանութիւն արաւ, մինչև որ Հայերուն ստիպեց ոտքի վրայ կանգնիլ: Փոքր Վարդան Մամիկոնեանը գլուխ դառաւ Հայերուն, Յունաց կայսերէն խոստումն առաւ, որ Հայաստանին տէրութիւն անէ, և Պարսից թագաւորութենէն աստատամբուելով՝ նոցա զօրքը կոտորեց, և Սուրէն մարդպանին-էլ սպանեց, որովհետև

նա ևս նորա եղբորը Մանուէլ Մամիկոնեանին էր ըստանել:

Խոսրով եկաւ ահագին սխալութեամբ որ Հայաստանը նուաճէ: Յուստինոս կայսրը ամենեին փոյթ չունեցաւ Հայերուն օգնութիւն հասցնելու, և Վարդան Տառնապարտեացաւ մէնակ Հայոց զօրքով կանգնել նորա դէմ. բայց այսու ամենայնիւ՝ Հայերը զօրացան, և Պարսից զօրքը ջարդեցին և փախցրին:

Խոսրով Հայաստանէն ձեռք վեր չառաւ, և շատ սպառնալիքներէն յետ՝ վերջապէս կարողացաւ Հայաստանին նոր ինորոյ տիրապետել, և մարզպան կարգեց Վղոն-ձիհր իշխանին:

Այս այն ժամանակներն էին, երբ որ Հայերը Յունաստանումն էին քաջագործութիւն անում, և իւրեանց սրով Քիւղանտիոնի կայսերութիւնն էին պաշտպանում. և սրանցմէն մէկ քանիսը մեծ մեծ պատիւներու հասան, ինչպէս Ներսէս Բաանցին, Արտաւան Արշակունին, Յոհան Թումայեան և Ներսէս Պատրիկ՝ ժամանակակից մեծին Բելիսարիոսի: Հայոց ազգը Յունաստանումը այնքան բազմացել և զօրացել էին, մինչև որ նոցամէն մէկը Մօրիկ Հայկազնը կայսր ընտրուեցաւ 581 թուին:

Մեծին Խոսրովու թոռն Խոսրով 2-դ Պարսից թագաւորութենէն զրկուեցաւ, և երբ ամեն կողմէն մնաց անօգնական՝ դիմեց Մօրիկ կայսեր մօտ, և Մօրիկ կայսրը՝ Յունաց զօրքը յանձնեց Ներսէս Հայկազն իշխանին, որ Խոսրովին օգնեն: Խոսրով միւսանդամ հասաւ իւր թագաւորութեան երեք Հայ իշխաններու ձեռնտուութեամբ, Ներսէս Հայկազնի, Մուշեղ Մամիկոնեանի և բազմայաղթ Սմբատ Բագրատունւոյ: Խոսրով Սմբատ Բագրատունիին կարգեց Հայաստանի և Վրկանի մարզպան (592): Մուշեղ Մամիկոնեանը որ

շատ քաջութիւններ էր արել, մնաց արվարձ, որովհետեւ խոսրովին այլ տեսակ էին հասկացրել: Մուշեղն-էլ բարկանալով՝ հեռացաւ Պարսից արդէն-էլ, Յունաց արդէն-էլ և նստաւ իւր Տարօնոյ երկրումը: Թէպէտ յետոյ խոսրով իմացաւ, և կամենում էր շահել Մուշեղի սիրտը, բայց նա ոչինչ պարզեւ չուղեց, և խոսրովին-էլ հարատակութիւն չարաւ, մնաց իւր անկախութեան մէջ ինչպէս մէկ ինքնազուխ իշխան:

Բաղմայազէ Սմբատ Բագրատունիի մահէն յետ՝ խոսրով թագաւորը Հայաստանի մարդկան հաստատեց Գաւիթ Սահառունիին (600): Այս ժամանակներումը Յունաց զօրքը Մօրիկ Հայկազն կայսերը՝ աթոռէն վայր բերին, և նորա տեղը դրին Փոկաս զօրապետին, որ Մօրիկին տունով տեղով կոտորեց: խոսրով երբ որ լսեց իւր բարերար և բարեկամ Մօրիկ կայսեր վատարազդութիւնը, 140,000 Պարսից զօրքով արշաւեց դէպի Յունաստան, և Մուշեղ Մամիկոնեանին-էլ հրաման ուղարկեց, որ նա-էլ իւր զօրքը առնու, և երթայ Յունաց վրայ: Բայց Մուշեղ դեռ ևս մտապած չէր խոսրովու անիրաւութիւնը. այն սխառտաւ տեղէն չշարժեցաւ, այլ միայն իւր երկիրը Տարօնոյ փոճակը ամրացուց, յառաջուանէ իմանալով որ խոսրով այն իւր ապստամբութիւնը անպատիժ չի թողնիր:

Աւ յիրաւի, երբ որ խոսրով Յունաստանի ստաւա-տակութենէն յետ դառաւ, և հասաւ Կարին քաղաքը, իւր քեռորդու Միհրանի ձեռքը 10,000 զօրք տուեց, և ուղարկեց Մուշեղի վրայ, որ նրան նստաձէ: Միհրան մտաւ Տարօնոյ երկիրը, և Արձան բլրի վրայ (ուր որ մէկ ժամանակ Տրդատի և Լուսաւորչի դէմ քուրմերը կռիւ հանեցին), դրեց իւր բանակը, և 8,000 զօրք հեար առած Մեղաթի և Աստեղոն բերդի վրայ դնաց: Մուշեղ արդէն ձեր էր, չուղեց նորինորոյ պատերազ-

մական դործերու մէջ խառնուիլ . կանչեց իւր քեռ-
որդուն Վահանին , (որ 88 տարեկան մարդ էր և
քաջութեան սխառնառաւ Գայլ էր ասլուսմ) , և տուեց
իւր զօրքը նորա ձեռքը , և ուղարկեց Միհրանի դէմ :

Գայլ Վահանը կամենալով առանց պատերազմի վը-
ճարել դործը , դնաց Միհրանի մօտ և բարեկամ ձեռ-
ցաւ . յետոյ սկսաւ կամաց կամաց ջարդել Պարսից :
Առաջ Օձ քաղաքի դրանը կոտորեց 4,000 հոգի . յե-
տոյ 2,000 նոյն հնարքով : Յետոյ 1,000 մարդ ջարդեց
Մեղտեայ դեռի մօտ , և 1,000-էլ նոյն օրը խողխողել
տուեց՝ դարանամուտներու ձեռքը մտանելով : Միւս
օրը էլի եկաւ Վահան Միհրանի մօտ , Պարսից իշ-
խաններուն կոտորեց խնջոյքի մէջ , և Միհրանին սպա-
նեց իւր տաղաւարումը . և չորս իշխանաց սրախող-
խող արաւ Միհրանի վրանի դրանը . և այս ամենը
այնպէս ծածուկ գլուխ բերեց , որ ո՛չ ոք չիմացաւ . և
չթողեց Մուշ քաղաքի մէջ մէկ հաստ Պարսիկ կենդանի :

Ժամանակ չտուեց Գայլ Վահանը , որ Պարսիկները
լսեն այս կոտորուածքը . բերել տուեց Վարշիր իշխա-
նին , որ 3600 մարդ հետը նստած էր Կութայ լեռումը ,
և նորա զօրքը ծածուկ կոտորելէն յետ իրան-էլ սպա-
նեց : Եւ այսպէս 10,000 զօրքէն , որ Միհրան բերել
էր հետը , հազիւ թէ քառասուն մարդ փախան , և
խնայում ասին խորովին : Այս ամենը սրատահեցան
604 թուականին , երբ որ Մուշեղ-էլ վախճանեցաւ , և
Գայլ Վահան յաջորդեց նորա իշխանութիւնը Տարօ-
նոյ մէջ :

Խորով իրր որ լսեց իւր քեռորդու Միհրանի մա-
հը և 10,000 Պարսիկ զօրաց կոտորուելը , թէպէտ և
չատ պատերազմներու մէջ գրազած էր , բայց Գայլ
Վահանի արարմունքին ջրկարեմալով հանգուրծել ,
չատ զօրք տուեց Միհրանի հօրեղբօր Վախտանգի

ձեռքը, և ուղարկեց Տարօն: Վասան նստած էր Մուշ
և քսանութ հազար զօրք ունէր սլաւորաստած ծածուկ,
բայց սպասում էր որ Վախտանգ սկիզբ անէ թշնա-
մութեան: Վախտանգ՝ որ կարծում էր՝ թէ Վասանը
վախենալով իրմէն՝ ձայնը կտրած դուճ է եկել, չորս
հազար մարդ տուեց Ռահան Պարսիկ զօրապետի ձեռ-
քը, և ուղարկեց Վասանի վրայ դէպի Մուշ: Վասան
երբոր լսեց Ռահանի գալը, չորս հազար հոգի ու-
ղարկեց առաջ, ինքն-էլ երեք հազար զօրքը հետը
առաւ դնաց նորա դէմ: Բայց իւր որդւոյն Սմբատին
էլ սլատուեր տուեց, որ վեց հազար մարդ առնու և
միւս կողմէն երթայ: Սյապէս Ռահանի զօրքը մէջ
առին և գիշերով այնպէս ջարդ տուին, որ չորս հա-
զարէն հազիւ թէ յիսուն մարդ աղատուեցան:

Վախտանգ երբ որ լսեց այս հարուածի համբաւը,
ուղարկեց Վասանի վրայ Ասուր զօրավարին հինգ
հազար զօրքով: Վասան և իւր որդին Սմբատը նը-
րանց-էլ չարաչար կոտորեցին: Ասուրին-էլ և իւր որ-
դուն-էլ սպանեցին: Այս սլատահեցաւ 606 թուին,
և այն տարին Վասան ինքն-էլ վախճանեցաւ, և նորա
տեղ սկսաւ Տարօնոյ երկիրը տիրապետել նորա որդին
Սմբատը:

Վախտանգ՝ որ երկու անգամ կոտորած էր քաշել
Վասանէն, երբ որ լսեց Վասանի մահուան լուրը,
կարծեց թէ այնուհետև հեշտ սխալի յաղթէ Հայերուն.
այն սլատառաւ ինքը դնաց շատ զօրքով Սմբատի
դէմ: Սմբատ-էլ առաւ իւր հետ տասը հազար զօրք,
և դուրս եկաւ Վախտանգի առջև, և երբ սլատերազմը
բացուեցաւ՝ Հայերը կոտորեցին Պարսից զօրքէն հինգ
հազարէն աւելի զօրք: և յետոյ դնացին Վախտանգի
բուն բանակի վրայ, և սպանեցին Վախտանգին-էլ, և
նորա բոլոր զօրքը բնաջինջ արին, և Վախտանգի

կինն ու զաւակունքը դերի առին 607 թուին: Քսան տարի անց կացաւ, և Պարսիկք չեկան Տարօնոյ վրայ. բայց յետոյ եկաւ Վախտանգի եղբայր Սուրէնը, որ աղատէ իւր եղբօր կնոջն ու զաւակներուն: Սմբատ նրան-էլ սպանեց, և նորա զօրքն-էլ կոտորեց 627 թուին:

Յետոյ 629 թուին եկաւ Տարօնոյ վրայ Գեհրան Պարսից իշխանը մեծ բաղմութեամբ. այլ Սմբատ և նորա որդին Վահան Կամսարականը կոտորեցին Պարսիկներին և Գեհրանին և իւր որդուն-էլ սպանեցին: Վրդուհր՝ որ Գեհրանի ընկերակից էր՝ դիմեց Տարօնի վրայ 630 թուին, որ Գեհրանի մահուան վրէժը առնու. բայց Սմբատ և Վահան Կամսարական չարածեցին նրանց, և կոտորեցին: Իսկ երբոր թագաւոր նշատաւ Յազկերտ վերջին Խոսրովի թոռն, Սմբատ առաջ չաշտութիւն արաւ նորա հետ. այլ երբ իմացաւ՝ թէ Յազկերտ դաւաճանութիւն է միտք անում նորա համար, Յունաց Հերակլ կայսեր հետ դաշն դրեց: Հերակլ կայսր Սմբատին տուեց անպետութեան աստիճան, իսկ նորա որդուն Վահան Կամսարականին արաւ սպառիկ: Սմբատ այնուհետև խաղաղութեամբ ապրեցաւ, և վախճանեցաւ 632 թուին. նորա իշխանութիւնը յաջորդեց Վահան Կամսարական սպառիկը:

ԿԻՒՐԱՊԱՂԱՏՔ ԵՒ ՊԱՏՔԻԿՔ:

Գաւիթ ՍաՀառունի, Վարաղտիրոց, Սմբատ, Թեոդորոս Ռչաունի, Հա-
գարացիք-ՄաՀմէտականք, Յունաց Հայաստանէն Հեռանալը:

Երբ որ Մուշեղ Մամիկոնեանը, Գայլ ՎաՀանը,
և նորա որդին Սմբատը՝ Տարօնոյ կողմը այս քաջա-
թիւններն էին կատարում, Հայաստանի մարդպան էր
Գաւիթ ՍաՀառունին 600 թուէն սկսած՝ քսանուհինգ
տարի. բայց երբ որ խնացաւ Գաւիթ ՍաՀառունին՝
թէ Պարսից տէրութիւնը կամենում է նրան վնաս տալ,
թողեց Հայաստանը 625 թուին, և գնաց Կոնստան-
տինուպօլիս. այս պատճառաւ Խոսրով թագաւորը նս-
րաւ տեղ Հայաստանի մարդպան կարգեց Սմբատ քաղ-
մայաղ թի որդուն՝ Վարաղտիրոց Բաղրատունիին, որ
այն ժամանակ եկաւ Հայոց երկիր, երբ որ Գայլ Վա-
Հանի որդին Սմբատը Վախտանգին ըսպանել էր, և
Պարսից կոտորել, և քսան տարի խաղաղութիւնը ա-
պահովել էր Տարօնոյ երկրումը: Վարաղտիրոց-էլ
տեսնելով որ իւր կեանքը միշտ վտանգի մէջ է Պար-
սից նենգութենէն, թողեց 632 թուին Հայաստանը,
և գնաց Կոնստանտինուպօլիս Հերակլ կայսեր մօտ:
Կայսրը Վարաղտիրոցի տեղ նոյն տարին կարգեց միւս-
անգամ Հայաստանի կառավարիչ Գաւիթ ՍաՀառու-
նիին՝ Կիւրապաղատ (Կուրոպաղատ) անունով, որ Տուն-
սիացւոց Մայիօղ-Գօթի իշխանութեան նման պատուա-

նուն էր), և ուղարկեց Հայաստան: Քայց սորա իշխա-
նութիւնը երկար չըտևեց: Այլազգեաց բազմութիւնը
էլի սկսաւ Հայաստանի մէջ գերութիւն և աւերած
անել: Ռշտունեաց նախարար Թէոդորոսը այս հէնե-
րու աստատարութեան դէմ կանգնեցաւ իւր զօրքե-
րով, և 636 թուէն սկսած տէրութիւն էր անում Հայա-
ստանին, այլ չկարողացաւ Հագարացոց բուն զօրու-
թեան դէմ կանգնիլ: Այս Հագարացիք էին այն Արա-
բացիները, որ հուր և սուր ձեռքերը բռնած՝ տարա-
ծում էին աշխարքի երեսին Մասմէտի Կուրանը:
Մահմէտ Արաբիայի անապատի մէջ դուրս էր եկել
622 թուին, և նորա հետևողները, որ իրանց օրէնսդրի
անունով ասում էին Մահմէտիանս՝ նորա վարդապե-
տութիւնը արդէն հասցրել էին Հայաստան, ուր որ
պիտի Հայոց ազգէն չըգտնէր ընդունելութիւն, և
այս սխառտաւ խղճալի ազգը պիտի զոհ երթար
նոցա մոլար կրօնամոլութեան: Դեռ Զրադէշական
հուրը, որ այնքան դարեր տոչորում էր Հայաստանը՝
չէր աճիւնացել, որ Մասմէտականութեան Միւսուլ-
մանութիւնը եկաւ հասաւ, և իւր աստիճաններով շեջոց
յանգցրեց Պարսկաստանի կատաղի մոգութեան կրակը,
բայց նոյն աղտեղի ջրով՝ հեղեղեց Հայաստանի երեսը:
Այս ջրհեղեղի առջևը ոչ Թէոդորոս Ռշտունին կա-
րաց թումք կանգնիլ, և ոչ Վահան Կամսարականը,
որոյ երկու եղբարքը՝ Տիրան և Մուշեղ՝ զոհ գնացին
քրիստոնէական հաւատոյ, և Դուին մայրաքաղաքը
640 թուին ընկաւ Մասմէտականներու անգթութեան
տակ:

Ներակլ կայսեր թոռն՝ Կոնստանդ կայսրը Վարադ-
տիրոցի որդուն Սմբատին տուեց 644 թուին՝ Հայա-
ստանի կիւրապաղատութիւնը, իսկ Թէոդորոս Ռշ-
տունիին՝ զօրավարութիւնը, որ նոյն տարին Հագար-

րացւոց մէկ հատուածի վրայ մեծ քաջութիւն կատարեց:

Տայց երբ որ Հաղարացիք միւսանգամ բաղմութեամբ մտան Հայաստան, և շատ աւերմունք ու ջարդարին Հայերու մէջ, Թէոդորոս Ռշտունին և Սմբատ Ախրապաղատը հարկադրուեցան հնազանդիլ նրանց, և հարկատու լինել 646 թուին: Կոնստանդ կայսրը, որ իւր նախորդաց նման ոչինչ օգնութիւն չէր արել Հայաստանին, այլ միայն Հայերու հարատակութեան և հարկատուութեան արդասիքն էր վայելում, երբոր լսեց՝ թէ Հայաստան Հաղարացոց լուծը առել է իւր վրայ, բարկացաւ, և մեծ զօրքով եկաւ Հայաստան 647 թուին: Հայերը չունենալով բաւական սրատրատութիւն և կամք յունական զօրութեան դէմ կռուիլ, հնազանդուեցան նրան: Տայց Յոյնք սկսան նեղութիւն տալ Հայերուն կրօնական բաներով, որ ո՛չ Պարսից մագութեան և ո՛չ Հաղարացոց մահաձեռակամութեան հաշտմանքներէն սակաւ տաղնապ բերին Հայերու վրայ: Այս սրտաճառաւ երբ որ միւսանգամ եկան Հաղարացիք, Հայերը մտան նոցա իշխանութեան տակ, և այնուհետև Յունաց զօրութիւնը բնաջինջ եղաւ Հայաստանէն, որ Մեծին Կոնստանտինոսի և Մեծին Թէոդոսի օրերէն Հայոց ազգի ճայրադոյն հակառակորդն էին, և անհաշտ դարանակալ նոցա ազգութեան և ազատութեան: Հաղարացիք 1775 հոգի պատանդ առին Հայերից 653 թուին, և երեք տարի յետոյ անտանելի հարկեր դրին Հայաստանի վրայ: Հայերը չըկարողանալով քաշել այս նեղութիւնը, էլի մտան կայսեր ձեռքի տակ, և ստացան Հայաստանի համար կիւրապաղատ Համազասպ Մամիկոնեանին, և զօրավար՝ Թէոդորոս Ռշտունիի տեղ՝ նորա որդուն՝ Աարդ Պատրիկին: Հայերու այս գործը յայտնի էր, որ պիտի լինէր սրտ-

տանդներու մահուան դատակնիք, և Հաղարացոց՝ Տը-
րաւէր դէպի Հայաստան. բայց Հայերը չըստասեցին որ
Հաղարացիք դան ու Տեղեղեն Հայաստանը. Յոյնք նը-
րանց չէին օգնոււմ, և միշտ կրօնական դործերու հա-
մար տրորոււմ էին, սյս պատճառաւ՝ երբ որ Ամիրա-
պետ դառաւ Մաւիէ, Համադասալ ու Վարդ Հայա-
ստանը միւսանդամ դրին նորա պաշտպանութեան
տակ: Այս պատահեցաւ 657 թուին: Մէկ տարիէն
յետ մեռաւ Համադասալ Մամիկոնեանը, և Մաւիէ
Ամիրապետը Հայերու խնդրանօք տուեց նորա եղբօրը
Գրիգոր Մամիկոնեանին պատրիկութեան իշխանու-
թիւն: Սորա պատրիկութեան երրորդ տարին Վարդ
Պատրիկը որ Հայոց զօրավար էր՝ Հաղարացոց օգնու-
թիւն անելով՝ Յունաց զօրքը ձգեց դարանի մէջ, և
շատ ջարդել տուեց 660 թուին: Քսանուհինգ տարի
յետ այսորիկ Հայաստան վայելեց խաղաղութիւն. այլ
686 թուին Յուստիանոս 2-դ կայսրն Յունաց սկսաւ
պահանջել, որ Հայաստան Յունաց իշխանութեան տակ
մտնի: Երբ որ Հայերը սկսան Յունաց արած չարու-
թիւնները յիշել, թէ ինչպէս նեղութիւն են տալիս
կրօնական դործերով, և բնաւ օգնութիւն չեն անոււմ
թշնամեաց դէմ, կայսրը բարկանալով ուղարկեց երկու
անգամ զօրք, որ Հայաստանը տակնուվրայ բերին, և
այն ստախճանը հատուցին՝ որ երբ այլադգիք եկան
Հայաստանի վրայ, Հայերը չկարողանալով երկու թըշ-
նամեաց միանգամայն դէմ կենալ՝ հնազանդուեցան
այլադգեաց: Յուստիանոս կայսրը չըկտացաւ այնքան
արիւնով ինչ որ նորա զօրքը թափեցին Հայաստա-
նոււմը, 690 թուին՝ ինքը եկաւ անհամար զօր-
քով Հայոց երկիր, և շատ աւերմունք անելէն յետ
նուաճեց Հայաստանը, և կարգեց Հայերու վրայ՝
Վահան Կամսարականի որդուն Ներսէսին՝ որ Շիրա-

կայ տէր էր՝ Հիւսիստոս և Պատրիկ, իսկ Հայոց զօրա-
վարութիւնը յանձնեց Սմբատ Բիւրատեանին, և երե-
սուն հազար Յունաց զօրք թողեց Հայաստանումը, և
Հայերից շատ սլատանդներ առաւ, ու դնաց յետ ։ Երեք
տարուայ միջոցումը Յունաց զօրքն-էլ կամաց կամաց
թողին Հայաստանը և ցրուեցան, այս սլատաճառաւ Հա-
զարացւոց ամիրապետը ուղարկեց Հայաստան Ոստի-
կան կոչումով՝ մէկ Արդլլայ ասուած իշխան, որ խա-
ղաղութեամբ եկաւ մտաւ Հայոց երկիր, և նստաւ
Գուին քաղաքումը, և որովհետև Հայերը զղուել էին
Յունաց արարմունքէն՝ ընդունեցին նրան յօժարու-
թեամբ ։

Ո Ս Տ Ի Կ Ա Ն Ք ։

(693—742. ա.հ. 48)։

14

ՄԵՂԼԱՅ. Կաշմ. Ախլթ. Մահմէտ. Մեղլաղիզ՝

ՄԵՂԼԱՅ Ոստիկանը՝ որ առաջին նուագին խաղա-
ղութեամբ ներս մտաւ Հայաստան, և Հայերիցը ըն-
դունելութիւն դտաւ, կամաց կամաց սկսաւ երեսի
դիմակը հանել, նախարարներուն բռնուտել, և նոցա
ստացուածքը ձեռքերէն յափշտակել ։ Յետոյ բռնեց Սա-
հակ կաթողիկոսին-էլ և Սմբատ Բագրատունի Բիւրա-
տեանին-էլ՝ որ Հայոց սպարապետ էր, և ուղարկեց
Գամասկոս քաղաք, ուր որ ամիրապետներու աթոռա-
նիստն էր, և ապա սկսաւ մեծ մեծ եկեղեցիները կո-

դուպլետը և նոցա գանձերը և զարդերը աւարի առնուլ :
Եւ վերջապէս Գաւիթ Գրենեցուն-էլ հաւատքի հա-
մար նահատակեց : Այս ամէնը սրտասեցաւ 693
թուին, որ սարի որ Սմբատ Բագրատունին-էլ փա-
խաւ Գամակուէն և եկաւ Հայաստան :

Սմբատ Բագրատունին տեսնելով՝ որ Աբղլլայի
չարութիւնները անցել են շափէն, խորհուրդ արաւ
միւս իշխաններու հետ, և մանաւանդ Ներսէս Կամ-
սարական Պատրիկի հետ՝ որ Աբղլլայի անօրութենէն
խոյս տալով՝ փախել էր Տայոց երկիր, (Աստղիտա-հողմ) .
գետարան ուղարկեց Յուսախանու կայսեր մօտ, և օգնու-
թիւն խնդրեց : Այս օգնութիւնը՝ եթէ Հայոց ազդէն
ուղենային, աւելի լաւ կ'անէին, բայց Ներսէս Կամսա-
րական և Սմբատ Բագրատունի օտարացեղ էին, Հայկ-
աղն նախարարներու ծածուկ թշնամի, նրանք երբեմն
Յունաց և երբեմն Հագարացոց կողմն էին ընկնում,
որ աշխարքը իրանց ձեռին մնայ, այս սրտաճառաւ Հայ-
կաղն նախարարներն-էլ նոցա մտերմութիւն չէին ա-
նում : Կայսրը՝ որ միայն մէկ այդպիսի առիթի էր
սպասում, խկոյն ուղարկեց Հայաստան Ղեմետիտս մեծ
իշխանին շատ զօրքով : Գեռ ևս Յունաց զօրքը չէին
հասել Հայաստան, որ Սմբատ Բագրատունին իւր հօ-
րեղբորորդւոց Աշոտի և Վարդի և մէկ քանի նախա-
րարներու հետ միասին դնաց Վարդանակերտ քաղաք :
Աբղլլայ-էլ, որ խնացել էր Սմբատի գալը Գամա-
կուէն, և Յունաց հետ բանադնաց լինիլը, և Վարդա-
նակերտի կողմը ճանփորդութիւն անելը, հինգ հա-
զար զօրք առաւ, և դնաց նորա յետևէն, որ նրան բռնէ :

Աբղլլայ մեկնեցաւ Գուինէն, Յունաց զօրքը հասան
Արարատ, և Աբղլլայի և նորա մեծամեծաց տուները
բանդեցին և կործանեցին, և սկսան Աբղլլայի յետևէն
երթալ : Աբղլլայ և Յունաց զօրքը համարեալ թէ միա-

սին Տասան Վարդանակերտ. և երբ սրտերազմը բա-
ցուեցաւ, Յունաց և Հայոց զօրքը կոտորեցին Հազար-
այոցոց, մի միայն Աբղէլայ ազնւոտեցաւ, և փախաւ
Գամասկոս 694 թուին: Երբ որ Լէոնտիսա՝ կայսր դա-
ռաւ, Սմբատ Բագրատունւոյն տուեց կիւրապաղա-
տութիւն, սա-էլ գնաց Տայոց աշխարք, և այն տեղէն
էր խնամք տանում աղգին: Մրուան Ամիրապետը երբ
որ մէկ պարսապ ժամանակ դտաւ, 702 թուին ուղար-
կեց Հայաստան շատ զօրք, որն որ յանձնել էր իւր
մեծ զօրավարին Մոհամատ Ագբային: Երեսէ՛հ Կամսա-
րականը տեսնելով՝ որ Մոհամատ Ագբան եկել է, և
Վանանդայ կողմերը քարոքանդ է անում, միարա-
նուեցաւ Սմբատ Բագրատունւոց հետ, և Վանանդայ
երկրէն շատ զօրք ժողովելով՝ յանկարծ հասաւ Մոհ-
մատի վրայ, և կոտորեց նորա զօրքը, մինչև որ Մոհ-
մատ հաղիւ կարողացաւ իւր գլուխը աղտտել: Երբ
որ եկաւ Մոհամատ Ամիրապետի մօտ, դրդուեց նորա
բարկութիւնը Հայերու դէմ, և նորա հրամանաւ շատ
զօրք ժողովեց, և սկսաւ գալ Հայաստանի վրայ: և ուր
Սմբատ իմանալով որ Մոհամատ դալիւ է, շուտով
մարդ ուղարկեց Գամասկոս Սահակ կաթողիկոսի մօտ,
որ դեռ ևս գերութեան մէջ էր, որ մէկ հաշտութեան
հնար գտնէ: Սահակ կաթողիկոսն-էլ հրաման խնդրեց
Մոհամատէն՝ որ թոյլ տայ իրան գնալ նորա մօտ: Մոհ-
մատ հրաման տուեց, Սահակ կաթողիկոս գնաց, բայց
ճանապարհին հիւանդացաւ, և իւր աղաչանքը թղթի
վրայ գրեց, և բռնեց ձեռի մէջ, և հրամայեց իւր
սարկաւաղներուն՝ որ գազաղով տանին Մոհամատի
տոջև: Մոհամատ՝ վախճանած կաթողիկոսի ձեռքէն
տանալով աղաչանաց գիրը՝ հաշտուեցաւ, և Հայա-
ստանէն հեռացաւ նորա վրէժը: Այլ երբ Մրուան
Ամիրապետը մեռաւ, և նորա տեղ Ամիրապետ նստաւ

Արդւոյն՝ Հայաստանի ոստիկանը, Մոհամատայ հաշտութիւնը չյօժարեց, և Վարդանազանի հարուածոյ վրէժը առնուլ կամենալով՝ հրաման գրեց Վաշմ գորավարին՝ որ Նախիջևան էր նստած, և նրան յանձնելով Հայաստանի ոստիկանութիւնը՝ հրամայեց, որ Հայերու մեծամեծաց կորուստ մատնէ, և Հայաստանը նուաճէ, որ միւսանգամ չըկարողանայ գորանալ:

Վաշմ ոստիկանը այս անօրէն հրամանը որ առաւ, հրաւիրեց Հայոց իշխաններուն Նախիջևան դալ, որպէս թէ նոր Ամիրապետէն պիտի նրանց շնորհարարութիւն լինի: Հայերը՝ որովհետև Մոհամատ Ագբայի հաշտութենէն վստահութիւն էին ստացել, անկասկած դնացին Նախիջևան, և Վաշմ ոստիկանը հրամայեց նրանց երթալ եկեղեցի, և հաւատարմութեան երդումն անել: Երբ որ Հայոց իշխանները մտան եկեղեցի, դռները փակեցին Հադարացիք, և կրակ տուին, և այսպէս մէկ օրուան մէջ Հայաստանի ծաղկունքը տոչորուեցան: Սորամէն-էլ յետ Գուին քաղաքն-էլ առաւ Վաշմ, և շատ աւերած և կոտորած արին, և շատ գերի տարան Գամասկոս:

Այս գերիները յետոյ 717 թուին՝ երբոր նստաւ Ամիրապետ Օմարը, նորա թոյլտուութեամբ յետ դարձան Վիլթ ոստիկանի հետ, որ Վաշմի տեղը յաջորդեց: Վիլթի փոխանակ եկաւ Մահմետ 727 թուին, որ շատ նեղութիւն տուեց Հայերուն, և նորա տեղ Հայերը խնդրեցին Արդւոզիլ ոստիկանին, որ 732 էն մինչև 742 ոստիկանութիւն արաւ:

(743—859. ա. թ. 117):

Մրուան, Եղիզ, Սիւլէման, Պէքիբ, Հասան, Եղիա, Խուզիմայ, Հու,
Սպուսէթ, Բուխայ:

Արդ լազիկ ոտիկանի մահէն յետ՝ Հայաստանի ոտիկան կարգուեցաւ Մրուան, որ Աշոտ Բագրատունիին պատուանուն տուեց իշխանաց իշխան: Երբ որ Հագարացւոյ մէջ խռովութիւն ընկաւ, Մրուան Աշոտ Բագրատունւոյ օգնութեամբ այնքան քաջութիւններ արաւ, մինչև որ հասաւ Ամիրապետութեան, և իւր երախտագիտութիւնը յայտնել կամելով շատ և մեծ մեծ պարգևներ ընծայեց Աշոտին, և նորա իշխանութիւնը աւելի ընդարձակեց: Սա է արմատ Բագրատունեաց հարստութեան թէ Հայաստանի մէջ և թէ Արաստանի. ունէր երկու որդիք Սմբատ և Վասակ: Սմբատայ որդի էր քաջն Աշոտ Տաղի: Աշոտ մսակերի որդի էր Սմբատ Խոստովանող՝ Ասլարատ մականուանեալ, և Սմբատայ Խոստովանողի որդի էր Աշոտ առաջին թագաւոր Բագրատունեաց: Վասակի որդի էր Ատրներսէս: Ատրներսէսի որդի էր Աշոտ, որ փեսայացաւ Վրաց, և Վրաստանի մէջ կալուածներ ստացաւ, և Ամիրապետէն Վրաց աշխարհի մեծ իշխան կարգուեցաւ, և կայսերէն՝ կիւրապաղատութեան անուն սուաւ. սորա Բագարատ որդւոյ թոռն Ատրներսէսը՝ Սմբատայ Հայոց թագաւորի ձեռնստուութեամբ Վրաց թագաւոր պսակուեցաւ: Երբ որ ա-

միրազերտ դառաւ Սլմանսուր Արու-Չափար, (Ար-
բասեան), Հայաստանի վրայ ծանր հարկեր դրեց,
և Եղևոր՝ որ Մրուանի տեղ: 758 թուին ոստիկան
կարգուեց շատ նեղութիւններ տուեց Հայերուն, և
կեղեքեց չարաչար: Այլ Եղևոր 760 թուին հրաման
ստացաւ՝ որ երթայ Բաղատա, ուր որ Սլմանսուր
փոխել էր Գամասկուէն իւր աթոռը, և իւր տեղը
թողեց Սահակ Պատրիկին՝ (որ Բագարան Բաղրատու-
նւոյ որդին էր)՝ հրամանատար Հայաստանի վրայ: Եւ
Վեց տարիէն յետ կարգուեցաւ ոստիկան Սիւլէյ-
ման, որ սրովհետեւ Սիոն կաթողիկոսի բարեկամն էր,
ինամբով կառավարեց Հայաստանը: Այլ Պէքիրոս ոս-
տիկանը՝ որ 769 թուին յաջորդեց Սիւլէյմանի տեղը՝
շատ նեղութիւններ հասուց Հայերին: Հայոց ազդէն
ոմանք ջրհարողանալով տանել այն տառապանաց, յար-
ձակեցան Պէքիրի զօրաց վրայ և կոտորեցին: Պէքիր
օգնութիւն ունեց միջուգերաց Մուսի իշխանէն, և նա
շուտով ուղարկեց շատ զօրք, որ եկան և երկիրը տակն
ու վրայ արին, և 770 թուին բռնեցին Սահակ Պատ-
րիկին, և տարան Մուսիի մօտ: Մուսին էլ իսկոյն
սպանել տուեց նրան, և նորա բոլոր գանձերը յա-
փշտակեց: Եւ իսկոյն զհամանոս մասն յամսոյ շումաս
Պէքիրի տեղ ոստիկան եկաւ Հայաստան Հաօան
անունով մէկ անողորմ բռնաւոր, որ քան զՊէքիրը
աւելի անդթութիւններ սկսաւ անել: Մորա չարու-
թեանը չը իմանալով Մուշեղ Մամիկոնեանը՝ ոտքի
կանգնեցուց մէկ քանի Հայերի, և ոստիկանի վրայ
յարձակելով Գուկնէն դուրս արաւ, և շատ զօրք կո-
տորեց, բայց Հագարացիք մեծ բազմութեամբ արշա-
ւելով Հայերուն ջարդեցին: Այլ այս սկիզբն եղաւ
Բագրատունեաց յանաջանալուն: Եւ իսկոյն յամսոյ
Որովհետեւ Հագարացիք՝ որ Մուշեղ Մամիկոնեանին

վանեցին, սկսուն ներս մտնել դէպի խորին Հայաստան.
այս սրտաճառաւ ամեն մէկ նախարարք սկսան իրանց
երկիրները սրահալանել : Սմբատ Բագրատունիի որդի-
քըն-էլ՝ Աշոտ մտակեր և Շապուհ՝ իրանց բնիկ Սպեր
գաւառին սրահալանութիւն արին, և 782 թուին Աշո-
տայ և Տաշրոց գաւառումը Հագարացոց վրայ մեծ
յաղթութիւն արին : Երբ որ այս յաջողեցաւ՝ Աշոտ
ու Շապուհ Բագրատունիք վաղեցին դէպի Շիրակայ
երկիրը՝ Արշարունիք ասած տեղը, և այն կողմերէն
Տալաճեցին որքան Հագարացիք որ կային, և աւելի
վատասութիւն դանելով՝ շատ գանձ տուին Կամսա-
րականներուն, և նրանցմէն դնելով ստացան Շիրակ
գաւառը. և Աշոտ այն տեղ շինեց երկրորդ Անի քա-
ղաքը. (ստորին էր Անի ամրոցը Կամսարոս) : և իւր ընտա-
նիքը այն տեղ բնակեցուց : Յետոյ Աղիովաթի բնակիչ-
ներուն հասուց օղնութեան ձեռն, և առեց նրանց
բնակութեան տեղ Տայրց աշխարհումը, և Դուինի կող-
մերումն-էլ շատ քաջութիւններ արաւ : Բայց երբ Ամի-
րապետ նստաւ Հարոն-Ալ-Ռաշիդ, 786 թուին ուսի-
կան ուղարկեց Հայաստան Եղիտին, որ բոլոր երկիրը
քաջեց Ամիրապետի իշխանութեան ներքոյ. և իւր եօթ-
նամեայ իշխանութեան ժամանակը երկելի հանդիսա-
ցուց անդթութեամբ և բռնութեամբ, մինչ Հարոն-
Ալ-Ռաշիդը հռչակուած էր իւր քաղցրութեամբ և
արգարագատութեամբ :

Դեռ ևս Եղիտ իւր բարբարոսութիւնը չէր շափառ-
րել, որ հասաւ Հայաստանի վրայ մէկ արիւշ փորձու-
թիւն : Հարոն-Ալ-Ռաշիդ Ամիրապետը՝ Հայաստանը
տուեց իւր եղբօրը Օբէիդ-Ալլային, և նա ուղարկեց
հարկահասն Հայաստանի վրայ Իսկնդոկը ուրացող Հոռո-
մին : Սա ու Եղիտ ուսիկանը այնքան խռտանդեցին
Հայերուն, որ այս սղորմելիքը անձարացած թողին

Հայաստանը՝ և տառնուերկու՝ հազար հոգի Շապուհ
Ամատունւոյ և նորա որդւոյ՝ Համամի առաջնորդու-
թեամբ գնացին՝ Յունաց երկիր, և թէպէտ խնդրուիլ
հարկահանը նրանց յետեւն զօրք հասուց, բայց Հայերը
նրանց կոտորեցին, և իրանք իրանց ճանփան գնացին:

Հարոն-Ս. Առաջիդ՝ Եզիտի տեղ ուղարկեց Հայաս-
տան՝ Խուզիմայ ոստիկանին, 798 թուին, որ առաջ
փոքր ինչ թեթեացուց Հայերու ներութիւնը, բայց
յետոյ՝ ևս առաւել ծանրացուց՝ երբ որ սկսաւ Էջ-
միածնի կալուածներու վրայ աչք դնել, և իններորդ
դարը լուսացաւ Հայերու համար դառնագուշակ նը-
շաններով: Հարոն-Ս. Առաջիդի առաքինութիւնները
չկարողացան Հայաստանը ապահովել ոստիկաններու
եղեռնագործութիւններէն, և արտաքին թշնամեաց ար-
շաւանքը և ասպատակութիւնը քարուքանդ էին անում
աշխարհը, որպէս թէ աթոռի վրայ մէկ անպիտան
մարդ էր նստած: Ոստիկանները միայն այն հոգսը ու-
նէին որ Հայերը նուաճուած լինին, և բնաւ փոյթ չէր
նրանց՝ եթէ որ իրանց ձեռքի տակ հպատակ Հայե-
րուն օտար աղգերն-էլ կոտորէին, կողոպտէին, և
գերէին:

Խուզիմայ մեռաւ: Միջագետաց կողմէն եկան այ-
լայլգիք, և սկսան քարուքանդ անել աշխարհը: Ուր
էր Ամիրապետի պաշտպանութիւնը. սոքա-էլ նոյն
ճանապարհն էին բռնել՝ ինչպէս որ Յոյնք, որ Հայերը
նրանց հնազանդ լինին, հպատակ լինին, հարկատու
լինին, բայց թշնամեաց դէմ իրանք կանգնին. եթէ
կոտորուին՝ լաւ է, այլ եթէ յաղթեն՝ նոցա նախանձը
և յաջաղանքը շարժեն, և թշնամեաց սուրէն ազատ-
ւածը զոհ լինի նորա նախանձուն, որոյ օգտի համար
նոքա իրանց կեանքը վտանգի մէջ էին դրել:

Խուզիմայ ոստիկանի տեղ եկաւ Հոլ, որ մէկ իսա-

ղաղարար մարդ էր, և Ամիրապետի Տրամանով բերեց
Հայաստան Աշոտի որդուն Սմբատին, որ 818 թուին
սպարապետ Հայոց կարգուեցաւ, և Աղլարաւ էր ան-
վում, (որովհետեւ մէկ որդին Սբատը շատ քաջ էր,
և Սմբատին նրոց անունով Այստի հայր էին կոչում,
քաջ էին նորա երկու որդիքն էլ Աշոտ և Սաճւ, և
Աշոտ յետ ժամանակոց դասու առաջին թագաւոր
Բագրատունեաց): Այս Սմբատ սպարապետը միաբան-
վեցաւ Սեադայ բանուորի հետ, և պատերազմեցաւ
Հոլ ոստիկանի դէմ, բայց յաղթու թիւնը մնաց ոստի-
կանի հետ, և Սմբատ պարտաւ որսուեցաւ հաշտու թիւն
խնդրել: Երբ որ Ամիրապետը Հոլ ոստիկանին Հայա-
ստանէն կանչեց Բաղտատ, Սմբատ սպարապետը միջ-
նորդեց Ամիրապետի առջև, որ Բաղարատ Բաղրա-
տունին Հայաստանի Պարսիկ կարգուի: Ամիրապետը
յօժարեցաւ, և Բաղարատ Բաղրատունին, որ մէկ
հզօր և երկելի մարդ էր, և Սիմ լերին կաղնը ունէր
լայնածաւալ կալուածներ, Հայաստանի Տրամանատա-
րու թիւնը ստացաւ:

Նաղարատ Բագրատունու 4-դ տարին (839), մէկ
Բարան անունով Պարսիկ իշխան Բաղտատումը բնակ-
ված, կամենալով Հաղարացոց տէրութիւնը Պարսից
ձեռքը անցուցանել, ապաամբուեցաւ Ամիրապետէն,
և սկսաւ շատ երկիրներ վտարանջեցնել: Մտուն
Ամիրապետը Բարանի դէմ զօրք հանեց, այլ Բարան
այն զօրքը ցրուեց, և ինքը սկսաւ Ամիրապետի վրայ
երթալ: Այն օրերը Ամիրապետի մօտ էր Մանուէլ
Հայկազն քաջ զօրավարը, որ Ամիրապետի Տրամա-
նով գորս եկաւ Բարանի դէմ, և նորա զօրութիւնը
խորտակեց:

Մտաւ Մուսն ամիրապետը, և նորա տեղ նստաւ
Աբու-Զաֆար: Սմբատ սպարապետը իմացում տուեց

Արու-Ջաֆար նոր Ամիրապետին, որ Բարան զօրք է
 դուստրել քան զառաջինն աւելի: Ամիրապետը ուղար-
 կեց Բարանի դէմ իւր մեծ զօրապետին Աֆշինին, և
 Սմբատ սպարապետը մէկ գունդ Հայկազն պրուծի
 Տետը առած նիղակակից դառաւ Հաղարացուց՝ Բարանի
 դէմ: Արարատայ կողմը մեծ պատերազմ խմբեցաւ,
 և բռնաւորի զօրքը խորտակուեցան, և ինքն Բարանն
 էլ կամենում էր վախճիլ, բայց Սմբատ սպարապետի
 որդին Սաճլ՝ մէկ քանի ձիաւորով բնկաւ յետեւն, և
 բռնեց, և բերեց Աֆշինի առջև: Աֆշին՝ շատ ունկի
 ու արծաթ պարգևեց Սաճլին, և երբ դնաց Բաղաւաճ
 Ամիրապետի առջևը շատ գովաւանու թիւն խօսեցաւ
 Սաճլի ու Սմբատ սպարապետի համար, բայց Բագար-
 ատ Բագարատունի Պատրիկի կողմէն շատ չարախօ-
 սութիւն արեց:

Ամիրապետը Բագարատ Բագրատունիի դէմ ոխ ու-
 նենալով՝ ուղարկեց Ապուսէթ սատիկանին 848 թուին,
 որ Բագարատին սրտով: Ապուսէթ եկաւ Տարօն, և
 հրաւիրեց իւր մօտ Բագարատին: Բագարատ միամը-
 տութեամբ դնաց Ապուսէթի մօտ, նա-էլ նրան կապել
 տուեց, և ուղարկեց Ամիրապետի դուռը: Սիմ լերին
 բնակիչքը՝ որ Սասուն էին աւելում, լսելով Բագա-
 րատի իրանց բնիկ իշխանի վտարանդութիւնը, Ապու-
 սէթ սատիկանին սպանեցին, և նորա զօրքը ցրուեցին:

Լսեց Ամիրապետը Սասունցոց արածը և Ապուսէ-
 թի մահը, ուղարկեց Բուղայ անգութ սատիկանին ան-
 համար զօրքով, որ Հայերուն բնաջինջ անէ: Բուղայ
 հասաւ Տարօն 850 թուին, և սկսաւ Ամիրապետի հը-
 րամանը կատարել անօրինակ խստութեամբ. բռնուոնց
 մեծամեծաց և կապեց, և ով որ չկամեցաւ մահմէտա-
 կան օրէնքը յանձն առնուլ, անխնայ կոտորեց. ո՛չ բնդ-
 դէմ կեցողը ազատուեցաւ, ո՛չ հնազանդուողը, ո՛չ քա-

րը, ոչ փայտը, ամեն տեղ տիրեց մահ և ապական-
ութիւն:

Սմբատ սպարապետը տեսնելով որ անհնարին է
Բուղայի դէմ կանգնիլ, գնաց ընդ առաջ և դառաւ
նորա խորհրդակից և գործակից այնպէս՝ որ Բուղայ
այնուհետև որքան անսպասելի վնասներ հասցրուց
Հայաստանին և Հայերուն, ամենի մէջ մասնակից էր
այս Սմբատը: Սորա տուած վնասները աւելի մեծ էին,
քանզ Մեհրուժան Արծրունիի և Վասակ Սիւնիի տը-
ւածները, բայց զանազանութիւնը այնքան էր, որ սա-
քրիստոնէական հաւատքը չուրացաւ: Արուհետև Բու-
ղայ երբ որ ձերբակալ արաւ Հայոց իշխաններուն և
պիտի դառնար դէպի Բաղտատ իւր հետը տարաւ
Սմբատ սպարապետին-էլ, և Հայաստանի վերակացու
կարգեց Շեխի պարսիկին, Ամիրապետը Սմբատ Բաղ-
րատունուն-էլ՝ հրամայեց դնել քանո, և նա քանտի
մէջ վախճանեցաւ, և ասուեցաւ խոստովանող՝ որպէս
թէ ապաշխարող:

ՅՈՒՆԱՍՏԱՆՈՒՄԸ ՀԱՆԴԻՍԱՅԱԾ ՀԱՅԵՐԸ:

16

Տաճառ, Հայկազն, Ներսէս Պատրիկ մեծ, Ներսէս Բաննցի, Արաման,
Մօզիկ, և այլք:

Մինչև այս տեղ տեսանք Հայաստանի աներութիւնը
և ապականութիւնը ինչ որ քաշեց Պարսից, Յունաց
և Հարգարացուոց ձեռքէն, այժմ այս անցքերու վրայ

փոքր ինչ խորհրդածութիւն անենք, թէ իրաւ Հայերը
տկարացել էին, թէ մէկ ծածուկ միտք կար, որ Հայե-
րու ձեռքը կապում կաշկանդում էր: Մարդպաններու
և ոստիկաններու ժամանակը միայն երևելի էին Հայա-
ստանի մէջ Մամիկոնեան և Բաղրատունեաց ցեղապե-
տութիւնները, և որովհետև սոքա օտարացեղ էին,
Հայերը նրանց չէին սիրում, այն պատճառաւ նրանց
չէին-էլ օգնում: Ա՛ւր էին ապա այն ժամանակները
Հայկազն իշխանք և նախարարք: Արտաքոյ Հայաստանի:
Այս-էլ Հայերուն սովորեցուցին օտարացեղ նախարար-
ները: Տեսանք որ Վարդան Մամիկոնեանը՝ որ առաջ
մէկ անգամ դեռ Արշակունեաց թագաւորութեան ժա-
մանակն էր գնացել Յունաստան, որ Ստրատելատու-
թիւն էլ առաւ, յետոյ միւսանգամ էլի գնաց օգնու-
թիւն խնդրելու Պարսից դէմ: Քաղկեդոնի ժողովքի
պատճառաւ երբ որ Հայերու և Յունաց մէջ ընկաւ
մէքիչ սառնութիւն, Հայերը մէկ վախժուէն, եօթանա-
սուն տարւոյ չափ ուտքերը քաշեցին Յունաց երկիրնե-
ներէն: Մէծ Գնունիի մարդպանութեան օրերը Յու-
նաց կայսր նստաւ Մեծն Յուստինիանոս, (որ կոնստան-
տինուպօլսումը շինեց Այա-Սոփիա սբանջելակերտ տա-
ճարը): Սորա ժամանակին, որովհետև պատերազմ կար
Յունաց և Պարսից մէջ, Հայոց քաջերը թողնում էին
Հայաստանը, և գալիս էին Յունաստան, և կայսեր
բանակի մէջ զինուորում: Կայսրը մէկ առանձին յարգ
ու մեծարանք սկսաւ ցոյց տալ Հայերուն: Թէոդորայ
կայսերուհւոյ քոյր կոմեատնէ գշտոյն տուեց ի կնու-
թիւն Տաճատ Հայկազն նախարարին, և կարգեց նրան
փոխարքայ Յունաց բաժնի Հայաստանին՝ նրան յանձ-
նելով և Հայոց այն կողմերու զօրքը:

Յուստինիանոսի մօտ էր և Ներսէս Պատրիկը Հայ-
կազն, որ Բելիսարիոս զօրավարի համապատիւ դիւ-

ցաղն էր, և նորա նման հռչակուած: Յետոյ եկաւ Ներսէս նախարար Բաննցի (երկու եղբարքք Հրահատաւ և Սահակաւ), որ Ալէքսանդրիայի կողմը կուսակաւ դրուեցաւ: Եմաւոն նախարարն էլ եկաւ, և բարձր Հայոց իշխանութիւնը առաւ, և նորա մահէն յետ ժառանգեց այն Համադասաւին: Բայց երբոր Ահակիոս Յոյն իշխանը 536 թուին թողնուու թեամբ կայսեր սպանեց Համադասաւին, և նորա իշխանութիւնը ձեռքը առաւ, և սկսաւ աւելի բռնանալ, Հայերը վտարանջեցին կայսերէն, և նոցա գլխաւորքք Յոհան Արշակունի և նորա որդին Արտաւանը սպանեցին Ահակիոսին, և անցան Պարսից բաժնի Հայաստան: Թէպէտ կայսրը ուղարկեց Սիդդա զօրավարին՝ որ Հայերուն նուաճէ, այլ Հայերը Յունաց զօրքը ջարդեցին, և Արտաւան սպանեց Սիդդային, և մնացածներուն հարձական արին 537 թուին: Եւ զգալ տասնութու Յունստինիանոս կայսրը շատ բարկացաւ, և մէկ Բուղանուսով իշխան ուղարկեց՝ որ հնարքով բռնասէ Սիդդայի սպանողներուն: Բուղը եկաւ Բարձր Հայք, և սպանդամ ուղարկեց Հայոց իշխաններու մօտ, որ հաւաքիին իւր կշտին հաշտութիւն անելու համար: Հայերը չեկան, որովհետեւ կասկած ունէին նենդութեան: Բայց Յովհաննէս իշխանը Արտաւանոյ հայրը՝ որովհետեւ բարեկամ էր Բուղայ եկաւ համարձակ մէկ քանի մարդով: և Բուղ սպանեց նրան: Հայերը այն պատճառով Պարսից հետ միացան և գրդեցին Խոսրովին, որ Յունաց դէմ պատերազմ սկսեց 538 թուին և 539 ին առաւ Սարգսուպօլիս քաղաքը: Այլ երբ Պարսիկք սկսան Հայերու հետ արհամարհու թեամբ վարուիլ, Հայերը կրկին դարձան 542 թուին Յունաց կողմը, և Խոսրովին նեղ աւել գձեցին: Այս պատերազմներու ժամանակը երեւելի հանդիսացաւ Յովհաննէս քօշ Հայ-

րօնոյ Մուշեղ Մամիկոնեանը, որ 584 թուէն սկսած զօրավար էր Յունաց, և շատ քաջութիւններով էր հանդիսացած:

Մուշեղի նման էր և Ներսէ՛ճ Բասենցոյ որդի Ներսէս կրտսերը, որ Մօրիկ կայսեր հրամանաւ 590 թուին գնաց Պարսից դէմ՝ խօսրովին օգնութիւն, որում նիզակակից եղան և Մուշեղ Մամիկոնեան, և Սմբատ րազմայաղթ և խութայ Սասնոյ իշխանը, որ 591 թուին Վահրամ ապրտամբին սպանեցին, և խօսրովին իւր գահումը հաստատեցին:

Հերակլ կայսեր ժամանակը 620 թուին կար նրայ բանակումը Մէ՛ժ Գնունի ծուր Մէ՛ժ, որ մեծ մեծ քաջութիւններ արաւ, և Գոնդավ Պարսից զօրավարին բռնեց, և երբ Կոնստանդ կայսրը Հերակլի թուր մեռաւ՝ Մէ՛ժ 667 թուին ընտրուեցաւ կայսր Սիրակուզայ քաղաքի մէջ. բայց երկար չտիրեց:

Լեոն Խաւրացի կայսրն Յունաց իւր դուստրը Աննայ տուել էր ի կնութիւն Արտաւազդ Հայկազն իշխանին, որուն՝ Լեոնի որդւոյ Կոնստանտին Կոպրոնիմոսի ժամանակը՝ Յոյնք կայսր ընտրեցին 742 թուին, և նորա որդին Նիկետ և Հայկազն Տրդատ պատրիկը պատերազմեցան Կոպրոնիմոսի դէմ: Այս պատահեցաւ Մրուան ոստիկանի իշխանութեան առաջին տարին: Երբ որ Յունաց կայսր նստան Երինէ և իւր որդին Կոնստանտին, Երինէ՛ իւր որդւոյ համար 788 թուին ի հարսնութիւն հրաւիրեց Հայկազն Փիլարետի դուստր Մարիամ դշխոյին, որոց ամուսնութենէն ծնաւ Եփրոսինէ դշխոյն: Այս պատճառաւ Հայերը սիրեցին Կոնստանտին կայսեր: Այլ որովհետեւ Երինէ լռնացաւ, և իւր որդւոյն նշկահեց, Հայերը իրանց գլուխ ընտրեցին Հայկազն զօրավար Ալեքս Մուշեղին, և ապրտամբուեցան Երինէէն, և Կոնստանտինին թաղաւորեցրին 791 թուին:

Վիկիփորոս բռնաւորի ժամանակը Յոյնք շատ նեղանալով ընտրեցին կայսր իւրեանց զօրավար Վարդան Հայկազն Պատրիկին 802 թուին: Յետ այսորիկ 807 թուին ընտրուեցաւ կայսր Արշաւիր դանձապետ Հայ Պատրիկը. իսկ 811 թուին Միքայէլ Ռանդապ կայսրը կամովին հրաժարուեցաւ ակթուէն, և կայսր նշատաւ Արշաւիրի փեսան՝ Վարդի որդին Լևոն Արծրունին 813 թուին:

Թուլաւա Միքայէլ կայսեր որդին Թէոփիլոս կայսրը 829 թուին եկաւ Հայաստան, և այն տեղ Շապուհեան Աշոտին, որ Աշոտ Մսակերի եղբոր որդին էր՝ կարգեց Հիւսպատոս և Պատրիկ Սպերայ և նորա մերձակայ դաւառներուն, և հարօնումը տեսաւ Մուշեղ Յրօնեցուն՝ շատ սիրեց նրան, և հետը առաւ տարաւ Կոնստանտինուպօլիս 830 թուին: Մուշեղ շատ հաւատարմութիւն ցոյց տալով կայսեր փեսայացաւ նրան, բայց Յունաց յաշաղկոտութենէն շատ նեղութիւններ քաշեց:

Լևոն և Միքայէլ կայսերաց ժամանակէն՝ կայսերական դրանը կայր Մանուէլ Հայկազն, որ ոմանք սխալմամբ Մամիկոնեան էին ասում: Այս Մանուէլը կարգուել էր կայսերէն ստարապետ արևելեան զօրաց, որ մեծ մեծ յաղթութիւններ արին նորա առաջնորդութեամբ: Եւ մէկ օր՝ երբոր կայսրը պիտի դերի ընկնէր, Մանուէլ հասաւ և ազատեց: Այլ երբ իմացաւ թէ կայսրը չարախօսութիւններու ականջ դնելով ուղում է իրան դաւաճանել, դնաց Հագարացոց մօտ, 838 թուին: Բայց Թէոփիլոս կայսրը ուղարկեց նորա յետեւէն իւր հաւատարիմ Յովհաննէս Սիւնկելոսին, որ կարողացաւ Մանուէլի սիրտը շահելով համոզել և յետ դարձուցանել Յունաստան 840 թուին: Երբոր մեռաւ Թէոփիլոս կայսրը և թագաւորեց նորա որդին Միքայէլը, Մանուէլը հողաբարձու էր թագաւորին և

Թագաւորութեան 842 թուին սկսած մինչև իւր
 մահը : յախարհը բնական զայն միջոցով իրանց
 Այս ամեն յեղանակսն թիւները սրտաբանութեամբ էին
 վասիլ Արշակունց թագաւորութիւնը, որ սկսի հա-
 ռիւր վաթսուէն տարի շարունակուէր նորա աղգաստհմի
 մէջ, և կարելի էր թէ այն թագաւորեալ տունը մէկ
 այնքան ևս ժամանակ տուէր, և դարձեալ Հայերու ձեռքը
 մտար, եթէ Բագրատունեաց թագաւորութիւնը չըն-
 ձիւղէր Հայաստան, և Հայերը չընկալին երեսները դէպի
 իւրեանց հայրենիքը դարձնել, ուր որ նոցա ստանում
 էր կորուստ օտարացեղ նախարարներէն, և օտարա-
 ցեղ թագաւորութիւնէն, որ Հաղարացոց և Յունաց
 ձեռին քաջացարմար դործի դառան Հայաստանը կրու-
 կին ու կրկին կործանելու համար: Մենք սկսինք այս
 տեղ տեղեկութիւն տալ համարձակութեամբ Բագրատու-
 նեաց և Արծրունեաց ցեղերու համար, որ այս միջոց
 պիտի Հայաստանը պատուին՝ աղգին ապարազ ա-
 նելու համար:

ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ ԲԱՔՐԱՏՈՒՆԵՍ:

(885—1045 թթ. 160):

17

Այս թագաւորութիւնը՝ որ ինչպէս մէկ աստ միտի-
 թարսն թեան ինձոր գրորուցան աղգի առջև, միջա-
 հատ կարելով երկարանուն դառնակակիծ ներու թեան
 թելը, (որովհետև Հայաստան՝ Պարսից իշխանութեան

տակը ընկնելէն յետ՝ համարեալ թէ շարունակ հինգ
հարիւր տարի, հաշուելով Խոսրովի որդւոյ Տիրանի
օրէն՝ մինչև Աշոտ 1-դ. անպատմելի չարակրութիւն-
ներու տեսարան էր դարձել), զարմանք է՝ թէ ինչ-
պէս է խաբել պատմագիրներուն, որ նորա-էլ կարո-
ղացել են ազգին խաբել այնքան՝ որ Հայերը իրանց
համար պարծանք են համարել թէ՝ թէպէտ Արշակու-
նեաց թագաւորութիւնը կորցրել են նախարարներու
միաբանութեամբ կամ անմիաբանութեամբ, բայց նորա
տեղ հինգ դարերէն յետ ստացել են Բագրատունեաց
թագաւորութիւնը և Անի քաղաքը: Մի միայն մէկ
պատմիչ, թէպէտ կարճ, բայց շատ լաւ է համարու-
տաբանել Բագրատունեաց թագաւորութեան ծագման
և կործանման անցքը՝ գրելով, թէ այս հարստու-
թիւնը այն նպատակով աշխարհի երեսին երկեցաւ,
որ Հայերուն աւելի մեծ կործանմամբի հասցնէ: Երբ
որ այս հակիրճ խօսքը լաւ ծածքէ ընթերցողը, և պատ-
մութեան միտ դնէ, կտեսնէ՝ որ մեծ ճշմարտութիւն-
ներ կան նորա մէջը պահուած: Արշակունեաց թագա-
ւորութիւնը որովհետև հարազատ Հայկազեան ցեղի
տիրապետութիւնն էր, փաստակար էր ազգին, և փա-
սարեր համարուելով՝ վերջացաւ ազգի կամքով: Այ-
նուհետև հայաստանի տեսարանումը մնացին երկելի
միայն Մամիկոնեանք և Բագրատունիք, որ նոյնպէս
օտարացել էին: Մամիկոնեանք թէպէտ շատ անգամ
հանդիսացան ազգասիրութեան ասորիսիսի մէջ, բայց
ազգը չըսիրեց նրանց, մինչև որ Գրիգոր Մամիկոնեանը
մեռաւ, և այնուհետև Մամիկոնեաց տունը բարձաւ
Հայոց աշխարհէն, 856 թուին, և մնաց Հայաստանումը
Բագրատունեաց ցեղը, որ արդէն տիրապետել էին
Մամիկոնեանց կալուածներուն:

Թերևս Արշակունիք Պարթևական տանէն էին, աշ-

խարքի երեսին երևեցան քաջութեամբ, յաղթութեամբ
և մեծ մեծ համբաւներով զարդարուած, դեռ ևս իրանց
անապատներու մէջ դուխա բարձրացներու ժամանակ-
ները՝ ԲաՏԼ գաւառի անունը այնքան էին հռչակել,
որ ԲաՏԼեղանի լեզուն մինչև այսօր մէկ արժանապէս
լեզու է համարուած, և Արարիացի անապատներու
մէջ ԲաՏԼեղանի կամ ՓեՏԼիլան պատուանուն ունին
ամեն քաջարի ըմբիշները և մենամարտները: Եւ
Հայաստանը՝ որ Յունաց Մակեդոնական անդամ-
մութենէն զլուել էր, հարիւր յիսուն տարի նոցա
ձեռքէն ազգի ազգի դառնութիւններ կրելով, զար-
մանք չէր՝ որ յօժարութեամբ ընդունէր Պարթևներուն,
երբ որ յայտնի տեսնում էր, թէ նոքա միայն կարող
զոցան Մակեդոնացւոց ամբարտաւան եղջիւրը խոր-
տակել: Բազրատունիք ինչ էին: Հրէայ: Հրէայք ինչ
էին: Առաջ Եդիպտացոց գերի. Մուէսի և Յեսուի
ձեռքով այն գերութենէն ազատուած՝ Բանանացոց ձեռ-
քը ընկած, անդադար սլալալեաց թուրի տակը նուա-
ձուած. կրօնամոլութեան և անհաւատութեան մէջ
անընդհատ տարուբերուած, Եդիպտացոց, Բանասկա-
ցոց, Ասորեստանեաց, Բաբելացոց և Մովաբացոց և
Ամոնացոց արշաւաններու մէջ շուարուած, Տիրուսի
և Սիդոնի զեղխութեան մէջ զառածուած ազգ: Բազ-
րատունիք՝ որ Բրիտանիա իբր 600 տարի առաջ գերի
բերուեցան Հայաստան, եթէ իրաւի Յուդայի թագա-
ւորական ցեղէն էին, ևս առաւել պիտի ընտել լինէին
թագաւորական տան մէջ տիրապետող ախտերուն և
անառակութիւններուն, որոնց որ խաղալիկ լինելով
Ովեսոց թագաւորի յաջորդները՝ Յովաբազ, Յովակիմ,
Յեքոնիա և Սեդեկիա, ջրի սղալջակի նման երևեցան
և սղայթեցան: Սոքա ինչ էին կարող իրանց ցեղի մէջ
տարրացնել, եթէ ոչ միայն հրէական մոլեռանդու-

Թիւն կրօնի, ուսումնաստեցութիւն, հասարակութիւն,
կամակորութիւն, երկպառակութիւն և անհաշտ ատե-
լութիւն ամենի դէմ՝ ով որ խորայելեան կնիք չունէր
իւր վերայ:

Հրէական ընդարայս դիմայլակը երեսին դրած՝ սո-
ցամէն մէկը Բաղարատ անունով՝ Քրիստոսէն 150 տարի
առաջ իւր կեղծուպատիր շողմարարութեամբ՝ Հայա-
ստանը Արշակունեաց ձեռքը տալու առաջին գործա-
դիրը լինելով այնքան հաճոյացաւ Ասղարշակ Պար-
թեին, որ Խաչատրի և Ասղար անուան ժառանգ դատաւ,
և Բաղրատունեաց ցեղի նահապետ և նախարար կար-
գուեցաւ: Բայց նորա յետնորդաց կրօնամոլութիւնը
չուտ ատելի արաւ նրանց թաղաւորներու աչքին, և
Բաղրատունիք՝ նախարարներու մեջէն աղջիկ առնե-
լու իրանունքէն դրկուեցան (Քրիստոսէն 120 տարի
առաջ): Ետն ժամանակ նոցա անունը չըլտուեցաւ
Հայաստանումը: Արտաշէս 1-դի, և Տիգրան 2-դի և
Միհրդատի քաջագործութեանց և Արտաւաղդ 1-դի
չարարատութեանց հանդէսներու մեջ չերևեցան Բաղ-
րատունիք: Արշամի օրը (Քրիստոսէն 30 տարի առաջ)
երևեցաւ Ենանոս դաւաճանը, որ Հիւրկանոս Հրէից
Քահանայապետին վախցրեց իւր երկիրը: Արգարի
օրը (Քրիստոսի 34 թուին) Տուրիա ասպնջական դա-
ռաւ Թադէոս Առաքելոյն: Յետ այսորիկ (այսինքն Քր-
իստոսի 35 թուին), Բաղրատունիք երևում են Արծ-
րունեաց հետ միասին, որ Արգարու որդւոց Անանի
դէմ Սանատրուկ հակառակաթող թաղաւորի համար
զօրք են ժողովում աղգամիջեան կռիւ բորբոքելու
համար: Երբ որ Սանատրուկ մեռաւ, և աղգը նորա
աղգատոհմը թողեց, և Երուանդին ընտրեց թաղա-
ւոր, Սմբատ Բաղրատունի ասպետը (Քրիստոսի 65
թուին) Սանատրուկի որդոցմէն մէկին Արտաշէս մա-

նուկին փակցրեց, և յետոյ 85 թուին թաղաւորեցուց
Հայաստանի վրայ. որով և ազգամիջեան պատերազմ
ծագեցաւ: Արտաշէսի որդի Տիրան 1-դ՝ իւր Երա-
նեակ դուստրը տուեց Տրդատ Բագրատունւոյն կնու-
թեան 130 թուին: Տրդատ թագաւորի՝ Կոնստանտի-
նոս կայսեր տեսութիւն՝ Հռոմ երթալու ժամանակը
318 թուին՝ Բագրատունեաց նահապետն-էլ այլ մեծա-
մեծաց հետ միասին ճանապարհորդակից էր, և սրա-
մէն յետոյ Բագարատ Բագրատունին չորս դօրաւար-
ներու մէկը դառաւ: Պապ թագաւորի ժամանակը Արմ-
բատ սպարապետը 382 թուին Մեհրուժան Արծրու-
նոյ գլխին հրաշէկ շամփուրէն պատկ բոլորելով սպա-
նեց: Սահակ Բագրատունին Յունաց բաժինէն անցաւ
Խոսրովի մօտ և սպարապետ կարգուեցաւ 396 թուին:
Սմբատ Բագրատունին վերջին Արշակի դէմ ազգա-
միջեան կռիւներ արաւ 399 թուին: Տիրոց Բագրա-
տունին Վասակի համախոհ էր:

Արշակունեաց վերջանալէն յետ Բագրատունիք ոտ-
քերը աւելի սոռաջ դրին: Սահակ Բագրատունին, որ
Մովսէս Խորենացւոյն Հայոց պատմութիւնը գրել տու-
եց, 481 թուին Հայաստանի մարդպան ընտրուեցաւ,
և հաւատոյ համար պատերազմելով նահապետուեցաւ:
Բայց զարմանք է, որ Յովհան Մանդակունի ազգապէր
և քաջ գիտնական Հայրապետը նրան դրած չէ սրբոց
դասը, և Բագրատունեաց ցեղէն մէկ հատը չկայ ան-
նելի: Այս տեղէն յայտնուում է, որ ազգը՝ Բագրա-
տունեաց վրայ նոյն աչքով էր մտիկ տալիս, ինչպէս
որ Արշակունեաց վրայ. և Բագրատունեաց-էլ չսիրեց,
ինչպէս որ Արշակունեաց-էլ չէր սիրել. Բագրատու-
նեաց մէջ-էլ նոյն սրակասութիւնները տեսաւ, ինչ որ
Արշակունեաց մէջը ատել էր:

Նախ և առաջ տեսաւ ազգը՝ որ Բագրատունիք՝

քանի որ ուրիշ նախարարներու հետ մէկ կարգի էին, և մէկ աստիճանի մէջ, լու էին. բայց երբոր ուրիշ նախարարներու, և մանաւանդ Մամիկոնեանց կալուածներով հարստացան և ուրիշ նախարարներու աւերակաց վրայ իրանց ճոխութիւնը և իրանց ուժը աւերացուցին, սկսան առաջագահութեան թեակոխիլ: Մենք տեսանք՝ թէ ինչպէս այս Բագրատունի իշխանաց մէկը (Աշոտ Մասկերի որդի Սմբատ սպարապետը՝ որ Ապլարաս էր մականուանած, և խոստովանող-էլ ասուեցաւ), 850 թուին Բուղայ ոստիկանի առջև սկսաւ երկրորդ Ղաթաղի դերը խաղալ, և նորա մահուան-էլ արժանաւ Բաղտատու մը բանդի մէջ, որով Հայերը սլաւոճառ ունեցան ծաղրաբար նրան խոստովանող անուն ընծայել: Ահա այս Ապլարաս Սմբատ սպարապետի որդին էր Աշոտը, որ երբ հայրը՝ Սմբատ սպարապետը Բուղայ ոստիկանի հետ դնաց Բաղտատ՝ Հայաստանի անհամար աւերածութեան, ասլականութեան, դերութեան և կոտորածի վարձը ստանալու, և այն տեղ բանտը դրուեցաւ, և նորա բանտակից Գրիգոր Մամիկոնեանը փախաւ և եկաւ Հայաստան. Ամիրապետը հրամայեց Ատրպատականի ոստիկան Մահմէտին՝ որ Գրիգոր Մամիկոնեանին դանկ, Մահմէտն-էլ յանձնեց Աշոտին՝ (որ Բուղայի ձեռքը ընկած չէր, և իւր հայրենի ժառանգութիւնը տիրապետում էր՝ Շէխի ոստիկանի իշխանութեան ներքոյ): Աշոտ իրաւ սկսաւ պտրտել առլ Գրիգոր Մամիկոնեանին և դտաւ որ արդէն մեռել էր: Աշոտ մեռելի գլուխը կտրել տուեց, և ուղարկեց Ամիրապետի մօտ, սլարծենալով թէ Գրիգոր Մամիկոնեանը պիտի փախչէր Յունաց երկիր, ես բռնեցի և սպանեցի: Այս ճանապարհով հաճոյացաւ Ամիրապետին և ստացաւ մեծ մեծ սլարդկենք և սլատիւներ, առաջ իւր հօր տեղը կարգուե-

ցաւ սպարապետ. յետոյ որովհետև մեծ կալուածներու
և շատ ճոխութեան տէր էր. կարողացաւ Ամիրապետի
և ոստիկանների սիրտը գրաւել, և իշխանաց իշխան
ասուիլ 859 թուին. և վերջապէս 885 թուին թագա-
ւոր ընտրուիլ. որոյ ընտրութիւնը հաստատեց Արա-
բացոյ Ամիրապետը, և ընդունեց ազգասիրական մլտ-
քով Ասսիւ 1-դ Արշակունի կայսր Յունաց: Բայց այս
ընտրութիւնը համախումբ ազգի միակամ հաճու-
թեամբ գլուխ եկած չէր, այլ միայն մէկ քանի նախա-
րարներու կամքով էր սխառահել: Աշոտ ինքը արժա-
նաւոր մարդ էր, բայց Հայկազն չէր, օտարածին Բագ-
րատունի էր, ինչպէս ազգաւ Հրէայ էր, նոյնպէս և
բարբով և բնաւորութիւնով-էլ. ուղիղ ճանխով չէր Հա-
յաստանի աթոռը տիրել, այլ ծուռնխմուռը լրջմուխի-
ներով: Նա այնպէս սկսաւ, ինչպէս որ ինն դար առաջ
սկսել էր Հերոդէս Արուսաղէմի աթոռը գահակալել:
Ինչպէս Հերոդէսի ժամանակը յետ մնացին Մակարէ-
ացիք, և թագաւորութիւնը յափշտակեց նա՝ որ Աս-
կաղոնացի էր, նոյնպէս և այս ժամանակը՝ Հայկազն իշ-
խանները հեռու մնացին, և սա՝ որ օտարածին էր՝
դռնուեցաւ Պարոյրի ու Տիգրանի թագաւորութեան
ժառանգ. մէկ քանի նախարարներու կուսակցութիւնը
և Սարակինոսաց հաճութիւնը կարողացան նորա ձեռքը
հասցնել արքայական թագը, բայց ազգի սիրտը ըստ
մեծի մասին մերժեց նրան: Ազգը՝ որ սիրում էր նրան
իրրե նահապետ Բագրատունեաց, և իրրե նախարար
աւագանւոյ մէջ, և իրրե ճոխ կալուածատէր իշխան,
սկսաւ ատել իրրե բռնակալ՝ աթոռի վրայ, և այս իւր
իրաւացի ատելութիւնը՝ որ նորա կենդանութեան ժա-
մանակը զսպեց, նորա որդւոյ ժամանակը շատ բացա-
յայտ և ակներև ցոյց տուեց, որովհետև յայտնի տե-
սաւ՝ որ Բագրատունիք տանուչորս դար Հայաստա-

նուժը մնալէն յետ-էլ՝ ոչինչ Հայկական ստացած չին, և
Հրէականէն-էլ ոչինչ մոռացած չին, և իրանց անձնա-
սիրութեան և փառասիրութեան զոհ սխախ անեն
ազգն-էլ աշխարհն-էլ:

Ա Շ Ո Տ 1-դ:

(859—889):

18

Սմբատ սպարապետի որդի Աշոտը՝ որ 859 թուին
ստացել էր Ջաֆար Ամիրապետէն իշխանաց իշխանի
անուն, այքան զօրեղ էր՝ որ թէ Հայերը, և թէ Հա-
ղարայիք նրամէն ստտկառում էին: Նորա սեփական
կալուածները՝ ինչ որ ունէր Արարատեան աշխար-
քումը, և Տայոց երկրումը, շատ ընդարձակ էին, և
երբ նոցա հետ կցուեցան այն դաւառները՝ որն որ
ստացան Բազրատունիք Տուրուբերանի, Բարձր-Հայքի
և Գուգարքի մէջ, այս երկիրները արդէն մէկ թա-
գաւորի տէրութիւն էին ձևացնում: Սորա մէջ կային
Գարենից բերդը (Բայաղխ), Բաղարան, Մուշ, Կողբ,
Կարս, Շիրակաւան, Անի, Սպեր, Ախլցխայ, Արդուին,
Արտաշան և այլ շատ քաղաքներ: Սա միայն իւր եր-
կիրներէն մինչև 40,000 զօրք ունէր հաւաքած, և նոցա
վերայ սպարապետ էր կարգել իւր քաջ Աբաս եղբորը:
Աշոտ իւր բնակութիւնը երբեմն հաստատում էր Անի
քաղաքումը, (որն որ իւր սրապը Աշոտ Մսակերը էր
շինել), և երբեմն Երազգաւոր աւանումը, որ էր Շի-

րակվան, երկուսն-էլ Շիրակ գաւառումը, բայց ուր-էլ տանում էր իւր բնակութիւնը՝ հետը ունենում էր մէկ աղատագունդ՝ Հայոց երեւելի նախարարաց և իշխանաց որդւոցմէն կազմած:

Իւր երկու դստերաց մէկը տուել էր Վասակ Սիւնի Հայկազն իշխանին՝ որ Գարուռ էր կոչվում, իսկ միւսը՝ Արծրունի Աշոտ իշխանի որդւոյն Գրիգորին՝ որ Գերեմիկ-էլ էր ասվում: Այս երկու փեսայքը էին Աշոտին ամեն տեղ սգնական և մտերիմ, և բացի սոցանէ՛ Սիսական իշխանքն՝ Վասակ և Աշոտ՝ նոյնպէս ձեռնտու էին նրան, և միւս իշխանքն Սիւնեաց երեք եղբարք Սմբատ, Սահակ և Բարկէն, որ Սիսակեան պիտի կոչուին:

Դեռ նոր էր սկսել Աշոտ իշխանաց իշխանը կարգի դնել իւր տէրութիւնը, որ Սևադայի որդի Ջահապը 80,000 զօրքով եկաւ Հայաստանի վրայ. այլ Աբաս իւր հայագունդ զօրքով գնաց և այնպէս ջարդեց, որ Ջահապ հազիւ կարողացաւ իւր գլուխը 16 մարդով ազատել: Այս պատահեցաւ 862 թուին, որոյ միւս տարին Բուղայի տարած գերի նախարարները յետ դարձան, և որոնք որ ուրացել էին՝ զղջացան, և Աշոտ խնամքով ընդունեց նրանց. Հայաստանը սկսաւ քիչ քիչ նորոգուիլ:

Աշոտոյ իշխանաց իշխանի ժամանակից էր և Վասիլ Արշակունին, որ Հայոց ազգէն նստաւ Յունաց կայսր 867 թուին, և իմանալով՝ որ Արշակունեաց թագադիր էին Բագրատունիք, դեսպան ուղարկեց Աշոտ իշխանաց իշխանի մօտ՝ որ իւր գլխի համար-էլ թագուղարկէ, և Աշոտ ուղարկեց: Երբ որ տեսաւ Աշոտ թէ իւր գործը աջողակ է գնում, կամեցաւ թագաւոր անուն-էլ ստանալ. այս պատճառաւ կաթողիկոսի և մէկ քանի իշխանաց միջնորդութեամբ Շեխի ոստի-

կանի որդւոյն Յիսէին գործիք շինեց, և խնդրել տուեց
Ամիրապետին: Ամիրապետը՝ տեսնելով որ արդէն Աշո-
տը այնքան բարձրացել է, որ այնուհետեւ-էլ չէ կարելի
կամ դժար պիտի լինի նրան սուկական հպատակի
կարգ անցուցանելը, յօժարեցաւ ուղարկել Աշոտի
համար արքայական թագ, որն որ էլ չէր կարող չաւել:
Թագի հետ միասին ուղարկել էր Ամիրապետը միւս
թագաւորական զարդերն-էլ, զգետտ, զէնք, երկվար
և այլ զանազան պարզկեներ, որն որ Յիսէ ոստիկանը
բերեց Անի քաղաք, և Գեորգ կաթողիկոսը՝ երբ որ
մեծահանգէս փառքով օժեց Աշոտին թագաւոր, Յիսէ
ոստիկանը Ամիրապետի կողմանէ թաղը դրեց Աշոտի
գլխին, և հազցուց արքայական զգետտը: Այս պա-
տահեցաւ 885 թուին. և այն տարի Վասիլ կայսրն-էլ
ուղարկեց Աշոտի համար պատուական թագ, և մեծա-
դին զարդեր, որով Աշոտ շատ փառաւորուեցաւ, և
սկսաւ նորոգել Հայոց Արշակունեաց թագաւորութեան
կարգերը և արքայական տարազները, պաշտօնէից դա-
սը, իշխանաց աստիճանները, դատաւորական ատեան-
ները, զինուորական մարզը, և ամեն հանգէսները՝
թէ ներքուստ և թէ արտաքուստ: Երջակայ ապրտամբ
ազգերը նուաճեց, Գուգարաց և Ուտեաց աշխարհ-
ները և Կալիպոս սարերու բնակչաց հնազանդեցուց,
ամեն տեղ իւր իշխաններէն կարգեց, և հետաւոր և
մերձաւոր շատ թագաւորներու և իշխաններու հետ
սէր և բարեկամութիւն արու, և ամեն տեղ պատիւ
ունեցաւ և փառաւորուեցաւ:

Մինչև այս տեղ լաւ էր գնում Աշոտոյ գործը.
քանի որ սպարապետ էր, իշխանաց իշխան էր, ամենե-
քին սրատկառում էին, և պատվում և սիրում: Երբ
որ թագաւոր դառաւ, կորաւ այն սրատկառանքը, չե-
րեւեցաւ այնուհետեւ այն պատիւը, վերացաւ այն սէրը:

Խւր տան մէջէն, իւր մերձաւոր ազգականաց մէջէն,
իւր փեսայն՝ Գրիգոր Գերենիկ Արծրունին 886 թուին՝
(մէկ տարի յետոյ քան զԹագաւորութիւնը առնուլը)՝
սկսաւ ցոյց տալ նրան անհնազանդութիւն, և կամե-
նալով ինքնագլուխ համարուիլ՝ սկսաւ Հեր ու Չա-
րեանդ դաւառներու վրայ յարձակիլ և նուաճել, և
այնքան վշտացոյց այն կողմերու այլազգի իշխաննե-
րուն, որ մէկ օր ճանապարհին դարան դործեցին և
սպանեցին: Նորա իշխանութիւնը սրայազատեց նորա
որդին Աշոտը:

Մէկ տարի-էլ որ անցաւ, մեռաւ նորա միւս փե-
սայն-էլ Վասակ Սիւնի Հայկազն, և նորա որդին Սու-
փանը ժառանգեց իւր հօր տեղը: Սիսական Վասակն
էլ մեռաւ, և նորա իշխանութիւնը ստացաւ նորա եղ-
բայրը Աշոտ իշխանիկը: Գեռ Աշոտը այս կսկիւծները
չէր մոռացել, որ 883 թուին աստատարուեցան Վա-
նանդացոյ իշխանները, մէկզմէկու հետ սկսան սրտե-
րազմիլ, և ժողովուրդը աստատարեցնել Աշոտէն:
Արաս դնաց զօրքով դէպի Վանանդ, և դեռ այն
կողմերն էր, որ Գուդարաց ազգը աստատարվեցաւ
Աշոտէն: Աշոտի երեց որդին Սմբատը՝ որ փոխարքայ
էլ էր և Երազգաւոր աւանումն էր նստած՝ դնաց նոցա
դէմ, և նուաճեց, և ինքը նստաւ Շամշուլդէ (Շամշա-
տիլ) բերդումը:

Աշոտ Թագաւորը, որ շատ քաղաքներ շինեց, և
շատ բերդեր նորոգեց, և իւր աթոռանիստ արաւ Բա-
դարան քաղաքը, դնաց փոքր Հայաստանի կողմը, և
այն տեղէն անցաւ Կոնստանտինուպոլիս և Վասիլ
կայսեր հետ տեսութիւն արաւ, և նորա մօտ թողեց
Մեղրիկ իշխանին հայադունդ զօրքով. և ինքն յետ
դառնալու ժամանակը հիւանդացաւ ճանիտումը, և
Շիրակ դաւառի մօտ վախճանեցաւ 71 տմաց. զկնի
5 տմաց Թագաւորութեան 889 թուին:

ՍՄԲՍՏ 1-դ. (Նստահատի):

(890—914):

Սմբատ արքայորդին Գուգարաց աշխարհումը լսեց իւր հօր մահուան բոթը. դրեց վերահացու այն կողմերուն Վասակ և Աշոտ Գնթունիներին, և եկաւ իւր քաղաքը Շիրակուան, որ է Երազգաւորս. ուր որ եկաւ և Գէորգ կաթողիկոսը և Ատրներսէհ Վրաց իշխանը Բագրատունի, և Սմբատին նստեցրին իրաց հօր անթոռումը թագաւոր. բայց օժման հանդէսը մնաց մէկ քանի սլաւաճառով. նախ՝ որ Սմբատ մէքիչ երկար սուգ սրահեց հօր մահուան համար Հրէից նման, և երկրորդ՝ որ նորա հօրեղբայրը Աբաս սպարապետը սկսաւ խռովութիւններ հանել:

Արևու փոռասէր Բագրատունիք ազգի մէջ նոր սլաւառումն ձգեցին — մէղկմէկու ձեռքէ թագաւորութիւնը խլել կամենալով, և բացին այլոց աչքերն-էլ, որ երբ տեսան թէ նորա ունին յոյս՝ թէ կարող են յափշտակել Հայաստանի թագը, իրանք-էլ մտքերու մէջ դրին և արին: Աբաս՝ ունէր իրաւունք այն թագի վրայ աչք դնելու, որովհետև շատ քաջ էր: Գէտի այն անթուր ճանապարհ բաց անողը նորա հայրն էր. նորա հայրն-էլ՝ նորա անունով էր Ասլարաս ասլել, Աշոտին էլ թշնամիներու դէմ զօրացնողը Աբասն էր. եթէ Հայաստանի մէջ ընտրողական սահմանադրութիւն լինէր,

կարելի է թէ աղգը Աբասին ընտրէր. բայց կարելի է թէ իշխանք Մմբատին ուղենային, և Աբասին ընդդիմանային: Աբաս արժանաւոր էր, շատ երախտիք ունէր. բայց Մմբատն-էլ անարժան մարդ չէր, քաջ էր, արդարակորով և առաքինի էր. այլ սպաբաղդ էր, որ Բագրատունի էր. Հայերը սրտանց չէին նորա հետ, մտածելով՝ որ այն թագը նրայ սեփականութիւն չէ, և շատ անմեղ արիւնտով շարխտուած է:

Մմբատ՝ որ 890 թուին նստաւ աթոռ, իւր առաջին գործը այն արաւ, որ զօրք ժողովեց և գնաց իւր Տօրեղբօր դէմ: Խոռվարիւ Աբասը պատճառ տուել էր Մմբատին այսպէս անելու: Հաղիւ թէ 892 թուին վերջացաւ այն շփոթները, և Մմբատ՝ Ատրպատականի ոստիկան Աֆշինի ձեռքով թաղ ստանալով՝ Ամիրապետէն օծուեցաւ թաղաւոր իւր շինած նորակերտ Ամենապրկիչ սաճարի մէջ Երազդաւորս աւանուամբ, ուր որ հաստատեց իւր աթոռը, և նորոգեց Լեոն իմաստասէր կայսեր հետ բարեկամութեան դաշն՝ ինչ որ ունէր իւր հայրը նորա հօր վասիլ կայսեր հետ, որ արդէն վախճանել էր: Այս Յունաց հետ արած դաշնադրութիւնը անհաճոյ եղաւ Աֆշին ոստիկանին, որ շատ զօրքով ուղում էր գալ Հայաստան և նուաճել Մմբատին. բայց երբ որ տեսաւ թէ Մմբատ ինքք երեք բիւր զօրքով գալիս է իւր դէմ, սրտերաղմէն խուսեց, և հաշտուեցաւ Մմբատի հետ: Բայց այս արշաւանը պատճառ տուեց Մմբատին Դուին քաղաքը՝ որ առաջ մարդպաններու, և յետոյ ոստիկաններու աթոռանիստ էր, նուաճել և Հաղարացոյ բոյնը քանդել: Այլ մէկ տարի յետոյ (894) Դուին քաղաքը մեծ գեանաշարժ կրեց և աւերուեցաւ:

Մմբատայ յաջողութիւնը անդադար շարժում էր Աֆշին ոստիկանի սրտի մէջ չար նախանձ, և գրգը-

ուում էր նրան, որ Սմբատի դէմ դարանակալութիւն անէ: Սմբատ երկար ժամանակ խոյս տուեց, որ մէջերը յայտնի թշնամութիւն չծագի. բայց հնարը չգտնուեցաւ, և Գողս գեղի մօտ բացուեցաւ կռիւ, և Հայերը ջարդեցին Ոստիկանի զօրքը, և փախցրին. և Աֆշին ստիպուեցաւ հաշտութիւն խնդրել:

Արաս սպարապետի չար օրինակը, և մանաւանդ Գրիգոր Գերենիկի Արծրունոյ բացած մոլար ճանտապարհը այժմ սկսեց ցոյց տալ իւր ազդեցութիւնը: Երևի չարն-էլ բարի են կարծում, որ չարին շուտ և շատ են հետևում, որովհետև անհնար է թէ միևնոյն առարկայն համ չար կարծեն, համ-էլ նրան հետևին. ուրեմն նորա գաղափարը այնպէս չեն բռնում, ինչպէս որ է, այլ տալիս են նրան բոլորովին այլ նշանակութիւն, և ապա սկսում են այնպէս վարվիլ:

Աշոտ Արծրունին, Գրիգոր Գերենիկի որդին, (որ էր Սմբատ արքայի քեռորդին) վստահանալով Աֆշին ոստիկանի օգնութեան՝ դուրս եկաւ Սմբատ արքայի հնազանդութենէն. այլ նորա աները՝ Գագիկ Վասպուրականը՝ բունեց նրան և բանտը դրեց, և ինքը տիրապետեց նորա երկրին՝ Սմբատ Արքայի իշխանութեան ներքոյ, և նորա մէկ եղբօրը (որ էլի Գագիկ էր անունը) իրան երկրորդ արաւ: Այս միջոց Միջագետաց ոստիկան Ահմատը մտաւ Հայաստան, և Սմբատ նորա դէմ դուրս եկաւ Հայագունդ զօրքով. այլ Գագիկ Վասպուրականի նենգութեամբ կորցուց այն յաղթութիւնը, որ սխտի անշուշտ ստանար: Գագիկ Վասպուրականն-էլ՝ որ դաւաճանութիւն արաւ՝ դաւաճանութեան մատնուեցաւ, և սրախողխող սպանվեցաւ, և Աշոտ Արծրունին բանտէն ազատվեցաւ, և կրկին իւր տէրութիւնը ձեռք գծեց: Այս միջոց մէկ անգամ էլի եկաւ Աֆշին Հայաստանի վրայ, բայց առանց սպա-

տերազմի Տաշտուեցաւ ու յետ դարձաւ: Եւ Սմբատ
 դնաց Վրաստան և ԱտրնեբուէՏին՝ որ իւր բարեկամն
 էր, թագաւոր արաւ: ԱՓշին մէկ քանի անգամ էլի
 եկաւ Սմբատի վրայ, բայց սրտաւերազմ չարտաՏեցաւ,
 մինչև որ մեռաւ ԱՓշին: Մեռաւ Աշտա Արծրունին-էլ,
 և նորա տեղը նստաւ իւր եղբայր Քաղիկը, (որ մէկ
 ժամանակ Քաղիկ Վարդուբականի երկրորդն էր) իսկ
 նորա երրորդ եղբայր Քուրդէնը կարգուեցաւ Սմբատ
 արքայէն Տաղարապետ Հայաստան աշխարհի 901 թուին:

ԱՓշինի տեղ ոստիկան կարգուեցաւ նորա եղբայր
 Իւսուֆը՝ մէկ անգութ և անօրէն մարդ: Սմբատ իմա-
 նարով նորա բարբը կամեցաւ նորա Տեա դործ և կա-
 սակցութիւն չունենալ, վասնորոյ և խնդրեց ամիրա-
 պետէն՝ որ իրան Տեառն պահէ Իւսուֆէն, և ամիրա-
 պետը Տաճու թիւն ցոյց տուեց Սմբատի խնդրոյն:
 Այս պատճառաւ Իւսուֆն-էլ եկաւ Սմբատայ վրայ
 կռիւ, բայց երբ որ տեսաւ թէ Սմբատ սրտաւատ է,
 Տաշտու թիւն արաւ և դարձաւ իւր տեղը:

Այս միջոցները Սմբատի բարեկամներէն ոմանք մե-
 ռան, և ոմանք թշնամացան զանազան ատիթներով, և
 Իւսուֆ ոստիկանը ասխտամբուեցաւ ամիրապետէն, և
 Սմբատ գրեթէ միջնորդ դառաւ նոցա Տաշտու թեան:
 Աստարանները յօժար չէին այս բանին, և զգուշա-
 ցուցել էին Սմբատին, ոյլ Սմբատ նոցա չէր ակամջ
 դրել: Աստարանները յառաջվանէ իմացել էին, որ եթէ
 Իւսուֆ կրկին զօրանայ, այնու Տեառն Հայաստան ան-
 դորթութիւն չի դանիր, և վերջը իմացվեցաւ որ մա-
 խարարաց կարծիքը ճշմարիտ էր:

Արբ որ Իւսուֆ միւսանգամ Տաշտուեցաւ
 իւր իշխանութեան մէջ՝ սկսաւ դրդուել ամիրապե-
 տին Սմբատայ դէմ, և ամիրապետը միւսանգամ
 գձեց Սմբատին Իւսուֆի իշխանութեան տակը: Իւսուֆ

էլ դրեց Հայաստանի վրայ ծանր և անտանելի հարկ . որ երբ սկսաւ Սմբատ այն հարկը ժողովել , նորա նախարարքը և իշխանքը սկսան նեղանալ , խռովիլ և ապստամբուիլ , և խորհուրդ արին ստանել Սմբատին . բայց այս անգամ յաջողեցաւ Սմբատին ապրտամբութեան եղջիւրը փշրել , և ամենեցուն նուաճեց և աշխարքը խաղաղացրուց :

Այլ ինչ օգուտ . կայծը վաղ էր ընկել , հրդեհը անհրաժեշտ էր : Օտարազգի իշխանք Հայաստանին պիտի չտային հանդիստ : Քաղիկ Արծրունին՝ Սրմբատ արքայի քեռորդին՝ իւր մօրեղբօր դէմ դժգմնելով՝ գնաց Իւսուֆ աստիկանի մօտ , և Իւսուֆ կամենալով Հայաստանի դօրութիւնը սխառել՝ տուեց Քաղիկին թագաւորական պատիւ . և այսպէս Հայաստանը ունեցաւ երկու թագաւոր . այսինքն՝ Հայաստանի խաբատորութեանը եղև խախտուող յանձն իւր , որ այնուհետև պիտի անշուշտ կործանվէր : Այն այն թագաւորութեան՝ որ Ստրաւարտականի աստիկանն էր տալիս և առնում : արդեօք ո՞րն էր աւելի զարմանալի և ծաղրելի , տու՞ողը , թէ ընդունողը :

Այս հակառակաթոռ թագաւորը՝ որ ազգի կորուսեան պատճառ պիտի դառնար , երբ որ դրեց գլխին այն անիրաւութեամբ ստացած թագը , այնուհետև կամայ ակամայ պիտի լինէր գործի Հայաստանը քանդելոյ . ինքն-էլ լաւ գիտէր , որ Իւսուֆ այն դիտաւորութեամբ տուեց նրան այն սուտ թագաւոր անունը , որ նորա ձեռքով ազգը կորցնէ :

Իւսուֆ 909 թուին Քաղիկին առջևը դձեց , և մտաւ Հայաստան , և սկսաւ տակնուվրայ բերել աշխարքը : Սմբատ մնաց մէնակ , ոչ ոք չկամեցաւ օգնել , գնաց մտաւ Կապոյտ ստած բերդը , և վերջապէս 914 թուին անձնատուր եղաւ Իւսուֆի ձեռքը , և դառն տանջանքներով ստանուեցաւ :

ԱՇՈՏ 2-դ (Երէմէ). ԱԲԱՍ. ԱՇՈՏ 3-դ (Ուրբաթ).
ՍՄԲԱՏ 2-դ. ՔԱՔԻԿ 1-դ:

(919—1020):

20

Սմբատի բռնութիւնն յետ՝ իւր որդին Աշոտը սկսաւ
ազդին խնամ տանիլ. ժողովեց Հայոց ցրուած զօրքը,
և իւր հօր մահուան վրէժը ամեն տեղ սրահանջեց,
Իւսուֆի զօրաց դէմ անդադար սրտերազմելով՝ նորա
գրաւած բերդերը յետ առաւ, և Հայաստանի շատ
տեղերէն Հաղարացիներուն հեռացուց: Նոյնպէս Վը-
րաստանի մէջ Տփիսիս քաղաքէն փախցրեց Հաղարա-
ցոց զօրքը: Նախարարքն-էլ տեսնելով սորա քաջագոր-
ծութիւնները՝ իրանց հօր տեղը նստեցրին նրան 919
թուին: Իւսուֆ 7 տարի շարունակ անդադար սրտե-
րազմեցաւ Աշոտի դէմ. և թէպէտ շատ մնասներ տը-
ւեց Հայաստանին, այլ Աշոտը ձեռք չընկաւ: Սակայն
Հայաստանի թշուառութիւնը սրանցմով չվերջացաւ.
Հայաստան դեռ պիտի քաշէր ուրիշ շատ նեղութիւն-
ներ-էլ: Նախարարներու մէջ ընկաւ խռովութիւն, որ
սկսան մէկզմէկու դէմ և թագաւորի-էլ դէմ սրտե-
րազմիլ, և սրանով Հայաստանի ուժը տկարացաւ.
Կռիւներու սրտոճառաւ վարուցանքը խափանուեցան,
և Հայաստան սով ընկաւ 918 թուին: Սովէն յետ դա-
ղանները շատացան, որ մեռելներու դիակուները ուտե-
լով կենդանիներու վրայ-էլ դալ սկսան համարձակուիլ:
Իւսուֆ այսքան չարութիւններով չբաւականաւ-
լով՝ քանի տեղ թագաւորներ աւելցրուց Աշոտին հա-

կառակ, որով փոքրիկ Հայաստանը ունեցաւ երեք թագաւոր. Աշոտ երկաթը՝ Շիրակումը, Աշոտ բռնաւորը՝ Գուինումը, և Քաղիկ Արծրունին Վասպուրականումը. որ անդադար մէկզմէկու դէմ-էլ սլատերազմում էին:

Աշոտ երկաթի դէմ ո՛չ թէ միայն օտար նախարարներն էին սլատերազմում, այլև իւր եղ բայրը, աները և աներձազը դարանակալութիւն էին անում. բայց Աշոտը ձեռք չէր ընկնում. և այս սլատձառով իւր 15 տարուան թագաւորութիւնը, և իւր քաջութիւնը, (որոյ սլատձառաւ որ իրան Երփէ էին ասում), միայն այնպիսի խռովութիւններու մէջ անցուց: Նորա հաւատարիմ նախարարներու մէկն էր Քէորդ Մարզպետունի՝ անյաղթելի քաջը:

Աշոտ երկաթը որդի չունէր. այն սլատձառաւ երբ որ նա մեռաւ 928 թուին, նախարարները նորա թագաւորութիւնը տուին նորա եղբօրը Աբասին, որ իւր թագաւոր եղ բօրը շատ հակառակութիւններ էր արել, և շատ նեղութիւններ էր տուել: Աբաս ինքը քաջ լինելով ամեն կերպով հետևեցաւ ազգին հանգստութիւն տալ, և հայրենեաց խաղաղութիւն ընձեռել: Սա՛ Կարս քաղաքը իւր աթոռանիստ արաւ: Ափսաղներու Քեր թագաւորը եկաւ Աբասի վրայ, այլ Աբաս՝ Քէորդ Մարզպետունի իշխանի հետ միասին դուրս եկաւ Ափսաղներու դէմ, մեծ յաղթութիւն արաւ, և Քերին բռնեց գերի. և ինքը 24 տարի լաւ և փառաւոր թագաւորութիւն անելէն յետ վախճանեցաւ 952 թուին: Թագը սորա յետնորդաց մէջ մնաց:

Աշոտ 3-դ. Աբասի որդին՝ իւր հօր աթոռը նստաւ, և իսկոյն սկսաւ Հայաստանէն ասպատակները հեռացնել, և երկիրը խաղաղեցնել: Երբ որ Քէորդ Մարզպետունի որդին Քոռը սպարապետ կարգուեցաւ Հայագունդ զօրաց, Աշոտ մինչև 90,000 զօրք ժողովեց, և իւր իշխա-

նութեան իններորդ տարին Անի քաղաքի մէջ մեծա-
 Տանդէս փառքով թաղաւոր օծուեցաւ: Համառուն բրու-
 նաւորը եկաւ Աշոտի վրայ: այլ Աշոտ իւր զօրքով նը-
 (րայ) դիմաց գնաց, սպտերազմեցաւ, յաղթեց, բռնա-
 ւորին-էլ բռնեց և սպանեց: Ամիրապետը այս քաջու-
 թեան համար շատ շնորհակալ եղաւ, և մեծ պար-
 գէներ տուեց Աշոտին: (Եւ այսպէս մայրս քրտնոյնս մ

Եւ այց Աշոտի փառքը ու պարծանքը այնքան քա-
 ջութիւնը չէր, որքան մարդավայել ողորմածութիւնը,
 (Բայց ո՛չ թէ ին պարթևո՛ւ հասկացողութեամբ), որով և Աղբրմոյ
 մականունն ժառանգեց: Երբ որ Աշոտ այսպէս ամեն
 կողմանց խաղաղութիւն հաստատելով իւր ազգին
 խնամք էր տանում, և ազգի սրտէն օտարացեղու-
 թեան խէթն էր հանել ջանք անում, յանկարծ Յու-
 նայ կայսրը Յոհաննէս Չմշկիկը մտաւ իւր զօրքով
 Հայաստան: Աշոտ խնդոյն ժողովեց 80,000 զօրք, որ-
 նայ Հարք դաւառը, և սպառնալուոր ուղարկեց կայ-
 սերը՝ որ շուտով Հայաստանէն դուրս դայ: Մեծամիտ
 Յունաց կայսրը՝ որ մինչև Տարսն հասել էր, յետ դար-
 ձաւ, և այսպէս Աշոտ խաղաղութեամբ թաղաւորեց 26
 տարի: մինչև 977 թիւը:

Սմբատ 2-դ երբ որ նստաւ իւր հօր Աշոտ Աղբր-
 մածի տեղը՝ սկսաւ նրայ նման ազգին տէրութիւն
 անել քաջութեամբ և խոհեմութեամբ: Անի քաղաքը
 որ շատ ժամանակ առաջ Հայոց թագաւորանիստ մայ-
 րաքաղաք էր՝ պարսպապատ արաւ, և մեծամեծ շի-
 նութիւններով զարդարեց՝ Տրդատ Խարտարապետի
 ձեւագրութեամբ: Բայց սորա թագաւորութիւնը դա-
 նազան շիտթներով կորցրուց իւր հանդիստը, և ինքը
 Սմբատ 13 տարի իշխելէն յետ զրաւեցաւ ի կինաց
 990 թուին. և որովհետև չունէր որդի՝ թագաւորու-
 թիւնը միւս անգամ անցաւ կրօնը յեղապետութեան
 գծի վրայ:

Պատգիկ 1-դ իւր եղբոր Սմբատի տեղը նստաւ Քաղերպունեաց աթոռը, և նախորդաց քաջութեան և խելացի կառավարութեան հետևող լինելով՝ իւր հայրենեաց խաղաղութեան և երջանկութեանն հող տարաւ: Այնքան մեծ էր սորա քաջութեան համբաւը, որ թշնամեաց մեջէն ո՛չ ոք չհամարձակուեցան սորա դէմ խլրտիլ, և երկրի խաղաղութիւնը խռովել: Ինքն-էլ, և իւր ամուսինն-էլ կատրամիտէ թաղուհին (Սնանկայ Աստի իշխանի քուսարը) բարեօրջաւ լինելով՝ շատ բարեբարութիւններ արին թէ՛ եկեղեցիներուն և եկեղեցականներուն, և թէ՛ վանքերուն և կրօնաւորներուն: Այն դարը այնպէս էր, որ ժողովրդեան կեղեքելը, և վանքերը ճոխացնելը մէկ առաքինութիւն էր համարուած: Բայց Պատգիկ ազբատներուն-էլ չէր մնացել. կարօտելոց, օտարաց շատ ողորմութիւն էր սնում և շատ բարեղործութիւններ էր կատարում: Տասներորդ դարը անցաւ, և մետասաներորդը սկսաւ սորա առաքինական հանդէսներու մեջ. Քրիստոսի 1,000-դ թուականը ծագելով սորա բարի գործքերու վրայ փառաւորեց նորա անունը, և մխիթարեց ազգին, որոյ վրայ սխալի այն մետասաներորդ դարու երկրորդ կէտը՝ բերէր շատ թախիծ և տրտմութիւն, և վերջը՝ փոքր ինչ փարատէր նորա տխրութեան մեզը սրտէն, և մաքրէր արտասուքը աչքէն՝ բայց իւր հայրենիքէն հեռու: Եւ որովհետև շատ բերդեր կային թշնամեաց ձեռին, այն բերդերէն շատը ազատեց և իւր իշխանութեան տակը պտաւ, և իւր աշխարհը շատ բարեկարգեց: Բայց ի՞նչ էր նորա ձեռին մնացած աշխարհը: Հայաստանի քանիներորդ մասը մէկն էր: Հայաստան ծուկն ծուկն էր արած, և լուսներ քանի քանի թաղաւոր՝ օտարածին նախարարներէն՝ որպէս թէ ծագրածութեան համար շինած: Այս լաւ թաղաւ-

հնազանդիլ: Ա՛չ այս, ո՛չ այն. այլ ինչպէս որ տեսանք,
որ երբ Բագրատունի թագաւորազինք քաջ էին լի-
նում, սկսում էին թագաւորութեան թեւակոխել, և
դրանով աշխարհքը տակնուվրայ էին անում: Աշտուն-էլ
նրանց նման տեսնելով իւր եղբօր անյարմարութիւնը՝
կամենում էր թագաւորութիւնը նորա ձեռքէն խլել.
և այդ մտքով զօրք հաւաքեց, և Անիի վրէն եկաւ:

Սմբատ-էլ 60,000 զօրք հանեց նորա դէմ, բայց
Աշտուր յաղթեց: Նախարարները տեսնելով չարի-
քը՝ մէջ մտան ու հաշտեցուցին, թագաւորութիւնը
երկու բաժին արին այն պայմանաւ, որ Սմբատի մա-
հէն յետ՝ Աշտուր թուր Հայոց թագաւոր լինի: Արդէն
Հայաստանը կտոր կտոր էր, այս մէկ պատառումն-էլ
նոր աւելացաւ. բայց թէ Սմբատ շուտ մեռնէր, և
Անիի թագաւորութիւնը շուտ ընկնէր Աշտուրի ձեռքը,
կարելի է՝ որ Աշտուր այս պատառուածները կարկանդակ
այլ տես՝ որ առաջ Աշտուր վախճանեցաւ. մանաւանդ
Սմբատ՝ դեռ Աշտուրի կենդանի ժամանակը իւր Բագ-
րատունի վատահոգութիւնը ցոյց տուեց, և Հայոց թա-
գաւորութեան դաւաճանութիւն արաւ: Թէպէտ երկու
եղբարց մէջ հաշտութիւն դրուեցաւ, բայց երկուքն
էլ որովհետեւ Բագրատունիք էին, այն հաշտութեան
սրբութեանը չկարացին դին դնել. ո՛չ Աշտուր կարաց
հանդարտ նստիլ, ո՛չ Սմբատ դտաւ խաղաղութիւն:
Սմբատ երկու անգամ բռնուեցաւ և աղատուեցաւ:

Այս միջոցին՝ որ Բագրատունեաց թագաւորու-
թիւնը երկու եղբարց ձեռին ծուաւովում էր, Հայաս-
տանի գլխին մէկ նոր ամալրոպ էր հաւաքվում, որ
պիտի նոր ինորոյ ջրհեղեղ անէր Հայաստանը: Թէպէտ
Հայաստանը օտարացեղ իշխաններու ձեռքով պատառ
պատառ էր եղած, թէպէտ շատ անգամ աղգամիջեան
պատերազմներով Հայերու արիւնը հեղեղատներ էր

չինում . բայց ամեն տեղ-էլ Հայոց թագաւորութեան
անունը կայր . թէ Անի , թէ Կարս , թէ Վասպուրա-
կան և թէ այլուր Հայր ասում էր թէ մեր ազգի
թագաւորութիւնն է , մեր երկիրն է , թէսլէտ իմա-
նում էր՝ որ ո՛չ Քաղբատունին է Հայ , ո՛չ-էլ Արծրու-
նին , բայց երբ լսում էր նորա բերնէն Հայերէն լեզուն ,
երբ որ տեսնում էր՝ թէ Հայոց թագաւորը ուզում
է Հայերու ազգութիւնը սրահել ու սրահազանել , կամ
զոնէ ազգութեան յայտնի փնաս չէ կամենում տալ ,
նրա դառն-էլ քաղցր էր համարում , և կուլ էր տա-
լիս . բայց եկաւ այնպիսի ժամանակ , որ այն թերա-
կտտար մտիթարութիւնն-էլ ձեռքէն դնաց . Հայա-
ստանը յանկարծ մնաց առանց թագաւորի , և առանց
թագաւորութեան . էն որ մէկ ժամանակ ունէր չորս
հինգ մանր մանր արքայիկներ , մէկ-էլ աչքը բացեց՝
տեսաւ մէկն-էլ չկայ : Տեսնենք՝ թէ այս ինչսլէս սրա-
տահեցաւ :

Թուրք ազգը՝ որ Սկիւթացոց Թաթարներէն էին
յառաջացած՝ այս միջոց սկսան Հայաստանի վրայ ար-
շաւել , և Վասպուրական աշխարքի մէջ շատ չարու-
թիւններ արին : Վասպուրականի թագաւորը Սենե-
քերիմ՝ չզիտեմ ինչ մտք անելով իւր թագաւո-
րութիւնը տուեց Յունաց Վասիլ կայսեր , և նորա
տեղը առաւ Սերաստիա , և քառասուն բիւր ժողո-
վուրդ հեար առած գնաց իւր նոր կալուածը 1021
թուին : Եթէ Սենեքերիմ ուզում էր թագաւորու-
թենէն հրաժարուիլ , միթէ չէր կարող այն իւր նախ-
նեաց յախշտակած երկիրները տալ օրինաւոր Հա-
յաստանի թագաւորին , և տեղը մէկ քաղաք առնուլ .
բայց Սենեքերիմ օտարացեղ էր , սխիտի Հայաստանին
փնաս տար , և տուեց : Սորա Սերաստիա քաշուելով
Հայաստանը չանդորրացաւ . Տուղբիլ Քեզը՝ որ այն

Սկիւթացոց զօրավարն էր՝ մտաւ Արարատ: Թէպէտ
Վասակ Պաշլաւունի՝ (Գրիգոր Մագիսարոսի հայրը)
500 մարդով դուրս եկաւ նորա անհամար զօրաց դէմ,
և սլատերազմեցաւ, բայց սլատերազմէն յետ՝ քնած
տեղը մէկ դաւաճանի ձեռքով սպանուեցաւ:

Այս շիտթներու ժամանակը՝ Վրաց և Ափսաղնե-
րու թագաւորը Գորգի՝ Յովհաննէս Սմբատ թագա-
ւորի խորհրդակցութեամբ ապստամբուեցաւ Յունաց
կայսերու թե՛նէն. և Վասիլ կայսրը եկաւ այն կողմը և
սլատեց ապստամբներուն: Երբ որ տեսաւ Յովհան-
նէս Սմբատ՝ թէ Գորգի նկուն եղաւ, և կայսրը գալիս
է Անիի վրայ, առանց խորհուրդ հարցնելու իւր եղ-
բորմէն՝ որ ժառանգ էր նորա թագաւորութեան, մի
միայն իւր Բագրատունի խելքով յետկար երդման
ուղարկեց Պետրոս (Գեորգի) կաթողիկոսի ձեռքով
Վասիլ կայսեր մօտ, որով խոստանում էր Անին իւր
մահէն յետ տալ նրան ժառանգութիւն, ինչպէս որ
Սենեքերիմը տուել էր կենդանութեան ժամանակը:
Կայսրը 1022 թուին ստացաւ այս Յովհաննէս Սմբատ
թագաւորի նամակը, և սլաճեց: Երբ որ մեռաւ Վա-
սիլ կայսրը, և նորա տեղ նստաւ նորա եղբայրը Կոն-
ստանտին, այս թուղթը հասաւ նորա ձեռքը: Վասիլ
ու Կոնստանտին էին այն կայսերաց վերջինը, որոնք
որ Վասիլ Արշակունի Հայկազն կայսեր ցեղէն նստել
էին շարունակ իբր 160 տարի Յունաց կայսերական
գահումը: Երբ որ Կոնստանտին կայսրը հիւանդացաւ,
մտածեց՝ որ Անի քաղաքի ժառանգելը մէկ անիրա-
ւութիւն է, մանաւանդ՝ որ իւր երակներու մէջ Հայոց
արիւն էր խոխոջում, ազգասիրութիւնը և հայրենա-
սիրութիւնը միտք բերելով, հրամայեց որ մէկ Հայ
գտնեն, ու բերեն իւր մօտ: Կոնստանտինուսովիս մէկ
Հայ քահանայ գտան Կիրակոս անուն, և կանգնեցրին

Թագաւորի առջևը: Կոնստանտին կայսրը յանձնեց Կիրակոս քահանային նոյն Յովհաննէս Սմբատ Հայոց Թագաւորի գրած յետկարը, և սլատուիրեց որ տանի տայ Հայոց Թագաւորին: Կիրակոս քահանայն այն նամակը սրահեց իւր մօտ, և երբ Կոնստանտին մեռաւ, և նորա տեղը նստաւ Միքայէլ 4-դ կայսրը, Կիրակոս քահանայն տարաւ այն թուղթը և յետ տուեց կայսերն, կայսրն-էլ շատ ոսկի տուեց տէր Կիրակոսին:

Հասաւ 1039 թիւը՝ մեռաւ Աշոտ՝ որ Հայոց Թագաւորութեան ժառանգն էր, և թողեց մէկ որդի Գագիկ անուն տասնուչորս տարեկան՝ սլատանի աշխոյժ քաջ, խելօք և դեղեցիկ՝ հօր նման:

Համարեա՛ թէ նոյն տարին մեռաւ Յոհաննէս Սմբատ Թագաւորն-էլ՝ քսան տարի աթոռին և աղգին ծանրութիւն լինելէն յետ: Միքայէլ կայսրը սկսաւ Անի քաղաքը և Հայոց Թագաւորութիւնը սրահանջել: Երբ որ Հայերը չ'կամեցան տալ, կայսրը երեք անգամ զօրք ուղարկեց Հայաստան, որ շատ տեղեր աւերեցին: Յովհաննէս Սմբատ Թագաւորի տան վերակացուն և Հայաստանի հոգաբարձուն Աէստ-Սարգիս իշխանը՝ Թագաւորական դանձերը իւր ձեռքն-էլ ձգել, և քանի երկելի բերդեր իւր իշխանութեան տակը ունենալով՝ կամենում էր թագաւորել: Այս Սարգիսը էր Հայկազն Սիւնի, և եթէ սրան յաջողէր իւր դիտաւորութիւնը գլուխ բերել և Հայոց Թագաւոր դառնալ, Քաղբատունեաց հարստութեան տեղ Հայկազանց աղգատոհմը աթոռ նստեցնել, կարելի էր՝ որ աղգին մէկ միսիթարութիւն բերէր, բայց որովհետև հակառակորդ շատ ունէր օտարացեղ նախարարներէն, և իւր գնացած ճանապարհները ըստ երկութիւն՝ անապթապ չէին, այն սլատառաւ շատերը սկսան նորա վրայ այնպէս մտիկ անել, ինչպէս որ մէկ

ժամանակ Վասակ Սիւնիի վրայ: Վէստ-Սարգիսը՝
գուցէ թէ ազգի, աշխարհի մատնիչ-էլ չէր, բայց նրան
այնպէս ցոյց տուին, և ամբոխին այնպէս հաւատա-
ցուցին՝ թէ նա Յունաց կողմն է, և ազգի ազատու-
թեան դարանակալ: Վէստ-Սարգիս Սիւնին համա-
րուեցաւ երկրորդ Վասակ Սիւնի: Հայոց սպարապետ
Վասակ Պահլաւունիի եղբայր Վահրամ Պահլաւունին
օտարացեղ նախարարը, Վարդան Մամիկոնեանի դերը
ձեռք առաւ: Հայաստան նոր երկառուակութիւն տե-
սաւ, կէսը Վէստ-Սարգիսի կողմն էին, կէսը՝ Վահրամ
Պահլաւունիի: Կամ լաւ ասենք, կէսը՝ Հայկազանց հա-
մախոհ, կէսը՝ օտարացեղաց, որոց շատը Վահրամի ազ-
գականներն էին: Երբ որ Յունաց չորրորդ բանակն-էլ
եկաւ մէկ կողմէն, և Յունաց դրդամար Գաւիթ Ան-
հողին-էլ արշաւեց միւս կողմէն, Վահրամ Պահլաւու-
նին առաւ Անիի 30,000 զօրքը, և դնաց թշնամիներուն
լնդառաջ, և այնպէս ջարդ տուեց Յունաց՝ որ սա-
կաւ օրինակ կունենաց Հայոց սլատմութեան մէջ 1040
թուին: Իսկ Գաւիթ Անհողինին մեծ ամօթով յետ
դարձուց 1041 թուին, և երբ տեսաւ՝ թէ Վէստ-Սար-
գիսը անշուշտ սլիտի թաղաւորութիւնը դրաւէ, իւր
համախոհներու օգնութեամբ Աշոտի որդի Գագիկին,
որ հազիւ կլինէր տասնևեօթն տարեկան, բերել տուեց
Անի, և Պետրոս կաթողիկոսի ձեռքով օծել տուեց
Հայոց թագաւոր 1042 թուին:

Այս Գագիկ թագաւորը դեռ տասը տարեկան հա-
տակէն սկսել էր կրթուիլ գիտութեանց ուսումներու
մէջ, մէկ լաւ վարժապետի մօտ Հելլենացոյ և Աս-
տուածային դրոց աշակերտութիւն էր արել: Ինքը
ինչպէս որ ասացինք՝ էր գեղեցիկ, և վայելչահասակ.
բնածին խառնուածովն՝ վեհանձն, արութեան ուժով
հզօր, կառավարութեամբ՝ յաջող, զգաստ և խոհա-

կան, և վարուք գնացից առաքինի: Սա՛ միայն այն սրտաճառաւ էր դժբաղդ՝ որ Քաղբատունի էր. եթէ լինէր Հայկազն, արդար և արժանի էր լաւագոյն վիճակի, և Հայոց գահի վրայ՝ կարող էր արժանապէս հանդիսանալ զիւցազն՝ Տիգրանի և Պարոյրի նման. բայց իւր նախնեաց դէմ՝ ատելութիւնը՝ նրայ գլխին արաւ այն թաղը՝ փշեղէն սրակ, և ինչպէս գողութեամբ ստացել էին, նոյնպէս դաւաճանութեամբ կորցրեց. բայց կորցրեց նորա հետ միասին Հայաստանի երջանկութիւնն-էլ: Վէստ-Սարգիսը երբ որ տեսաւ թէ իւր հակառակորդ կուսակցութիւնը դրեց նորա հանդէպ վահանի պէս այն սրտանի նորասրակ զիւցազնին՝ վախեցաւ, առաւ արքունական գանձերը և մտաւ Անիի անառիկ դղեակը: Գղեակը ձեռին, գանձը ձեռին, մի և նոյն էր՝ որպէս թէ թագաւորն-էլ նա է: Բայց Գաղիկ այնպէս հսկայ չէր, որ երկիւղ քաշէր այդպիսի հանդամանքներէն. մի միայնակ առանց թիկնասրահի, առանց անձնասրահապետի մտաւ դղեակը, և Վէստ-Սարգսին համոզեց՝ որ բերդէն դուրս գայ. և Վէստ-Սարգիսը դուրս եկաւ: Բայց երբ որ Վէստ Սարգիսը գնաց Սուրմառի բերդաքաղաքը և սկսաւ թագաւորի և թագաւորութեան դէմ խլրտիւններ հանել, Գաղիկ առաւ մէկ քանի հաս կորովի Հայեր, գնաց նորա վրայ, մտաւ նորա բանակը, բռնեց ու կասեց, տարաւ Անի քաղաք և դրեց բանտը: Մինչև այս տեղ՝ Գաղիկի արարմունքը նախնի քաջերու արժանաւոր գործեր էին. միայն Վահագն էր կարող այս բաները անել: Վէստ-Սարգիսը յետ տուեց թագաւորին ո՛չ թէ միայն գանձերը, այլև բոլոր բերդերը, որ այնքան ժամանակ իւր ձեռին էր սրահել: Հայաստանը փոքր ինչ անդորրութիւն գտաւ:

Թուրքաստանի կողմէն թաթարները արշաւեցին

անհամար բաղնութեամբ Հայաստանի վրայ: Քաղիկ
իւր հետ առաւ Վասակ Պաշլաւունու որդուն՝ Քրի-
գոր Մագիստրոսին, և դնաց նոցա առաջ, և սաստիկ
հարուած տարով՝ ունանց կոտորեցին, ունանց ջրի մէջ
խեղդեցին, մնացածներուն-էլ ցիր ու ցան արին փախ-
ցրին, և իրանք աւարներով ճոխացած յետ դարձան
ուրախութեամբ Անի քաղաք: Յունաց կայսերութեան
մէջ-էլ փոփոխութիւններ սրատահեցան, և աթոռը ըն-
կաւ Կոնստանտին Մոնոմախոսի ձեռքը, որ սկսաւ Անի
քաղաքի պահանջողութիւնը նորոգել, և երբ լոկ
բանադնացութեամբ ոչինչ չստացաւ, Միքայէլ Ասիտ
արևելից կուսակալի ձեռքով զօրք ժողովեց և ուղարկեց
Հայաստան, որ Անին բռնութեամբ առնու. բայց Քա-
ղիկ այս զօրքը ջարդեց 1043 թուին, և Ասիտին յետ
դարձոյց խայտառակութեամբ: Մոնոմախոս կայսրը ու-
ղարկեց Հայաստան Նիկողայոս զօրավարին մեծ պատ-
րաստութեամբ և անհամար զօրօք, և դրեց Բիւսայ
Ապուսլար իշխանին՝ որ նա-էլ արշաւէ Անիի վրայ:
Քաղիկ աճապարեց Ապուսլարի հետ հաշտութեան
սրայման կապելով՝ ղինաթափ անել նրան, իսկ Նիկո-
ղայոս զօրապետին ընդդէմ կանգնեցաւ ղինու զօրու-
թեամբ, նորա Յունական զօրքը ջարդեց, և Ասիտ զօ-
րավարի նման յետ դարձոյց ամօթով: Այս միջոցները
Վէստ-Սարգիսը՝ (որ կարողացել էր ներողութիւն գրա-
նել, և բանտէն ազատուիլ, և Քաղիկի բարեկամ
ձեանալ, շատ բարեկամ իրան համախոհ էր շինել
նախարարնարէն, և շատին-էլ թշնամացրել էր Քաղիկ
թագաւորի դէմ, որոց մէկն-էլ Քրիգոր Մագիստրոսն
էր), դառել էր Քաղիկի մտերիմ խորհրդականաց մէկը:
Երբ որ Մոնոմախոսը իւր ներգործութեան տարազը
փոխեց, և սկսաւ սլատերազմական ղինուց տեղ, որ
Անիի աշտարակներու առջևը նախատինքով քողարկ-

վիլ էին, դորձ դնել Յունական խորամանկութիւն, և բարեկամութեան սրտորուակի տակը ծածկելով ծայրագոյն չարիքը, հրաւիրել Քաղիկ թագաւորին Կոնստանտինուպօլիս՝ տեսութիւն անել միմեանց հետ, շատ մարդիկ Վահրամեանց համախոհներէն՝ երբ որ տեսան թէ Վէստ-Սարգիսն-էլ յորդորում է թագաւորին՝ կայսեր հրաւերը ընդունել, երթալ Կոնստանտինուպօլիս, կասկած ունեցան՝ թէ այս Վէստ-Սարգսի դարանակալութիւնն է և իրանց կարծիքը հրապարակակոծ սկսան խօսիլ: Այլ Քաղիկ չղգուշացաւ, չլսեց Վահրամին և նորա կուսակիցներուն, և դնաց Կոնստանտինուպօլիս 1045 թուին:

Կայսրը սկսաւ Քաղիկէն Անին պահանջել, և երբ Քաղիկ չ'յօժարեցաւ տալ, կայսրը նրան Կոնստանտինուպօլսումը արգելեց. և այնքան տրորեց՝ մինչև որ Քաղիկ բռնադատուեցաւ յօժարութիւն տալ: Բայց երբ Մոնոմախոս կայսրը զօրք ուղարկեց Նիկողայոս զօրավարի հետ որ Անին տիրաւորեն, Հայերը առաջ մէկ լաւ կուտրեցին Յունաց զօրքը, և ցիրուցան անելով փակցրին, բայց յետոյ իրանք կանչեցին Ասիտ զօրավարին և Անի քաղաքը յանձնեցին նրան: Այսպէս վերջացաւ Բագրատունեաց Հայոց թագաւորութիւնը՝ որ տեւել էր Աշոտոյ թագաւոր նստելէն մինչև Անիի Յունաց ձեռքը ընկնիլը 1060 տարի: Քաղիկ ընդամենը թագաւորութիւն արաւ 5 տարի: Կայսրը տուեց նրան Պիղու քաղաքը, ուր որ Քաղիկ ամուսնացաւ Սերաստիոյ թագաւորի Գաւթի դստեր. և 35 տարի թափառական կեանք անցուցանելէն յետ՝ Յունաց դաւաճանութեամբ սպանուեցաւ ինքն-էլ, իւր երկու որդիքն-էլ Յովհաննէս և Գաւթի:

ՀԱՐՄՏՈՒԹԻՒՆ ՌՈՒԲԵՆԵԱՆՑ:

(1080—1342. 262 տ.):

22

ԻՇԽԱՆԱԳԵՏՈՒԹԻՒՆ (1080—1098):

ՌՈՒԲԵՆ (1080—1098)

ԲՍԳԻԿ Բաղրատունեաց Հայոց վերջին թա-
 դաւորը՝ երբ որ իւր թաղաւորու թիւնէն զըր-
 կուած թափառական կեանք էր անցուցանում Փոքր
 Հայաստանի կողմերումը, նորա հետ կար անբաժան
 իւր մօր կողմէն մերձաւոր աղգական ՌՈՒԲԵՆ Հայկազն
 քաջ իշխանը, որ վերջապէս 1079 թուին ականա-
 տե՛ս լինելով ասպարազդ թաղաւորի դաւաճանութեամբ
 բռնուելուն, և Արղիսարացի բերդէն Մանտալեաց Յոյն
 իշխանաց ձեռքով կախուելուն, թողեց այն երկիրը,
 և իւր Արստանդին որդւոյ հետ միասին՝ անցաւ Նի-
 րատ գետը, որ այն տեղ բաժանում է Փոքր-Հայա-
 ստանը՝ Արիւկիացէն, և հետանալով դէպի Տաւրասի
 լեռինքը՝ ուր որ հազարաւոր Հայեր եկել ասպատա-

ներէին, տիրապետեց Կոստանդուլ ամրոցին, և 1080 թուին ազատասէր Հայերու համար հիմնեց մէկ անկախ իշխանութիւն: Բորբոքուած լինելով Յունաց դէմ Գագիկ թագաւորի մահուան վրէժխնդրութեամբ՝ իւր նոր գրաւած տեղերէն ջանք դրեց հալածել թշնամիներուն, և 15 տարի դիմացաւ նոցա ամեն արշուաններուն: Ռուբենի անունը լսելով՝ շատ Հայեր ժողովեցան նորա ազատած Սեբաստիան կոչուած սարերու շրջապատը և զօրացրին նրան: Մանաւանդ երեք Հայազգի իշխանք՝ որ դեռ ևս Բագրատունեաց ժամանակը այն տեղերումը երկիրներ էին տիրապետել և ինքնագլուխ ազատ կեանք էին վարում, Գող Վասիլ՝ Քեսնոյ իշխանը, և Օշին՝ Լամբրոնի տէրը ու Ապիրատ Ծովք գղեկի հրամանատարը, (որ էր Ներսէս Շնորհալոյ հայրը, և մտերիմ բարեկամ էր Կոստանդնի), յայտնի կամ ծածուկ, թէ հեռուէն՝ թէ մօտիկէն՝ օգնութիւն էին հասցնում Ռուբենին, և իրանց վերայ իշխանապետի նման էին պատվում: Կոստանդուլ ամրոցը կայ երկու ականակիտ վտակներու մէջ, որ Սեաւ լեռանէն բղխում են, և Բարձ-Բերդի կըշտին միաւորուած՝ անց են կենում Սիսի և Անարզարայի մօտէն, և մտնում են Պատմաս գետը, և նորա ջրերու մէջ անհետացած՝ ընկնում են Միջերկրական ծով: Կոստանդուլ ամրոցը՝ Զէյթունէն և Կապանէն դէպի հարաւ և արեւմուտք լինելով, և Սիսէն և Բարձր-Բերդէն դէպի հիւսիս, ունի բնութենէն այնպիսի յաջողակ դիրք, որ նորա իշխողը պիտի լինէր բոլոր Սեաւ լեռին շրջապատի տիրապետող, և այս իսկ պատճառաւ Ռուբեն իշխանապետը մէկ անգամ օտքը այս տեղերումը որ ամրացուց՝ անտարակոյս ապահովեց Զէյթունի ինքնագլխութիւնն-էլ, որ մինչև մեր օրերը տևում է զանազան փոփոխութիւններով:

Զէյթունը (Ռւնիւ) Կասպանի և Կոստանդուղի հետ մէկ եր-
ուանկիւնաձև դիրք ունենալով, և ի բնութենէ անա-
ւիկ և դժուարամատոյց լինելով, շատ հեշտութեամբ
կարող էր Ռուբեն Իշխանապետին այնպէս հաճոյա-
նալ, որ եթէ նրան աթոռանիստ-էլ չանէր, գոնէ իւր
փոքրիկ տէրութեան մայրաքաղաք կանէր: Երկու գետ
նորա առջև միանալով՝ Զէյթունը ձևացնում են ցա-
մաքակղզի, որոյ մէկ կողմը դէպ արևելք է նայում,
իսկ միւս կողմումը բարձրանում է մէկ մեծ սար:
Քաղաքը շինած է մէկ լեզուի նման բլուրի վրայ, որ
մէկ ճանապարհ ունի, և այս ճանապարհը սկսում է
Քասան դեպի կարմունջէն, որ ինն ժամուց ընթացից
չափ երկայնացած է դէպի քաղաք լեռնամէջ նեղ ու-
անձուկ կիրճերով, որ երկու մարդ հաղիւ են կարող
անց կենալ: Այս տեղերումն էր Ռուբեն Հայկազնի
հիմնած աղաա Իշխանապետութիւնը:

Նայց կարելի է թէ հնասէր ընթերցողը կամենայ
խմանալ թէ այս կողմի պանդուխտ Հայերը և՛ ըրբ էին
եկել իրանց հայրենիքէն: Պատմութեան բնութիւնը
ցոյց է տալիս, որ Փիւնիկեցոց և Եգիպտացոց առու-
տուրը շատ վաղօրօք կարող էր Հայերուն այն երկիր-
ները քաշել յետոյ Արամն-էլ՝ երբ որ Պայ-Արիա
Քաղկայ վրայ արշաւան ունեցաւ՝ Հայերու համար
Քամրաց աշխարքի վրայէն առուտուրի մեծ ճանապարհ
բացեց: Տիգրանը իւր ձեռքը հասցրուց մինչև այն
ծովեղերքին: Արշակունեաց թագաւորութեան վերջա-
նալէն յետ, երբ որ մարդպաններու և ոստիկաններու
ժամանակը, և մանաւանդ Անիի Յունաց ձեռքը ընկ-
նելէն յետ Հայերը ցրուեցան Հայաստանէն, ինչպէս որ
վերը յիշած երեք իշխանք, նոյնպէս և շատ Հայ դադ-
թականներ եկան և բնակուեցան Կիլիկիայումը. որոց
մեծ մասը փախել էին Յունաց, Պարսից և Արարացոց
բռնութենէն:

ԿՈՍՏԱՆԴԻՆ 1-դ:

(1095—1100):

Որքանի իշխանանքս թիւնը պայտաղատեց 1095
 թուին իւր որդին ԿՈՍՏԱՆԴԻՆ 1-դ. որ իւր հօր քա-
 ջազործութիւններուն հետեւելով՝ սկսաւ ընդարձակել
 իւր տէրութիւնը, և առաւ Յունաց ձեռքէն Վազիս
 բերդաքաղաքը, և այն տեղ հաստատեց իւր աթոռա-
 նիստը: Սորա օրերումը լսկսան Եւրոպացի Խաչակի-
 զօրքը արեւմուտքէն դալ արեւելք՝ Երուսաղէմը Արա-
 բացոց ձեռքէն ազատելու համար: Կոստանդին շատ
 օգնութիւն արաւ այն խաչակիր զօրքին, որ Անտիոք
 քաղաքի պաշարման ժամանակը մնացել էր սովամահ
 կոտորվելու վտանդի մէջ, և այս պատճառաւ Եւրո-
 պացի թագաւորները երբ որ Երուսաղէմը առին,
 և Գողութիւնի Քուլեօնեանին այն տեղ թագաւորե-
 ցուցին, իրանց շնորհակալութիւնները յայտնելու դի-
 տաւորութեամբ պարգևեցին Կոստանդինին Մարտի-
 սապուանուն: Կոստանդին ապրեցաւ իւր իշխանութեան
 մէջ 5 տարի, և կառավարեց իւր տէրութիւնը քա-
 ջութեամբ և ասպիտակութեամբ մինչև 1100 թիւը:

Թ Ո Ր Ո Ս 1-դ:

(1110—1123):

24

ԹՈՐՈՍ 1-դ, Կոստանդինի մեծ որդին՝ իւր հօր ժա-
ռանգութիւնը ստանալով նոյն տարին՝ ցոյց տուեց իւր
անձը արժանաւոր յաջորդ Ռուբենի և Կոստանդինի
իշխանապետութեան և նոցա նման իւր տէրութիւնը
ընդարձակելու ջանք ունենալով՝ հասուց իւր ձեռքը
մինչև Կիլիկիայ (Կապադոքիա) և այն տեղ Գաղիկ թա-
գաւորի մահուան վրէժը սրահանջեց՝ նորա մահա-
պարտներուն արժանապէս պատուհասելով: Գող Վա-
սիլին ունենալով իւր համար մտերիմ դաշնակից և
դինակից՝ քանի անգամ ջարդուփշուր արաւ Սելճու-
քեան և Թիւրքմէնեան ասպատակներուն, որ Կիլի-
կիայի դաշտակողմերը ապականում էին. և 23 տարի
սրահանեց իւր տէրութիւնը. որ շատ ընդարձակել
էր իւր պապի և հօր թողածներէն աւելի. Եւ որով-
հետև Թորոս 1-դ չունէր զաւակ՝ նորա իշխանապե-
տութիւնը մնաց իւր եղբորը:

Լ Ե Ի Ռ Ն Լ-դ:

(1123—1141):

25

Լ Ե Ի Ռ Ն Լ-դ. Կոստանդինի կրտսեր որդին՝ 1123 թը-
ւին ստացաւ իւր եղբոր ժառանգութիւնը, և քանի
անգամ պատերազմ ունենալով Յունաց դէմ մեծ մեծ
յաղթութիւններ արաւ կայսերական բանակներու վրայ,
և նոցա ձեռքէն խլեց Մսիս, Տարսոն, Սարւանդիքար
և այլ քաղաքներ: Այն միջոց՝ որ Բագարատ իշխանը
Քողովրիտի եղբորը Բալդուինին (Բաղաին) օգնում էր
Եղեւսիա քաղաքը Յունաց ձեռքէն առնել, Լեոն
էլ ձեռնտու գտնուեցաւ Ռոմերին Անտիոքայ իշխա-
նին, որ Սարակինոսայ ձեռքէն առին Ազաղ քաղաքը:
Բայց երբ որ միւս Բալդուին Մարաշի իշխանը սկսաւ
գրգռութիւն անել Լեոնի դէմ, պատերազմի մէջ Լեոն
յաղթեց Բալդուինին, այլ հաշտութեան ժամանակը
Բալդուին դարանի մէջ դձելով Լեոնին՝ բռնեց, և այն
ժամանակ արձակեց՝ երբ որ Լեոն տուեց նրայ դաշնակից
Բոյէմունդին՝ Ատանայ, Մսիս և Սարւանդիքար քա-
ղաքները: Սակայն Լեոն երբ որ աղաւտութիւն ստա-
ցաւ՝ բռնորն-էլ յետ խլեց, և աւելի պատիժներ-էլ
աւելացրուց Բոյէմունդի և Բալդուինի վրէն: Բոյէ-
մունդի յաջորդ Ռայմոնդը Յունաց Յոհաննէս Կոմնե-
նոս Կայսերէն նեղ տեղ մնալով օգնութիւն խնդրեց
Լեոնէն. Լեոնն-էլ Սելևկիա քաղաքը՝ որ Յունաց ձե-

ոին էր՝ սաշարեց: Սյս թէպէտ և փրկեց Ռայմոն-
 դին, բայց կորուստի սրտաճառ դառաւ Լեոնին: Յո-
 Տաննէս Կոմսենոս կայսրը մեծ բանակով մտաւ Կիլի-
 կիա, Մսիս, Տարսոն, Ատանայ, Շահուտ, Ամայք և Կա-
 լիճ՝ քաղաքները՝ ուր որ կային բնակուած շատ Յոյնք՝
 անձնատուր եղան, և կայսրը եկաւ սաշարեց Անար-
 զարա մեծ քաղաքը և առաւ. յետ որոյ շատ զօրք զո-
 Տելով իւր բանակէն՝ Վաճկայ քաղաքն-ել ձեռք գծեց.
 և 1136 թուին խարեւթեամբ բռնեց Լեոնին և իւր
 երկու որդւոց Ռուբենին և Թորոսին, և տարաւ դերի
 Կոնստանտինուպոլիս: Այն տեղ Լեոն մեռաւ դերու-
 թեան մէջ 1141 թուին. (Ռուբէն դեռ ևս նոր էր
 տարած Յունաստանի մայրաքաղաք, որ յաջողկոտ Յոյնք
 աչքերը Տաննէս սպանեցին): Կիլիկիայումք մնացել
 էին Լեոնի երեք որդիքը՝ Կոստանդին, Ստեփան և
 Մէհ:

Թ Ո Ր Ո Ս 2-դ:

(1144—1168):

Լեոն 1-դի դերի ընկնելով, և օտարութեան մէջ
 մեռնելով՝ Ռուբենի Տիմնած իշխանապետութիւնը վեր-
 ջացաւ, և Կիլիկիա՝ ուր որ Հայերը իրանց Տամար
 գտել էին աղատութիւն, անկախութիւն և բարոյական
 կենդանութիւն, միւսանդամ ընկաւ Յունաց բռնակա-
 լութեան ներքոյ. և Յոյնք՝ ինչպէս որ Հայաստանու մն

էին անուամբ այս տեղէլ նոյն շաւիղով սկսան ընթաց-
նալ, այսինքն՝ հողում չափ զինիլ Հայերու ձեռքէն
առնուլ տէրութիւնը, և չարահալանել, և վերջապէս
բարբարոսաց ձեռքը մատնել:

Երբ որ կայսրը և կայսերական զօրքը թողին Կի-
լիկիա՝ կիսախօտարիտուլ և կիսաուեր, Կիլիկիայի Յունաց
կուսակալներն-էլ այնպէս սկսան պաշտպանութիւն
անել այն երկիրներուն, որ Ահմետ-Մալէք ամիրայն
Սկիւթացի զօրքով եկաւ, և առաւ Վահկայ (Բարկայ) և
Կասրան բերդաքաղաքները և ուրիշ քաղաքներ և ամ-
րոցներ: Այլազգեաց այս՝ Կիլիկիայի վրայ արշաւելը
կրկին պատերազմ հրաւիրեց. և Յոհաննէս Կոմնե-
նոս կայսրը միւսանգամ եկաւ Կիլիկիա: Թորոս իշխա-
նորդին, որ արդէն բանտէն ազատուել էր, և կայսե-
րական բանակի մէջ էր զինուորուած, կայսեր զօրաց
հետ եկաւ Կիլիկիա 1142 թուին:

Ոմանք ասում են՝ թէ Թորոս ամուսնացել էր մէկ
հարուստ և մեծատուն տիկնոջ ազգաւ Յոյն, և երբ
այրիացաւ՝ իւր ճոխութիւնը ժողովեց եկաւ Կիլի-
կիա: Թէ այսպէս, և թէ այնպէս՝ կայսրը Կիլիկիա-
յումը մեռաւ. և Թորոս մնաց Կիլիկիայումը, և իւր
անձը յայտնեց Հայերուն: Հայերը՝ որ զգուած էին Յու-
նաց բռնութենէն՝ երբ որ տեսան իրանց իշխանոր-
դւոյն՝ հաւաքվեցան նորա չորս կողմը. և Թորոս նը-
րանցմով զօրացած՝ արշաւեց Վահկայի վրայ և առաւ,
յետոյ գրաւեց Մսիս, Ատանայ, Անարղարայ, Թիւ,
Ամուտ, Սեմանկալ, Առիւծ և այլ բերդաքաղաքներ:
Այս քաջաբործութեանց միջոցը՝ որքան որ Յոյնք
կային Կիլիկիայումը՝ կամ կուտորուեցան կամ հալա-
ծուեցան, և Հայոց անկախ ազատութիւնը միւսան-
գամ հրատարակուեցաւ Կիլիկիայի մէջ 1144 թուին:

Լամանուէլ Կոմնենոս կայսրը՝ որ Յոհաննէս Կոմ-

նենասին յաջորդեց, երբ որ լսեց թորոսի արած դոր-
ճերու համբարը՝ շտապեց հաշտութիւն անել Հուն-
դարացոց հետ՝ որ նորա դէմ պատերազմ ունէին, և
հասնել թորոսի վրայ: Կայսրը ինքը եկաւ բոլոր Հը-
ռոմէական զօրութեամբ, և յետ առաւ Ատանայ և Տար-
սոն քաղաքները: Բայց որովհետև ինքը պիտի վերա-
դառնար Յունաստան՝ յանձնեց իւր լեգէոնները իւր
հօրեղբորորդւոյն Անդրոնիկոս զօրապետին, որ թորո-
սին խալառ նուաճէ: Կայսրը յորդորեց Անտիոքի իշ-
խանին Շատիլոնեան Հռենալդոսին՝ որ Յունաց զօ-
րավիգ լինի թորոսի դէմ: Թորոս մտաւ Բարձր-Քերդ-
ամրոցը, և այն տեղէն զանազան հնարներով քանի
անգամ ջարդեց Անդրոնիկոսին և Յունական զօրքը
ցիրուցան արաւ. և Յունաց զօրավարներուն բռնելէն
և թանկ գնով աղատելէն յետ՝ Հռենալդոսի միջնոր-
դութեամբ հաշտութիւն արաւ կայսեր հետ:

Հալէպի Սուլթան Նուր-էդ-դինը քանի անգամ
խաչակիր զօրքին յաղթեց Ասորոց երկրումը, և նա-
ցամէն շատ երկիրներ առաւ: Երուսաղէմի Բալդուին
թագաւորը օգնութիւն խնդրեց թորոսէն: Երբ որ
Հայերը միաւորուեցան խաչակիրներու հետ, 1159 թը-
ւին Քրիստոնեաները առին Կեսարիա քաղաքը յար-
ձակմամբ, և Նուր-էդ-դինին հալածեցին: Թորոս երբ
որ դարձաւ Կիլիկիա՝ իմացաւ որ Յոյնք իւր հեռա-
ցած ժամանակը դաշնադրութիւնը աւրել են. այն պատ-
ճառաւ նա-էլ արշաւեց միւսանգամ նոցա դէմ, և ա-
ռաւ նոցա ձեռքէն Տարսոն, Անարզաբայ, Մսիս, Ատա-
նայ, Սիս և այլ ծովեղերեայ քաղաքներ:

Լամբանուէլ կայսրը բարկացաւ թորոսի վրայ, և կըր-
կին ուղարկեց նորա դէմ Անդրոնիկոսին: Անդրոնիկոս
բոլոր Յունական զօրութեամբ պաշարեց Մսիս (Մոս-
սուխ) քաղաքը: Թորոս յանկարծ դուրս վազեց պա-

շարուած քաղաքէն, և այնպէս կոտորած արաւ, որ
Յոյնք հազիւ կարողացան իրանց մնացորդները փրկել
Անտիոք քաղաքումը:

Մեղրոնիկոսի յաղթութիւնը խոր խոցեց Էմմա-
նուէլ կայսեր սիրաւը, այլ չկարողացաւ նորա անբար-
տաւանութիւնը ընկճել: Կայսեր միւս հօրեղբօր որ-
դին Կոնստանտին Կալամանոս եկաւ Աիլիկիա անթիւ
ղօրօք, որ Անդրոնիկոսի կորցրածները յետ առնու-
այլ Տարսոնի մօտ Հայերու և Յունաց մէջ համախմ-
բուած ճակատամարտը շատ ջարտբաստ եղաւ Յունաց
համար, և Հայոց տիրապետութիւնը ամրացուց Աիլի-
կիայի մէջ: Կայսերական բանակը ամեն կողմանց
ջարդուփշուր լինելով՝ փախաւ, և Կալամանոս ընկաւ
գերի: Թորոս թանկ գնով ծախեց նրան-էլ:

Երբ որ Յոյնք իսպառ հալածուեցան Աիլիկիայէն,
և այս երկիրը բոլորովին ընկաւ Թորոսի իշխանութեան
տակ, Թորոս սկսաւ իսաւրիայի կողմը արշաւել, և
յաջողութեամբ այն երկիրն-էլ Հայոց իշխանութեան
ներքոյ ընկաւ:

Իսկոնիայի (Ղոնիայէ) Սուլթանները մինչև այս ժա-
մանակ հանդարտ նստած էին, և չէին խլրտում Թո-
րոսի դէմ: Այլ Մաղսուտ Սուլթանը Էմմանուէլ կայ-
սեր սարգևներէն հրապուրվելով աւերեց Թորոսի հետ
ունեցած դաշնադրութիւնը, և սլաշարեց թիւ ամրոցը,
որ շատ հեռի չէ Անարզարայէն: Այլ Թորոսին օգնու-
թիւն հասաւ ժանտախար, որ կատաղութեամբ կատ-
րում էր Մաղսուտի զօրքը. և Թորոսի եղբայր Ստե-
փանը սպանեց Մաղսուտի որդուն Եաղուբին, և նորա
զօրքը բնաջինջ արաւ: Այս շիտթներու ժամանակը
Թորոսն-էլ մտաւ Ղոնիայի երկիրը, և ճոխացուց իւր
զօրքը անհուն աւարօք և անթիւ գերութեամբ: Սուլ-
թանը հաշտութիւն խնդրեց, և հեռացաւ բայց յետոյ

կրկին եկաւ թորոսի վրայ, և միւսանգամ ջարդուեցաւ և հաշտուեցաւ :

Ենդրոնիկոս Եւփորբեն Յունաց զօրապետը Մարաշի մօտ դաւաճանութեամբ սպանեց թորոսի եղբօրը Ստեփանին . այս սպանաւաւ թորոսն-էլ միւսանգամ Յունաց դէմ յարձակեցաւ, և մեծ ջարդ տուեց Եւփորբենին, և Յունաց զօրքը իսպառ հալածեց Աիլիկիայէն. և մէկ փոքրիկ նաւատորմիդ շինեց, և արշաւեց Աիպրոս կղզու դէմ :

Դամանուէլ կայսրը տեսնելով որ ոչ իւր զօրաւարները կարողացան նուաճել թորոսին, և ոչ իւր դաշնակից այլադղիները, բռնադատուեցաւ էլի ինքը անձամբ անձին դալ թորոսի դէմ : Թորոս լսեց որ կայսրը գալիս է բոլոր կայսերական զօրութեամբ, ըսկաւ զզուշութիւն սլահաթանել, և թէպէտ առաջին նուազին կայսրը առաւ մէկ քանի քաղաք, բայց Երուսաղէմի թագաւորը մէջ մտաւ, և հաշտութիւն արաւ . այս հաշտութեամբ թորոս այն քաղաքները էլի յետ ստացաւ 1159 թուին. և այնուհետեւ անլրդով կառավարեց իւր իշխանապետութիւնը : Սորա համբաւը այնքան մեծ էր այն երկիրներումը, որ Աիրանանի բնակիչք թորոսին իրանց նահապետ կարծելով իրանց Տիւրղիւ անունը կամ Գրուզ կոչուիլը համարում են նորա անունէն մնացած, մոռանալով Տիւրոսի անուամբ Տիւրացի լինելը . և թորոսին՝ Գրոս են ասում, որ իրանց մատնցոյց եղած ժամանակէն ևս քաջայայտ է երևում : Թորոս մեռաւ զկնի 24 տարի փառաւոր տիրապետութեան :

Մ Լ Ե Հ:

(1168—1174):

Թորոս իմանալով իւր մահու մերձենալը, և տեսնելով՝ որ իւր որդին դեռ մանուկ է, իւր իշխանապետութեան և իւր դեռահաս ժառանգի հոգարարութիւնը յանձնեց իւր աներօջը՝ Թումաս Պայլին՝ որ Անտիոքի իշխանն էր:

Թորոսի կրօնը եղբայրը Մէհ՝ որ Հալեպի Սուլթան Նուր-էդ-դինի մօտ էր, երբ որ լսեց՝ թէ իւր եղբօր Թորոսի որդին Աուբենը Հռոմկլայ բերդաքաղաքումը մեռել է, և Թումաս Պայլը Կիլիկիայի տէրութիւնը կամենում է իւրացնել, առաւ Հալեպի զօրքը, և եկաւ Կիլիկիա, Թումասին դուրս արաւ, և իւր հօր և եղբօր ժառանգութիւնը գրաւեց 1169 թուին: Այն ժամանակներումը Տաճարական (Templier) կոչուած սպանները, որ Կիլիկիայումը Հայոց իշխանապետներէն տեղեր էին ստացել և կալուածատէր էին դառել, սկսան Թումաս Պայլին կողմնատրտութիւն ցոյց տալ. այս պատճառաւ Մէհն-էլ նրանց Կիլիկիայէն հալածեց, և նոցա կալուածները տիրապետեց: Եւ սորա հակառակ՝ Նուր-էդ-դին Սուլթանի և ուրիշ այլազգեաց իշխաններու հետ դաշնադրութեան կապերը ամրցուց: Քրիստոնեայ իշխանքը նախանձելով սրայ յաջողութեանց

վրայ, և Տաճարականաց հաշվածելու վրէժը առնուլ կա-
մէլով Մլէհէն, սկսան անգաղար Կիլիկիա արշաւել,
այլ Մլէհ ամեն տեղ նրանց յաղթեց. և նոցա սիրտը
աւելի կսկծեցնելու համար՝ որքան Լատինացի որ
բռնում էր՝ ծախում էր գերիի նման այլաղգիներուն,
որով շատ դառնացուց խաչակիրներուն: Երուսաղէմի
թագաւորը ուղեց մէջ մտնել և հաշտութիւն սերմա-
նել. բայց Մլէհ որովհետև գիտէր նոցա խաբէու-
թիւնը՝ յանձն չառաւ հաշտուիլ. այն պատճառաւ
Երուսաղէմի թագաւորն-էլ թշնամիներու հետ միա-
ցաւ, և արշաւեց Մլէհի դէմ: Բայց Մլէհ չվախեցաւ
նոցա յարձակմանէն, որովհետև գիտէր իւր հնաքնե-
րու արգասիքը: Նուր-էդ-դին Սուլթանը իւր դաշին
վրայ հաստատ մնալով Մլէհի ակնարկութեամբ մտաւ
Երուսաղէմի թագաւորութեան սահմանը: Երուսաղէմի
թագաւորը տեսնելով՝ որ իւր տէրութիւնը ոտնակոխ
է լինում, թողեց Կիլիկիան և դարձաւ իւր տեղը:

Երբ որ այս Լատինացոց արշաւանը վերջացաւ,
Յոյնք սկսան դաւ Մլէհի վրայ: Առաջ եկաւ Միքայէլ
Քրանաս դուքսը, Մլէհ սաստիկ հարուած տուեց նը-
րան ու դարձուց յետ: Նորա տեղ եկաւ Անդրոնի-
կոս Եւփորբենտսը, որ նորա եղբօրը Ստեփանին նեն-
գել էր. այլ Մլէհ նրան-էլ խայտառակութեամբ ճան-
փեց: Յետոյ շատ զօրավարներ ջարդուփշուր անելէն
ետքը՝ եկաւ Կալամանոս Կոստանդինը, բայց չարաչար
յաղթուելով և շատ Յունաց դիակներ թողնելով Կի-
լիկիայի դաշտերումը ու հովիտներումը՝ գլուխը հա-
ղիւ յետ տարաւ ողջամբ: Այն ժամանակը Էմմանուէլ
կայսրը անձարացած՝ ինքը եկաւ Երրորդ անգամ Կի-
լիկիայի վրայ: Մլէհ նորոգեց Սուլթան Նուր-էդ-դինի
հետ դաշնակցութիւնը, և Գաղատիայի (Քէօնոյեայի)
Խչխանի հետ-էլ նոր դաշինք դրեց, և այսպէս գնաց

կայսեր զօրաց դէմ, որ անհասար բաղմութեամբ դա-
 լիս էին Արիւիկիայի կողմերը: Երկու բանակ ճակատե-
 ցան դիմաց դիմաց, բայց կռիւ չսկսեցան: Հայերը
 և Յոյնք մէկ մէկու գետալաններ ուղարկելով՝ հաշտու-
 թիւն արին, և կայսրը՝ որ այնքան բաղմութիւն իւր
 տէրութենէն տեղաշարժ էր արել, նոյն ճանախով յետ
 դարձաւ, որով որ եկել էր: Այս յաջողութիւնները
 բարձրացուցին Մլէհի սիրտը, որ կարծեց՝ թէ այս
 ամեն բաջազործութիւնները ինքն է արել: Հայոց
 իշխանք խրատեցին նրան, որ շատ չ'մեծամտի, այլ
 նա չ'լսեց, և սկսաւ զօրաց դէմ բռնութիւն անել:
 Հայոց զօրքը աղմկեցան: Այս շիտթի մէջ Սիս բաղա-
 քումը Մլէհ սպանուեցաւ, և զօրքը և իշխանքը չրկա-
 մեցան որ նորա ազդատոհմը ժառանգէ, Ռուբենեանց
 իշխանապետութիւնը, այլ իրանց կամքով դասն ու
 դրին իրանց ուղեցած իշխանապետը:

Ռ Ո Ւ Ք Ե Ն 2-դ.

(1174—1185):

Ետն 1-դի չարարատիկ վիճակի փոխարէնը, որ
 նա գերի ընկաւ Կոնստանտինուպօլիս, և անդրանիկ
 որդւոյ կսկիծը և դառնաղէտ մահը տեսնելով՝ բանախ
 մէջ կնքեց իւր գիւցազնարժան կեանքը, նախախնա-
 մութիւնը առատաձեռնութեամբ հասոյց նորա որդւոց,
 որոց երկուք թորոս 2-դ և Մլէհ հետ զհետէ նստան

Կիլիկիայի Հայոց իշխանապետութեան ակնարկ . իսկ միւսի՝ Սաւեիանի, որ Յունաց դաւաճանութեամբ կըտատանա՛ Վախճան ընկալաւ՝ որդիքը Ռուբէն և Աւոն ժառանգ դառան նախնեաց անուան և սարժանաց, և Աւոն՝ նորոգեց իսկ Հայոց թագաւորութիւնը, որ Ալէքսանդրի Մակեդոնացոյ Տղօր բազուկը դետին էր գլորել :

Ողբաց Հայաստան Վահէի մահը՝ ողբաց և միւս Հայկազանց վրայ . որոնք Պարոյրի և Տիգրանի դահը նորոգել էին ազգասիրութեամբ, բայց չէին կարողացել իւրեանց հայրենիքը ազատել Մակեդոնացոյ ճակերէն, և Արշակունեաց հարստութիւնը ուրախութեամբ ընդունեց . բայց երբ որ զգաց նորամէն ստացած անբուժելի հարուածը, ողբաց իւր թշուառ վիճակի համար, որն որ չունէր հնար բարւոքելու՝ բայց եթէ միայն մեծ մեծ զոհերով :

Սակայն ո՛չ այս զոհերը, ո՛չ-էլ հինգ վեց դարերով ամենակերպ անյաջողութեանց դէմ մաքառելը կարաց նրան սիովել . բռնադատուեցաւ միւսանգամ ողբալ, երբ որ տեսաւ իւր քնքուշ մարմինը օտարացեղ ուրջուներու (խորհրդաւոր) ճանկերով դիշատուած : Բազրատունիք և Արծրունիք խմեցրին Հայերուն՝ դառնութեան մրուրը, և ողորմելի ազգը հարկադրուեցաւ ուրանալ իւր ճնողին, հեռանալ նրամէն, և հեռուից նայիլ նրա վրայ այնպէս զարհուրանօք՝ ինչպէս որ սիւսի գառը՝ (եթէ խելքը կտրէ)՝ նայի սպանդանոցի վրայ, ուր որ իւր տեսակները հազարներով և բիւրներով են կտորովում :

Այս զարհուրանքով սարսափած Հայերն են, որ այժմ Կիլիկիա են ժողովվել, և անկախ տէրութիւն են ստացել : Բայց Ռուբենի Ա-դի հիմնած, և Աւոն Ա-դի կորցրած տէրութիւնը չէր այնպէս՝ ինչպէս որ

Թորոս Զ-դի նորոգած տէրութիւնն էր. վերջինս լաւ և
ընդարձակ և հզօր էր քան զառաջինն. և այս տէրու-
թեան ժառանգ ընտրուեցաւ Ռուբէն Զ-դ (Քրիզօր
Տղայ կաթողիկոսի ժամանակը): Հայոց ազգը սիրում
էր և ցանկանում էր որ ունենայ անկախ և ազատ իշ-
խան, բայց չէր ուզում ունենալ իւր գլխին բռնակալ:
Բռնակալ էին Արշակունիք, նոցա լուծը հանեց Հայոց
ազգը իւր շէնքէն: Բռնակալ էին Քաղբատունիք, ազ-
գը նրանց չսիրեց: Բայց իւր կամքով հնազանդուեցաւ
Ռուբենին և նորա յաջորդաց. իւր կամքով միւսանգամ
Թորոսին օգնեց և նստեցուց իշխանապետութեան ա-
թոռ: Մէհ թոնութեամբ ներս սարդեցաւ, բայց նորա
առիթը բարեձև էր. ստաց՝ թէ իմ հօր և եղբօր ա-
թոռը ես կպահպանեմ, քան թէ օտարացեղ Վատին
Թոմաս Պայլին թոյլ կուտամ՝ որ տիրէ. ազգը տե-
սաւ ազգասիրութիւն, և հաւնեցաւ. բայց երբ որ
զգաց՝ թէ Մէհ ուզում է ազգին-էլ ոտնակոխ անել,
Մէհին սլատուհասեց մահուամբ, և նորա առարայող
եղբօր որդւոյն Ռուբենին արաւ իւր հօր եղբօր աթո-
ռին յաջորդ և ժառանգ:

Ռուբէն Զ-դ՝ 1174 թուին ազգի կամքով դառաւ
իշխանապետ, և ջանք դրեց բարի և արի գործքերով
իւր ազգի սիրար և սէրը գրաւել: Նորա ազգսէն
գործքերու մէկն-էլ այս եղաւ, որ Տարսն քաղաքը
ժուխու առաւ Անտիոքի իշխող Բոյեմունդէն, որ Յու-
նաց ձեռքէն խլել էր սլատերազմով: Այլ յետ այսո-
րիկ Վամբրոնի իշխան Հեթումի գրգռելով՝ Բոյեմունդ
դաւաճանութեամբ բռնեց Ռուբենին, և կամենում էր
Պիլիկիային տիրապետել: Բայց չ'յաջողեց. որովհետև
Ռուբենի եղբայր Վեոնը այնպէս նեղ տեղ գձեց Բոյե-
մունդին, որ բռնադատուեցաւ Բոյեմունդ արձակել
Ռուբենին, և Հեթում հաղիւ կարաց հաշտեցնել Վե-

ոնին իւր հետ: Ռուբեն զկնի շատ աշխարհաշէն գործ-
քերու 1177 թուին իւր իշխանապետութիւնը յանձ-
նեց իւր եղբորը Աէոնին, և ինքը մտաւ կրօնաորական
կարգ:

ԹՍԳՍԻՈՐՈՒԹԻՒՆ (1198—1342):

ԼԵՈՆ 2-դ:

(1185—1219):

29

Օրու չանցաւ Հայերու ազգասիրութիւնը՝ որ Թո-
րոս 2-դին օգնելով՝ Ռուբենի և Ռուբենեանց աթոռը
կրկին կանգնեցրին. այս աթոռը պիտի իրայ վրայ ցոյց
տար ո՛չ միայն իշխանապետներ՝ որ ազգի մտքը բե-
րէին նահապետական դիւցազներուն — Հայկին, Արա-
մին, Արային, Զարմայրին. այլև պիտի փառաւորութե-
թագաւորական պատկազարդ քաջերով, որոց կարօ-
տով աղէկիզվում էր Հայաստան՝ Պարոյրներուն, Տիգ-
րաններուն և Վահէներուն միտքը բերելով: Այս ա-
թոռի վրայ էր նստած Ռուբեն 2-դ, որ երբ դաւա-
ճանութեան խաղալիկ դառաւ՝ սրտակաւոր երեսը դար-
ձուց դէպի կրօնական միսիթարութիւն, և իւր երկրա-
ւոր փառքը փոխադրեց այնպիսի բազկի մէջ, որ ա-
ռաջուանէ ցոյց տուեց՝ թէ նա է միայն կարող ազգի
այնքան դարերու կարօտութիւնը լցուցանել: ԼԵՈՆ 2-դ,
որոյ արդիւնաբար իշխանութիւնը տևեց 34 տարի,

էր քաջարի և քաջաւարժ զօրաւար, բարեպաշտ և բարի համբաւի տենչացող իշխան, որ այս սկզբունքներուն հաւատարիմ մնալով՝ իւր տէրութիւնը ընդարձակեց, թշնամիներու վրայ յաղթանակ կանգնեց, և ներքին կառավարութիւնը պայծառացուց. ուսումնարաններ հիմնեց և ծաղկեցուց, անկելանոցներ, որբանոցներ շինեց, ճանապարհներ բացեց, երկրագործութիւնը, վաճառաշահութիւնը, նաւադնացութիւնը զօրացուց, և իւր դաճը շրջապատեց նոր փաղփիւններով, զանազան կարգանորոգութիւններով, և Եւրոպացի թագաւորներու հետ բարեկամութիւններով:

Մինչդեռ Ղէոն այսպէս խաղաղասիրական գործերով զարդարում էր իւր իշխանապետութիւնը, յանկարծ թիւրքմէններու Ամիրան Ռիւստէմը մտաւ Կիլիկիա և հասաւ մինչև Սիս քաղաք: Այլ չմնաց անպատիժ. Ղէոն կոտորեց նորա զօրքը. Հայերը ջարդեցին թիւրքմէններու բանակը, և Ռուստէմին սպանեցին: Գեռ այս անակնկալ արշաւանի վերքը չէին առողջացել, որ Հալէպի և Գամասկոսի Սուլթանները համախումբ զօրութիւնով սկսան Ղէոնի տէրութեան վրայ խիզախել. այլ Հայերը ամեն անգամ և ամեն տեղ յաղթեցին ու վանեցին, և Ղէոն սահմանագլուխներումը բերդեր շինելով՝ ապահովեց այն կողմերը ասպատակներու յարձակումներէն: Նոր ի նորոյ գրաւեց Ղէոն Իսաւրիա երկիրը, որ նորա նախորդաց ժամանակը ընկել էր Ղոնիայի Սուլթաններու ձեռքը:

Այս միջոցները՝ որ Կիլիկիա այսպէս հզօր իշխանապետ ունենալով՝ վայելում էր իւր արժանաւոր բարօրութիւնը, Ասորիքն ու Պալէստինը՝ որ խաչակիր իշխաններու ձեռին էին, ներքին ազմուկներու մէջ դիշատվում էին, և արտաքին արշաւաններէն ճնշվում: Երուսաղէմ, որ 1099 թուին ընկել էր Եւրոպացոց

ձեռքը, Գուխտոն Լուսինեան թագաւորի ժամանակը
1187 թուին սուաւ Սուլթան Սալադինը (Սէլէ-է-Է-Էն)
որ Հայաստանի կողմերէն գնացել՝ Եգիպտոսումը թա-
գաւորել էր: Եւրոպացիք էլի եկան մեծ բազմութեամբ
այս կողմերը՝ որ Երուսաղէմ ազատեն, խաչակիր ղորաց
գլխաւորն էր Յրիգրիտ 2-դ՝ Գերմանացոյ կայսրը,
որ Լէոնէն օգնութիւն խնդրեց: Լէոն չ'ուշացուց կայ-
սեր ուղած նպաստը. և երբ Ալիք-Առլանի ձեռքէն
առին Ղոնիան, խաչակիր բանակը մտաւ Աիլիկիա, և
շատ մարդասիրութիւն գտաւ Հայերից. այս սխտածա-
ռաւ կայսրը խոստացաւ Լէոնին արքայական թագ ըն-
ծայել: Քայց կայսրը գեռ իւր խոստումը չկատարած՝
Սելեկիայի մօտ Աալիկադնոս գետումը խեղդուեցաւ,
և կայսեր համար մեծաշուք ընդունելութիւնը՝ միւս
խաչակիր իշխանաց ընծայեց Լէոն: Եւ երբ Գերմա-
նիոյ կայսրութիւնը ստացաւ Հենրիկոս 4-դ, իւր նա-
խորդի խոստումը կատարելով՝ բոլոր Աիլիկիա բնակ-
ված Հայերու հաճութեամբ տուեց Լէոնին արքայա-
կան թագ, և Լէոն օծուեցաւ Հայոց թագաւոր Տար-
սոն քաղաքումը (Գրիգոր 5-դ Ապրիլի մահանուա-
նեալ կաթողիկոսի սպասաւորութեամբ)՝ 1198, Յուն-
վարի 6 ին մեծափառ հանդիսավեհութեամբ՝ Հայոց,
Յունաց և Լատինացոց իշխանաց անհամար բազմու-
թեան տաջիկայութեամբ: Յունաց կայսրը՝ Ալէքս
Անգէլոս լսելով այս լուրերը՝ ինքն-էլ ուղարկեց Լէոնի
համար թագ արքայական:

Մինչև այս տեղ լաւ էր գնում Հայոց գործը: Հա-
րիւր տարի աւելի էր՝ որ Հայերը Եւրոպացոց հետ
բարեկամութիւն էին անում, նրանց նեղութեան ժա-
մանակը համնում էին. ինչ օգուտ էին ստացել, կամ
ստանում: Կոստանդին 1-դ Աուրենի որդին ստացաւ
Մարքէզ անուն, Լէոն 2-դ ստացաւ թագաւոր անունը

Մտքա լոկ անուններ էին: Կոստանդին՝ Մարքեզ անուն
տոանալով՝ աւելի զօրութիւն չունեցաւ. և ո՛չ Ղէոն
թագ ունենալով՝ աւելի քաջութիւն ըստացաւ. բայց
մնաս շատ ունեցան:

Մարքեզ կնաշանակէ՝ Կոստանդին կամ սահմանակալ,
Կոստանդին՝ ինքնագլուխ իշխանապետ էր, Մարքեզ
անուն տոանալով՝ Տամարուեցաւ Եւրոպացոց Տալա-
տակ (Վասակ): Եթէ Եւրոպացոց Տալատակ էր, երբ
որ նորա որդին Ղէոն 1-դ գերի ընկաւ Յունաց ձեռք,
որ միշտ Եւրոպացոց դարանակալ էին, Եւրոպացիք
պիտի օգնէին, և դերութենէն աղատէին. բայց տե-
սանք որ փոյթ չունեցան. մանաւանդ՝ թէ խաչակրաց
իշխանները քանի անգամ Հայերու դէմ թշնամութիւն-
ներ արին: Ղէոնն-էլ Թագաւոր անուն ստացաւ. ինչ
օգուտ երբ որ Հռոմաց քահանայապետը միմիայն Տա-
ղարաւոր մղոն Տեոս տեղերէն Ղէոնի Լաֆի վրայ խա-
չակներով կարծեց թէ իրաւունք ստացաւ Հայերու
վրայ և Հայոց եկեղեցւոյ վրայ ունենալ այն Տեղինա-
կութիւնը, ինչ որ սեփականել էր իրան՝ Հռոմէադա-
ւան կաթողիկոս վրայ: Թէպէտ՝ եթէ ճշմարիտը ասենք,
այս Ղէոնի ըստացած Լաֆին չէր: Թորոս 2-դ, ասել էր
երկրորդ ամուսնութեամբ Անտիոքի իշխանի Թոմաս
Պայլի դուստրը, որմէն որ ունեցաւ զաւակ Ռուբեն՝
մանկական տիոց մէջ վախճանած: Թորոսի Տայրը ա-
պարազդ Ղէոն 1-դ էլ ամուսնացած էր Եդեսիոյ Լա-
տին իշխանի դստերն: Այս Լատինացոց Տեոս արած
խնամութիւնը ճանապարհ էր բացել Հռոմէական կար-
գաւորաց Տամար դէպի իշխանապետաց ապարանը:
ՌոմլՏեոս Կիլիկիա՝ Երուսաղէմի կողմը երթեկեկու-
թեան ամենէն աւելի ապահով ճանապարհներու մէկն
էր, այն պատճառս Լատին կրօնաւորները բնաւ պա-
կաս չէին. և որովՏեոս Գրիգոր Վհայասէրը, Գրիգոր

Պատմաբանին, Ներսէս Կարէօյի Ենթակին, Գրեգոր Տղայ,
գիտնական կաթողիկոսները, և Ներսէս Լաֆրոնսային
և նորա նման քաջուս և ազգասէր եպիսկոպոսները
խաղաղասէր հոգւով եղբայրական ընդունելութիւն
էին ցոյց տալիս Հռոմէադաւան կարգաւորներուն, ինչ-
պէս որ Յունադաւաններուն անխտիր, — Հայոց կար-
գաւորներու մէջէն մէկ քանի տգէտ անձինք, որոց
խելքը աչքերու մէջն էր, սկսան կրօնական բաներու
մէջ, երբեմն Յունաց կողմը հակիլ, երբեմն Լատի-
նացոց: Այս տեսներով Հռոմայ քահանայապետութիւ-
նը սկսաւ համարձակութիւն ստանալ, և որովհետեւ
իւր իշխանութիւնը կամենում էր Տէր-Երանան անել,
ցանկացաւ այդ տիեզերականի տակ Հայերուն-էլ նուա-
ճել, որ Հայոց եկեղեցին, Հայրապետութիւնը և բոլոր
ազգը Հռոմոց վարդապետութիւնը ընդունի, և Հռոմայ
գահին հպատակի, և Հայոց թագաւորը ճանաչէ Հռո-
մայ Քահանայապետին իրան անմիջական գլուխ: Այլ
որովհետեւ Գերմանիոյ կայսրն-էլ, որ ունէր Եւրոպ-
այի մէջ շատ հպատակ թագաւորներ, այդ պահան-
ջած չէր Լէոնէն՝ երբ որ Արքայական թագը տալիս
էր նրան, (որովհետեւ այն Խաչը պարզեւ չէր, այլ վարձ
և փոխադարձ էր նորա երախտեաց՝ ինչ որ նա արել
էր Քրիստոնեայ խաչակրաց իրանց նեղ ու անձուկ դը-
րութեան մէջ, մինչ որ Յոյնք-էլ քան զՄահմետա-
կանս աւելի էին նրանց գլխահար լինում), Լէոն չը
կամեցաւ Հռոմայ ուսկանի մէջ ցանցուիլ. և համար-
ձակ գրեց Փափին, որ նա օանձէ իւր հոգևորական-
ներուն. այլ չկամենալով սրտոճառ տալ դժտութեան,
ինքը ուղեց իւր համար Իննուկենտիս Փափէն սրբոյն
Պետրոսի ասպետութեան (Կաթողիկոսին) նշանը, և կա-
թողիկոսին-էլ թոյլ տուեց որ ուղէ իւր համար մա-
տանի և վերաբերու (Պատմութեամբ), իբր ի դրութիւն Հայ-

բապետական իշխանութեան, բայց իրապէս՝ միայն Քահանայապետի սիրտը շահելու համար, որ չասէ՝ թէ Հայերը նրան անդոսնում են: Այս պատճառներով բացուեցաւ Հռոմայ գահի և Հայոց թագաւորութեան մէջ երկար բանազնացութիւն, որոյ վերջը այն եղաւ, որ Ղէոն դուրս արաւ Կիլիկիայէն Վատին կրօնաւորներուն-էլ, աշխարհականներուն-էլ: Հայոց եկեղեցին մնաց էլի այնպէս ինքնիշխան, ինչպէս որ մինչև այն ժամանակն էր: Երանի թէ ինչպէս որ այս կրօնական գործերուն վերջ դրեց՝ Գորգիան հանգոցը Ալէքսանդրի սուսերաւ կտրտելով, նոյնպէս Վատինացոց հետ խընամութիւնն-էլ վերջացնէր, Կիլիկիա այժմ-էլ կունենար իւր Հայ թագաւորը և թագաւորութիւնը. բայց ով է կարող գուշակել ապագայն: Այն ժամանակը այս խնամութիւնները խոհեմութիւն էր երևում, որովհետև Հայոց թագաւորը և թագաւորութիւնը արևմտեան Եւրոպացոց հետ մօտենում էին, կապակցվում էին. բայց չէին իմանում որ այդ իսկ կապերը նրանց կաշկանդում էին, և վերջապէս Հռոմայ կրակի համար էին պատրաստում, որ պիտի նրանց տոչորէր:

Ենգլիայի թագաւոր Ռիչարդը եկաւ Արևելք, և Ղէոն ընդունեց նրան նոյն հանդէսով, ինչպէս որ Գերմանացոց կայսերն էր ընդունել: Եւ որովհետև դեռ 1201 թուին տուել էր Ղէոն Գենովացոց (Ճենովիտներուն) արտօնութիւն, որ Եւրոպայի առուտուրը կարողանան Կիլիկիայի մէջ-էլ անել, նոյն արտօնութիւնը այժմ տուեց Եւրոպացոց ուրիշ շատ ազգերու-էլ, որով Հայերու առուտուրը և առևտրական կապակցութիւնները շատ լայնացան և տարածուեցան: Յետոյ Ղէոն առաւ իւր կնութեան Գուխտոն Ղուսինեանի քոյրը. (այս Գուխտոն Ղուսինեանը՝ որ Երուսաղէմի թագաւորութենէն զրկուել էր, երբ որ Ռիչարդ Աւիշապարտը

առաւ Արարացոց ձեռքէն Կիւարոս կողմին, — փողով
ճախու գնել էր Կիւարոսը, և այն տեղ թագաւորել) .
աստ այս ճանիով Լուսինեան ցեղապետութիւնը մտաւ
Ռուբենեանց աղգարանութեան մէջ 1219 թուին: Իսկ
իւր եղբոր Ռուբենի դուստրը՝ տուեց ի կնութիւն
Անգրէի՝ Հունդարիացոց թագաւորի որդուն: Անտի-
ոքի իշխաններու դէմ երկու անգամ ունեցաւ վէճ՝
Լէոն, որով իւր տէրութեան խաղաղութիւնը շփոթ-
վում էր: Բոյեմունդ առաջարկեց Լէոնին՝ որ այն վէճը
իրաւախոհութեամբ վերջացնեն, և երես առ երես
խօսին, և այս սրտաճառաւ հրաւիրեց նրան որ երթայ
Անտիոք: Լէոն միտքը բերեց իւր եղբոր Ռուբենի
անցքը, որ նոյնպէս բարեկամաբար հրաւիրել էին, և
թշնամաբար բռնել ու բանտարկել. թէպէտ գնաց
հրաւիրած տեղը Անտիոք, բայց իւր հետ տարաւ մէկ
Հայագունդ, և լաւ արաւ. որովհետեւ շուտով խայտա-
ռակուեցաւ դարանակալութիւնը, և Լէոն բռնեց Բոյե-
մունդին և բերեց Կիլիկիա: Հենրիկոս Շամսլանեան,
որ մէկ ժամանակ Երուսաղէմի թագաւորութեան հո-
գարարձու էր եղել, միջնորդ մտաւ, և աւարտեց այն
վիճարանութիւնը. Լէոն ճշմարտուեցաւ, և Բոյեմունդ
աղաատուեցաւ: Այս հաշտութեան պտուղը այն եղաւ,
որ Հայերու վրայ մէկ խնամութեան կապ էլի աւելա-
ցաւ. Բոյեմունդի որդի՝ Ռայմոնդ 3-դ հարսնացուց
իրան Լէոնի եղբոր Ռուբենի միւս դուստրը որ Ալիսա
էր ասվում: Այս առաջին վէճի վերջը՝ յղութիւն էր
երկրորդ խռովութեան: Ռայմոնդ 3-դ որ ամուսնացել
էր Ալիսային՝ երկար չապրեցաւ, և թողեց մէկ որդի
Ռուբեն անուն Ալիսայէն ծնած, որին որ Բոյեմունդն
էլ էր կտակել իւր ժառանգութիւնը, և Անտիոքն-էլ
էր երդումն տուել: Բայց Բոյեմունդի միւս որդին
Ռայմոնդ Միակնին՝ որ Տրիպոլիայ դուքս էր, Տաճա-

րական (Templier) և Հիւրընկալ կամ Ասպնջական (Hospitalier) ասպետներու օգնութիւնով տիրապետեց Անտիոքին, և մերժեց ժառանգութենէն իւր եղբոր որդւոյն՝ որոյ հոգարարձն-էլ ինքն էր: Եւ խմանալով որ Լէոն Հայոց թագաւորը այդ արարմունքին չի հաճոյանար, Հայերու դէմ պատերազմ բացեց: Այլ Լէոն շուտ վերջացուց այն կռիւր, մէկ քանի անգամ ջարդեց Ռայմոնդին պատերազմներու մէջ, 1203 թուին առաւ Անտիոքը, և տուեց իւր սանին Ռուբենին:

Հաղիւ թէ դարձաւ Լէոն իւր տէրութիւնը, որ Ռայմոնդ միւսանգամ տիրապետեց Անտիոքը, և Ռուբենին հալածեց, և կամենալով Լէոնին պատաղեցնել, որ չկարողանայ Ռուբենին օգնել, Ռայմոնդ՝ որ միշտ Տաճարականներու հետ միասիրտ էր, կաշառք տուեց Ղոնիայի Ռուհի-էդ-դին Սուլթանին, որ Լէոնի դէմ պատերազմ բանայ: Այս տեղ Հռոմայ Քահանայապետն-էլ, և Հռոմէական հոգևորականներն-էլ մէջ մտան, և սկսան Լէոնին Բանտըրանիւնով վախեցնել. բայց Հայոց Հոգևորակներ, որ լաւ էին խմանում իրանց անկախութիւնը, և այն-էլ թէ Հռոմէադաւանք չունին ոչինչ իրաւունք Հայերուն հասկըլու կամ արջակըլու, Լէոնին մնացին մըտերիմ: Լէոն տեսաւ որ իւր ազգը իրան պաշտպանում է՝ համարձակ գնաց թշնամիներու դէմ, և Ղոնիայի Սուլթանին ջարդուփշուր անելէն յետ՝ պաշարեց Անտիոքը, առաւ 1211 թուին, և նստեցուց Ռուբենին, և համոզեց այն տեղի իշխաններուն և պատրիարքին՝ որ ընդունին նրան: Եւ երբ դարձաւ իւր տեղը՝ իսպառ դուրս արաւ Տաճարականներուն իւր տէրութեան սահմաններէն և նոցա կաշուածները առաւ ձեռքերէն:

Արամէն յետ Լէոն նորոգեց, լայնացուց, զարդարեց Սբ քաղաքը, և արաւ իւր աթոռանիստ, շատ

բերդեր և ամրոցներ նորոգեց և ամրացոց, և նորա
հետ Կոստանու ճովափնեայ քաղաքն-էլ նոր նոր շինուած-
ներով գեղեցկացրուց և պնդացրուց: Մինչ Ղէոն այս
բարեկարգութիւններով էր սլառաղած, Խայաս-էդ-դին-
Ղազի Հալէպի Սուլթանը՝ երևի թէ Ռայմոնդի հը-
րասուրանքով, առանց իմացում տալու թէ պատե-
րազմ պիտի բանայ, յանկարծ արշաւեց Կիլիկիա,
և երբ մտաւ այս երկրի սրտի մէջ՝ դեսպան ուղար-
կեց Ղէոնի մօտ, որ կամ հնազանդուի և հարկատու
լինի, կամ կռիւ դուրս գայ:

Ղէոն յառաջուանէ իմանալով՝ որ դեսպանը գալիս
է, մարդիկ ուղարկեց դեսպանի դէմ, որ դեսպանին
մէկ քանի օր զբօսեցնեն. ինքը հատրնտիր Հայսագունդ
քաջերով՝ կարճ ճանփաներով կայծակի նման հասաւ
Հալէպի զօրաց վրայ, և այնպէս ջարդեց, որ հազիւ
թէ մէկ քանիսը կարողացան փախչելով իրանց գլուխը
աղատել: Թշնամեաց բանակը մնաց Հայերուն: Յետոյ
հրամայեց որ դեսպանին բերեն, որ տեսնէ նա-էլ իւր
աչքով և արժանաւոր պատասխան տանի:

Այսպէս աջողակ շեղաւ Ղոնիայի Ազդ-էդ-դին-
Քայքալուղ Սուլթանի դէմ ունեցած կռիւը, որ եկել
և սաշարել էր Կոստան ամրոցը: Ղէոն հիւանդ էր և
յանձնեց զօրավարութիւնը Կոստանդին Աւագ Պարո-
նին և Ատան իշխանին և ուղարկեց առաջապահ մինչև
ինքը գայ: Քայքալուղ յաղթեց նրանց՝ խարէութեամբ
կռիւ քաշելով՝ ընդդէմ Ղէոնի պատուիրանաց, և գերի
առաւ: Ղէոն բռնադատուեցաւ հիւանդ տեղը զէն առ-
նուլ, և մինչ դեռ թշնամին կապանի չորս կողմը
նստած էր, նա մտաւ Ղոնիայի աշխարքը և քարու-
քանդ արաւ: Քայքալուղ շուտով հեռացաւ Կապանէն,
և հաշտութիւն խնդրեց: Այս էր Ղէոնի վերջին գոր-
ծը: Փառաւոր թագաւորութիւն արաւ 34 տարի, և

1219 թուին վախճանեցաւ, և թողեց բարեպաշտ, քաջ,
զգօն, ուսումնասէր և ազգասէր բարի անուն: Սա իւր
դրօշակի վրայ՝ Արշակունեաց և Քաղբատունեաց Ար-
ծիւի տեղ՝ դրել էր իւր անուան համեմատ՝ Առիւծի
նշանը:

ԶԱՊԵԼ ԹԱՔՈՒՀԻ ԵՒ ՀԵԹՈՒՄ 1-դ:

(1219—1270):

30

Լէոն 2-դ, որ թագաւորաց կարգումը առաջին էր,
իւր մահուան ժամանակը չունէր որդի, այլ մէկ դուս-
տրը ՋՄՊԵԼ (Եղաթէլ կամ Եղլասթէլ) անուն, որ սխիտի
լինէր յաջորդ Հայոց թագաւորութեան, որովհետեւ
ուրիշ ժառանգ չկար: Այս սրտաճառաւ բաղմարդիւն
Լէոն թագաւորը, իւր տէրութիւնը՝ (որ արեւելքէն
հասել էր մինչև Եփրատ գետը, հիւսիսէն՝ մինչև Սա-
մանտայ գետը և մինչև Կասպազոկիա, արեւմուտքէն՝
մինչև Խաւրիա լիճը, և հարաւէն մինչև ի Խաոյի ծո-
ցը՝ որ ամբողջ է Ծով Հայոց, և Միջերկրեաց ծովը), և
իւր միակ դուստրը յանձնեց Կոստանդին Աւագ Պա-
րոնին և Ատան իշխանին և Յովհաննէս 7-դ կաթո-
ղիկոսին: Սորա Չապէլ դշտոյին նստեցրին իւր հօր
աթոռը թագաւոր. և երբ Աուրեն-Ռայմոնդ Անտիոքի
իշխանը, (վերայիշեալ Աուրենի որդին՝ որ Քոյեմուճ-
դէն հալածուել էր) սկսաւ ժառանգութեան համար
կռիւներ հանել, Կոստանդին նրան ջարդեց Տարսուսի

մօտ, և բռնեց 1221: Չապէլ թագուհին առաջ ամուսնացաւ Անտիոքի իշխան Միսիանի Բոյէմունդ 4-դի որդւոյ Փիլիպպոսին՝ այն պայմանաւ՝ որ նա Հայոց կրօնը ընդունի, և Հայոց ազգին հաւատարիմ լինի. բայց երբ որ Հայերը խմացան՝ որ Փիլիպպոսը թագաւորական դանձերը և թանգարանի հաղուագիւտ և ծանրագին դոհարները դէպի Անտիոք է փոխադրոււմ, և Հայերուն կամենոււմ է Հռոմայ հպատակեցնել, Փիլիպպոսին բռնեցին ու բանտ դրին, որ տեղ որ նա մեռաւ-էլ. և Չապէլ թագուհին որ իւր մօր Աստին ազգականաց հրապուրանօք մէքիչ պարականոն գտնուեցաւ, վերջը հարանացաւ Կոստանդին Աւագ Պարոնի որդւոյն ՀԵՔՈՒՄ առոյգ, քաջասիրտ և բարենախանձ երիտասարդին, և թագակից արաւ իրան 1226 թուին:

Ընթում 1-դ, երբ որ այսպէս արժանացաւ Ռուբենեանց հարատու թեան ժառանգ դառնալ, և հիմնադիր նոր թագաւորական ազգարանութեան, իւր խմատուն և դործունեաց հօր օգնութեամբ՝ ջանք դրեց իւր նախորդի ամեն բարի դիտաւորութիւնները առաջ տանել: Ամբրոն բերդի հրամանատարութիւնը՝ որ իւր նախորդները առել էին նորա բնիկ իշխանի ձեռքէն, դարձոյց նորա ժառանգ Կոստանդին իշխանին, որ նորա թագաւորութեան հանդիսի մէջ թագադիր էր դառել: Երջակայ երկրաց իշխաններու և մանաւանդ Անիացի Ալայ-էդ-դին Սուլթանի հետ, որ Աննի մահէն յետ Կիլիկիա էր արշաւել և մէկ քանի տեղ գրաւել, հաշտութիւն արաւ, և երկիրները յետ առաւ: Եւ որովհետև Հայերը Հայաստանի մէջ թաթար ազգէն հանդիստ չէին դանոււմ, և գալիս էին գունդադունդ դէպի Կիլիկիա, Ընթում ընդունոււմ էր ամենուն, և իւր քաղաքներու մէջ բնակեցնելով անդորրացնոււմ, և իւր երկիրը բազմամարդացնոււմ: Բայց

այս Հայերու ոտքի ճանխով՝ Թաթարներն-էլ սկսան
դալ դէպի Արլիկիա, և Ղոնխայի Խայաս-էդ-դին Սուլ-
թանին չարաչար ջարդու փշուր արին: Երբ որ տե-
սաւ Հեթում՝ թէ Թաթարները իրանց անհամար
բազմութեամբ ամեն տեղ հըօր ու յաղթող են, խը-
նայեց իւր քաջ Հայերու կեանքն ու արիւնը, դես-
պան ուղարկեց Թաթարներու Քաչու Զօրաստի մօտ,
և բարեկամութեան դաշն դրեց, և յետոյ ինքն-էլ ու-
ղենալով Թաթարներու թաղաւորին այցելութիւն եր-
թալ՝ որ բարեկամութեան կապը ամուր լինի, առաջ
իւր եղբօրը Սմբատ սպարապետին ուղարկեց, և յետոյ
ինքը գնաց Մանգոյ խանի մօտ Ա. Է. Է. քաղաքը (որ
սխտի լինի Խաղանի մերձ՝ Վոլգայ դետի ափերումը):
Մանգոյ խանը մեծ յարգութեամբ ընդունեց Հեթում
թաղաւորին, և Հայերու հետ բարեկամութեան դաշ-
նակցութիւն արաւ, և խոստացաւ սրաչտպանութիւն
անել Հայաստանին, և նորա վաղնջուց սահմանադրուխ-
ները նորոգելով՝ Հայաստանը ազատել Սելճուքեանց
ճանկերէն և տալ Հայոց թաղաւորի ձեռքը: Հեթումն
էլ խոստացաւ նրան զօրք տալ, որ Սառակինասաց
ձեռքէն Երուսաղէմը առնուն: Այս զօրքը՝ որ Թա-
թարները ուղում էին Հայերէն՝ ո՛չ եթէ պատերազմի
համար էր, այլ առաջնորդ դէպի Պալեստին, որով-
հետև Հայերը մօտիկ էին, և ճանասպարհներուն քաջ
տեղեակ: Պատերազմի համար Թաթարները շատ զօրք
ունէին:

Այս միջոց՝ որ Հեթում Թաթարներու մէջ էր,
Ազդ-էդ-դին Ղոնխայի Սուլթանը բարեպատեհ ժամ
գտնելով՝ յարձակեցաւ Հայերու վրայ դէպի Արլիկիա, և
մէկ քանի տեղ քանդոտեց: Հեթում դարձաւ յետ իւր
տէրութիւնը, և երբ որ տեսաւ Ազդ-էդ-դինի արած
վնասները, արշաւեց Ղոնխայի տէրութիւնը, և առա-

Աղղ-էդ-դինի ձեռքէն Գերմանիկուսուլիս (Երէնէն) որ
Կալիկադնոս գետի մօտ է, Պեհեանի, և բուլանդակ
Խաւրիս: Այս միջոց բնաջինջ եղան Աստուխէն կամ
Բէլ-էն-էն, որ Արարացոց մէկ սարսափելի աղանդա-
ւորներ էին, անհնարին գաղտնութեամբ ծածկած, և
անպատմելի շարագործութեամբ հռչակուած: Հեթում
դինի այսորիկ տիրապետեց Մուհամա և Մարաշ բեր-
դաքաղաքներուն: Երբ որ Հուլաու խանը հրաւիրեց
Հեթումին դէպի Ասորիք, Հեթում 40,000 հետևակ և
12 հազար ձիաւոր զօրքով հասաւ Եդեսիս, որ այն
տեղէն երթան Երուսաղէմի վրայ, ինչպէս որ Կլեմէն-
տոս 5-դ Փափն-էլ էր խնդրում: Պատերազմը առաջ
բացուեցաւ Հալէպի Սուլթան Մալէք-Նազարի դէմ,
որ Հալէպի առնլով ինքն-էլ գերի ընկաւ, և նորա
երկիրները բաժանուեցան Հայերու և Թաթարներու
մէջ:

Մտիոք վտանգի մէջ էր, որ թշնամիէն պիտի սրա-
շարվէր, և Հեթումին օգնութիւն կանչեցին. Հեթում
հասաւ, և Քրիստոնեայք աղատուեցան: Հեթում և
Հուլաու արդէն պատրաստ էին դէպի Երուսաղէմ
ձանփայ ընկնիլ, որ 1259 թուին համբաւ եկաւ, թէ
Մանգոյ խանը մեռել է, և Հուլաու հրաման առաւ
որ զօրաց մեծ մասը յետ տանի: Հուլաու խանը թո-
ղեց իւր որդւոյ Աբաղայ խանի հետ 20,000 Թաթար
զօրք, և ինքն վերադարձաւ դէպի Թաթար խանի
աթոռանիստը:

Եգիպտոսի Մամէլիւքներու զօրապետ Սուլթան
Բէհարս, (որ Փնդուխդար-էլ էր ասվում), տեսնելով
որ Հուլաու խանը շտապելով դնաց, յարձակեցաւ
Աբաղայ խանի վրայ, ջարդեց Թաթարներուն և տի-
րապետեց մէկ քանի քաղաքներու. Անտիոք քաղաքն
էլ առաւ Քրիստոնէից ձեռքէն 1268 թուին: Եւ որով-

հետև այս միջոց Հեթում ղորքով գնացել էր Թաթար-
ներու օգնութիւն, Բիրարս ուղարկեց Ալիլիկիա Սի-
մոնթ ղորապետին շատ ղորքով: Հեթումի որդիքը
Լէոն և Թորոս դուրս եկան նոցա դէմ. այլ չ'յաջողեց
նոցա գործը. Թորոս պատերազմի մէջ խոցուեցաւ և
մեռաւ, իսկ Լէոն (*) գերի ընկաւ: Այս միջոց Սիա-
մայրաքաղաքն-էլ առնուեցաւ, և Ալիլիկիա-էլ շատ ա-
ւերած տեսաւ, բացի ամուր բերդերէն, որ թշնամեաց
դէմ տուին: Հաղիւ հաղ Հեթում լսեց այս դուժալի
համբաւը, և վերադարձաւ իւր տէրութիւն, և հար-
կադրուեցաւ իւր որդւոյ Լէոնի համար շատ փրկանք
տալ և այնպէս աղատել գերութենէն: Այնուհետև
Հեթում ինքն-էլ չկամենալով աշխարքի զբաղմանց
մէջ մնալ՝ տուեց իւր թագաւորութիւնը իւր որդւոյն
Լէոնին, և հրաժարուեցաւ աշխարքէն: Այս անկարգու-
թիւնը, որ սկսաւ Ռուբեն 2-դ, և նրա օրինակին հե-
տևեցաւ Հեթում 1-դ, մտել էր Հայերու մէջ Լատի-
նացւոյ ազդեցութենէն: Մէկ ժամանակ Տրդատ-էլ
արել էր. և Հայաստան մատնել էր անտէրութեան,
այժմ Ռուբենեանք-էլ են անում. բայց այս Հռոմայ
խորամանկութեան պտուղն էր: Եւրոպացի թագա-
ւորները ստէպ էին անում այս բանը, Հայոց թագա-
օրներն-էլ սովորեցան. ինչպէս հովիւ են, որ ոչխար-
ները թողնում են, և իրանք գնում են և հեռանում,
ոչխարներուն ուրեմն գայլերը հովուեն:

(*) Այս այն Լէոնն է, որոյ ձեռքի աւետարանը Կոստանդին կաթողի-
կոսի գրած, արծաթապատ և ոսկեզոծ կազմով, կայ Նոր-Նախիջևան
քաղաքի սուրբ Լուսաւորչի աւագ եկեղեցւոյ թանգարանումը. որոյ վկայ-
ութիւնն է ստանաւոր գրուած յիշատակարանը թէ աւետարանի վերջը
և թէ արծաթապատ կազմի վրայ քանդակած: Այս Եւտարանի մէջ կայ
այն Լէոնի պատկերը՝ Կոստանդին կաթողիկոսի ձեռքով գրած:

Լ Է Ո Ն 3-դ:

(1270—1281):

31

Լեոնի աթոռ նստելու առաջին ամիսները յաջողակ էին. հօր մահուան համար շատ տխրելով հիւանդացաւ, և հազիւ թէ երեք ամիսէն յետ օծուեցաւ թագաւոր. և սկսաւ բարեգործութիւններ անել, հիւանդանոցներ, աղքատանոցներ և վարժատուններ շինել, և շատ մատենաներ օրինակել տալ. արքունական յանցաւորներուն ընդհանրական թողութիւն շնորհեց. բայց այս ամենը էր միջին դարուց հոգով, Լատին կրօնաւորաց աղղեցութեամբ, որոյ վրայ Հայերը մտիկ էին անուամբ դժկամակութեամբ. և երբ տեսան թէ Լեոն չէ կարողանում և չէ կամենում իւր գլուխը Հրեամեական կարգաւորներու որոգայթներէն աղատել, մտածեցին դաւադրութիւն անել նորա կենաց դէմ: Այս չար խորհուրդը յայտնուեցաւ, ի հարկէ որ Լատինադաւան աղղականներու մատնութեամբ, և խորհրդակիցները պատուհասուեցան. բայց Հայերը իրանց աղղութեան և կրօնի դէմ դաւաճանութեան վրէժը ուրիշ ճանախով-էլ հանեցին. որ երբ Եգիպտոսի Սուլթան Բիրարը արշաւեց դէպի Կիլիկիա, Հայոց իշխանքը չօղնեցին Լեոնին, և Մամէլիւքները կոտորեցին 20,000 էն աւելի ժողովուրդ, և 10,000-էլ դերի տարան: Այս վիշտերու վրայ ուրիշ վիշտեր-էլ աւե-

լացան. թագաւորի որդին ու դուստրը մեռան. մահ-տարածամ եկաւ, սով ընկաւ: Այս բաները տեսնելով Լէոն փոքր ինչ զգուշացաւ:

Քիրարս միւսանդամ եկաւ մտաւ Աիլիկիա. բայց այս նուագին իշխանները տեսնելով որ Լէոն թողել է իւր հին ճանիւսն՝ միարանուեցան թագաւորի հետ, և պատրաստուեցան դէմ դնել Եգիպտացոց: Սմբատ ծերունի սպարապետը՝ Քիրարսի յետ դառնալու ճան-փան կտրեց: Ալէքսանդրիայի ծոցի մօտ լեռնամէջ-ներումը վրայ տուին Հայերը և կտոր կտոր արին Եգիպտացոց. Սուլթանն-էլ չարաչար վիրաւորուեցաւ և փախաւ Դամասկոս, և այնտեղ մեռաւ: Աբաղայ խանը ուրախ եղաւ այն յաղթութեան վրայ, և կամենում էր յանձնել Լէոնին այն սահմանները, բայց Լէոն յանձն սուտ չեղաւ, որովհետեւ շրջակայ թշնամիներու բաղ-մութենէն վախենում էր, և լաւ արաւ:

Եւ որովհետեւ Եգիպտացոց արշաւանի ժամանակը Ղոնիայի Սուլթանն-էլ էր յարձակել Աիլիկիայի դէմ, Լէոն երբ որ Մամէլիւքներու դործը վերջացուց, իւր զէնքը դարձուց նորա դէմ, և 1278 թուին յաղթեց, և շահաւէտ դաշնադրութեամբ հաշտուեցաւ: Այլ երբ որ Թաթարներու և Եգիպտացոց մէջ բորբոքուեցաւ պատերազմ, 1282 թուին Լէոն էլի սկսաւ պատերազմիլ: Աբաղայ խանը 30,000 զօրք տուեց Մանգու Թիմուր զօրավարի ձեռքը, և ուղարկեց Սուլթանի դէմ, որ Համս քաղաքը պաշարել էր: Մանգու Թիմուր դաշնակից բանակի կեդրոնն էր պահում. Հայք աջ թևումն էին և Ալմաք զօրապետը՝ ձախ: Երբ որ պատերազմի նշանը տուին՝ Հեթում և Ալմաք յարձակեցան, և Սէյֆ-էդ-դին-էլ-Ալֆայ Սուլթանը փախուստ անձապարեց: Մանգու Թիմուր թողեց Հայերուն և յետ փախաւ: Երբ որ Հայերը դարձան թշնամիներուն

հալածելէն, տեսան որ թաթարները թողել, փախել են, և Եփրատ դետը անցել են. իրանք-էլ թողին ու փախան. և Համս քաղաքը՝ որ մինչև այն ժամանակը դիմացել էր, անձնատուր եղաւ Եգիպտացոց, և Ղէոն այս միջոցումը մէկ քանի քաղաք կորցրուց:

Ղէոն փորձով հասկանալով՝ որ իրան զօրացնողը և իրայ տէրութեան հաստարանը իւր իշխանքն են, 7 տարի խաղաղութեամբ պահեց աշխարքը, մեծամեծաց հետ զգուշութեամբ վարուելով. որով նորա 19 տարի տևած թաղաւորութիւնը Կիլիկիայի մէջ ծաղկեցուց առուտուրը, որոյ մէկ ծայրը էր Եւրոսլա, և միւսը Հնդկաստան, Արևելեան Հնդկաստանի (Օսթ-Ինդիայի) ճանփու գիւտէն համարեա՛ երկու դար յառաջ. և Այաղ քաղաքը կեդրոն էր այս աշխարհատարած վաճառաշահութեան՝ որ պիտի ցամաք ճանփով անց կենար Պարսից աշխարքէն և Հայաստանէն:

ՀԵԹՈՒՄ 2-դ. ԹՈՐՈՍ 3-դ. ՍՄԲԱՏ ՈՒ ԿՈՍՏԱՆԴԻՆ 2-դ:

(1280—1305):

ՀԵԹՈՒՄ 2-դ՝ որ իւր հօր Ղէոն 3-դի աթոռի յաջորդ էր և պապու անուան ժառանգ, երկուսէն-էլ ստացել էր լաւ, կամ վատ բնաւորութիւնները: Քաջութիւնը պակաս չէր, բայց ո՛չ խելքը և ո՛չ կամքը ցոյց չտուին մէկ հաստատութիւն. որոյ վկայութիւնը

աւելի այն էր, որ իւր 16 տարի թագաւորութիւն անելու միջոցը՝ երեք անգամ աթոռէն հրաժարուեցաւ, և երեք անգամ ազգն ու երկիրը տակնուվրայ բերելով՝ էլի աթոռ նստաւ: Հռոմէական կրօնաւորներու ազդեցութիւնքը վատ սերմեր էին ցանել թագաւորի տան մէջ, ուր որ Ղատինադաւան կանայք՝ բարձր տիկնութեան բարձրու վրէն նստած՝ Հռոմէական հոգևորականաց ձեռին սրատրաստական դործիք էին. և թագաւորութիւնը և ազգը նոցա որոգայթներով միշտ վտանգներու մէջ էին ալելիոծվում:

Սալէք-Ալ-Աշրէֆ-Սալահ-էդ-Ռին՝ որ արդէն դրաւած ունէր Պալեստինը, Ասորիքը և Անտիոքն-էլ, ուրիշ ոչինչ հոգ չունէր, բայց եթէ միայն Հայերուն նուաճել, որ մի միայն էին մնացել այն կողմերումը Քրիստոնեայ ազգ և տէրութիւն: Հեթում գիտէր իւր ազգի ուժը. իւր հօր ժամանակը տեսել էր, որ եթէ իշխանաց հետ միաբան լինի՝ կարող է ամեն թշնամիներու-էլ դէմ կանգնիլ. բայց նորա օրինակներէն չըխրատուեցաւ, և զզուշութիւն չ'ապահեց: Նորա Ղատին ազգականները, և Հռոմէադաւան հոգևորականները, որ տիրապետել էին նորա գերդաստանի մէջ, միշտ խորհուրդ էին տալիս՝ որ դիմէ դիպի Հռոմայ քահանայապետի օգնութիւն: Այս այն մտքով էին անում, որ յետոյ կամ առաջ Հայերը ընկնին Փափի իշխանութեան ներքոյ: Հայոց իշխանները տեսնելով որ թագաւորը շրջապատած է Ղատին խնամիներով և ազգականներով, և Հայերու արդիւնքը նրանք են ուտում, և Հայոց կրօնը վտանգի մէջ են դնում, և Հայոց եկեղեցին ուղում են Փափի իշխանութեան տակը գծելով ծառայեցնել, սրբաակտուր էին լինում, և խորշում էին այն թագաւորէն, որ իրան չէր զգոյշ սրահում Հռոմայ թակարդներէն, և օր օրէ օտարացնում էր ազգէն:

Հեթում երբ որ իրան կարօտ ճանաչեց այլոց օգնութեան, մինչ որ բնաւ կարօտ չէր, չուզեց իւր իշխաններէն ո՛չ խորհուրդ՝ ո՛չ-էլ օգնութիւն, այլ սկսեց Հռոմայ Փափէն և Քաթարներէն խնդրել: Երբ էր Հայոց ազգը օտարներէն շահուել: Միթէ պատմութիւններէն չէր երևում, որ Հայերը երբ-էլ որ յոյս էին դրել արևմուտքին, համ խարուել էին, համ վընաս էին քաշել, և արևմուտքէն եկած օգնութիւնը ոչ այլ ինչ էր, եթէ ո՛չ ապագայ ծառայեցնելու դրաւական և առհաւատչեաց: Հեթում տեսաւ՝ որ Աշրէֆը դալիս է, նա պիտի հաւաքէր Հայոց զօրքը, և առաջ երթար. այդպէս չարաւ. այլ յոյս ունենալով Փափէն հասնելու օգնութեան՝ միայն իւր զօրքը ցրուեց որ սահմանագլուխները պահեն, և Աշրէֆ եկաւ մտաւ Արիկիսա, և Հռոմկլայ՝ ուր որ կաթողիկոսարանն էր՝ սրաշարեց: Գոնէ Հեթում այն տեղ կենդրոնացնէր իւր զօրքը, ինքն-էլ երթար ու սրաշտպանէր: Ա՛չ: Հեթում մնաց՝ Փափի օգնութեան սպասելով, և Աշրէֆ առաւ Հռոմկլայն, և շաա գերիներու հետ Սանփաննոս կաթողիկոսին-էլ տարաւ Եգիպտոս: Այս էն ճանապարհն էր, որ մէկ քանի ժամանակէն յետ պիտի թաղաւորն-էլ երթար:

Եսկա Փափէն սպասած օգնութիւնը ի՛նչ պտուղ ունեցաւ: Նիկողայոս 4-դ Փափը՝ Հայոց դեսպաններուն ուղարկեց Ծրանսիոյ Փիլիպոս Գեղեցիկ թաղաւորի մօտ, նա-էլ ճկարողացաւ ոչինչ անել և դեսպանները յետ դառան ձեռնուկայն: Այն ժամանակը Հեթումի խելքը դարձաւ մէկ ուրիշ կողմը, և Սուլթան Աշրէֆի հետ դաշնադրութիւն արաւ՝ շատ անարգութիւն և վնաս յանձն առնելով. և մէքիչ-էլ որ անցաւ, տուեց թաղաւորութիւնը իւր եղբօրը Թորոսին, և ինքը կրօնաւոր դառաւ:

Թորոս 2-դն-էլ՝ իւր եղբօր խելքէն ունենալով, երկու տարիէն յետ մտաւ վանք, և Հեթում կրկին աթոռ նստելու մտքով դուրս եկաւ վանքէն: Հեթում դնաց Թաթարի Ղաղան խանի մօտ, որ նախկին դաշնակցութիւնը նորոգէ: Երբ որ վերադարձաւ Ախլիկիա՝ իւր մէկ քոյրը Մարիամ հարսնացուց Յունաց Անդրոնիկոս կայսեր որդուն Միքայէլին, և միւս քոյրը Զառէլ Ախարոսի թաղաւորի եղբօրը: Հեթում շուտ ձանձրացաւ այս նոր թաղաւորութենէն, և 1296 թըւին՝ տուեց աթոռը իւր Ս. Գրիգոր եղբօրը, և միւս անգամ հրաժարուեցաւ աշխարհէն, և իւր Թորոս եղբօր հետ, (Էրկու հրօնաւոր խաճաւորներ՝ ոչ վանքումն էն, ոչ աշխարհումն), դնաց Արմատանտինուպօլիս Մարիամ կայսերուհի քրոջը տեսութիւն: Երբ որ վերադարձաւ Ախլիկիա, և ուզում էր էլի թաղաւորութեան սանձը ձեռք ձգել, ՍՄԲՍՏ՝ որ արդէն Փափի օգնութեամբ աթոռումը հաստատուել էր, Հեթումին Ախլիկիայէն դուրս արաւ: Հեթում սկսաւ այն երկու անգամ կամ մաւ թողած թաղաւորութեան համար ազգամիջեան կռիւներ հանել: Առաջ դնաց Արմատանտինուպօլիս, յետոյ Թաթարներու Ղաղան խանի մօտ որ օգնութիւն խնդրէ Սմբատի դէմ. այլ Սմբատ՝ դեռ այն օգնութեան չհասած՝ երկու եղբօրներուն-էլ բռնեց, Թորոսին սպանեց, Հեթումի աչքերը հանել տուեց: Այս բարբարոսութիւնը որ տեսաւ ԿՈՍՏՆՆՊՆ՝ Հեթումի չորրորդ եղբայրը, Սմբատի դէմ զօրաժողով արաւ, աթոռը իւր ափը դնեց և Հեթումին բանտէն հանեց: Հեթումի աչքերը առողջացան, (որովհետեւ կուրացնելու ժամանակը միայն արտաքուստ փոքր ինչ վնասել էին, և ոչ թէ բոլորովին բրել), և իւր եղբօր երախտեաց տրիտուր՝ Հեթում երրորդ անգամ նստաւ աթոռ, և Սմբատին ու Արմատանտինին բռնեց

և ուղարկեց Կոնստանտինուպօլիս, որ այնտեղ արդե-
լած մնան: Այս երրորդ անգամին՝ գիտես թէ մէքիչ
Հեթումի խելքը գլուխն էր եկել. թողեց կրօնաւո-
րաց ընկերութիւնը, և սկսաւ իւր տէրութեան խը-
նամք տանել: Երբ որ Եգիպտացիք՝ Գամասկոսի
Սուլթանի առաջնորդութեամբ սկսան գալ Կիլիկիայի
վրայ, Հեթում գնաց նոցա առջև, ջարդուփշուր արաւ,
Սուլթանին-էլ բռնեց ու ուղարկեց Ղազան խանի մօտ:

Ղազան խանը՝ (քանի որ կռատաշտ էին թաթար-
ները, իւր նախորդաց նման բարեկամ էր Հայերուն
էլ, և միւս Քրիստոնեաներուն-էլ, և որովհետև տես-
նում էր՝ թէ Քրիստոնեաները ուղում են Երուսա-
ղէմը ազատել Արաբներու ձեռքէն՝ ինքն-էլ հետև-
ում էր այն բանը անել, այդ սլատձառաւ) երկու ան-
գամ Հեթումի օգնութեամբ կամեցաւ Մալէք-Նազարի
ձեռքէն Պալեստինը խլել, բայց երկու անգամն-էլ
նորա ազգական Պայսոնի ապստամբութիւնը խոչընդակ
դառաւ նորա հայթայթանաց. և վերջապէս Ղազան
խանը յանձնեց Գոթուղ զօրավարին, որ այն իւր խոր-
հուրդը գլուխ բերէ. բայց Գոթուղ փասս ստանալով
քաշուեցաւ Եփրատի միւս երեսը:

Այս անգքերէն յետոյ՝ Ղազան խան 1302 թուին
մեռաւ. և նորա յաջորդը Ղարաղանիս ընդունեց Մահ-
մետական կրօնը և դառաւ Քրիստոնեից թշնամի. և
Թաթարները՝ որ մինչև այն ժամանակ բարեկամ էին
Հայերուն, իրանց ղէնքը դարձուցին իրանց առաջուան
բարեկամներու դէմ: (Ահա՛ քեզ կրօնական մոլեռան-
դութեան արդասիքը): Եւ որովհետև Թաթարները
Կիլիկիայի ելումուտքը գիտէին, մէկ տարի շարունակ
քարուքանդ էին անում այն խղճալի երկիրը: Հեթում
որ չէր համարձակուում Թաթարներու դէմ սուր հա-
նել, երբ որ տեսաւ թէ նրանց չար օրինակը ուրիշ-

ներուն-էլ է կատարեցնում, դուրս եկաւ նոցա դէմ, և այնպէս կոտորած արաւ, որ ասպատակները բոլորովին հեռացան, և Եդիսպոսի Սուլթանն-էլ Հեթումի հետ հաշտուեցաւ:

Հեթում երբ որ տեսաւ թէ Կիլիկիա մէքիչ հանդարտութիւն գտաւ, երրորդ անգամ թաղաւորութեանն հրաժարեցաւ, իւր թորոս եղբոր որդուն Ղէնն իւր տեղը թաղաւոր օժել տուեց, և ամիս նըստեցուց, և ինքը թաղաւորահայր անուն առաւ իւր վերայ, որ իւր հետ միասին ողորմելի եղբոր որդուն էլ կորուստ մատնէ: Այսքան զօրեղ էր նորա վրայ Հռոմայ արքանեկաց ազդեցութիւնը:

Լ Է Ո Ն 4-դ:

(1305—1308):

Չոր էր Հեթում 2-դի տուած օրինակը, և Ղէն 4-դ՝ որ Հեթումին կարծել էր մէկ խելօք մարդ՝ այդ իւր սխալ ըմբռնման զոհ դարձաւ: Թաղաւորութեան մեջ բուն դրած Վատինադաւան Հռոմայ պաշտօնեաները՝ Ղէն թաղաւորի մոլորեցնելու համար թէ ուրիշ հընար չգտնէին, այն ևս բաւական էր՝ եթէ Հեթումին դուլէին, և նորա արածները ցոյց տային աւատաւճահաճոյ, ազգին և երկրին օգտակար և նորաստակ երախտասպարա թաղաւորի համար՝ հետևող գտնուելու արժանաւոր: Արքան հեշտ էր կեղծաւոր կրօնաւոր-

ներու համար՝ այնպիսի երիտասարդին, ինչպէս որ էր Աէոն թագաւորը՝ խաբելը, և ուղիղ ճանփայէն մտորեցնելը, և Հռոմայ հարատակեցնելով՝ ազգի և նորա իշխանաց ատելի անելը: Առ էր՝ թէ Հռոմայ և Հայոց եկեղեցիները՝ որ ուզում էին միացնել, ժողովքներով քննութիւն անէին, և երկուց կողմանց աւելացնելով սրակսեցնելով՝ միութեան հասցնէին: Քայց ոչ: Հռոմ ուզում էր՝ որ Հայերը կոյր զկուրայն ընդունէին Հռոմէական դաւանութիւնը, և Հայոց եկեղեցին փոխէր իւր ամեն ծէսերը և կարգաւորութիւնները, և ընդունէր առանց թէութեան Հռոմէական ամեն վարդապետութիւնը անխտիր: Զօրացել էին այն ժամանակը թէ Հաղարացիք և թէ Մահմետական թաթարները: Սոցա դէմ կանգնելու համար հարկաւոր էր այնպիսի թագաւոր՝ որ կարողանար ազգի և իշխանաց հետ հաշտ լինել: Ապարազդ Աէոնը դանուելով Հեթումի հոգարարձութեան տակ, չունէր այն կարողութիւնը՝ որ ազգին և իշխաններուն իւր հետ հաշտ պահէր: Ազգը և իշխանները չէին ուզում՝ որ թագաւորը շատ աւելի թոյլ տայ Ատտին իշխաններուն և Հռոմէադաւան կարգաւորներուն զօրանալ Արլիկիայի մէջ: Սորա հակառակ Հռոմայ արբանեակները չէին թողնում՝ որ խեղճ թագաւորը իւր ազգի կամքով ընթանայ: Նորա թեթեամիտ Հեթումի անունը դրել էին իմաստուն: Եթէ թագաւորը ուզում էր ազգի հետ միանալ, նորա նրայ միտքը փոխում էին՝ Հեթումի ձեռքով, որ նա ազգին լսելով՝ Հռոմայ քահանայապետութեան իշխանութենէն շալստամբուի, և Եւրոպացոց մշտախար օգնութենէն շղրկուի: Նոցա կամքին աջողակ դործիք էր թեթեամիտ Հեթումը, որ թագաւոր անունը թողած՝ թագաւորահայր անուն էր ծառայում: Երեք ճանփայ ունէր

Հեթում . կամ 1) իշխանաց հետ հաշտ մնալ , կամ
2) թշնամեաց հետ հաշտութիւն , և կամ 3) Եւրոպացոց
թագաւորներու օգնութիւնը ստանալ : Ոչ մէկն
էլ չթողին Հռոմայ արքանեակները՝ որ յաջողէր : Ազգի
և իշխաններու հետ հաշտութիւնը անհնար էր , մինչև
որ թագաւորը չկորէր Հռոմայ հետ ունեցած ամեն
կապակցութիւնները : Թշնամեաց հետ-էլ կարելի չէր
ունենալ հաշտութիւն , քանի որ Եւրոպացիք գնում
գալիս էին Աիլիկիա , և Հագարացիք խմանում էին՝
որ Հայերն են պահում նրանց այն կողմերումը , ապա
թէ չէ՝ Հագարացիք վաղ չորցուցած կլինէին նոցա
սերմը : Եւրոպացոցմէն օգնութեանն-էլ սպասելը զուր
էր . անցել էր այն դարը , երբ որ Քրիստոնէից սրտի
մէջ վառուած էր այն բոցը , Եւրոպացոց մտքի գա-
ղափարները փոխուել էին . և այնուհետև քրիստո-
նեայք չէին ցանկանում Երուսաղէմի աղատելը , այլ
Հռոմայ գահն էր , նախ՝ որ այն կողմերումն-էլ հաս-
տատէ իւր իշխանութիւնը , և երկրորդ՝ որ խաչակիր
անունով հանէ Եւրոպայէն այն մարդոց , որոնք որ
նորա գահասիրութեան կարող էին խոչընդակ լինել :

Մինչ գործերը այս հանգամանքներու մէջ էին ,
Սարակինոսք սկսան արշաւել Աիլիկիայի դէմ , և Հե-
թում և Ղէոն մէկ քանի անգամ Հայագունդ զօրքով
նրանց ջարդեցին . և այս յաջողութիւններէն խրա-
խուսվելով՝ փոխանակ իրանց նախարարներու սիրտը
շահելու , և ազգին քաջալերելու , Վատինացոց խոր-
հրդով Աղէմէս Ծ-դի մօտ դեսպան ուղարկեցին , որ
օգնութիւն հասցնէ : Փափը փոխանակ օգնութեան՝ պա-
հանջեց՝ որ թագաւորը նորա հպատակ համարուի ,
և Հայոց եկեղեցին նրա իշխանութեան տակը լինի :
Հայոց դեսպանները այսպէս որ յետ դարձան , Հեթում
ու Ղէոն , և ժամանակի կաթողիկոսը Քրիզոստ Ենա-

ւարդեցին սկսան ազգի մէջ ծիսաւորութիւններ անել : Ազգը և իշխանները նոր-ինորոյ վրդովուեցան : Այս միջոցները Թաթարներու խանը Պիլեարղու եկել էր զօրաց Տերտ Աիլիկիա : Իշխանները երբ որ տեսան թէ Հեթումի և Ղէոնի բռնած ճանփաները պիտի կրօնին և ազգութեան փսսա պատճառեն , դնացին դանդաւարին Պիլեարղու խանին : Նա-էլ որ առաջուանէ թըշնամայել էր Հեթումին և Ղէոնին , երկուսին-էլ Տրաւիրեց իւր բանակը : Հեթում և Ղէոն՝ մտանալով իրանց արածները , և կասկած չունենալով իշխաններէն , միամտութեամբ դնացին Թաթարներու բանակը : Պիլեարղու Տրամայեց և երկուսին-էլ սպանեցին այն տեղ : Այս առժամանակ կանգնեցրուց Հոռմայ արբանեակներուն , և չկարողացան աւելի ոտքերը առաջ դնել . և այն վտանգը՝ որ կախուած էր ազգութեան և եկեղեցւոյ գլխին՝ Տրոացաւ առ ժամն :

Օ Շ Ի Ն :

(1308—1320) :

33

Իշխանները և նախարարները երբ որ լսեցին՝ թէ իրանց սարքած որոգայթի մէջ բռնուել-են Հեթում և Ղէոն՝ ազգութեան և կրօնի դարանակալները , ընտրեցին Ղէոն Է-դի եղբորը ՕՇԻՆԻՆ իրանց գլուխ , և օգնեցին նրան՝ որ երթան միասին , և Պիլեարղուին Աիլիկիայէն դուրս անեն : Երբ որ Թաթարները Տրոացան այն երկրէն , 1308 թուին Օշին նստաւ Ռուբենեանց

աթոռը . և եթէ Հռոմայ կողմէն գտնէր մէքիչ հան-
դիատ, նա Յիլիկիա լաւ էր կարող խնամել . բայց հը-
նարը չգտաւ . խոր էր արմատացել Յիլիկիայի մէջ կրօ-
նական վէճը , և Օշին պարտաւոր գտնուեցաւ ընդդէմ
իւր կամաց , և ընդդէմ աղգի հաճութեան իւր Առ ամեաց
թագաւորութեան ժամանակը , որ կարող էր աղգօ-
գուտ գործերու վրայ ծախել , այն սնտօի և անստուղ
հակառակութիւններու մէջ վատնել : Օշին-էլ երկու
անգամ գետտան ուղարկեց Փափի մօտ , որ ոչինչ անել-
լու չկարաց . մանաւանդ Փափի ուղարկած օգնականը
Յիւրոսի թագաւորը ինքը Օշինի դէմ թշնամութիւն
անելով պատերազմ բացեց : Օշին Ֆրանսայի Փիլիպ-
պոս թագաւորէն-էլ , Սիկիլիայի Ռոպերդ թագաւորէն
էլ , և Տարենտոնի Փիլիպպոս իշխանէն-էլ օգնութիւն
խնդրեց . բայց բոլորն-էլ մնաց անստուղ . ամեն-տեղ
Փափի մատը կայր և ամեն տեղ Օշին անյաջողութեամբ
էր այս բանագնացութեան գործի վերջը տեսնում :
Եւ ինչ յաջողութիւն կարէր յուսալ Օշին , երբ որ
այն թագաւորները՝ որոնցմէն-որ սա խնդրում էր օգ-
նութիւն հասցնել , իրանք-էլ պատաղուած էին պա-
տերազմներով : Փափն-էլ էր խմանում , որ իրայ կոն-
գակները չունէին այն զօրութիւնը՝ որ կարողանային
Եւրոպացոց տեղէն շարժել , բայց չէր կամենում խոս-
տովանուիլ . և նրան ինչ փոյթ էր՝ թէ Հայերը նրան
ապաւինելով վրաս են ստանում : Նա միայն այն էր
ուզում տեսնել , որ Հայերը նեղ տեղ մնացած՝ ընդու-
նին նրայ գահերիցութիւնը , և նորա եկեղեցոյ վարդա-
պետութիւնը . սլլ թէ այս միջոցին Հայերը ոտքի տակ
էին գնում , նրայ ինչ ցաւ : Այսպէս Օշինն-էլ աւար-
տեց իւր կեանքի ասպարէսը . եթէ իւր նախորդաց սխալ
գաղափարներէն ազատ պահէր իրան , երջանիկ պիտի
անէր իւր տէրութիւնը :

Լ Ե Ո Ն Ծ-Դ:

(1320—1343):

34

Դառն էր այն ժամանակը՝ երբ որ Օշինի որդի ԱԵՈՆ Ծ-Դը՝ տասնամեայ մանկական հասակի մէջ նրստաւ Հայոց թագաւորութեան աթոռը: Այս աթոռի հողաբարձուն էր Օշին Հայկազն իշխանը, որ խնամակալ լինելով դեռահասակ թագաւորին՝ կառավարում էր աշխարհը խոհական տնտեսութեամբ և քաջ սրաշուսկանութեամբ: Քայց տարի չտեսց Վեոնի իշխանութեան խաղաղութիւնը: Եգիպտոսի ու Քաղտասի տիրապետող Մէլիք-Նաղար Սուլթանը՝ լսեց որ Եւրոպացիք գալիս են Երուսաղէմը ազատելու. աճապարեց՝ որ քանի Եւրոպացիք եկած չեն՝ ինքը Աիլիկիայի մէջէն Քրիստոնէից իշխանութիւնը բնաջինջ անէ, որ Եւրոպացիք չկարողանան այն-տեղ դանել իրանց հաւատակից բարեկամ և դաշնակից. այս պաաճառաւ դեսպան ուղարկեց Թաթարներու խանի Թիմուրդաշի, և Թիւրքմէններու իշխանի Արամանի մօտ՝ որ Աիլիկիայի վերայ արշաւեն:

Աիլիկիայի մէջ-էլ այն կրօնական ատելութիւնը, որն որ մէկ անգամ ընկել էր, ոչ թէ վերջացել էր, այս ևս առաւել սաստկացել էր: Հայերը տեսնելով թէ իրանց թագաւորները իրանց կրօնին, եկեղեցւոյն և ազգին հաւատարիմ չեն, սրտակտուր ցրուում էին, և քիչ քիչ հեռանում էին Աիլիկիայէն, որ արդէն թշնամիներէն շրջապատուած էր, և գնում էին այնպէս

երկիրներ, ուր որ ապահով էին տեսնում իրանց աղ-
գութեան և կրօնի և եկեղեցոյ աղաաութեան համար:

Թշնամիք տեսներով թէ Հայերը ոչ թէ իրանց եր-
կիրը պաշտպանելու հոգան են քաշում, այլ ցրիւ են
ընկնում, առաջ Թիմուրգաշը արշաւեց, և 25 օր ապա-
տակեց երկիրը 30,000 ձիաւոր սպառազէն զօրք հետը
ունենալով: Քեռ ևս Օշին խնամակալը չէր զօրաժո-
ղով եղել, որ Թաթարները Կիլիկիայէն դուրս եկան
անհամար գերիներով և աւարներով ծանրացած, և
նորա տեղ եկաւ Արաման Թիւրքմէն սասաւառակի հետ:
Սոքա-էլ ինչպէս կամեցան, այնպէս քանդեցին ու ոտ-
նակոխ արին Կիլիկիա, և աւարով և գերութիւնով
լցուած հեռացան: Ահա Եգիպտացիք իրանց Սուլ-
թանի առաջնորդութեամբ հասան, որ ճոռաքաղ անեն
Հայերուն: Այս տեղ Հայերն-էլ քիչ մարդով, միայն
600 քաջ երիտասարդներով գնացին Եգիպտացոց դէմ,
և կոտորած արին և Կիլիկիայէն հանեցին:

Քան զայս աւելի ինչ ապացոյց պէտք էր, որ եթէ
600 երիտասարդք կարողացան Եգիպտացոց Սուլթա-
նին վանել, 6000 երիտասարդք ինչե՞ր չէին կարող
անել, և միթէ Կիլիկիայումը 60,000 երիտասարդք չէ՞ին
գտնուում, որ թաղաւորը հաւաքէր, թշնամեաց դէմ
դնէր, և իւր աշխարքը պահպանէր: Լատին իշխանք
չէին թողնում. թոյլ չէին տալիս Օշինին-էլ որ մէկ
րան անէ. կուլ էին տուել թագաւորութիւնն-էլ, թա-
գաւորին-էլ. Լէոնի խելքումը նոր ինորոյ նստե-
ցրին, որ Հռոմայ քահանայապետին դեսպան ուղարկէ,
նա-էլ ուղարկեց: Ինչ դուրս եկաւ: Ոչինչ: Փափը դը-
րեց Եւրոպացոց. Եւրոպացիք անկաջ չդրին: Հայերը
իրանք կանգնեցան թշնամիներու դէմ, և վերջապէս
հաշտութեան ժամանակը 1,200,000 դենար հարկ տալ
խոստացան, որ կանէ 50,000 փղորին (Քլորին), և Այսով

Նաւահանդատէն ստացո՞ծ եկամուտի կէտը, և Նփրատի
և Սսորիքի մէջ բնակած Հայերից մարդահարկ մէկ
մէկ Բիւզանդեան ոսկի: Ահա Հռոմայ օգնութիւնը:
Լէոն կամ նորա Լատին բարեկամները այսքանը բա-
ւական չհամարեցան. սկսան աւելցնել իրանց անկար-
գութիւնը, որ աշխարքի և աղղի դիւխն-էլ չարիքը
աւելանան: Լէոն սկսաւ Լատին իշխանաց խորհրդով
Հայաղղի իշխաններուն իրմէն և գործերէն հեռացնել,
և նոցա սրաշուօնը Լատին իշխաններուն յանձնել:
Օշին խնամակալը տեսաւ, որ Լէոն իւր թագաւորու-
թեան հիւմքն է փորփրում, իւր իշխաններուն մեր-
ժելով և իւր ընդդէմ թշնամացնելով, և սկսաւ խրա-
տել թագաւորին. այն բարի խրատի սրտուղը այն ե-
ղաւ, որ Լէոն՝ Օշինին սպանել տուեց. և յետոյ իւր
կնոջն-էլ՝ որ Օշինի դուստրն էր, նոյնպէս մահու մատ-
նեց, և ինքը ամուսնացաւ Սիկիլիայի թագաւորի
դստեր՝ Կոստանդիայ դշտոյին: Այս անկարգութեան
համբաւները հասաւ թշնամիներու անկաջը, և նոքա
համարձակութիւն առին և եկան Կիլիկիա, որովհետեւ
գիտէին՝ որ Հայերը էլի պիտի չ'պատերազմին. իսկ
Լատինացոց իշխաններէն բնաւ երկիւղ չունէին: Լատի-
նացոց իշխանները փոխանակ թշնամեաց դէմ կանգնե-
լու, էլի խորհուրդ տուին Լէոնին՝ որ Բենեդիկտոս
Փափի մօտ գիր դրէ: Լէոն-էլ գրեց: Հռոմայ քահա-
նայապետը էլի խաչակրաց արշաւան քարոզեց: Այս
արշաւանի լուրը դղրդեցուց աշխարք, բայց ոչինչ ար-
գասիք չունեցաւ. արգասիքը այն եղաւ, որ Նդիպտա-
ցոց Սուլթանը բարկացաւ, և իւր տասնուհինգ տարի
ժամանակով դրած հաշտութիւնը քանդեց, և զօրք
ուղարկեց Կիլիկիա՝ որ այն երկիրը աւերեն, որովհետեւ
լաւ գիտէր որ նորա մէջ մնացած քրիստոնեաներն են
այն սպառնացած արշաւանի շարժառիթները: Ետտ

նեղ տեղ մնաց Ղէոն, և վերջապէս ստիպուեցաւ Տաշ-
տութիւն խնդրել Մէլիք-էլ-Նաղար-Մաճուա Սուլ-
թանէն: Սուլթանն-էլ Տաշտութիւնը ընդունեց, բայց
միայն այն պայմանով՝ որ Ղէոն այնուհետեւ Հոռմայ
հետ բանգանացութիւն չունենայ, և Ղէոն աւետարանի
վրայ երդում անելով խոստացաւ: Այլ Հոռմայ քահա-
նայապետը այն երդումը ջրել տուեց, և Ղէոն Չ1 տարի
թագաւորութիւն արաւ, և մեռաւ անժառանգ: Սորա
հետ վերջացաւ Ռուբենեանց ուղիղ գծով իջած աղ-
գատոհմը 1342 թուին:

ԿՈՍՏԱՆԴԻՆ 3-դ. ԳՈՒԻՏՈՆ ԵՒ ԿՈՍՏԱՆԴԻՆ 4-դ:

(1342—1362):

35

Լատինացիք հատան իրանց բաղձանքին, նորա ու-
ղում էին՝ որ Կիլիկիայի Հայոց թագաւորութիւնը
իրանց ձեռքը գնեն, ահա Կիլիկիայի թագաւորու-
թիւնը մնաց իրանց ձեռին: Քեռ ևս Ղէոնի ժամանակն
էին Հայերը ամեն պաշտօններէն հեռացել, և նոցա
տեղը գրաւել էին Լատինացիք: Ղէոն 5-դը պիտի գրը-
վէր Ղէոն Վերջին, և նրամով պիտի ասվէր՝ թէ Ռու-
բենեանց թագաւորութիւնը վերջացաւ, բայց որովհե-
տեւ կարկտանի նման մէկ բան արին, և Կիլիկիա Լա-
տին թագաւորներ նստան, և Ռուբենեանց ժառանգ
համարուելով, Ռուբենեանց անունը իրանցմէն չհե-
ռացուցին, այն պատճառաւ պատմութիւնն-էլ դեռ ևս
չարունակում է, բայց խիսապէս այս Հայոց պատմու-
թիւն չէ. այլ Լատին իշխանաց պատմութիւն է, որ
Հայոց թագաւորութեան աթոռի վրայ նստան: Խեղճ

Հայեր. ինչ դժուարութեամբ էին այն թաղաւորութիւնը ստացել, ինչ զոհերով էին պահել և սրահաւնել. անօրէն Հռոմայեցիք իրանց փառասիրութեան զոհեցին ողորմելիներուն: Երբ որ Ահոն 3-դը մեռաւ անժառանգ՝ Հայերը նորա թաղաւորութեան մօտ շեկան. Հայոց իշխանները ըստ մեծի մասին թողել էին Աիլիկիա և ցրուել էին. իսկ ռամիկ ժողովուրդը միայն այն օրուան էր սպասում, որ հնար գտնէ, և Աիլիկիայէն դուրս երթայ. և ինչի պիտի համարէր Աիլիկիա՝ իրան հայրենիք և սիրէր. ոչ աստքէն այն սրածառաւ էր աղղը Հայաստանէն դուրս եկել և ցրիւ ընկել, որ Հայաստան կորցրել էր իւր ազատութիւնը և անկախութիւնը, և օտարներու ձեռք էր ընկել: նոյնպէս իւր ազատութիւնը և անկախութիւնը կորցրել էր Աիլիկիա, և օտարներու ձեռին էր. էլ Հայերը այն տեղ չունէին ոչինչ՝ որ կարողանար նրանց քաղցրանալ և այն երկրի հետ կապել. Հայերը աչքերը արտասուք լիքը թողնում էին Աիլիկիա, ուր որ չէին կարողանում իրանց Հայութիւնը անել, և գնում էին այնպէս երկիր, ուր որ յոյս ունէին թէ նոցա աղգութեան և կրօնին մարդ չի գիպէր: Աիլիկիան Հայերու ձեռքէն առնողը եղաւ Հռոմ և նորա կրօնամոլ, կեղծաւոր, անյաղ, փառասէր և արծաթասէր արքանեակները:

Անք վերը տեսանք՝ որ թեթևամիտ Հեթում 2-դը տուել էր իւր Չապէլ քոյրը (Ահոն 3-դի դուստր) Աիլարոսի թաղաւորի եղբորը. այս ամուսնութենէն ծնել էր Յոհաննէս, որ ԿՈՍՏԱՆԴՆՈՍ 3-դ անուն ստանալով Հայոց երկրի վրայ թաղաւոր նստաւ: Բայց սա անկարգ բաներ անելով ասելի եղաւ ժողովրդեան, և մէկ շփոթի մէջ սպանուեցաւ: Յետոյ նորա տեղը նստաւ նորա եղբայրը ԳՈՒԻՏՈՆ, որ նոյնպէս անկարգ մարդ էր: Երբ

որ սորա ժամանակը Եզիպտացիք խաչակիր զօրաց
սուտ համբաւներէն զայրանալով արշաւեցին Աիլի-
կիա, Գուխտոնն-էլ Հոռմայէն օգնութիւն ուղեց: Յայտ-
նի է՝ որ չ'ստացաւ. և որովհետև իւր անկարգութիւնն
էլ շատացուց, Հայերը նրան-էլ իւր եղբօր փառքին
հասցրին:

Մնացել էր Ռուբենեանց ցեղէն խղական սեռէն ցե-
ղուած մէկ իշխան Նատինացի, որուն որ Հայերը իրանց
կամքով ընդունեցին և անունը ԿՈՍՏՅՆՒՐԻՍ Կ-դ դրին:
Այս աղգի ընտրած արթուն և քաջ թագաւորը՝ որ
Բալդուին Հայոց սպարապետի որդին էր, առաջ լռե-
ցուց բոլոր կրօնական վէճերը, որով որ Նատինացիք
Հայերուն զղուեցնում էին, և ապա սկսաւ թշնամի-
ներուն դէմ դնել: Եզիպտոսի Սուլթանը՝ Ասորոց,
Բարեւրացոց և Եզիպտացոց զօրքը ժողովեց, և կատա-
ղութեամբ եկաւ մտաւ Աիլիկիա, բայց Կոստանդին
էլ Աիպրոսի, Հոռոսի և այլ զօրքեր՝ իւր զօրքերու
հետ միացրած՝ նոցա առաջ դուրս եկաւ, ջարդեց,
յաղթեց ու յետ դարձուց: Էլի Հոռմայ Փափը դադար
չտուեց սրանց. ամեն տեղ դրեց, աղմուկներ հանեց,
թէպէտ և ոչինչ անել չկարողացաւ. բայց երբ նորա
խլրտելէն դրդուած թշնամիները յարձակեցան Աիլի-
կիա, խեղճ Կոստանդինը միայն իւր Հայագունդ զօր-
քով հարկադրուեցաւ նոցա դիմացը կանգնիլ, սա-
տերաղմիլ, և Աիլիկիայէն դուրս հանել, և մէկ քանի
տեղեր-էլ նոցա ձեռքէն առնուլ:

Այս թագաւոր անուան արժանաւոր՝ աղգի ընտրու-
թեամբ հաստատուած թագաւորը 18 տարի քաջու-
թեամբ խնամեց Աիլիկիա, ուր որ արդէն Հայերը շատ
նուազել էին իրանց նախկին բաղմամարդութենէն.
բայց ժառանգ չթողեց:

ԼԵՈՆ ՎԵՐՋԻՆ (1365—1393):

(1365—1375—1393):

Վարդը Տասաւ որ Հռոմայ քահանայապետութիւնն
 էլ Տասնի իւր բաղձանքին: Լատինացի իշխանք ցան-
 կանում էին որ Հայերը իշխանութիւն չունենան. Հա-
 յերը իշխանութենէն զրկուեցան: Լատինացիք ամեն
 Տնարը բանեցրին, որ Աիլիկիա-էլ իրանց ձեռքը գնեն.
 Աիլիկիա մնաց նոցա ձեռքը: Այս բանի մէջ միայն
 Լատինացիք չէին մեղաւոր. Ռուբենեան իշխանապետքը
 ևս էին յանցաւոր, որ Եւրոպացոց հետ շատ խնամու-
 թիւն արին, շատ աղջիկ տուին ու առին, հարկաւո-
 րապէս պիտի նոցա կուլ-երթային: Եւրոպացիք նոյնը
 արին, ինչ-որ դարաւոր ժամանակներով ստաջ արել
 էին Յոյնք: Հայերը միշտ Յունաց ու Եւրոպացոց նա-
 խանձու գրգռողներն էին: Ինչպէս որ Յոյնք մէկ ժա-
 մանակ ուղում էին Հայոց՝ բաղաբաղան կեանքէն զրկել,
 որ նրանով աղգի կրօնն ու աղգութիւնը կլանեն,
 նոյնպէս-էլ Եւրոպացիք այս երկու նարանակը ունէին,
 բայց բաժան բաժան: Լատին իշխանք ցանկանում էին
 թագաւորութիւնը գրաւել, Փափը ուղում էր եկեղե-
 ցին ծառայեցնել: Լէոն Ծ-դի մահուամբ տէրութիւնը
 ընկաւ Լատինացոց ձեռք. Կոստանդին Կ-դի մահուամբ
 Աիլիկիայի թագաւորութիւնը դառաւ Հռոմայ վիճակ:
 Փափը սկսաւ նորա թագը տալ՝ ում որ ինքը կամեցաւ:

Արատանդին 4-դը իւր սրահասամիտ նախորդներու օրինակէն խրատուելով Աէոն 5-դի աւրած եղծած կարգերու շատը նորոգել էր. և տեսնելով որ առանց Հայերու, միայն Ներուպացոց զօրութեամբ Աիլիկիան սրահելու չէ կարող՝ փոքր-ի-շատէ Հայկազն իշխաններուն իւր ընտրութեան երախտագիտութիւնը ցոյց տալով մէկ-քանիսին իրանց առաջվան սրահոծները յետ էր դարձրել, որով-էլ կարողացաւ այնքան տարի այնպէս փառաւոր թագաւորութիւն անել :

Արբ որ մեռաւ այս Ներուպացի Հայասէր և խելօք թագաւորը, Հայոց իշխանք և Աատինացի իշխանք ձեռնամուխ եղան թագաւոր ընտրել. բայց յայտնի էր՝ որ Հայերը պիտի Հայկազն թագաւոր ուզենային, իսկ Աատինք՝ որ մէկ անգամ թագաւորութիւնը ավերն էին առել՝ պիտի չ'կամենային Հայկազն թագաւոր դրնելը. այս սրատճառաւ Տարսարայու-Նէան ժամանակը տեւեց երկու տարի: Հռոմայ գահը քնած չէր. Հայերու և Աատինացոց չ'միարանուիլը իւր համար սրատրատական սրատճառ շինեց, և որ շատ ժամանակ առաջ սովորութիւն էր արել Աիլիկիացի շատ բաներու մէջ, կամ լաւ ևս՝ ամեն բաներու մէջ մատր խառնել, այս տեղ էլ չ'ուշացուց իւր միջնորդութիւնը: Ներուպացոց ամեն թագաւորութիւններու մէջ Հռոմը դատաւոր նստիլը սովորել էր. ինչ զարմանք էր՝ թէ փոքրիկ Աիլիկիացի մէջ-էլ ստանար դատաւորութեան աթոռը: Մի թէ դատաւոր անուն կանոն էր վրէն՝ որ ազգը խրանի, բաւական էր միջնորդ անունն-էլ, հաշտարար անունը, կամ խաղաղարար անունը:

Ահա այս կերպով Հռոմայ արբանեակները ջանք դրին՝ որ Հայերը և Աատինք չ'միարանալին, և կարօտին Փափի միջնորդութեան: Հռոմայ քահանայապետութիւնը՝ ինչպէս սրահտական քրիստոնէութեան, ինչպէս

Հայր հասարակաց, ինչպէս բարեկամ Հայոց՝ նստաւ
Հայերու և Վատինացոց մէջ միջնորդ, հաշտարար և
խաղաղարար, և առաջարկեց՝ որ Աիլիկիայի Հայոց թա-
գաւորը ընտրուի Վէոն Վուսինեան՝ Աիպրոսի թագաւորի
ազգականը. և Աիլիկեցի Հայերը և Վատինք յօժարեցան:

Վէոն Թ-դ, Վերջին (պատմութիւնը ասում է թէ
քաջ մարդ էր և համեստ) կարելի է թէ համեստու-
թիւն ունէր, բայց քաջութիւնը դորձքերէն չէ-երև-
ում: Սորա կեանքը ինչ է ցոյց տալիս. ահա՛ այս, որ
սա լաւ պաշտօնասէր Հռոմէադաւան մարդ էր, Փափին
շատ մտերիմ. Վատին կրօնաւորաց շատ էր երևա տալիս,
այն պատճառաւ նորա համար միշտ գովասանութիւնը
սրակաս չէին անում. ինչի՞ պիտի խուսի չ՛ծխէին այն
մարդուն, որ Աիլիկիոյ հարուստ ծոցերը նոցա անյադ-
արժաթսիրութեան համար շինել էր աղբիւր Բայեալ.
և այն միջոց՝ իրան-էլ մոռացած չէր:

Յոսիպ Աւրսինացին (Juvenal des Ursins) յատկապէս
գրում է, թէ Վէոն իւր հետ Բեռել էր Հայաստանէն Ռոմ-
ի մէջ գնաց: Վէոն երբ որ գերի ընկաւ, և քանի տարի
բանտի մէջ մնաց, չէր կարող դանձեր ունենալ. ուրեմն
այն դանձերը այն ժամանակ է հաւարել նա, ապահո-
վել և Նւրոպիա անցուցել, երբ որ դեռ գերութեան
վտանդ չէ ունեցել. ի հարկէ այս ծածուկ դորձքերու
միջնորդ և արբանեակ պիտի լինէին՝ նրան համեստ ու
քաջ անուանող՝ Հռոմայ պաշտօնեաները: Հայերը կոյր
էին, չէին տեսնիր՝ թէ իրանց քաջ ու համեստ թա-
գաւորը ինչ խողովակ է շինել, որով Հայոց ոսկին աղ-
բիւրարար ծորում է Աիլիկիայէն դէպի Նւրոպա: Այս-
պիտի թագաւորը չէր կարող ազգին սիրելի լինիլ:
Տեսնենք:

Վէոն Վուսինեանի ազգական Աիպրոսի Պետրոս
թագաւորը պատերազմ ունէր Եգիպտացոց դէմ. այս

աղղականութիւնը Տրախրեց Աննի դէմ Եղիապոսի
սուրբ: Քեռ Անն մէկ տարուան թագաւոր էր՝ որ
1366 ին Եղիապոսիք արշաւեցին Ալիլիկիայի վրայ:
Եթէ պատրաստ լինէր Անն՝ կարելի էր թէ ցոյց տար
իւր քաջութիւնը, բայց թշնամեաց յարձակումը պա-
տահեցաւ անակնկալ, և Անն՝ որ դուրս եկաւ նոցա
դէմ այնքան մարդով որքան որ կարաց հաւաքել,
ուժը չպատեց նրանց օգնել կանգնիլ, յաղթուեցաւ
և հաշտութիւն խնդրեց: Հինգ տարի ետքը Մամէլիւք-
ները էլի եկան 1371 թաւին, և Անն էլի դուրս եկաւ
նոցա դէմ քիչ զօրքով, և յաղթուեցաւ: Բայց այս
անգամին ինքն-էլ խոցուուեցաւ և կորաւ: Աստուղի
թշնամիները Ալիլիկիան ապականութեամբ լցրին ու
տակնուվրայ արին: Աննի կնիկը Մարիամ թագուհին՝
որ մէկ տարի մէջ թաք էր կացել, երբ որ թշնամիքը
Ալիլիկիայէն հեռացան՝ իւր ասպատանիէն դուրս եկաւ,
և խկոյն իմացում տուեց աղղական Տարենտի իշխան
Փիլիպպոսին: Սորա աղղարարութեամբ Եւրոսպցի
թագաւորները և Փանիր առաջարկեցին Աթթոն Բրուն-
չիլիգեանին՝ որ Մարիամ Հոյոց թագուհւոյ հետ սրբ-
օակուի, և Ալիլիկիա ժառանդէ: Իսկ յօժարացաւ,
բայց յանկարծ Անն իւր կորած տեղէն յայտնուեցաւ
և կրկին սկսաւ թագաւորել: (Ահա այս կորած ժա-
մանակը սկիսի նա փոխադրած լինի Եւրոսպա այն գան-
ձերը, ինչ որ իւր առաջին յաղթուելէն յետ հինգ
տարուան խաղաղութեան ժամանակը կարողացել էր
հաւաքել՝ ուղիղ կամ թիւր ճանփաներով): Այս եր-
կու պատերազմի մէջ սրարաութիւնները չեն հաստա-
տում նորա քաջ լինելը, կարելի է թէ քաջ էր նա
զինուորական խաղերու մէջ (Turnir). թշնամեաց դէմ
քաջութիւն ցոյց չ'տուեց: Մէլէք-էլ-Էշրաֆ-Շասլան
Մամէլիւքը հասկանալով Աննի որպիսութիւնը, և

տեսնելով որ հեշտութեամբ կարող է նուաճել նորա
 տէրութիւնը, որ մէկ հաստ Գրիստոնեայ երկիր մնացած
 լինելով՝ Մահմետականաց աչքին փուշ էր դառել,
 1374 թուին ուղարկեց զօրք՝ որ Ալիլիկայի գլխին
 վերջին հարուածն-էլ իջուցանեն: Եկան Եգիպտացի-
 ները, և շատ քաղաքներ՝ որոնք որ առաջուան արշա-
 ւաններէն քանդուած լինելով՝ դեռ նորոգուած չէին,
 հեշտութեամբ տիրապետեցին և քարաքանդ արին:
 Ինքն Ղէոն թագաւորը՝ իւր ընտանեօք մտաւ Կոստան-
 բերդը, և ինն ամիս սրաշարուած մնալն յետ՝ անձնա-
 տուր եղաւ և գերի գնաց Եգիպտոս: Եւ այսպէս Ալիլի-
 կայի մէջէն վերացաւ այն ազատութեան ստուերն-էլ,
 որն որ մնացել էր Ղէոն Ծ-դի մահէն յետ Ռուբենեան
 ցեղապետութեան անուամբ: Ղէոն Լուսինեանը մինչև
 1382 թիւը մնաց բանտի մէջ, և Քասթիլեան Յոհան-
 նէս արքայի միջնորդութեամբ ազատուելով՝ Աւտարի
 դեզերու կցաւ Եւրոսպոսմը, և 1393 թուին մեռաւ
 Փարէզ քաղաքումը, և թաղուեցաւ Կելեստինեանց
 վանքումը: Չորս հարիւր տարիէն յետ՝ երբ որ յեղա-
 փոխութեան շիտթարկուները սկսան Պանդոնոսն հա-
 ւաքել Երեւելայի դիակները, Ղէոն Լուսինեանի կմախքն
 էլ բերուեցան Սէն-Գէնի (սուրբ Գիորգիոս) թաղի կամ
 արուարձանի արքայազանց դամբարան:

ՅՆՏՆՆԵՐ

Երբ որ Լուսինեան Յրանսիացի ցեղի հետ միասին
 վերջացաւ Ալիլիկայի Հայոց թագաւորութեան յետին
 նշոյլն-էլ, Ալալոսի (Խոսրու) Լուսինեան ցեղէն առա-
 ջացած թագաւորները իրանց վրայ առին Հայոց Լուսի-
 ոսի անունը, և հարիւր տարի ժամանակի չափ սրահե-
 ցին իրանց վրէն: Այս Ալալոսի թագաւորներու և

Թագաւորութեան ժառանգորդներու մէկը տասնու-
հինգերորդ դարու մը Հայոց Լազարոսի սրատուանունը
կամ Տիտղոսը տուեց Վէներաիկեցոց: Յետ ժամանա-
կաց Լազարոսի ցեղապետութենէն մէկ դշխոյ, հարսնա-
նալով Ստեփանոս Գրիգորի սրատու դառաւ որ Պէտրոսի
Թագաւորները, (որ այժմ ասլում են Սարգիսի կամ
Վիկտոր Էմմանուէլի և Գարիբալդիի մեծագործու-
թեամբ Միսայիլ Իսայիոյ Թագաւոր) իրանց տիտղոսնե-
րու վրայ աւելացրին և Կիարոսի, Երուսաղէմի և Հայոց
Լազարոսի սրատուանունը: Մէկ քանի հաս ծովեղերեաց
քաղաքներ, որոնք որ ընկել էին Եւրոպացի իշխան-
ներու ձեռք, ինչպէս Սէֆիս, որն որ Լէոն 2-դ Թա-
գաւորը տուել էր Հիւրնկալ կամ Ասպնջական կարգի
ասպետներուն. (Անտիոս-Գրիգորի) Անտիոսի և Սեֆիսն՝ որն
որ Լէոն 5-դ տուել էր Հռոմէական Ասպետներուն,
Կորնիոս՝ որ տուած էր Կիարոսի Պետրոս Թագաւորին,
մէկ քանի միջոց մնացին Քրիստոնեաներու ձեռին.
այլ տասնուհինգերորդ դարի վերջը այս քաղաքները
քանդուեցան Քարամանլը Իբրահիմ Բէգի ձեռքով. և
սորա աղգատոհմն էլ բնաջինջ եղաւ Օսմանցոց ձեռ-
քով, և այնուհետև Կիլիկիա դառաւ Տաճկաստանի
կամ Թուրքաստանի մէկ նահանգ: Այս Կիլիկիա նա-
հանգը, (ինչպէս որ դրում է Սմբատ տարեգիրը) ու-
նէր եօթանասուն և հինգ քաղաք. որոց մէկ քանիսը
ժամանակաւ աթոռանիստ էին և մայրաքաղաք Կիլի-
կիոյ Հայոց Թագաւորութեան, որք են. ՍԻՍ, Տարսան,
(Թարսիս կամ Թէրսիս), Ատանայ, Անարզաբա, Մսիս
(Մախաթիս կամ Մոպսոսթապոս), Այաս (Փայսալ կամ Լայսոս),
Հռովկլայ (Ռոմուս-քալէ), ԲԵՐԶԻ ԲԵՐԴ, Լամբրոն, Ջերա-
սուս, Չեկէր, Բաղրի, Համս, Սերվանդիկար (Սարանդի-
քոս), Հարուն, Սեմանկալ, Ալէ (Հաճիս), Էնքուղուս,
Թոռնկայ, Բերդուս, Անէ, Կութ, Փորնուս (Փորնուս),

Կապան (Խափան կամ Ղափան, Բայց ո՛չ է սա Սեանկայ),
Ղանչ, Հողիկ, Մազոտ-Հաճ, Պասպարոն, Բերիկ, Պե-
րոզան, Սինա, ԿՈՌՈՄՈԶՈՒ, Ատարոս, Վորգիս, Լաւ-
Չատ, Զամենկայ, Լամոս, Անամոր, Նոր-Բերդ, Ան-
դուլս, Կուպայ, Մագար, Սիկ, Մանուկատ, Ալար,
Լագրավին, Ագուլ, Կոտրատ, Մուկատաս, Կոս, Բեհէանի,
Զելկնոց, Կութուլ, Աջնորդ, Մանէլ, Պընակ, Գի-
րուն, Տերնտէ, Աբլաստան (Էլլիսիան), Արարիսուս,
Հոգսուն, Մարաշ (Գէրճանի), Իսսուս, Մալիուս, Կարս
(ո՛չ Շեռանայ Ղարս), Կորիկոս, Սելեկիս, Էրմէնէկ (Գէր-
ճանիկոտայուլիս), ԱՍՀԿՍՅ (Բարնայ) Ուլնիս (Չէլիսիան), Ան-
թալի (Այնիս, Էնիկայ), Անտիոքէթթա (Փոսր-Անտիոք,
Բայց ո՛չ Անիսիս), Սիգինոն և ուրիշ շատ քաղաքներ,
բերդաքաղաքներ և մեծ մեծ գիւղաքաղաքներ, անա-
ռիկ բերդեր և աւաններ, որոնցմէն ոմանք այժմ իս-
պառ քանդուել են, և ոմանք այնպէս անուն են ստա-
ցել՝ որ բոլորովին անհետ են եղել, ինչպէս որ աշխար-
հացոյցներէն տեսնուում են:

Եւ ո՛վ կարող էր կարծել՝ թէ այս քաղաքներու
մէջէն Չէլթուն (Ուլնիս) քաղաքը պիտի իւր մէջ Հայոց
աղատութեան և ինքնազլխութեան մէկ հայտն
պահած լինի, որ չորս հարիւր տարի ազգը իմացած
է՛ լինի, և յայտնուի իննևատաներորդ դարու վերջին
կիսարածնումը:

ԱՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ:

(1373—1863. 490 մ.հ.):

Մեղիք-Շահ. Թաթարք. Չաքարիա Սպասալար. Ճինկիզ-Խան:

Երբ որ Ռուբենեան բաղմերախտ և բազմարդիւն
 Հայկազանց ցեղապետութիւնը՝ խղճալի Հայե-
 րուն խնամք էր տանում աշխարքի մէկ խորշումը, Մի-
 ջերկրեայ ծովի մէկ անկիւնումը, Ախլիկիա փոքրիկ
 գաւառումը, — բուն մայրը Հայաստանը՝ Մէջ և Փոքր
 Վերին և Ստորին — Հայքը անշունչ դիակի նման ընկած
 գիշատւում էր շրջակայ թշնամի աղգերէն:

Երբ որ բազրատունեայ թագաւորութիւնը վերջա-
 ցաւ՝ Հայաստանի արևմտեան մասը, Փոքր Հայքէն
 սկսած մինչև Երասխ գետը Յունաց ձեռին էր. արևել-
 եան մասը, Միջագետք, Ծովք, Մոկք, Պարսկահայք՝
 դարձեալ մինչև Երասխ՝ Պարսից իշխանութեան տակն
 էր. իսկ Տիւսիսային մասը՝ Արարատ և շրջակայ եր-
 կիրները՝ Վերք էին բռնել: Պարսից ձեռքէն հարա-
 ւային գաւառները շատ անգամ Հագարայիք էին խը-
 լում: Բայց երբ որ Պարսից աթոռումը նստաւ Ալի-
 Ասլանի որդի Մելիք-Շահը, 1386 թուին Հայաստանը
 բոլորովին իւր ձեռքը առաւ: Սորա յաջորդներու

ձեռքէն շատ տեղեր առին թաթարները 1093 ին։
Թաթարներու Հայաստանին ներդու թիւն տալու ժա-
մանակը Գաւիթ վրաց թագաւորը 1124 ին շատ տե-
ղեր առաւ, Անի քաղաքն-էլ աղատեց, և Հայերուն
մեծ միսիթարու թիւն ստուեց։ Եւ թէպէտ Անի քա-
ղաքը ընկաւ էլի Փալտուն Ամիրայի ձեռքը, բայց Վիրք
միւսանգամ Կորիկէ թագաւորի ժամանակը Չաքարիա
սպասալարի և Իւանէ Աթաբէգի առաջնորդութեամբ
1160 թուին առին Անին և Արարատ դաւառի շատ
տեղերը, Սիւնեաց երկիրը, Վերին Հայաստանի մեծ
մասը, որով Հայոց աշխարքի այն կողմը անդորրացաւ։
Այս սրատահեցաւ Ռուբէն 2-դի վերջին տարիները, և
Լէոն 2-դի նոր իշխանապետ նստած օրերը։ Չաքարիա
սպասալարի և Իւանէ Աթաբէգի նախնիքը եղել են
Քաղաքացիներ, որոց առաջինը եկել է Բագրատունի
Չորոյ-Քեռի թագաւորներու ժամանակը, Քրիստոսնեաց
դառել (Հայոցիւ է) և ստացել է Սարգիս անուն, և ժա-
մանակի թագաւորը պարգեւել է նրան Քուգարացոց
աշխարքի արևելեան կողմը Խոշունի ասած տեղը, Չա-
ւախէթի մօտ։ Սարգիսը ունէր որդի Վահրամ անուն.
Վահրամի որդին-էլ էր Չաքար. իսկ Չաքարի որդին
Սարգիս, որ 1161 թուին ստացաւ վրաց Գորգի թա-
գաւորի ժամանակը՝ Անի քաղաքի իշխանութիւնը։
Ահա այս Սարգիս իշխանի որդիքն էին Չաքարիա-
Սպասալարը՝ վրաստանի Սօլարապետը, և Իւանէ Աթա-
բէգը՝ վրաստանի Հաղարապետը, որ թամար թա-
գուհւոյ ժամանակը այնքան քաջութեամբ հռչակիւած
էին, և այնքան խնամք ցոյց տուին Հայերուն։ Այս այն
Չաքարիա սպասալարն էր, որ Լէոն 2-դ թագաւորի, և
Յոհաննէս կաթողիկոսի հրամանաւ՝ Հայոց մէջ տաղաւա-
րումը զօրաց համար սխառագ անելու սովորութիւ-
նը նորոգեց, որոց սխառագաւ Խաչատուր Կեչառացին-

էլ երգեց խորհուրդս խորին՝ սքանչելի երգը 1205 թուինս Զաքարիա Սնրասալարն է այժմեան Երկայնաբաղուկ (Գուգորուի) Արղութեանց նահապետը, որ մինչև մեր ժամանակը ևս պահել են և սրահում են իրանց նախնեաց քաջութիւնը և ազգասիրութիւնը: Իսկ թաթարները՝ որ վերը տեսանք՝ այս միջոցումը աւելի զօրանալով իրանց Ղանլի Խան թագաւորի առաջնորդութեամբ՝ խորագլխի Ղէլալ-էդ-դին Սուլթանին փախցրին դէպի Հայաստան. նա-էլ իւր յաղթութեան վրէժը հանեց Հայերից և Վրացիներից, և շատ նեղութիւն տուեց, և շատ կոտորած արեց, մինչև որ Փոքր Ասիայի Ասորոց, Լատինացոց և Կիլիկիայի Հայոց զօրքէն յաղթուեցաւ, և փախաւ Պարսկաստան մահ գաներու համար:

Ղինկիդ-խանէն յետ՝ Ուխաթայ-խանի հրամանով Զարմաղան-խանը եկաւ և Հայաստանը տիրապատեց: Սա և Բաշու-խանը շատ նեղութիւն տուին Հայերուն, մինչև որ Հեթում 1-դ Կիլիկիայի Հայոց թագաւորը Մանգու-խանին աղաչեց, և Հայերուն մէքիչ հանգստութիւն տուեց, և Հալաու-խանը բոլոր Հայաստանը թաթարներու իշխանութեան տակը քաշեց, որոց ժամանակը Անի քաղաքն-էլ 1320 թուին գերտնաշարժէն կործանուեցաւ, և նորա բնակիչքը ցրիւ-ընկան. ոմանք գնացին Կիլիկիա, ուր-որ Հայոց թագաւորութիւն կար, ոմանք-էլ անց-կացան դէպ-ի Տարսիդա (Ղրի՛) և Լեհաց աշխարհ, և Մոլդաւիա, և այն կողմերէն-էլ յետ ժամանակաց ցրուեցան Եւրոպայի մէջ:

Ըայց երբ որ թաթարներու միապետութիւնը քանդուեցաւ, Հայաստանի հարաւային կողմերը ընկան Քիւրդերու ձեռք, արևելեան երկիրները առին Պարսիկք, արևմտեան կողմերը տիրեցին կէս-մի Օսմանցիք և կէս-մի Թիւրքմէնները, և այսպէս պանտա պա-

տառ եղած մնաց Հայաստան՝ մինչև-որ Լանկթիմուր
 (Լանկ-Թամուր, Թամուր-Լանկ)՝ դուրս-եկաւ, որ Հայաս-
 տանը միւսանդամ տակնուվրայ արաւ: Բայց Հայաս-
 տանի Հիւսիսային ծայրերը երբեմն Վրաստանի իշ-
 խանութեան տակը դտնում էին քրիստոնէական խա-
 ղաղութիւն, և այն տեղէն համարեալ թէ չէր սլակա-
 սում Հայերու քաջութիւնը և ազատութիւնը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՆԳՎԻԼԸ:

Լանկ-Թամուր, Շահ-Ռուհ, Իսկենդեր, Պելզինե, Սսլ, Հայերու Կոնս-
 տանտինուսօրիս հուարվիլը, Օսմանեանց Հայաստանին տիրապետելը, Շահ-
 Սբրասի Հայերուն Պարսկաստան տանիլը, Հայաստանի քանդվիլն ու Հա-
 յերու ցրիւ բնկնելը:

Լորբ-որ Հայերու ազատութեան վերջին ճրագն-էլ
 յանկաւ Կիլիկիայէն Ռուբենեան ղեղապետութեան վեր-
 ջանալով, Հայաստանը՝ որ Քիւրդերու, Պարսից, Օս-
 մանցոց և Թիւրքմէններու ձեռին էր, թէպէտ սլա-
 տերաղմներու նեղութիւնէն մէքիչ ազատուել էր, բայց
 հարկապահանջութեան տաղնապններու և տառապանք-
 ներու մէջ տնքում էր և հառաչում, յանկարծ հիւ-
 սիսային անտարատներէն մէկ այնպէս մրրիկ բարձրա-
 ցաւ Հայաստանի գլխին, որ ողորմելի Հայոց աշխարքը
 մոռացաւ այն ամեն նեղութիւնները, ինչ-որ մինչև
 այն օրը քաշել էր զանազան սողերու արշաւաններէն:

Լյօղբէզ-Թաթարներու թաղաւոր անպարտելի և անողորմ Լանկ-Թամուրը՝ բոլոր Թաթարստանը նուաճելէն յետ՝ Պարսկաստանը տիրապետեց, Բաղամար իւր ձեռի տակ առաւ, և ասոր մարտիսի նման իւր անհամար զօրքը թափեցուց Հայաստանի վրայ, և քարուքանդով լցրուց այս խղճալի աշխարքը: Սիւնեաց բարդաւաճ երկիրը հողի հետ հաւասար արին, և այն տեղէն առաջ դալով՝ ինչ երկրի որ հանդիպեցան՝ անպատ դարձուցին: Սորա բիւրաւոր անգթութեանց միայն երկու օրինակը բաւական են բոլորի համար տալ հասկանալու դաղափար. Ղան քաղաքը որ առաւ բնակիչներուն սլարխաղներէն դէպի վայր դլորել տուեց, և նոցա դիակուները սլարխաղներու բարձրութեան հաւասար կուտեց. իսկ Սերաստիայի Հայադունդ զօրքը՝ կենդան կենդան թաղել տուեց 1386—1403:

Եւ որովհետեւ սորա սրածութիւնը և քարուքանդը չ'թողեցին որ վարուցանք լինին, եկաւ սաստիկ սով, և այնքան կատաղեցաւ քաղցածութիւնը, որ ճնողք սկսան իրանց զաւակներուն ուտել, և զաւակները իրանց ճնողաց կտրտել: Հայաստանը սուրէն և սովէն ամայացաւ 1393: Լանկ-Թամուրի որդի Եաս-Ռուհը նորոգեց իւր հօր արշաւանը, և կամելով Քիւրդերու կամ Թիւրքմէններու Քարայ-Խսուֆ թաղաւորէն Հայաստանը խլել՝ սանակոխ արաւ այս ողորմելի աշխարքը 1410 ին: Յետոյ Քարայ-Խսուֆի եղբօր Իսկենտէրի դէմ կառուելով մինչև 1440 թիւը շարունակեց իւր աշխարհաւեր արշաւանները, որոց պատճառաւ երկրի վարն ու ցանքը դադրելով մեծ սով հրաւիրեցին և Հայաստանը իւր զաւակներու համար սպանդանոց դառաւ, որովհետեւ ով որ աղատուամ էր սուրէն, մատնուամ էր սովին, և շարատանջ մեռնում: Ուրիշ հնար չէր մնում կենդանի մնացողներուն, բայց եթէ թողուլ Հայրենիքը, և փախչիլ հեռու աշխարհներ:

Լանկ-թամուրը թէպէտ-և Վերին-Հայքը աստատա-
կելու ժամանակը՝ Վրաստան-էլ մտաւ, և Տփլիսա քա-
ղաքն-էլ առաւ, բայց երբ-որ նա հեռացաւ, Վրաստանի
թագաւորը էլի շուտով եկաւ իւր տեղը, և որովհետև
Հայաստանէն շատ մարդիկ աւրէն սովէն աղաաւելելով
աստատանում էին Վրաստան, այս երկիրը քիչ-քիչ
Հայաստանի կերպ բռնեց, Հայերը այն-տեղ շատացան,
և հանգիստ դտան: Սոցա մեջէն առաջացաւ Սմբատ
Ռուսելեանի որդին Պելգինէ իշխանը, որ իւր ձեռին
ունէր Սիւնեաց երկրի մեջ Կասրանի (Ս. Կասրանի,
Վախանի) մէկ մասը՝ Սղնասիւր, և Լոսի քաղաքը, որ-որ
վեց հազար տունէն աւելի Հայք էին հաւաքուել,
և աղաատ կեանք էին վայելում Հայկազն իշխանի հո-
վանաւորութեան տակը: Պելգինէի փեսան Գորգի
թագաւորի որդին Սէրաանդր Վրաց թագաւորը նա-
խանձվելով իւր աներոջ բարի անուան, և կասկածե-
լով թէ Հայերը Վրաստանը կ' թողուն և կ' երթան
նորա մօտ, Բագրատունեաց վայելուչ մտածութեամբ
մահազեղ աալ առեց Պելգինէին և սպանել տուեց
1438 ին: Ս. յնուհետև Հայերը իսպառ դարձուցին Հայա-
ստանէն իրանց երկսը, և սկսան երթալ դէպ-ի Եւրոպա,
ուր որ նոցա համար մէկ նոր անդորր բնակութեան
տեղ բացուեցաւ:

Յունաց կայսերութիւնը՝ որ Մեծին Կոնստան-
տինոսէն սկսած Կոնստանտինուպօլսումը հաստա-
տուել էր, և Սրելեան Հոռմէսկան կայսերութիւն էր
աալում, այս միջոցներումը հասել էր այն աաաիճա-
նին՝ որ պիտի ստանար նախախնամութեան ձեռքէն
այն բաժակը, ինչ-որ ինքը Հայաստանին խմեցրել էր:
Գեռ վաղ էր կայսրութիւնը բաժան բաժան եղել,
Կոնստանտինուպօլսի կայսրը իւր աչքի առջևը տնէր
ուրիշ հակառակաթոռ կայսր Տրապիզոնումը: Խաչակիր

ղօրաց արշաւանի ժամանակը Կոնստանտինուպօլիս-էլ ընկել էր Եւրոպացոց ձեռքը և վաթսուն տարի դառել էր աթոռ Լատինացի թաղաւորներու: Յունաց կայսերութիւնը պատրաստ էր ստանալ մէկ հարուած և նորա ուժգնութեան տակը խոնարհեցնել իւր ամբարտաւան գլուխը. այս հարուածի իջուցանողն-էլ արդէն գտնուամ էր աշխարքի հանդիսարանումը:

Օսմանցիք աշխարքի երեսին երևեցան Ղինկիզ խանի առաջացրած ստանութիւններէն, և նոցա նահապետ Օսման էր Երթէֆիլի որդի, որ Ղոնիայի Սուլթան Սլայ-էդ-դինի իշխանութեան մէջ զօրանալով Քերմանիկուպօլսի և Քաղապիայի (Երթէնէ և Քէօնիայի) կողմերը շատ քաջութիւններ գործեց: Օսմանը յաջորդեց իւր հօր իշխանութիւնը, և ժառանգեց Սլայ-էդ-դինի թաղաւորութիւնը 1300 թուին և իւր աթոռը դրեց Օսմանճըք քաղաքումը: Քայց երբ-որ նորա որդի Օրխանը առաւ Պրուսայ քաղաքը՝ աթոռը այն տեղ փոխադրուեցաւ: Օրխանի որդին Սուլթան Մուրատ 1-դը առաւ Ադրիանուպօլիսը (Երթէնէ), իսկ Սուլթան-Մուրատի որդի Սուլթան-Պայաղիտը Երլարըրմ (Կայթաղի) մականուանեալ Լանկ-Թամուրէն բռնուեցաւ 1389 ին: Ս.յս թաղաւորները խնամք ունենալով Հայերու վրայ իրանց գործունէութեան պատճառաւ՝ ցոյց էին տալիս նրանց պաշտպանութիւն և հովանաւորութիւն: Եւ որովհետև Օսմանեան տէրութիւնը՝ որ օր ըստ օրէ տարածուամ էր՝ ըստ մեծի մասին Յունաց կայսերութեան դաւառներու գրաւելովն էր մեծանում և լայնանում, և Յոյնք ամեն տեղ իրանց երկիրներու համար կռիւ անելով ատելի էին լինում Օսմանցոց, այդ պատճառաւ Հայերն-էլ՝ որ տեսնում էին Օսմանցոց գութը, և համեմատելով Յունաց անդթութիւններուն՝ յայտնի իմանում էին՝ որ իրանց վիճակը պիտի այս

աղգի ձեռին բարեքրանայ, ըստ ամենայնի ջանք էին գնում այն տէրութեան սէրն ու բարեգթութիւնը՝ իրանց հաւատարիմ հարստակութեամբ իրանց համար ապահովել: Ինչպէս Սուլթան-Պայազիտի նախորդները, նոյնպէս և նորա յաջորդները Հայերու համար բաց ունէին իրանց տէրութեան ծոցը, ուր-որ Հայերը գում-դադումդ էին գնում իրանց անհանդիստ հայրենիքէն: Սուլթան-Մուրատ 2-դի որդին Ֆէթիհ-Սուլթան-Մէհմէտը 1451 թուին առաւ Կոնստանտինուպօլիսն-էլ, և Յունաց կայսերութիւնը վերջացնելով՝ հիմնեց նորա աւերակներու վրայ Թուրքաց կամ Տաճկաց Օսմանցոց նոր կայսերութիւնը, և իւր տէրութեան ամեն կողմերէն բերեց և հրաւիրեց շատ Հայաղգի գերդաստաններ, և բնակեցուց Կոնստանտինուպօլիս, տալով նրանց առանձին Պատրիարք, և այսպէս Հայք գտան այն տեղ իրանց համար նոր հայրենիք:

Սուլթան-Մէհմէտը Կոնստանտինուպօլիսը գրաւելէն յետ՝ իւր ղէնքը տարաւ Թիւրքմէններու Ուղուն-Հասան իշխանի դէմ, որ Պարսից տէրութիւնը տիրապետելէն ետքը՝ Օսմանցոց դէմ-էլ արշաւել էր, և այս պատճառաւ Օսմանցիք մտան Հայաստան և տիրապետեցին մէկ-քանի երկիրներու 1473 թուին: Այլ երբ Սէֆեան ցեղէն Իսմայէլ-Շահը Պարսից թագաւորութեան աթոռը նստաւ, և Օսմանցոց երկիրներու վրայ վաղեց, 1514 թուին Սուլթան-Սելիմ 1-դը Պարսից դէմ դուրս-եկաւ և յաղթեց, և Հայաստանի Հիւսիսային դաւառները նուաճեց: Իսկ Իսրահիմ-փաշայ եպարքոսը Բահմաղա-Շահին յաղթելով Հայաստանի հարաւային դաւառներն-էլ առաւ 1534 ին: Թէպէտ մէկ-քանի անգամ էլի Հայաստանը ձեռքէ ձեռք անցաւ, բայց վերջապէս 1575—1585 թիւը Սուլթան Սիւլէյմանը և նորա յաջորդները իսպառ Հայաստանը

առին Պարսից ձեռքէն: Բայց այն պատերազմներու
և արշաւաններու պատճառաւ Հայաստանը ոտնակոխ
լինելով՝ կրկին սովի մատնուեցաւ, և Հայերը ստի-
պուեցան էլի թողնել իրանց Տայրենիքը և փախչել
օտար աշխարհներ: Թագաւորեց Պարսից աշխարհումը
Շահ-Աբբասը, և 1603 թուին յարձակեցաւ Օսման-
ցոց դէմ, և նոցա ձեռքէն խլեց Հայաստանը: Օսման-
ցոց կողմէն եկաւ Նղալի-Չատէ Սինան-փաշան որ
Հայաստանը յետ առնու: Շահ-Աբբասը կամենալով
Հայաստանը անաստատ անել՝ որ Սինան-փաշան մէկ շի-
նութիւն չ'դռնէ, Հայերուն հաւաքեց և տարառ Պար-
սկաստան, և Հայաստանը քարուքանդ արաւ 1604 թը-
ւին: Հայերը անտանելի նեղութիւնով անցան Երասխ
գետը և շատ զոհերով գնացին պանդխտութիւն: Աեր-
ջապէս 1613—1620 Օսմանեանց և Պարսից մէջ հաշ-
տութիւն դրուեցաւ, և Հայաստան կիսուեցաւ, արև-
ելեան կողմը մնաց Պարսից ձեռին, իսկ արևմտեան
կողմը՝ Օսմանցոց: Հայաստան անմարդացաւ, ամոյա-
ցաւ և դատարկուեցաւ իւր բնակիչներէն, և գնաց նորա
չքեղութիւնը իսպառ: Այս վերջին դիպուածներուն
աւելի առիթ տուին Օսմանեան Հայաստանի մէջ ապ-
ստամբ իշխաններու շփոթները, որ անդադար մէկ-մէկու
դէմ պատերազմ անելով՝ ոտնակոխ արին Հայաստանն
էլ, Հայոց ազգն-էլ: Սոքա-էլ տեսնելով՝ որ այս դառնու-
թեան վերջը չէ երևում, ամեն-օր թողնում էին իրանց
քարուքանդ Տայրենիքը, և դադարում ուրիշ երկիրներ:
Ահա այս ժամանակներն էր, որ Հայերը գնացին Հաշ-
տարխան (Ասորիստան), Արհաստան, Մոլդաւիա, և իրանց
Տայրենակիցներուն գտան և սկսան այն կողմերը բնա-
կութիւն հաստատել՝ իրանցմէն առաջ այն տեղ հա-
սած դադարականներու մօտ:

ՀԱՅԵՐՈՒ ՔԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ:

40

Թէպէտ Հայերը Լուսաւորչէն վաթսուն տարի յետ սկսան իրանց հայրենիքէն դուրս գալ ու ցրուիլ, սակայն քանի անգամ որ հեռացան հայրենիքէն, այնքան-էլ յետ դարձան և էլի իրանց երկիրը բնակութեամբ լքցրին: Հայերուն գերի տարան օտար աշխարհներ, նոքա կարողացան գերութիւնէն ազատուիլ, փախչիլ և կրկին իրանց հայրենիքի ծոցումը ստասպարուիլ. բայց երբ անհանգստութիւնը սկսաւ հայրենիքի մէջ նրանց նեղացնել, նոքա այնուհետև սկսան իրանց կամքով օտար աշխարհներումը սլանդխտութեան մէջ ստորտել իրանց անդորրութիւնը: Պատմութեան մէջ տեսանք՝ որ Հայերը Յունաստանի մէջ շատ յաջողութիւններու-էլ էին ստատահում, և մինչև կայսր էլ էին դառնում: Բազրատունեաց թագաւորութեան ժամանակը Հայերը էլի հաւաքուեցան Հայաստան, և այն-տեղ շատ Հայազգիք ոտնակոխ եղան: Ռուբենեան Հարստութիւնը Հայերուն քաշեց դէպ-ի Կիլիկիա, բայց Հայաստանը իսպառ չ'ամայացաւ, մինչև որ Ղինկիդիսանի, Լանկ-Թամուրի, Օսմանցոց և Շահ-Աբրասի արշաւանքները, և նոցա ասպատակութենէն առաջացած սովը Հայերուն արմատաքի չըխլեցին իրանց հայրենի հողէն: Այս միջոցները Հայոց ազգը իսպառ հեռացաւ իւր հայրենիքէն, և սկսաւ սլանդխտութիւնը:

Սամանակագրական կարգով Հայերու ցրիւ-ընկ-նիլը ստորագրել՝ կարօտ է տաժանաւոր աշխատութեան և շատ միջոցներու, բայց պատմական և աշխարհագրական կարգով երևում է Հայերու իրանց աշխարհէն հեռանալը, երբ-որ նուրբ զննութիւն է լինում նոցա բնակուած տեղերէն՝ նոցա գնացած ճանփաները և նոցա դուրս եկած դուռները դուշակելով :

Հայաստանը իւր հարաւային կողմը ունենալով Մարաց երկիրը, Պարսկաստանը, Միջագետքը, Բարիւլացոյ աշխարքը, Ասորեստանը և Ասորիքը, ցամաքային ճանապարհով կարող էր իւր գաղթականներուն հասցնել մինչև Աղուանստան, Մոլթանստան և Հնդկաստան. և քան զայն հեռու-էլ՝ մինչև Չինուամաչին: Հիւսիսային կողմէն-էլ ունենալով իրան կից Արաստանը՝ կարող էր նրանց առջև բաց-անել ճանապարհ մինչև Կովկասու սարերը. այլ Կովկասու սարերէն-էլ դէպ-ի Հիւսիս՝ Հայերը՝ չէ երևում թէ անցած լինին քան զվերջին դարերը առաջ : Այս երկիրները՝ որ Սարմատիա էր ասում՝ Հայերու համար մարգակերաց աշխարք էր երևում : Սլաւոնք, Ռուսք՝ սարի հիւսիսային կողմէն դալիս էին դէպ-ի հարաւ, այլ Հայերը չէին գնում հարաւէն դէպ-ի հիւսիս, նոցա համար Կովկասու սարերը մէկ պատ էին, ուստի որ նոքա այն-կողմը անց-կենալ բնաւ մտածած չէին, թէ և այն կողմէն այս-կողմ շատ էին տեսել անց-կացած եկած ազգեր. այլ այս ազգերը՝ Հայերը կարծում էին՝ թէ իսկ այն սարի բնակիչներն են, ինչպէս Ալանք, Հերիթաղք, Հոնք, Գոթք, Խաղիրք, Բասիլք և ուրիշ ազգեր: Հայաստանէն դէպ արևելք Կասպից ծովն է և Հայերը Կասպից ծովը անցնելու կարօտութիւն չունէին, որովհետև վաճառական, գերի, գաղթական Հայերը Ատրոպատականէն և Մարաց երկրէն ցամաքային ճանապարհ

ունէին. իսկ անապատի կողմը և վայրենի ազգաց մէջ
կամ Արաղատան կամ Թաթարատան՝ դործ-էլ չունէին:
Հայերու գլխաւոր ճանապարհը էին Սև ծովը, Միջերկ-
րեաց ծովը, Պրոպոնտոսը, Արշիպեղադոսը, և գլխաւոր
դուռը Կոնստանտինուպօլիսը, ուստի որ դնում էին
դէպ-ի Եւրոպա: Ինչպէս-որ մէկ բաժակ լիքը ջրի
մէջ մէկ խնձոր դձեւ, և ջուրը ցրուի սակն կողմ,
այնպէս Հայերը իրանց հայրենիքէն՝ այս վերջին ժա-
մանակներու հարուածներուն չողիմանալով՝ ցրիւ-ըն-
կան, և ուր-էլ-որ մէկ անդամ հասան ու անակոխ
գտան, այն-տեղ հաստատուցին բնակութիւն:

Ռուսաստան եկող Հայերը առաջին անգամը Կով-
կասու սարերէն չ'անցան, այն ճանապարհը փակ էր
նոցա համար: Ռուսաստանի կողմը Հայերը առաջ Յու-
նաստանէն եկան: Ինչպէս-որ տասներորդ դարէն առաջ՝
Յունաց կայսերք տանում էին Հայերուն, որ սլաոնե-
րազմին Բոլղարներու, Ռուսերու և Անգարներու դէմ,
նոյնպէս և նոյն կայսերք տանում էին Հայերուն այն
երկիրները՝ որ այն-տեղ բնակուին և երկիրը ծաղկե-
ցին մշակութեամբ: Տասներորդ դարումը Հայերը
այնքան շատ էին Խովթաներու երկրումը, Թեապոն-
այումը, և Մակեդոնիայումը, և այնքան զօրեղ էին,
և այնքան մեծ ազդեցութիւն ունէին նրանց տէրու-
թեան դործերու մէջ, որ Սամուէլ Քերջանեցին Հայ-
կազն իշխանը Բոլղարներու թագաւոր դառաւ, և շատ
տարի սաշտապանեց այն երկիրը Յունաց կայսեր Վա-
սիլ 2-դի դէմ: Այս այն Վասիլն է, որ Անի քաղաքի
թուղթը ստացաւ Պետրոս Քետաղարձ կաթողիկոսի
ձեռքէն: Այլ այն Հայերը, որ Սամուէլ Քերջանեցոյ
ժամանակը կային, անշուշտ պիտի լինին այն Հայ դաղ-
թականներու յեանորդք, որոնք-որ շատ օգնութիւն
հասցրին Տրիդրիս թագաւորին և Քերճանական խա-

չակիրններուն՝ որ 1183 թուին Յունաց ձեռքէն առին Փիլիպպուսուօլիս քաղաքը: Հայերը Բոլղարաց երկրէն անցան գնացին Վենէտիկ, Գենովա (Ղէնովայ) Պիզայ, Հոմ, Հունգարիա (Մանսխայն) Լեհաստան, և Ռուսաստան: Ռուբենեանց ցեղը որ վերջացաւ, և նորատեղ նստան Ախիլիկիայումը Լատին իշխանք. 30,000 դերդաստանէն աւելի Հայազգիք գնացին Ախարոս, Հոռոս և Արետէ կղզիները, և այն տեղերէն փոխադրվեցան դէս-ի Խտալիա: Երբ-որ Արիմ թերակղզին ընկաւ Տաճկաց ձեռք, այն-տեղի Հայերից շատերը գաղթեցան դէս-ի Խտալիա, և իրանց համազգեաց թիւը աւելցուցին:

Խտալիայի երևելի քաղաքներու մէջ ցրուեցան Հայերը և բնակուեցան, և իրանց արհեստները և իրանց առուտուրը այն-տեղերումը բանեցնելով՝ այն քաղաքներու վաճառաշահութիւնը ծաղկեցուցին: Բայց Հոմ մէադաւան հոգևորականք, որ նոցա հանգիստ թողած չէին Ախիլիկիայումը, Խտալիայումն-էլ սկսան նոցա անհանգիստ անել. այն հաւատարիմ ծառայութեան փոխարէն, որ նոքա այն աշխարքի առուտուրը ոտքի էին կանգնեցրել, Հոմայ արքանեակները նոցա դէմ հալածանք հանեցին, և սկսան կրօնական մոլեռանդութեամբ Հայերուն նեղել: Թողին Հայերը իրանց եկեղեցիները և ուրիշ շինուածները և կալուածները Հոմայ մէջ, Նէապոլիս, Վենետիկ, Սլիկուանայ, Պադուայ և Գենովայ և ցրուեցան, որ իրանց կրօնը և ազգութիւնը պահեն:

Մասցինք՝ թէ Կովկասու սարերը Հայերը չէին անց կենում գաղթականաց բաղմութեամբ. չէն անց-կացել և գերութեամբ. բայց վաճառական Հայերը Կովկասու սարերու մէջ, և մինչև Սարմատիա, շատ էին գնում գալիս, և առուտուր էին անում. Ստրաբոնի ասած

Գանայիսի և Ռուսայի (Օւէլի) մէջ բնակուած Սիրասները (Չէրէկէլը), և Աօրաները (Ռուսէլը, Ընիւուէլը) որ Կասպից ծովի Հիւսիս-արեւմտեան կողմերումն են բռնակված, Հայերու հետ առուտուր էին անում Կովկասի սարի երկու երեսին-էլ: Հայերը չէին որ հինգերորդ դարումը Աղուանից երկիրը լուսաւորեցին քրիստոնէութեամբ, և Հոնաց հետ դաշնակից էին, և Հոնաց թագաւորին օգնական դնացին Վարդանանց ժամանակը:

Վլադիմիր Մանուսի թագաւորութեան օրերը՝ 1113—1125 Կիեւումը և Ռուսաստանի ուրիշ քաղաքներումն-էլ կային Հայազգիներէն Ռուսաց պայազատ իշխաններու (Կնիււէլը) մօտ ճարտար բժիշկներ, որ մեծ պատիւ և յարգ ունէին մեծամեծաց և նոյն իսկ իշխանաց առջև, և հաւատարիմ էին ճանաչուած: Հայերը՝ որ միշտ գտանվում էին Կոնստանտինուպօլսումը, Յունաց հետ երթեկուծիւն էին անում Ռուսաստան, ուր-որ իրանց արուեստագիտութիւնը և առուտուրը կարող էր իրանց ապրուստը ապահովել և ճոխ վարձ տալ այն ժամանակ՝ երբ-որ Ռուսաստան դեռ նո՛ր էր աչք բաց-անում և քաղաքակրթիւն ըստանում:

Թէպէտ Ղազան քաղաքէն 90 ասպարէզ (վէրսիւս) հետու Քուղարաց Քուղար մայրաքաղաքի աւերակներու մէջ երևում են գերեղմանաքարեր, որոց վրայ Հայերէն գրով յիշատակներ կան վեցերորդ, իններորդ և երկուսասաներորդ դարերումը գրած, բայց սոքա պիտի լինին միայն վաճառական պանդուխտներ: Հայերու այն կողմերը բաղմութեամբ երթալը պատահեցաւ երկուսասաներորդ դարումը, երբ-որ Թաթարները տիրապետեցին Մեծ-Հայաստանին, և գաղթեցին Հայերուն Սարայ քաղաք՝ որ Վոլգա (Էրիկ կամ Ռէ) գետի մօտ

էր. այն ժամանակները սկսան Հայերը բնակվիլ Հին-
Հաշտարխան, Ղաղան, Նիժնի-Նովգորոդ, և ուրիշ
Վոլգայի գետափնեայ քաղաքներումը: Սա
Տաանուշորսերորդ դարումը երբ-որ թաթարներու
խան Մամայը պատերազմում էր Ռուսաց Մեծ-Իշխանի
Գիսկուրի Գոնակոյի դէմ, թաթար զօրաց մէջ կային
մէկ քանի Հայագունդ գումարտակներ-էլ: Նոյն դա-
րումը Հայաղգի վաճառականները Մոսկուայ մայրա-
քաղաքի մէջ այն թաղումը որ ասում է Բէլի-գորոդ
(Սպիտակ քաղաք) ունէին սեփական վաճառատեղիք, ուր
որ առուտուր էին անում գոհարներով, անուշաճոտ
նիւթերով, լեղակով և ուրիշ Հնդկագտանէն և Պար-
սիապահէն բերած ապրանքներով. իսկ Ռուսաստանէն
տանում էին մորթիք և հրահալելիքներ:

Տաանուերիսերորդ դարումը Տաւրիկ (Ղրիճ) քանի
որ Ղինիսկիներու ձեռք ընկած չէր, հին ժամանակներէ
սկսած բնակվում էին Հայերը՝ ժամանակ ժամանակ
Մեծ-Հայաստանէն, Փոքր-Սսիայէն և Բոլղարաց երկ-
րէն եկած և այն-տեղ ժողովված: Մի միայն Կաֆայ
(Քէֆէ կամ Թիոփրոս) քաղաքը ունէր իւր շրջակայ-
քումը տարն-բիւր Հայ:

Տաանուերեքերորդ դարումը Հայերը որ բնակուած
էին Սարայ քաղաքումը, Հին-Հաշտարխանումը և Ղա-
ղանումը, թաթարներէն նեղանալով թուր հանեցին
նոցա դէմ, և այն տեղերէն դուրս եկան և անցան դէպ
ի Ղրիմ: Իսկ տաանուշորսերորդ դարի վերջը Սարայ-
յէն Ղրիմ եկաւ Հայոց մէկ-ուրիշ գաղթականութիւն,
երբ-որ Ռեյ-դէն Բանակի իշխանութիւնը խորտակուեցաւ
Լանկ-Թամուրի հարուածներու տակ: Հայերը իրանց
համար բնակութիւն ընտրեցին Սուդաշ կամ Կազա-
րաթ, Կաֆայ, Թաման և Ղարասու-քաղար: Հայերու
գործունէութեամբ առուտուրը որ այնքան ժամանակ

նիրհաճ էր, դարձեցաւ, և Ղրիմ դառաւ Եւրոպայի և Ասիայի ասրանքներու միտերանոց: Հայերու բաղձութեան հոգևոր և եկեղեցական փարչութեան համար հաստատուեցան Ղրիմու մէջ երկու Արքեպիսկոպոսական առաջնորդութիւնք: Երբ-որ Հայերու առուտուրի շրջանը լայնացաւ, Հայերը փոռեցան Քալիցիայի, Հունդարիայի, Թրանսիլվանիայի, Մոլդաւիայի, Վալաքիայի, Բուքովինայի, Ալիթիայի, Փոդոլիայի, և Բանաթի մէջ: Նոցա բնակուած տեղերու գլխաւոր քաղաքները էին՝ Չէրնովից, Կամենեց, Ստանիսլաւով և Վարշաւայ:

Նայց երբ որ Յամանցիք առին Ղրիմը՝ Հայերու մէկ մասը սուրէ անցան. միւսները վախենալով նոցա վիճակէն՝ դաղթուեցան գէտի Ահհատան իրանց հայրենակիցներու մօտ, ուր-որ Հայերու թիւը աճել էր մինչև 40,000 դերդաստան: Ահհաց թաղաւորները Կաղխիք 3-դ, Սիդիղմունդ և Վլադիսլաւ 4-դ իրանց տէրութեան առուտուրը և վաճառաշահութիւնը խորախուսելով տուել էին Հայերուն կրօնական աղատութիւն, բողոքացիութեան իրաւունք, և իրանց մէջ դատաստան կարելու համար դատաւոր ընտրելու իշխանութիւն: Առևտրական գործունէութեամբ, ղինուորական քաջութեամբ, կառավարչութեան քաջալարժութեամբ Հայերը շատ ձեռնառու դաժնուեցան Ահհատանի մէջ բարօրութեան դարդանալուն: Բոցց երբ որ հասաւ տասնուեօթներորդ դարը, նոցա-էլ երջանկութիւնը վերջացաւ: Նիկոլ կաթաղոսի պատճառաւ Եզուիթականք հալածանք հանեցին, և Հայերը այն երկրէն ցրուեցան: Հոռմ այս տեղ-էլ Հայերուն վնաս տուեց:

Հայերը՝ որ Եւրոպայումը և Ասիայումը իրանց հայրենիքէն դուրս սրանդիստում էին, առևտրական

գործերու հետ միասին ջանք էին դնում և ուսումնա-
կան կրթութեան. և այս ստուգում է Հայերու շատ
տեղ տպարաններ բանալը: Առաջին Հայերէն տպա-
գրութիւնը երևեցաւ Վէնետիկ, ուր-որ Հայ վաճա-
ռականները 1565 թուին սկսեցին Հայոց գրով գրքեր
տպել: Երկրորդ տպագրութիւնը եղաւ Կոնստանտի-
նուպօլիս 1567 թուին. որ այնուհետեւ տարածուեցաւ
Հոմ՝ 1584, Լեմբերգ՝ 1616, Միլան՝ 1624, Փարէզ՝
1633, Ջուզայ՝ (Ասպահանայ) 1640, Ամստերդամ՝ 1660,
Մարսիլիա՝ 1673, Լէյփցիգ՝ 1680, Պադուայ՝ 1690,
Կալիֆթայ և Մադրաս 1719, Էջմիածին՝ 1770, Սան-
կրտ-Պետերբուրգ՝ 1780, Նոր-Նախիջևան՝ 1790, Աստ-
րախան՝ 1793:

Դեռ յայտնի չէ՝ թէ Հայերը ինչի՞ հետացան Պրան-
սիայէն. մի թէ այն-տեղ-էլ հասաւ նրանց Հռոմէադա-
ւան կարգաւորաց հալածանքի տուտը: Եւ զարմանք
չէ. այն ժամանակները Պրանսիան-էլ նոյնպէս Հռոմայ
արբանեակներու ազդեցութեան տակն էր, ինչպէս որ
Իտալիա, Լեհաստան և ուրիշ Կաթոլիկ երկիրները,
ուստի որ Հայերը բոբիկ փախան, և իրանց կալուած-
ները թողին, որ Հռոմէական եկեղեցականք տիրապետեն
ի հասարակ Պատուոյ. բայց այն ամենայն կոթող է Հայոց
ազգասիրութեան, աշխատասիրութեան և կենցաղա-
կրթութեան, և նոցա հալածչաց տմարդութեան: Մար-
սիլիայի մէջ մէկ քուչայ (պողոսայ) Հայոց թաղ է առ-
վում, և վկայ է՝ որ Հայերը բնակիլել են այն տեղ,
և իրանց համար առանձին թաղ են ունեցել:

ՀԱՅՈՅ ՍՂԳԻ ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆԸ.

41

Մինչև շրջան է աշխարքի բերմունքը, որ անդադար վերուվայր է անում ենթալուսնայքը, և իւր յաւիտենական օրէնքին հարատակեցնում է հողագունտի բնակիչ մարդկան ազգը: Այս օրէնքի զօրութեամբ սուրբ Հայ և սուրբ Երեմայ, այլ երկու յաւիտենական Հայք երբեմն հին ազգերը նորոգւում են՝ հակառակ այն ազգերու վիճակին՝ որ իսպառ չքանում են, և աշխարքի տեսարանէն անհետ են լինում: Այս նորոգութեան ենթարկեալ ազգերու մէջ է և Հայոց ազգն-էլ, որ ինչպէս վերը տեսանք տաանուչորսերորդ դարի վերջերէն սկսած մինչ-ի տաանուեթներորդ դարի վերջերը իսպառ բնաջինջ լինելու վտանգի մէջ էր: Անցաւ Հայոց ազգի դժբախտ այս ծանր հարուածի սպառնալիքը. անցաւ այն սպառսպուռ անհետանալու երկիւղը. քիչ քիչ մօտեցաւ այն ժամանակը՝ երբ-որ Հայերը պիտի ստանային նորոգութիւն: Խոր գիշերի թանձր աղջամուղջն էր պատել Հայերուն ամեն տեղ. սկսաւ փոքր առ փոքր անց-կենալ այն մթադին միջոցը, այն խառարանած չարարաստութիւններու ժամանակը. մօտեցաւ արշալոյսը, որոյ յետեւէն պիտի հասնէր բարօրութեան առաւօտը, ՄԵՆՈՒԿ ՀՍԵՍՍՏՆԻ վերածնելութիւնը: Այլ ո՞րքան դժար էր այս դարաւոր ժամանակներով սպասած ցանկալի ՄԵՆՈՒԿ ծնունդը, ո՞րքան երկունք և ցաւաբաշկեց Մայր ՀՍԵՍՍՏՆԸ, այն գեղեցիկ չքնաղ դշտոյն

Հիւսիսոյ, որ որդեկորոյս վշտաց տաղնատներու մէջ նստած է որբ և այրի՝ թուխերումը համակած, և աղի արտասուք թափելով աչքերէն՝ միայն հեռուէն է լըսում իւր զաւակաց ողջութիւնը, առողջութիւնը, և աջողութիւնը: Աջողութիւն: Քանի՞ տեղ կան, ուր որ իրաւի աջողակ են Հայաստանի զաւակները, ուր որ ապահոված է նոցա հանդիսոր, ուր որ վտանգ չէ գուշակում նոցա ապաղայի համար: Այս է հարկաւոր խնդիրը, որն-որ ժամանակը սխալի լուծանէ:

Հաս-Արբասի տարած դաղթական Հայերը՝ որ իսպահան էին բնակւիւած, և մեծ վաճառաշահութեան ընկերութիւն ունէին (Ջուղայեցի Հայերու անուանով). 1659 թուին կամենալով Ռուսաց տէրութեան մէջ իրանց հին արտօնութիւնները և իրանց նախնեաց և համազգեաց առուտուրը նորոգել հաստատել, Ալէքսէյ Միխայիլովիչ թագաւորի համար (որ Մէթին ՊԵՏՐՈՍ Լազարի և Հայսէր Հայրն էր), ընծայ ուղարկեցին մէկ հաս ոսկիահումա դահ (ալտա արքայանիս) անդամանդ գոհարներով և կարմիր յակինթներով զարդարած, հանդերձ Հնդկաց և Պարսից երկերներու անուշահոտ օծանելիքներով և ծխանելիքներով, և ուրիշ հազուագիւտ բուրիւններով: Այս ընկերութեան հետ Ռուսաստանը հաստատեց վաճառականութեան դաշինք և այնուհետև Պարսկացին ծոցէն, իսպահանէն և Կասպից ծովէն սկսան դալ դէպ-ի Ռուսաստան Հնդկաց և Պարսկաստանի թանկագին ապրանքները, և այն իսպահանի ընկերութեան գործակալները հիմնեցին նոր նոր Հայադղի դաղթականութիւններ Մոսկուայումը, Նովոգորոդումը, և Սրխանդէլովումը, և յետ ժամանակաց Սանկտ-Պետերբուրգումն-էլ: Իսկ 1686 թուին նոյն Ջուղայեցի Հայերը Շուէդաց թագաւորութեան հետ-էլ նոյնօրինակ անւարական պայման-

ներ կապեցին: Պետրոս թաղաւորի ժամանակը՝ 1710
թուին Հայ Սափայ Ղափլիսն առաջին անգամ անկեց
Թերէք գետի ակերտումը թթենիք, և ասրեշում քա-
շելու գործերը (հէլէֆէն) սարքեց:

Մեծն Պետրոս տեսանելով Հայերու պիտանաւորու-
թիւնը և արդիւնաբեր շահեկանութիւնը, 1711 թուի
Մարտի 2, հրովարտակ տուեց իւր Սէնաթին (Էր-
հաստիան Սնէլիսան) որ Պարսկաստանի Հայերուն ամե-
նակերպ պաշտպանութիւն ընձեռելով դէպ-ի Ռուսա-
ստան դաշնեցնեն: Իսկ Օսմանցոյ Հայերու համար
Ռուսաստանի դուռը բացեց 1717, Յունիարի 28, Իզ-
միրցի վաճառական մեծարդոյ Պետրոս Աբրոյի ան-
ուամբ տուած հրովարտակը: Իսկ 1718 թուին տուած
հրովարտակը վկայում է, որ առաջին ասրեշումի
գործարանները Հայերն են հիմնել Ռուսաստանի մէջ,
և Ռուսաց աղդին նորա են սովորեցրել ասրեշումի
կերպաս գործելը: Հայոց վաճառականները՝ որ այսպէս
շնորհ էին դաւել Ռուսաց տէրութեան մէջ, նոյն մար-
դասիրութիւնը վայելում էին և ուրիշ Եւրոպական
տէրութիւններու մէջ:

Վերջին Լուսինեան Աէոնի Կիլիկիոյ Հայոց թա-
ղաւորի Եւրոպայի մէջ թափառական մնալը և այն տեղ
մեռնիլը՝ պատմութիւնը և արանգութիւնը անմոռա-
նալի պահելով յիշատակաց մէջ՝ առիթ էր դառնում
Եւրոպայի թաղաւորներուն՝ Հայերու վրայ նայել ինչ-
պէս մէկ տառտպեալ աղղականի վրայ, և ասպետական
հողին շատ անգամ դարձում էր բարետոհմիկ թա-
ղաւորներու և իշխաններու մէջ՝ որ արևելեան Քրիս-
տոնէաներուն օգնութեան ձեռն կարկառեն: Թէպէտ
խաջակրաց արշաւաններու դարերը անց-էին-կացել,
բայց Եւրոպայի լուսաւորութիւնը, և պատերազմական
հրահանգներու փթթիլը վատահայցում էին՝ արհուա-

Հրատարակել իր շնորհիւ մ դրամ

հոգի քաջերուն՝ որ Գրիստոնեաց եղբարց ազատելը
էլ ունենալու չէ այնպիսի դժուարութիւններ, որոնց
որ տակը մնացին հինգ անգամ կրկնուած խաչակիր
զինուորութեան արշաւանքը, որով բիւրաւոր քրիս-
տոնէից ոսկորները ցրուեցան այն ճանապարհի վրայ,
որն-որ տանում էր՝ Գրիստոնէից երկնաւոր Աարդա-
պետի գերեզմանի դուռը: Հայ վաճառականաց անդա-
դար երթեկութիւնը Եւրոպայի կողմերը, և անընդ-
հատ անդուլ և զանխուլ բանադնացութիւնը Եւրո-
պայի իշխաններու հետ, շարժեցին Բաւարիայի թա-
գաւորութեան կարեկցութիւնը, և այս Գրիստոնէասէր
ազգը՝ որ ցաւակից էր արևելեան Գրիստոնէից՝ վեհ-
անձնութեամբ դրեց մտքումը Հայաստանը և Արաս-
տանը ազատել Պարսից բռնութենէն: Արաստան՝ թէ-
պէտ մինչև այն ժամանակ պահել էր իւր Բագրա-
տունեաց ցեղի թագաւորութիւնը, բայց բարոյապէս՝
ոչինչ զանազանութիւն չուէր Հայաստանէն, որովհետև
Պարսից բռնակալութեան սասանութիւնները, որոնք
որ Հայաստան դղրդեցնում էին, Արաստանի անդոր-
րութիւնն-էլ էին դրդում, և Արաստան՝ ինչպէս
անմիջական հպատակ Պարսից՝ ենթարկուած էր ամե-
նակերպ բարբարոսական ձեւերու. ո՛չ հարկն էր պա-
կաս և ոչ աղօթք, և Արաստանէն այնքան ազգիւնք
և հարսունք էին գնում Պարսկաստան, որքան որ
հարկաւոր էր լինում Պարսից բռնաւորներուն, Եւ-
ֆրոն, Խանդրուն, Բէճեքուն և Աղապարնդուն:

Բայց Հայաստանի Պարսից ձեռքէն ազատելը ունէր
մեծ աշխարհագրական դժուարութիւն. Եւրոպացիք
ո՛ր ճանիով պիտի գային Հայաստան: Օսմանցոց ան-
պարտելի ինքնակալութիւնը վիշապի նման պառկած
էր այս ճանիու վրայ. նրան գրգռելը դեռ ևս դժար
էր. խոհեմութիւնը թելադրեց՝ որ պտրտեն մէկ մեր-
ձաւոր և ապահով ճանապարհ:

Այս միջոցները Մեծն Պետրոս մտել էր Եւրոպական գերդաստանի մէջ, և որովհետև նորա ասպետական ձեռնարկները ցոյց-էին-տալիս՝ թէ նա կանուխ կամ անագան պիտի Պարսից դէմ-էլ ոգորի, և Ասիային-էլ ցոյց-տայ իւր ըմբշամարտութեան արգասիքը, որով-որ Եւրոպայումը քաջ էր հանդիսացել, Միսսիլարիսպիտը և Խարայէլ Օրին որ Հայերու Պատգամաւորներն էին, Բաւարիայի թագաւորի կողմէն 1706 թուին դեսպանութեամբ ուղարկուեցան Սանկտ-Պետերբուրգ, որ խնդրեն Մեծին-Պետրոսի գործակցութիւնը:

Բայց այս տեղ-էլ Հռոմ խառնեց իւր մատը, և Խարայէլ Օրին 1707 թուին՝ որպէս թէ ի-դիմաց Հռոմայ Բահանայապետի դնաց Պարսկաստան իմանալ՝ թէ Հայերը ի՞նչ միտքի վրայ են, և որքան զօրութիւն ունին: Եթէ Փափի այս գործին միջամուխ լինելը չ'ունենար նպատակ նոյնը, ինչ-որ Ախիկեցոց ժամանակն էր, Հայերը նրան կ'ընդունէին ինչպէս այս նոր Խարայէլացոց համար նոր Մովսէս և նոր Ահարոն, բայց յայտնի էր, որ Հռոմայ քահանայապետը առաջին նուագին պիտի պահանջէր՝ որ Հայոց եկեղեցին ընդունի Լատինացոց ձեւերն ու Հռոմայ վարդապետութիւնը, իսկ յետոյ՝ երբ որ Հայաստան մէկ ազատութիւն գրտնէ, և մէկ բարոյական կեանք ստանայ, իսկոյն ստրկանայ Հռոմայ և նրան հպատակ գրվի: Պատմութիւնը բողոքում էր այս դիտաւորութիւններու դէմ աշխարհ հազոյժ աղաղակաւ: Հայերը չէին կարող ընդունիլ այս պայմանները, և այս սրտիճառաւ՝ երբ-որ Խարայէլ Օրին յետ-դարձաւ Սանկտ-Պետերբուրգ՝ միայն Պետրոս թագաւորին, և ո՛չ Հռոմայ Փափին՝ տուեց տեղեկութեան հաշիւը, թէ ո՛չ միայն Ղարաբաղ, այլ և Շամախին և Սղնախը պատրաստ են, որ երբ մէկ ոտքի կանգնելու նշան ստանան, հանեն 17,000 մարդ: Պետ-

րոս թագաւորը խոստացաւ իւր զօրութեամբ երթալ Պարսից դէմ, և իրմէն առաջ ուղարկեց Նաստասիդ անունով մէկ Հայ՝ որ երթայ Հայերուն պատրաստէ: Նաստասիդն-էլ դնաց: Եւ որովհետեւ սա-էլ Խարայէլ Օրիի նման զգօն, հնարագէտ և փորձ մարդ էր՝ ամենայն ինչ յաջողեց:

Նայց որովհետեւ Պետրոս թագաւորը իւր սեփական զբաղմանց մէջ պատառեցաւ, Եւեղաց թագաւորի պարսլա 12 դի դէմ պատերազմ ունեցաւ, և ուրիշ դործերը նրան խոչընդոտն դառան, չ'կարողացաւ իւր խոստումն իւր ժամանակակէտումը կատարել. Հայերը մնացին տանապանաց մէջ: Պետրոսի խոստանալը ճաճուկ չէր. աշխարք իմացաւ. իմացան ուրեմն Պարսիկք-էլ մինչև Պետրոսի Պարսից դէմ արշաւելը տևեց տասն և հինգ տարիէն աւելի. Պարսիկք սկսան Հայերուն նեղացնել: Նեղութեան մաստկութիւնը Հայերուն տուեց համարձակութիւն իրանց մէջէն-էլ փրկութեան հնարք հայթայթել: Ս.յն ժամանակ Սաեփաննոս անունով մէկ իշխան յիտուն Հայ տանուտերանց (Բեւեղերուն էշխանայ) բերնէն մէկ աղաչանաց դէր գրեց Արայ Եասնաւուղ թագաւորին, և ինքը տարաւ Թիֆլիս, և խընդրեց որ Սիւնեաց աշխարք (Ապրասխաղ) մէկ զօրապետ ուղարկէ, որ այն տեղի Հայերուն կարողանայ զօրավարութիւն անել, և Պետրոս թագաւորի գալստեան համար պատրաստ պահել: Եասնաւուղ թագաւորն էլ տուեց Գաւլի-Քիօ Սիւնի Հայկազն քաջավարժ և առիւծասիրտ իշխանին, որ իւր զօրապետն էր, Տըրաման՝ որ երթայ Սիւնեաց աշխարք, ուր-որ նրան Հայերը պատրաստ սնրասում էին:

ՊԵՏՐՈՍ-ԲԷԳԸ 1722 թուին ժողովեց Արաստանի, Արցախի, և Սիւնեաց կողմերէն շատ մարդ, և մտաւ Սիւնեաց երկիր, և քանի անգամ մեծ մեծ պատերազմ-

ներ տալով յաղթեց թշնամիներուն, և ազատեց Սիւնեաց աշխարհը իսպառ: Մի և նոյն ժամանակումը՝ երբ որ Գաւիթ-բէդը Սիւնեաց կողմն էր պատերազմում, նորա երկու դաշնակից զօրապետները՝ Ս. Կան-խան-Մերդայ, և Ս. Կան-խան-Խաչին՝ Ղարաբաղի միւս սահմանադրութեան էին պահպանում: Ղարաբաղ էր ավում հասարակօրէն այն առատաբեր լեռնային երկիրը, որ Երասխ և Կուր գետերու մէջ լինելով՝ պարունակում է իւր մէջ Սըրյախ, Սիւնիք և Ռատիք երկիրները, և այն ժամանակներումը ունէր հինգ Մելիք, որոց միահամուռ զօրութիւնը կարող էր դուրս դնել մինչև 100,000 զինուոր հայ: Ղարաբաղցի Հայերը քսան տարեկանէն մինչև վաթսուներեկանը քաջ պատերազմող զինուոր էին և են:

Պարսից թագաւորը այս միջոցները էր Սուլթան Հիւսէինը, և որովհետև նրանէն 1722 թուին ապստամբուել էին Աղուանները, և նա նոցա դէմ հաղիւ էր պահպանում իւր դրութիւնը, այն պատճառաւ Հայերը նրանէն շատ երկիւղ չ'ունէին: Նոյնպէս և Ղէկղիք՝ Կովկասու սարերի վայրենի բնակիչք՝ Ռուսաց կայսեր և նորա զօրաց Գարբանդի մօտիկ լինելով՝ չէին համարձակվում արշաւանք անել: այս պատճառաւ Հայերուն մնում էր միայն այն կողմերումը բնակուած Թաթարներու և Պարսից (Ղաղաշնէրու) դէմ ոգորիլ, և պատերազմ ունենալ Սարը-Մուստաֆայ փաշայի դէմ, որ մտածում էր Հայաստանին տիրեցնել:

Արբ որ ընցին թէ 1723 Յգոստոսի 23 ին Աեարոս թագաւորը եկել է Գարբանդ, Ղարաբաղի Մելիքները և Արատտանի Աախտանդ թագաւորը՝ Ռուսաց կայսերըն ընդառաջ գնացին Կուր գետի ափը՝ 35—40,000 զօրքով, և յոյս ունէին՝ որ Ռուսաց կայսեր գալը նոցա ազատութիւնը պիտի ապահովէր յախտեանս յաւի-

տենից: Այլ նախամասնանութեան մատեանի մէջ գրուած էր, որ ո՛չ թէ տաննութերորդ դարու, այլ տաննուիններորդ դարու սկիզբն լինէր այն աղատութիւնը, և ո՛չ թէ Պետրոսը, այլ նորա թոռանց թոռները Պողոսը, Ալեքսանդրը և Նիկողայոսը պիտի կատարէին այն աղատութիւնը: Պետրոս վերադարձաւ Ռուսաստան Հոկտեմբեր ամսին, և Հայերը նոր-ի-նորոյ տեսան իրանց առջև դէմ-ան-դէմ իրանց հին թշնամիներուն. և յետ մեկ քանի տարի արիւնայեղց պատերազմելու՝ ստիպուեցան կրկին նրանց իշխանութեան ներքոյ մտնիլ: Որովհետև Գանձակի (Կէնճէկ) այժմեան Ելիսաբէթուպոլիս իշխողը Սարը-Մուստաֆան երբ-որ տեսաւ թէ Ռուսաց կայսրը հեռացաւ այն տեղերէն, ինքը յորդան տուեց իւր զօրքին Վրաստանի մէջ, և շատ կոտորած անելն ետքը երեսը և սուրը դարձուց դէպ-ի Ղարաբաղ: Հայոց բանակի զօրավարը Մելիք Աւանտեանը քաջեց Սարը-Մուստաֆային դարանի մէջ, և այս հնարքով բնաջինջ արաւ նորա 35,000 զօրքէն կազմած զօրութիւնը: Սարը-Մուստաֆան աղատուեցաւ մահէն, և Երևանայ բերդը ձեռք դնելով սկսաւ նոր զօրք հաւաքել: Մինչ այս անցքերը լինում էին մեկ կողմը, միւս կողմումը Գաւիթ-բէզը նուաձել էր Աջանու, Ղափանու, Չափնդուբայ, Քաղաբերդի, և Կիւնէյեայ նահանգները և նոցա զլսաւոր Մեղրի քաղաքը: Երբ-որ Նախիջևանայ խանի դէմ կռիւ բացուեց՝ յաղթուեցաւ, և թէ Հայերը այս միջոցներումը ինչ նեղութիւններ էին քաշում: յայտնի է այն պատգամաւորութիւններէն՝ ինչ-որ Հայերը 1724, 1725, 1726, 1727 և 1729 թուերումը ուղարկում էին Ռուսաց Տէրութեան, և աղաջում էին՝ որ օգնութիւն հասցնեն: Սարը-Մուստաֆան մեծ բանակ շինեց Թիւրքմէններէն, Քիւրդերէն և Թաթարներէն, և նրանց հետ

եկաւ պաշարեց Սիւնեաց երկրումը Հալիձօր բերդը, ուր որ նստում էր Սիւնեաց իշխան Դաւիթ-բէգը: Այս քաջ Հայկազնը ճարտար շարժմունքներով ստիպեց Սարը-Մուստաֆային այն պաշարումը հեռացնել Հալիձօրէն, և սպա ճակատամարտ յարդարեց լայնանիստ դաշտի մէջ, և չարաչար ջարդելով յաղթեց Սարը-Մուստաֆային:

Երբ-որ Դաւիթ-բէգը վախճանեցաւ՝ նորա տեղը սկսաւ կառավարել Մխիթար քաջ զօրապետը, որ մինչև 1729 թիւը պահեց Ղարաբաղի ազատութիւնը. այլ երբ-որ նա զընտց դաւաճանութեան՝ Սիւնեաց անկախութիւնն-էլ միւս-անգամ ընկաւ թշնամեաց ձեռքը, որ անքուն հսկում էին նորա բարօրութիւնը խանգարել: Բայց Պարսից աշխարհի տասնամեայ տկարութիւնն-էլ տկար Հիւսէին-Սուլթանի և Թահմազ-Շահի հետ միասին դնաց, և 1732 ին նստաւ Պարսկաստանի գահումը Թահմազ-Ղուլի-խան-Նադիր-Շահը, որ երկու անգամ Օսմանցոց բանակները խորտակեց՝ Էջմիածնի և Ղարսի մօտ, և տիրապետեց Հայաստանի և Վրաստանի երկելի մասներուն: Սա տեսնելով թէ Ղարաբաղի Մելիքները քաջութեամբ պաշտպանում են իրանց երկիրներուն, լաւ համարեցաւ ներանց՝ իրան բարեկամ անել, քան թէ հակառակօրդ, սկսաւ նրանց խնամք ցոյց-տալ, որ նօթա-էլ ընդունեն նորա Շահութիւնը (ընդհանուր Պարսից Խոհարար լինելը), և շնորհեց նրանց իրաւունք՝ որ ամեն մէկ Մելիք իւր երկրի մէջ լինի անկախ անձնիշխան տիրապետող:

Այս Մելիքները մնացին ազատ մինչ-ի 1746 թիւը: Բայց երբ-որ Նադիր-Շահը մեռաւ, Մելիքներուն հակառակօրդ դուրս եկաւ Չիւանշիր ազգի առաջնորդ Փանայ-խանը: Վարանդայի իշխող Մելիք-Շահ-Նազարը

տեսնելով Չրաբերդի իշխանի Մելիք-Աղամի և Գիւլիատանի իշխանի Մելիք-Յովսէփի սերտ բարեկամութիւնը, վախեցաւ նոցամէն, և դաշնակցութիւն արաւ Փանայ-խանի հետ, տուեց նրան ի-կնութիւն իւր դատրերէն մէկը, և Շուշի բերդն-էլ ընծայեց բնակութիւն համար: Այս տեղէն ծագեցաւ մէկ պատերազմ Մելիք-Շահնազարի և Մելիք Աղամի ու Յովսէփի մէջ, որ տևեց տասնութերկու տարի, և տևարացուց երկու կողմն-էլ, և հեշտացուց խորամանկ Պարսից համար Ղարաբաղի նուաճումն:

Մելիք-Աղամ և Մելիք-Յովսէփ չ'զիմանալով Մելիք-Շահ-Նազարի զօրութեան՝ թողին իրանց կալուածները, և իրանց հպատակներով եկան Վրաստան: Փանայ-խանը խկոյն տիրապետեց նոցա թողած երկիրներուն, և կամաց-կամաց նուաճեց միւս Մելիքներուն-էլ: Իսկ Մելիք-Աղամ և Մելիք-Յովսէփ՝ որ եկան Վրաստան՝ խարերայ Վրացիք բնակեցրին նրանց Թիֆլիզէն յիսուն վաթսուն ասպարէզ հետու դէպ-ի հիւսիս-արևմուտք՝ Բօլնիս կոչուած տեղը: Այս Բօլնիսի օդի յոռութիւնը, որ շատ դարեր առաջ այն-տեղ բնակուած Սլաւոններուն պատճառ էր տուել նրան Բօլնիս անուն տալ (Բօլնիցայ, Կիւսմարանոց), զարդարեց այն ամայի դաշտերը լայնատարած գերեզմանատուներով, և հարկադրեց Հայերուն ցանկալ իրանց առողջ Ղարաբաղի երկիրներուն ու լեռներուն. այս պատճառաւ Փանձակայ խանի միջնորդութեամբ հաշտուեցան Փանայ-խանի հետ, դարձան իրանց երկիրը, և հպատակեցան նրան:

Մեծն Պետրոս կայսրը՝ որ 1723 ին տիրապետել էր Դարբանդին, 1724 թուին դեսպանութիւն ստացաւ Պարսից երկրէն, որով Ռուսաստան պիտի սեփականէր Դաղստանը, Շիրուանը, Գիւլանը, Մաղանդարանը և Աստարասպարը. այլ Պետրոս կայսեր 1725 թուին մահը,

և յետոյ Նազիր-Շահի զօրանալը գործերուն տուին նոր ուղղութիւն, այնպէս՝ որ երբ Տաւրիկեան նահանգը ընկաւ Ռուսաց իշխանութեան ներքոյ՝ Մեծն Եկատերինայ կայսրուհին նոր-ի-նորոյ միտքը բերեց Կովկասու միւս երեսի երկիրները, և Քրաֆ Վալէրիան Զուբովը միւսանգամ տիրեց Քարբանդը, Բագուն, Շամախին և ուրիշ Հայաբնակ քաղաքները:

Ջրաբերդի Մելիք-Աղամի որդի Մելիք-Մէջլումը, և Գիւլիստանի Մելիք-Յովսէփի որդի Մելիք-Աբովը, և Բիղակի Մելիք-Աւանը՝ Քանձասարայ Յոհաննէս կաթողիկոսի առջև՝ հաւատարմութեան և հալատակութեան երդումն տուին Ռուսաց կայսերութեան: Փանայտանի որդի Իբրահիմ-խանը բարկանալով՝ կաթողիկոսին մահ նիւթեց, և այն երեք Մելիքներու երկիրները քարուքանդ արեց, հաղարաւոր Հայեր ընկան անգութ Պարսկաց սուրի բերան, հաղարաւորք-էլ բռնադատուեցան իրանց հաւատքէն զրկուիլ, մնացած բնակիչքը հարկադրուեցան թողուլ իրանց տուննուտեղը, և փախչիլ դէպ-ի Քարբանդ, Աստրախան, Ղղար, Շամքոր, Սղնախ, Թիֆլիզ, և շատն-էլ դնացին Օսմանցոց երկիր և բնակուեցան Իզմիր:

Իբրահիմ խանն-էլ չ'կարողացաւ խաղաղութեամբ վայելել այն երկիրը, որ այնքան անպարտ արիւնով լցրել էր: Պարսից Շահութիւնը ընկաւ Ղաջար ցեղէն առաջացած Աղայ-Մահմադ-խանի (Ախապ-խանի) ձեռքը: Ինչպէս որ ուրիշ շատ խաներ, նոյնպէս և Իբրահիմ-խանը և Վրաց արքայն Հերակլ-խանը չ'ընդունեցին նորա թագաւորութիւնը, և Աղայ-Մահմադ-խանը արշաւեց դէպ-ի Ղարաբաղ և Վրաստան՝ որ նուաճէ ազատամբ խաներուն: Աղայ-Մահմադ-խանի առաջնորդ կանդնեցաւ Քանձակայ իշխող Ջաւաթ-խանը: Հերակլ արքայն՝ թէպէտ մարմնով վտիտ էր և նիհար և փոք-

րիկ և սեաւ (Շաւի Բիճոյ), բայց հողուով վեհանձն էր՝
քաջ և մեծագործ, որ իւր երիտասարդական հասա-
կումն շատ քաջագործութիւններ էր արել, մինչ-որ
Աղստ-խանին 1752 թուին յաղթել ու փախցրել էր
Երևանէն մինչ-ի Նախիջևան, այլ այժմ՝ ծեր էր, և իւր
որդիքը չէին մտերիմ և համաձայն: Այս պատճառաւ՝
երբ-որ Աղայ-Մահմադ-խանը 1795 թուին մտայնա-
վրաստանին՝ Հերակի որդիքը կամենալով իրանց կա-
լուածները սպահովել՝ որ Պարսից աստատակաց ար-
շաւանէն վնաս չկրեն, Աղայ-Մահմադ-խանի 200,000
զօրքը քաշեցին դէպ-ի Թիֆլիս, և այն քաղաքը՝ հա-
մարեակ թէ առանց մարտի տուին նորա ձեռքը:

Սեպտ. 12, Սուրբ Խաչի պահոց երկուշաբ.՝ Աղայ-
Մահմադ-խանը անցաւ Կոստան Կարմանջը. 30,000
լէկզի վրաց օգնական զօրքը փախան և կողոպտեցին
քաղաքը: Սեպտ. 13, երեքշաբ.՝ կռիւ ընկաւ. Վրացիք
թողին թագաւորին ու փախան, միմիայն Կալէկայ Պատիկ
որդի Գարրիէլ հրահինապետ Մայիօրն էր մնացել.
Նա-էլ մէկ ուժրագործի արձակեց, և Հերակլ արքային
ժամանակ տուեց անձնապուրծ զերծանելու: Պարսիկք
եկան, Գարրիէլ Մայիօրին կտոր-կտոր արին, և նոյն
օրը Աղայ-Մահմադ-խանը մտաւ Թիֆլիզ և քանդեց
այն մայրաքաղաքը հրով, սրով և դերութեամբ: Մէկ
շաբաթ մնաց Թիֆլիզի մէջ, նորա զօրքը աւար առին
բոլոր քաղաքի ճոխութիւնը, և 12 հազար Հայ, և
4 հազար Վրացի գերի տարան: Շարունակ երկու տարի
Ղարաբաղ մնաց Աղայ-Մահմադ-խանի զօրաց աստա-
տակութեան մտանուած, մինչև որ 1797 թուին Շու-
շուայ բերդումը սրախողխող սպանուեցաւ Շահը:

Ռուսաց նորապսակ Պողոս կայսրը լսելով վրաս-
տանի և Ղարաբաղի այն սպարազգութիւնը՝ հրամայեց
Պատեմկին Գեներալին՝ որ Ղարաբաղը Ռուսաց զօրօք

պահպանէ. նոյն միջոցումը Ռուսաց զօրաց մէկ ուրիշ գումարտակ՝ Վրաստանը գրաւեց: Եւ այսպէս Վրաստանը և Ղարաբաղը ազատուեցան տասնութերորդ դարու վերջին տարիներումը (1798) Պարսից բռնակալութենէն:

Տասնութներորդ դարը՝ որ ծագեցաւ՝ տեսաւ աշխարհի տեսարանումը երկու դիւցազունք, որք էին Ռուսաց Ալէքսանդր 1-դ կայսրը և Ֆրանսայի Նապոլէոն 1-դ կայսրը, որոց ողորումն դարձուցեւ էր բովանդակ աշխարհի ուշադրութիւնը իւր վերայ: Պարսից և Օսմանցոց ինքնակալները տեսնելով այս երկու հսկայից ըմբռամարտութիւնը՝ փոխանակ հեռուից լուռ և եթակնապիշ մտիկ անելու նոցա մենամարտի վրայ, խրքատով էին և յաղթվում: Այսպէս Յիցիանով զօրապետը 1804 թուին առաւ Գանձակը, և Բաղուն, ուր և ինքը գնտակահար մեռաւ: Եւ Կոստեարեմսկի զօրապետը առաւ Լանքարանը, և այս-կերպ Ռուսաց տերութիւնը հարկադրեց Պարսից 1812 թուին հաշտութիւն ինդրել: Այս տարի Նապոլէոնը յաղթուեցաւ, Ալէքսանդր մնաց յաղթական: Սորա հարեանութիւնը Պարսից և Օսմանցոց տերութեան՝ զգուշութեան մեջ էր պահում երկուսին-էլ, և այս պատճառաւ Հայաստան մօտ տասը տարի խաղաղութիւն վայելեց, թէպէտ և Հայերու գլխէն վտանգները պակաս չէին:

Մերքանդր 1-դ աւարտեց իւր կենաց ասպարէսը 1825 թուին Նոյեմբերի 19. և որպէս թէ Պարսից ու Օսմանցոց բազուկներէն հանեց ձեռնակապները: Պարսից Ֆէթ-Ալի-Շահը (Բաբայ-խան Սարդարը), որ Աղայ-Մահմադ-խանի մերձաւոր ազգականն և սուրապետն էր և յաջորդն-էլ դառաւ, Ռուսաց տերութեան հետ 1812 թուին հաստատած իւր դաշնադրութիւնը ուսքի տակ գծելով 1826 թուին առանց պատերազմ հրա-

տարակելու՝ արշաւեց Վրաստանի Ռուսաց սահմանա-
գլուխներու վրայ, և շարժեց իւր դէմ՝ Նիկողայոս Ինք-
նակալ կայսեր զօրութիւնը: Այս վերջին աւերածն
էր՝ որ պիտի Հայաստանի հիւսիսային գաւառները
կրէին Պարսից բարբարոսութենէն: (Վէրս Հայաստանի):

Ղարաբաղցի Հայկազն իշխան Մատաթեան Ռուսաց
զօրապետը առաջին դուրս եկաւ Ռուսաց զօրքով, ընկե-
րութեամբ Հայադունդ ինքնակամ մարտկաց, և Շամ-
քորի և Քանձակայ մօտ երկու անգամ յաղթելով Պար-
սից՝ արտաքսեց Ռուսաստանի սահմաններէն և մղեց
դէպ իրանց երկիր: Հասաւ Մատաթեան Զօրապետի
յետեւէն Աովկասեան բանակը, և Պառքեիչ Սպարա-
պետը մտաւ Հայաստանի Արարատեան երկիրը, որ
Պարսից ձեռին էր այնքան դարուց հետէ: Բենկենդորֆ
զօրապետը յառաջացաւ դէպ-ի Երասխ, և 1827 թը-
ւին Էջմիածինը ազատեց, և Հայերը՝ որ Պարսից աղդէն
զղուած էին՝ Ներսէս արքեպիսկոպոսի համոզանօք՝
Ռուսաց ընդունելութիւն արին ուրախութեամբ, և
ամեն պիտոյքը ջերմեռանդութեամբ լցուցին: Պառ-
քեիչ-էլ մօտեցաւ Երասխին, առաւ Նախիջևանը, սրա-
շարեց Աբրահամապետը (Հին Սասանյան) և Պարսից բա-
նակը՝ որ Աբրահամ-Միրզայ արքայօրդույ զօրախարութեան
ներքոյ էր՝ երրորդ անգամ ջարդեց, և պաշարած Աբ-
րահամապետ բերդը առաւ, և զօրաց դադար տուեց ա-
մառնային ջերմութեան պատճառաւ:

Սեպտեմբերի 19. Սարդարապատ բերդը առին Ռուս-
ները: 24 ին հասաւ Արասովսկի զօրապետը Երևանայ
առջև, և Հոկտեմբերի 1 առաւ այն անառիկ կարծած բեր-
դը, որոյ դռները բացին Հայերը և Սարդարին և ուրիշ
խաներուն բռնեցին: Ասապուրական գաւառէն Երասխ
գետը անցնելով մտան Ռուսք Ատրապատական աշխարհ և
Մարանդին տիրեցին, և Երիւթավ զօրապետը Գալբէթ

մտաւ: Պատքեւիչ իւր զօրքով Որմի և Արտաւիւ գրաւեց,
և ստիպեց Պարսից թագաւորին հաշտութիւն խնդրել
Նիկողայոս կայսեր վեհանձնութենէն, որով Արարատ,
Փայտակարան, Աւտիք, Արցախ, Սիւնիք և Վասսու-
րականի մէկ մասը մնացին Ռուսաց հովանաւորու-
թեան տակ, և Ատրպատականէն 40,000 Հայազգիք
գաղթեցան Երասխի այս կողմը՝ Հայկազն զօրագլուխ
Լազարեան Եղիազարու առաջնորդութեամբ որ Գաւ-
րիժու հրամանատար (Կոմիտաս) էր կարգած:

Ներսէս արքեպիսկոպոսը՝ որ այն ժամանակը ծայրա-
գոյն կառավարիչ էր Հայոց Հոգևորական գործոց՝ տա-
րաւ վշտակիր Նիքեմ կաթողիկոսին և հանգստացուց
իւր Հայրապետական սուրբ Էջմիածնի աթոռումը (ուստի
որ քանի տարի առաջ վտարանդել էր դէս-ի Հաղբառ
Պարսից բռնութիւններու ստիպմամբ), և ինքն գնաց
1828 թուին դէս-ի Բեսարաբիա, ուր-որ Օսմանցոց դէմ
սրտերազմը հրաւիրեց նրան՝ այն կողմերու Հայոց ազ-
գին պաշտպանութեան համար, (և որոյ արգասիքը մի-
այն այն եղաւ, որ 1831 թուին՝ երբ որ Կարբեցի Յով-
հաննէս Սրբազանը կաթողիկոս ընտրուեցաւ, նա-էլ
Եւրոպական Ռուսաստանի Հայոց առաջնորդ մնաց):

Եյս սրտերազմը բոլոր Վերին Հայքը միաւորեց
Ռուսաստանի հովանաւորութեան տակ, և Տայք, և
Գուգարք, և Խաղտիք, և Ափսաղք, և Կողքիս, մին-
չև Ղորոխ և Փասիս գետերը Օսմանցոց իշխանու-
թեան տակէն դուրս եկան, և Ռուսաց Հայաստան
եկան նոյն Հայկազն Լազարեան Զօրապետի ազդեցու-
թեամբ մինչև 90,000 Հայք, որով բաղմամարդոցան
Անդր-Կովկասեան դաւառները մինչև 500,000 Հայազգի
բնակչօք: Եւ Հայկազն իշխան Բարսեղ (Վասիլ) Յով-
սէփեան Բէհրուղեանցը առաջին կողմնակալ կարգուե-
ցաւ Վերին-Հայաստանի:

ՀԱՅԵՐՈՒ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ:

Ա՛ջ թէ միայն Հայաստանն է այժմ երեք բաժին արած երեք ազգի մէջ՝ Ռուսաց, Պարսից և Օսմանցոց, այլև իրանք Հայերը, որ ոմանք իրանց հայրենիքումն են պանդուխտ, և ոմանք օտարութեան մէջ, զանազան աշխարհներումը ցրուած լինելով՝ այլևայլ տէրութիւններու հպատակ են:

Համեմատութեամբ մարդաթիւ բաղմութեան՝ առաջին են Օսմանիւն Հայերը, երկրորդ՝ Ռուսաստանի, երրորդ՝ Պարսկաստանի, չորրորդ՝ Աստուխայի, հինգերորդ՝ Անգլիայի, վեցերորդ՝ Հոլանդիայի, եօթներորդ՝ Վալախիայի և Մոլդաւիայի, և ութերորդ՝ Եւրոպայի:

Օսմանիւն տէրութեան Հայերը, որոց թիւը այժմ համուժ է երեք միլիոն ու կէսի, 3,500,000, տարածուած են այն լայնածաւալ ինքնակալութեան մէջ, որ տիրապետած ունի Եւրոպայի, Ասիայի և Աֆրիկէի Միջերկրական, և Սև ծովերու, Պրուսնտոսի և Արշիպեղադոսի ափանց մօտ ընկած մասերուն, և իրանք խաշնագարման, երկրագործ, արհեստագէտ, և վաճառական ազգ լինելով՝ իրանց բնակութեան համար ընտրել են այն տէրութեան արդիւնաբեր հողերը, սարարտարօտ դաշտավայրները և բաղմամարդ և ծովեղերեաց քաղաքները: Բոլոր Փոքր-Հայաստանը, և Մեծ-Հայաստանի հզօր մասը լինելով այս տէրութեան մէջ՝ Հայերը կաղմում են այն տեղերու

բնակչաց մեծագոյն բազմամարդութիւնը, բայց Կոնստանտինուպօլիս մայրաքաղաքումը այնքան է Հայոց բազմութիւնը, որ կարծեմ թէ ո՛չ Անի և ո՛չ Կաֆայիրանց բարդաւած ժամանակը ունեցել են այնպիսի Հայաժողով: Այս աշխարհագրումար մայրաքաղաքի բնակչաց երրորդ մասէն աւելի են Հայերը, որոց մէջ ահա չորս դարք են՝ որ զարթել է աղղութեան բարի նախանձը, և ցանկութիւն ունին յառաջադիմութեան:

Պատմութիւնը ցոյց է տալիս՝ թէ նոքա ո՛րքան հակառակութիւն են կրել Հռոմէադաւան ժողովուրդէն՝ կրօնական վէճեր ունենալով, և Յունաց աղղէն՝ Երուսաղէմ քաղաքի անօրինական սուրբ տեղեաց համար մաքաւելով, և ուրքան զոհերով են դաւել այն ամենը՝ ինչ որ այժմ ունին ասրահոված: Յիրաւի խիստ դառն էին այն ժամանակներն-էլ, և նոցա յիշատակը այժմ աւելի ախորժ չէ յետնորդաց համար. բայց այն դառնարմատ տունկը այժմ ցոյց է տալիս քաղցրահամ սրտուղ: Հայոց բազմամբօխ ժողովուրդը՝ բնակութիւն ունենալով այնպէս տեղ՝ որ երեք աշխարհի դուռն է, և ժողովարան — հանդիսարան Եւրոպական քաղաքակրթութեան՝ մօտիկէն էին տեսնում այն ճանապարհները՝ որով որ հրահանգները լուսաւորեալ ազգաց մէջ զարգանում էին և հսկայակերպ քայլափոխ էին անում: Այս երկու հանգամանքը հեռաւոր կէտէն սկսան սրատրատել նրանց աղղութեան ոտքի կանգնելը, և դեռ Եւրոպա լու չէր հասկացել՝ թէ ո՛րն է Սահմանադրական կարգերու նախընտիր միջակէտը, որ նոքա արղէն ստացած ունէին աղղի օգտաւէտ շայն և լիղու:

Մենայն ինչ հրապարակաւ վկայում էր՝ թէ Կոնստանտինուպօլիս Հայոց աղղը հասել է այն արժանաւորութեան, որ կարող են ընդունակ համարուիլ Սահմա-

Նադրական վարչութիւն տաճալ, որն-որ մեր ժամա-
նակումը 1860 թուին ստացաւ. որով ո՛չ միայն օտար
դաւանութեանց հետ կազն-ու-կռիւք վերջացաւ, այլև
առաջնորդաց անկողար իշխանութիւնը մտաւ արդիւ-
նարար և ազդօղուտ սահմանի մէջ. և բոլոր ինքնա-
կալութեան սիւլուքը տարածուած Հայերը՝ որպէս մի
մարմին ձուլվեցան, որով սրտանեկաց և սրտանեկու-
հեաց ուսումնարաններու Եւրոպական հրահանգնե-
րով դաստիարակութիւնը ապահովուեցաւ, և կեդեցեաց
արդիւնքը յափշտակութենէն ազատուեցաւ, ժողովուր-
դը՝ զօշարդութենէն փրկուեցաւ: Իղմիր, Վան, Ար-
ղոււմ, Մուշ, Անկիւրիա, Եգիպտոս, Ալէքսանդրիա,
Անտիոք, Երուսաղէմ, և ուր ուրեք կան Հայեր, ամե-
նեքեան Սահմանադրութեամբ մէկ-մէկու հետ միա-
ւորուած ազդութեան ապահովելու երաշխաւոր են.
և ազգային յառաջադիմութեան ձեռնառու: Արնատան-
տինուարիա, Իղմիր և ուրիշ քաղաքներու մէջ լոյս
ընծայած ազգի ազգի լրագիրները յայտնի ցոյց են
տալիս, որ ազգը օր ըստ օրէ յառաջանում է. և օտար
հողւոց ազդեցութիւնը դամբան դամբ սակսում է
Հայոց ժողովրդեան սրտերէն:

Օսմանեանց տէրութեան հովանաւորութեան ներ-
քոյ են և մեր ազատ և ինքնազլուխ Զէյթունցիք, որ
Ռուբենեանց ժամանակի կորցրած անձնիշխանութիւնը՝
Տորոսի լերանց անմատոյց և անքոյթ տեղերումը մինչև
այսօր սրահել և սրահսրանել են: Սոքա մէկ-քանի վեր-
ջին տարիները սրտերազմ ունէին Մարաշու փաշայի
դէմ, որ կամենում էր նոյա ազատութիւնը աղաւա-
ղել. այլ քաջասիրտ Հայկազունք մեծ և ծանր զոհե-
րով՝ իրանց անկախութեան համար դիմացան ամե-
նակերպ նեղութիւններու: Թէպէտ հեռուատ վաղուց
լավում էր՝ թէ կայ Ախիլիկայի սարերումը մէկ Զէյ-

Թուն քաղաք, բայց նորա Եւրոպային յայտնի լինելը պատահեցաւ այս 1860, 61, 62 և 63 թուերումը:

Վիկտոր Լանգլուայ Ֆրանսիացի ճանապարհորդը իւր գեղեցիկ գրչով սերմանեց մէկ ծանօթութիւն անծանօթ Չէյթունի, և ամենածանօթ Եւրոպայի մէջ: Նորա միջնորդութեամբ խմայուեցաւ՝ թէ Չէյթուն (Ունի) քաղաքը կայ հիւսս¹¹, լայն¹¹, 37 և 38 աստի¹¹, և արևմ¹¹ երկայ¹¹, 35 աստ¹¹ մէջ: Ունի տասը գիւղ, որոց մեցը են իսպառ Հայարնակ, իսկ չորսը խառն Թիւրքմէններու հետ: Հայարնակ գիւղերը են. Չէյթուն, Մուղալ, Չէքեր-Քերէ, Եղդինի, Ալարաշ: Այս տասն գիւղերը կազմում են մէկ դաշնակցութիւն, որոց մէջ կան Չէյթունցի Հայերը, և Խողան-օղլու ցեղի Թիւրքմէնները:

Այս դաշնակցութիւնը (ինքնիշխան) ունի իւր մէջ մէկ Հասարակապետական կառավարութիւն, որոց գլխաւոր կառավարիչք են իւրեանց մէջէն ընտրած չորս Էշխանս, որք 1862 թուին, երբ որ Վիկտոր Լանգլուայ էր այն կողմերումը, էին Ենի-Խանսը, Սուրի-Նիսնը, Խոսրով-Խանսը և Բուլի-Խանսը: Սոքա ամեն-մէկը են համանդամայն Չէյթունի ակրութեան չորրորդ մասին կառավարիչք, և իրանց վրայ կրելով Նախարար (Ղաթի) պատուանունը իւրեանց իշխանութեան ներքոյ ունին Տեղաիւլ (Տեղաիւլ) գիւղօրէից կառավարիչ, որոց մէջ վերը յիշած ժամանակը երևելի էր Կարապետ Քեահիան: Սոցա ժողովարանը է Չէյթունի մէջ, ուր որ ունին խորհրդարան, և խորհուրդի ժամանակը իրանց նախագահ են նստեցնում Չէյթունի Առաջնորդին՝ որ քաղաքական կառավարութեան գործերու մէջ չէխառը:

Չէյթունցոց նախնիքը անշուշտ այն Հայերից են, որ Հեթում 2-դի, Լէոն 4-դի և Լէոն 5-դի ժամանակը թողնում էին Յիլիկիա, և ցրվում: Չէյթունի անա-

ոիկ և անմատոյց ամբողջութիւնը ճանաչելով՝ այն Հայ-
 րը որ Արիւիկեցոց վերջին թագաւորներու և Վատին
 իշխաններու, թագաւորազներու և կրօնաւորներու ան-
 Տամութենէն զգուել էին, եկան ասպատակեցան այն
 տեղերը, և Արիւիկիայի վերջին հարուածներէն ազատ
 մնացին. և այն ժամանակը որ Ղուսինեան Ղէոնը Կա-
 պանի բերդումը լոկ իւր թագաւոր անուան համար
 ոգորում էր Նդիպատոցոց դէմ, Չէյթունի Հայերը
 իրանց մէջ Հասարակապետութեան գաղափարներն էին
 յարմարեցնում: Քնաց Ղէոն ճ-դ գերի դէպ-ի Նդիպ-
 տոս, Չէյթունցիք ձայն չհանեցին, Ղէոն ազտութեցաւ
 գերութենէն, Չէյթունցիք ձայն չհանեցին. նրանց հար-
 կաւոր էր այնպիսի կառավարութիւն, որ նոցա ազ-
 գութիւնը և կրօնը ո՛չ մէկ տեղէ վտանգի կասկած
 չունենային, և այս ասպատակութիւնը գտան իրանց
 Հասարակապետական կառավարութեան մէջ:

Քանի՞ անգամ Արիւիկիա ձեռքէ-ձեռք անցաւ, Չէյ-
 թունցիք մնացին ազատ և անկախ: Անհնար է՝ թէ
 Չէյթունցոց մէջ չլինի դրուած նոցա հինգ հարիւր-
 ամեայ կենցաղավարութիւնը, և աներկբայ է՝ որ մէկ
 բարերաստիկ սրտամարան կ'գտնէ այս դանձը անյայ-
 տութեան ազարակի մէջ ծածկած, և կ'հասուցանէ
 համազգեաց: Մի՞ թէ յօժար կ'լինէր Օսմանեանց հզօր
 տէրութիւնը՝ որ Բիւզանտիոնի եղջիւրը փշրեց, թոյլ
 տալ Չէյթունցոց վայելել անկախութիւն. ո՛վ գիտէ՝
 թէ ի՞նչ սրտերազմներ են տեսել այն սարերը. ո՛վ
 գիտէ՝ թէ ի՞նչ քաջութիւններ են արել այն Հայերը.
 որ եթէ չունենային ու չ'անէին այն քաջութիւնը՝
 շատ վաղ սրոյ ճարակ կ'լինէին մատնուած:

Հին անցքերը թողնուենք՝ որ ժամանակը բացայայտէ.
 ահա մեր օրերումը երեք քաջութիւնք յայտնի ցոյց
 տուին՝ թէ Չէյթունի Հայերը արժանաւոր Հայկազուք

են, որքան ազատութեան սիրող, այնքան-էլ ազգութեան և կրօնին մտերիմ: Մէհմէտ-Ալի Եղիարտոսի բռնաւորի որդին և սպարապետը Խրրահիմ-փաշան 1835 թուին անապատելի ջանք դրեց Չէյթունցի Հայերին նուաճել, ու չ'կարողացաւ. մինչև 1840 թիւը ողորկացաւ ամենայն զօրութեամբ, և միայն ցոյց տուեց աշխարհին՝ թէ Հայոց միաբան լինելը՝ կարող է ունենալ սխրալի արդասիք:

Մահմէտական կրօնամոլութիւնը փոթորկի ալէս իւր կատաղութիւնը տարածելով Լիբանանի (Տեղեւ-տաղ) և Ասորիքի (Շամ, Հալեպ) շրջակայքումը՝ խորտակուեցաւ Չէյթունի Տորոսի սարերու վրայ: Որքան արիւնհեղութիւն արին Տաճիկները ուրիշ տեղեր, այնքան արիւնհեղութիւն հատուցին Չէյթունցոց հրացաններու գնտակներուն:

Տաւրիկեան սրատերազմի, այս մեր դարու Տրոյական մարտի վերջանալէն յետոյ, երբ որ Ռուսաստանէն դադլթաժ մահմէտականաց համար ուղեցին Օսմանեանց Տէրութեան մէջ տեղ բանալ, Մարաշու Խուրշիդ փաշան սրատերազմ բացեց Չէյթունցոց դէմ 1859 թուին, որ Չէյթունցոց բնաջինջ անէ, և նոցա երկրումը նորեկ դադլթականներուն բնակեցնէ. այլ Հայերը վերը յիշած իշխանաց՝ Ենիտիւնեանի, Խոսրովեանի, Սուրէնեանի, Բոլիեանի և Կարապետ տեղակալի զօրավարութեամբ անհնարին կոտորած արին թշնամեաց մէջ, և իրանց անկախութիւնը և ազատութիւնը պահեցին:

Դարձեալ նոյն Մարաշի Աղիդ-փաշան 1862. Օգոստոսի սկզբումը Օսմանեան զօրութեամբ և Բաշի Էնիտիւնեան բազմութեամբ յորդան տուեց Չէյթունի վրայ. և միջամուխ եղաւ նոցա լեռնոտիք և Ալարաշ և սուրբ Փրկիչը քանդեց: Բայց Օգոստոսի 14 ին

ճակատամարտի մէջ յաղթուելով Հայկազանց շանթիկներէն՝ Աղիզ-փաշան փոխուստ աճապարեց, և Չէյթունցոց համար՝ ինչպէս որ մէկ ժամանակ Փարսուսն Խարայէլացոց համար՝ աւար թողուց իւր բոլոր բանակը, և իւր զօրաց կողոպտած և հաւաքած ճոխութիւնը, իւր դրօշակները, և իւր՝ Արամազնեայց խիստ հարկաւոր ուժադործիները: Հայերու զինուորութեան և զինուց հոշակը փառաւոր համբաւի թեւերով թռաւ ամեն աշխարհ, և Եւրոսպա ճանաչեց՝ թէ Հայկի և Արամի արիւնը դեռ անշուշտ խոխոջում է նոցա զաւակաց երակներումը. և թէ Հայերը այն աստիճանին արժանի չեն, որ աստիճանի մէջ որ կան իրանց նըլաղած և նուաստական վիճակումը:

Օսմանցոց տէրութեան մէջ Սասունցիք ևս ունին Փոքր-Ստիպումը մէկ անկախ ազատութիւն, բայց նոյնպէս անյայտ են մեղ և Եւրոսպային, ինչպէս որ անյայտ էին և Չէյթունցիք: Ո՛վ գիտէ՝ թէ նոցա մէջ էլ ի՞նչ պատմութիւններ և ի՞նչ աւանդութիւններ կան. ի՞նչ է նոցա սցարան ժամանակ դիմանալու յաջողութիւնը, կամ ի՞նչպէս է նոցա կառավարութիւնը: Ժամանակը իւր ոսկի բանալիով ի-հարկէ կ'բանայ մէկ օր մեր հայրենակցաց առջև այս պատմութեան դռները, և Հայերը կ'իմանան՝ որ Մայր Հայաստանը դեռ պահած ունի իրայ ճոցի մէջ իւր որդոցմէն մէկ քանի հազար հոգիք, որ տակաւին պահում են իրանց նախնեաց ազատութեան հողին:

Օսմանեանց տէրութեան մէջ բնակուած Հայերից յետոյ՝ իրանց բազմութեան թուերու կարգով պիտի երկրորդ համարուին Ռուսաց տէրութեան մէջ բնակուած Հայերը, որոց թիւը եթէ չլինի միլիոն ու կէս, սակայն միլիոնէն շատ աւելի է: Սոցա-էլ հզօր մասը բնակուած է Կովկասի միւս երեսին, Արաստան, Աղու-

անք, Արտնակահանաց մէջ, և Մեծին-Հայտատանի՝ Պոնտոսի և Կասպից ծովերու մէջ ընկած աշխարհներումը, որք են. Արարատ, Արցախ, Սիւնիք, Ռւտիք, Փայտակարան, Վասպուրականի մասն, Գուգարք, Տայք և նոցա սահմանակից Կողքիսի, Սփիսազներու և Լազերու երկրումը:

Այս կողմերու գլխաւոր Հայարնակ քաղաքները՝ են Տփլիս, Երևան, Եուզի, Եամախի, Գանձակ, Բագու, Գարրանդ, և ուրիշ աւաններ և գեղեր. և սրակ ամենեցուն՝ Սուրբ Աթոռն Էջմիածնի, ուր որ ազգի Հայրապետի աթոռանիսան է: Երասխ գետը՝ որ սահմանագլուխ է Ռուսաստանի և Պարսկաստանի մէջ՝ իւր հիւսիսային կողմը լաւ լաւ ծաղկեալ Հայարնակ քաղաքներ ունի, Հին-Նախիջևան՝ Վասպուրական աշարհի փառաց հին վկայն, Արդուպատ, Զուզայ, Ագուլիս, և ուրիշ շատ տեղեր: Արածանի գետը, որ Եփրատի մէկ վտակն է, և Օսմանցոց և Ռուսաց Հայաստանի բաժնի սահմանագլուխ՝ նոյնպէս ունի իւր կշտին շատ Հայարնակ քաղաքներ, որոց մէջ է Ախալցխայ, Ալէքսանդրապոլ նոր քաղաքը, և այլք:

Այս երկիրներու մէջ բնակուած Հայերը ունենալով անընդհատ յարակցութիւն Օսմանցոց Հայերու հետ, իրանց վաճառականութեամբ, իրանց արհեստագիտութեամբ, իրանց լուսաւորութեան հետամտութեամբ շատ յառաջադիմութիւն ցոյց տուին այս վերջին տարը տարին: Թիֆլիզի և միւս քաղաքաց Հայերու դաստիարակութիւնը այժմ ունի իւր վերայ Եւրոպական հրահանգութեան կնիքը. Վրաստանի, Սիւնեաց երկրի, Արցախայ, Տայոց, և Կասպիական գաւառաց Հայերը են սրտակեր պարծանաց Մանուկ Հայաստանի, և նոցա մէջ երեւում է սրբազ Հայոց ազգի բարեբաւտիկ անպառնին: Ինչ որ չեն կարողանում

շահուիլ շողենաւներէն և շողեկառքներէն, և հեռա-
գրական լարերէն, այն կրկնասրտոիկ ստանում են իրանց
անձանձիր նահատակութեամբ յառաջադիմութեան
հանդիսարանումը: Թէ Կոնստանտինուպօլսի, կամ
Չմիւռնիոյ Հայերը Եւրոպայի հետ մերձաւոր հարեան
լինելով կարողացան նոցա ոգւոյն տիրանալ, երկճո-
վեան Աիրճի բնակիչ Հայերը՝ իրանց երկիրը շինեցին
Եւրոպայի մէկ անկիւն, ուր-որ լուսաւորութիւնը ան-
դադար սերմանւում է, արմատանում, բողբոջում, և
սրտղարերում:

Օսմանեանց տէրութեան Հայերուն հարկաւոր էր
սահմանադրութիւն, և ստացան: Օսմանեանց տէրու-
թեան մէջ Հայերը ղինուորական պաշտօն չեն կարող
կրել, և ո՛չ քաղաքական իշխանութեանց հասնել:
Նոցա համար միայն բաց էր երկրագործութիւնը,
արհեստագիտութիւնը և վաճառահաշութիւնը. ցու-
մաքային առուտուրը շատ ժամանակէ հետէ նոցա ձե-
ռին էր. և սեղանաւորութիւնը նոցա սեփական դրա-
ղանք էր: Սահմանադրութիւնը նրանց այն բնձեռեց,
ինչ որ ղլացել էին միւս հանդամանքը: Ռուսաստանի
Հայերու առջև չկայ ոչինչ դուռը փակած, և Անդր-
կովկասեան Հայերը երկրագործութիւնը, խաշնարա-
ծութիւնը, արհեստագիտութիւնը, վաճառականու-
թիւնը իրանց մէջ տարրայնելով, արքունական ամեն
պաշտօններու-էլ ձեռնհաս են, թէ քաղաքական թէ
ղինուորական: Այն կողմերու աստիճանաւորք պաշտօ-
նակալք ըստ մեծի մասին Հայ են, և այս Հայերու մէջ
է ծաղկում Եւրոպական յառաջադիմութիւնը և օր-
ըստ-օրէ սրայծառանում: Սոցա դէպ-ի առաջ շարժելու
համար մեծ լծակ դառաւ Արեւիկեան Գործը:

Աովկասու այս երեսի Հայերը բնակուած են մէկ
քանի երկելի քաղաքներու մէջ: Այս քաղաքներու

որպիսու թիւնը դեռ ևս ստորագրելու չ'սկսած հարկ համարեցանք այս ևս յաւելուլ, որ երբ արեւելեան սլաւերապետը բացուեցաւ, և 1853 թուին Ռուսաց զօրքը միւս անգամ մտան Շիրակ դաւառ, և սլաւարեցին Կարս, Արարատեան երկրի այս կողմերը էլի դառան կռիւների տեսարան, և Կովկասու միւս երեսի Հայերը կրկին ցոյց տուին իրանց քաջութիւնը: Հայկազն զօրավար Վասիլ Յովսէփեան Յէհրուդեանց՝ Քաշ-Կաղիկլեարի ճակատամարտումը հանդիսացաւ փառաւոր յաղթութեամբ: Կարս անուեցաւ արշաւմամբ, բայց յետ տրուեցաւ հաշտութեամբ: Հայոց ազգէն առաջացան շատ զօրասլեաներ և զօրագլուխներ, որ իրանց արիական նահատակութեամբ վկայեղան նախնեաց մեծահամբաւ առարինութեանց:

Հայերը հին ժամանակներէ սկսած Կովկասի այս երեսի քաղաքներու մէջ ունէին բնակութիւն. նոցա զանազան ժամանակ զանազան կերպիւ արտօնութիւններ էին շնորհել Ռուսաց թագաւորք. որոց մէջ Մեծին Պետրոսի կայսեր Օգոստափառ Հայրը Ալէքսէյ Միխայէլովիչը 1667 և 1672: Մեծն Պետրոս թագաւորը և կայսրը 1717 և 1723 և 1724: Եկատերինայ Ա. կայսերուհի 1726: Մեծն Եկատերինայ՝ 1763, 1768, 1779, 1793: Պավել Պետրովիչ կայսրն 1798, 1799 և 1800: Ալէքսանդր Պավլովիչն 1801 և նորա յաջորդներն մինչև մեր օրերն շատ անգամ:

Եյս հրովարտակներով խրախուոված Հայոց բնակութիւնը հաստատուեցաւ ծաղկեցաւ և բազմամարդացաւ առաջ Աստրախան քաղաքումը, ուր որ 1706 թուին Մեծին Պետրոսի հրամանաւ շինուեցաւ Ռուսաստանի մէջ փայտեայ հին եկեղեցւոյ տեղը առաջին Հայոց քարաշէն եկեղեցին Սուրբ Աստուածածնի, որ է այժմ աւագ եկեղեցի. և այն տեղ կաղմուեցաւ Հա-

յոց առաջին Առաջնորդութիւնը, և Հոգևորականաց
վարչութեան համար առաջին Կոնսիստորիայն, և ազ-
գային դաստիարակութեան համար առաջին Հայոց
վարժարանը. որով պատմական աղբիւրներէ երևում է,
որ Ռուսաստանի այժմեան Հայաբնակ քաղաքներու մէջ՝
քան զամեն հինը է Աստրախան. յետոյ՝ Ղզլար, Մոզզով,
Մոսկովայ, Սանկտ-Պետերբուրգ, Սաաբապօլ, Գիոր-
դիեվակ, Ալադիկավկաս, և այլք: Իսկ Նոր-Նախիջևան,
Տաբիկեան նահանգը և Քասարաբիա՝ ստիւում են Նոր
Ռուսաստան. և սոցա Հայաբնակ քաղաքները են. Նոր-
Նախիջևան, Քէֆէ, Ղարաաուբաղար, Օրբաղար, Սիմ-
ֆերապօլ, Եւպատորիա, ՊաՏՃէսէրայ, Սևիաստապօլ,
Կերճ, Մելիտոպօլ, Նողայակ, Օղեսսայ, Քրիզոքորիպօլ,
Քիչնեվ, Հնչևոտ, ՕրՏէյ, Խոթին, Ախքիրման, և ու-
րիշ մանր քաղաքներ:

Սոցա վիճակները զմնազան են՝ համաձայն իւրաքան-
չիւր տեղեաց դրութեան: Աստրախան, Ղզլար և Մոզ-
զով ստացած ունէին առանձնաշնորհութեան պարգևա-
գիր, որով և ունէին առանձին տեսչութեան իրաւունք.
բայց Աստրախանայ Հայերը իրանց համար ծանրու-
թիւն համարելով այս նոր ժամանակներումը փոքր
ինչ թուլացուցին. թէպէտ և Ղզլարցիք և Մոզզովցիք
տակաւին պահում են:

Իսկ Նոր-Նախիջևան քաղաքը, որ Տաբիկեան
նահանգէն դուրս եկած Հայաղգի գաղթականները 1779
թուին շինեցին Գոն գետի հիւօխային ստումը, ու-
նին առանձնաշնորհութեան պարգևագիր, և նորա հո-
վանաւորութեան ներքոյ ունին առանձին դատաստա-
նատուն Մաֆիստաթ անուանեալ, ունին ռեթան և
կօթն հաղար օրավար հող, (իւրաքանչիւր օրավարը
է հաղար վեց հարիւր քառակուսի դրկաչափ). որոյ
վերայ կան հինգ գիւղօրէք. Չալթը, Թոփուսի, Մեծ-

Սալայ, Փոքր-Սալայ և Նիսիսիթայ, և մէկ գեղեցիկ վանք
Սուրբ Խաչի անուամբ: Քաղաքի կառավարութիւնը է
Հայոց ձեռին, և ամենայն դատաստան և իրաւունք
կատարում են Հայոց դատաստանադրով և սովորու-
թեամբ: Ծաղկեալ է սոցա վաճառականութիւնը, երկ-
րագործութիւնը, խաշնադարմանութիւնը և արհես-
տագիտութիւնը: Ունին մէկ մեծակառոյց վարժատուն
Հայոց և Ռուսաց լեզուաց, և մէկ օրիորդաց ազգային
կրթարան: Եւրոպական դաստիարակութիւնը սոցա
մէջ-էլ սկսեց ցուցանել մեծ յառաջադիմութիւն. որ
եթէ Կոնստանտինուպօլսի, Թիֆլիզու և այլ բազմա-
մարդ Հայարնակ քաղաքներու չափ-էլ զարգացած չ'լի-
նի տակաւին, սակայն ապագայի համար ունի շատ
բարօրութեան առհաւատչեացք:

Եյս կարգերու մէջ չեն կարող մանիլ մայրաքաղա-
քաց Սանկո-Պետերբուրգայ և Մոսկովայի Հայերը, որով-
հետև սոցա վաճառականք և արքունի սաշտօնատարք,
և մանաւանդ ուսումնական անձինք և մեծատունք ան-
ընդհատ յարակցութիւն ունենալով տանուտէրական
սաշտօնակալաց և Եւրոպացի կրթեալ ազգաց հետ,
ստացել են այն ամեն դաստիարակութեան արդասիրը,
ինչ որ կարող է տալ Համալսարանական կրթութիւնը՝
ղանաղան ուղղութեամբ:

Ընդհանրապէս Ռուսաստանի Հայերը՝ իրանց դա-
ւակունքը կրթել տալով մայրաքաղաքաց դպրոցներու
և Լոպարիան Ղեմարանի մէջ, կարող են հաւասարիլ Օս-
մանեան տէրութեան Հայերուն՝ հրահանգութեան մէջ
յառաջադիմութեան մասամբ, իսկ վաճառականութեամբ
և ճոխութեամբ՝ քան զնոսա շատ աւելի են՝ համե-
մատարար, և իւրեանց քրտնալատակ հարստութիւնը
ազդի օգտի համար չեն վախենում զոհել վայելուչ և
պատշաճ հանգամանաց մէջ:

Այս չէ կարելի ասել Պարսկաստանի Հայերու
Համար-էլ, որ սկսեալ Երասխի հարաւային երեսէն,
Ստրապատականէն և Պարսկահայոց Հեր-ու-Ջարեանդ
աշխարհներէն՝ ցրիւ են ընկած բոլոր լայնածաւալ տէ-
րութեան մէջ: Նոցա վիճակը չունի ոչինչ քաղցրու-
թիւն. թաղաւորութիւնը մարդասէր սկզբանց չէ հե-
տևում, և Հայազգի ժողովրդեան անդորրութիւնը
չունի ոչինչ արժէք տէրութեան աչքին: Պարսկաստանի
և Հնդկաստանի առաջնորդութիւնը՝ ասի քսան տա-
րին շուտով կ'լրանայ, որ չկարողացաւ լաւ Հովիւի
ձեռքը ընկնիլ. մի միայն նորերումս Ստրապատականի
ժողովրդեան զարթիւն էր, որ կարողացաւ փոքր-ինչ
արբել այս կողմի Հայերու աչքի արտասուքը:

Պարսկաստանումը առաջ շատ էր Հայերու բազմու-
թիւնը, որովհետև շատ անգամ էին Հայերը իրանց
հայրենիքէն դէպ-ի այն երկիր գնացել դերութեամբ,
բայց Պարսից անդթութիւնը պատճառ դառաւ, որ
Հայերը իրանց երեսը դարձուցին դէպ-ի Առաստան,
Հնդկաստան, Եւրոպայի աշխարհները, գնացին Չինու-
մաչին, Ալիւիկէ, և ամեն տեղ ցրուեցան:

Ուէպէտ ասիում է՝ թէ այժմ Պարսկաստանի մէջ
կգտնուին մինչև 300,000 Հայք, բայց մեծ բան է, եթէ
այսքանի կէսը գոնէ գտնուի: Նադիր-Շահէն ետքը
Պարսկաստանի մէջ Հայերը դժուարութեամբ էին յա-
ռաջանում արքունական պաշտօններումը: Փաթ-Ալի-
Շահի դրանք մեր ժամանակներումը ծաղկեցան Մա-
նուշար-խանը, Խոսրով-խանը, Աւան-խանը, Սիւլէյման-
խանը: Կնակոլախ-խանը, Յարութիւն-խանը, Գաւիթ-
խանը. Շահի որդւոց Մահմադ-Ալի-Միրզայի դրանք
Քիրման-Շահի մէջ առաջացաւ Գրումարդ-բէգը: Արքա-
Միրզայի առջև պաշտօն ունեցան մէկ-քանի Հայազ-
գիք: Բայց սոքա օղերևոյթ ասուքներու նման փայ-
լեցան ու շիջան, և հետքերը կորան:

Պարսկաստանի Հայաբնակ քաղաքները են՝ Քավրէժ, Իսպահան, Նոր-Չուղայ, և այլք, ուր-որ թէ եկեղեցիք կան՝ խրթնացած են, թէ հարուստ և ճոխ Հայեր կան՝ միշտ երկխղի մէջ են, թէ վարժարան ունին՝ երկու ոտքով են կաղում: Այն տեղի Հայերը իրանց ունեցած կալուածների պատճառաւ այն օտարութեան հետ կապուել կաշկանդուել են. և Պարսից խորամանկութիւնը նոցա շղթաները չէ թողնում որ թուլանան. և ո՛չ ամեն Հայ կ'յօժարանայ զըկուիլ դարաւոր ժամանակներով ստացած կալուածներէն, և օտարութեան մէջ ստրուել անխուսափելի աղքատութիւն: Եւ ով որ մէկ-անգամ թողել է իւր կալուածները և դուրս է-եկել, միշտ հառաչում-է նոցա համար, և յիշում-է դառնակակիժ աղէկիզութեամբ:

Մէկ-ժամանակ Ահհաստան-էլ կային Հայեր, բայց երբ Ահհաստանը երեք տէրութեան մէջ բաժին-բաժին ելաւ, Հայերը ընկան Աւտարիայի իշխանութեան տակ, ուր-որ մինչև այսօր-ևս կան 20—25,000 Հայեր, որ ցրուած են Մաճառայ երկրումը, և Թրանսիլվանիա: Այս Հայերը այն կողմերը դնացել են ժամանակ-ժամանակ, բայց շատը Անի քաղաքէն են դնացել Քաղքատունեայ թաղաւորութեան վերջանալէն յետ: Առող սոքա եկան Տարիդա (Ղրիմ). յետոյ այս տեղէն գընացին Ահհաստան, ուր-որ նոցա թիւը հասաւ մինչ-ի 40,000 տուն, բայց երբ-որ Նիկոլի շարութիւնը և Նղուի-թաց անօրէնութիւնը նրանց ցրուեց, այնուհետև նոքա փոուեցան Եւրոպայի ուրիշ աշխարհներու մէջ: Իսկ մնացորդ սինլերոր ժողովուրդը ընկան Աւտարիայի տակ, ուր-որ համարեա-թէ կորցրին իրանց աղգութիւնը, լեզուն, և կրօնը, և իրանք-էլ՝ եթէ Աննայումը չ'լինէր Աբրայեանց Հայազգի կրօնաւորաց միաբանութիւնը, նոցա դարոցը և գրականութիւնը, ճրագով ստրուելու պիտի դառնային:

Անդրիայի Հայերը նորա են, որոնք-որ Հնդկաստան են բնակուած, և մէկ ժամանակ նոցա թիւը կարող էր հասնիլ 10—20,000 հոգու: Սոցա վաճառականութիւնը մեծ էր, և Օստ-Ինդիայի ընկերութեան առուտուրը ըստ մեծի մասին սոցա ձեռքով էր կատարուամ. բայց Անդրիացիք օր-ըստ-օրէ այս վաճառաշահութիւնը Հայերու ձեռքէն առին, և այժմ թէպէտ-և այն աշխարհի երևելի քաղաքներու մէջ Կալիաթայ, Բոմբայի, Մաոբաս, Սինկափոր, և այլն, կան Հայադղի բնակիչք, և մերձակայ կղզիներումը-ևս ցրուած Հայեր, սակայն առաջուան ճոխութիւնը ու յաջողութիւնը չունին. ու որ ունի կալուածներ, նորա արդիւնքներով է ապրում. իսկ մնացորդը մասնաւոր առուտուր են անում, կամ Օստ-Ինդիայի ընկերութեան են ծառայում: Սոցա նախնիքն-էին այն աղգասէրք, որ Նախիջևանայ համար այնքան հրիտակներ էին աւանդում: Սոցա մէջ աղգային դաստիարակութիւնը աւելի ծաղկած է. ունին քանի տեղ դպրոցներ, տպարաններ և լրագիրներ. այն տեղի Հայերու լուսաւորութիւնը պակաս չէ քանզ Պօլսոյ, Իզմիրու, Թիֆլիզու Հայերու լուսաւորութիւնը, և կարելի է թէ մէկ քանի կերպով աւելի-էլ է. բայց աղգը նուազել է, և օր-ըստ-օրէ նուազում է:

Հոլանդայի Հայերը Սումատրայ և Եաւայ (Բաթաւիա) կղզիներու մէջ են: Բայց այս ասելով պիտի չմոռանանք այն Հայերուն-էլ՝ որ այժմ գտնուում են Փարէզ, Լոնդոն, Վէնայ, Մանչեսթր, Չինուամաչին, Ամերիկայ, և շատ տեղեր, ինչպէս որ մէկ ժամանակ-էլ Վէնետիկ, Թրեատ, Լիվորնայ և այլ քաղաքներու մէջ: Սորա միայն առուտուրով չեն սարսափած: Այս քաղաքներու և աշխարհներու մէջ բնակութիւն դիւրացնում է Հայոց համար Եւրոպացոց հրահանգներուն ծանօթանալը: Թէպէտ սորա թուով սակտու են, (հաղիւ 25,000),

բայց աւելի ունին հնար և ձգտումն լուսաւորուելու,
քան զՎալարբիայի և Մոլդաւիայի մէջ բնակուած Հա-
յերը, որ մինչև ինն և տասներորդ դարու առաջին
քառորդը բաց-ի Հայերէն լեզուն մոռանալը՝ ուրիշ յա-
ռաջադիմութիւն չէին արել: Այժմ յուսալի է թէ
նոքա-էլ այլոց նման փոքր-փոքր զարթին:

Այս յոյսը՝ որ մեր մէջ սկսել է շարժիլ, լոկ կե-
ղակարծ ակնկալութեան արդասիք չէ. մեղ այս յուսոյ
համար առիթ և առհաւատչեաց են տալիս Հայկական
ականաւոր դպրոցները, համալսարանները և վարժա-
տուները, որոնք որ Հայոց ազգի համար ապագայ
ժամանակներու գործավարներ են պատրաստում. Ղա-
ղարու վանքի և Վենայի Հայասեռ Կրօնաւորաց Ու-
սումնական Հանդիսարանները, Կոնստանտինուպօլսոյ
ազգային դպրոցները, Իզմիրու, Մոսկովայի ճեմարան-
ները, Թիֆլիզու, Էջմիածնի, Նոր-Նախիջևանայ դըպ-
րատուները, Մուրատեան վարժարանը, Շուշուայ,
Շամախու, Երևանի, Հնդկաստանի ամեն մէկ քաղա-
քաց ուսումնարանները, և այն ուսումնատեղիք, որոնք
որ առանձնաւոր մարդոց անուամբ և ձեռումն են, և
մի առ մի չեն կարող յիշատակուիլ, երաշխաւոր են
ազգի այժմեան յառաջադիմութեան և հանդերձեայ
բարեաց ապահովութեան: Ազգը ինչո՞վ պիտի դառ-
նայ ազգ, եթէ ո՛չ կրթութեամբ և ճոխութեամբ, կամ
լաւ ևս՝ ճոխութեամբ և կրթութեամբ, և այս երկուսն
էլ Հայոց մէջէն պակաս չեն և օր-ըստ-օրէ ծաղկում են
և աճում:

Այս մեր ազգի արդի վիճակի վրայ հարեանցի ակ-
նարկութիւն անելու միջոցը՝ միայն այս հանգամանքի
մէջ համողութեանք, որ մինչև այսօր Հայերու վրայ
որքան բամբասանք եղել անցել են՝ թէ բանաւոր և
թէ գրաւոր, որպէս թէ Հայս անխաբիան ին, ամենն-էլ

սուտ է և զրաւարտութիւն, որ Հայերու այժմեան գը-
 րութիւնը քաջայայտ ցոյց է տալիս. և Հայոց ազգին՝
 ով որ կամենայ՝ թէ հին և թէ նոր սրատմութեամբ
 դատաբններ, առաջ թող այն իւր համար կանոն շինէ,
 որ Հայերուն օտարացեղ տուներէն բաժնէ, և երկրորդ
 նոցա դատախարակութեան չափը ըստ ժամանակի կշռէ,
 և երրորդ նոցա հանգամանքները լաւ զննէ: Այն ժա-
 մանակ սբարդ կ'տեսնէ, որ Հայերը՝ ո՛չ անմիաբան էին
 կամ են, այլ շատ միաբան են եղել միշտ և մինչև
 այսօր-էլ այնքան միաբան են, որքան-որ պէտք է:

Ով որ չի կամենար խարուիլ, ո՛վ-որ չի կամենար օտա-
 րի կամքին ծառայել, ո՛վ որ չի կամենար իւր վաստակը
 ուրիշին ուտեցնել, ո՛վ-որ չի կամենար իւր ազգութիւնը
 կրօնը ուրանալ, և ով-որ իւր իրաւունքը սաշտալանե-
 լու համար զոհ կ'դառնայ կամ բռնութեան կամ խա-
 բէութեան, նրանց անմիաբան անունը չի վայելիր,
 նրանց համար մէկ ուրիշ անուն պիտի գտնել՝ որ
 խելքին և խղճմանքին յարմար լինի:

ՎԵՐՁ:

Եւ զի արդի արդի վիճակի մարդիկ իրարմէ արդի
 արդի վիճակի մարդիկ իրարմէ արդի վիճակի մարդիկ
 արդի վիճակի մարդիկ իրարմէ արդի վիճակի մարդիկ
 արդի վիճակի մարդիկ իրարմէ արդի վիճակի մարդիկ
 արդի վիճակի մարդիկ իրարմէ արդի վիճակի մարդիկ

ՎՐԻՊԱԿՔ:

Երև. Տոչ.

1. 10. Կոնստանտինուպոլսոյ՝ դիտու թեամբ է գրք-
ված. և ուր ուրեք գրված լինի Կոստան-
դինուպոլիս՝ այս գրքումը վրիպակ է: Նոյն-
պէս Կոնստանտինոս պիտի կարդալ այս
տեղ, և ոչ Կոստանդիանոս: Իսկ Հայոց
անուններու մէջ Կոստանդին:

2. 32. Ի ներքերու մէջ պիտի յիշուէին՝ գաղսլէ, որ
մանանայ-էլ է ասլում, (սուրբ Կարապետի հայ-
էս). և մաշկամիրդ, որ ոմանք շագանակ են
թարգմանել, այլ իմ կարծեօք այն մաշկա-
նման խէժն է՝ որ կաթի պէս դուրս է գալիս
բոյսերէ՝ ինչպէս քառչուք, ցամաքեցուցած
շարվում է թելի վրայ, և ասլում է սուրբ
Կարապետի մասանի:

3. 7. Գոտիք. գօտիք:

3. 15. Երցախ, և 4 Սիւնիք, ոմանք ընդհանրապէս
Ղարարաղի տեղ են ընդունում, այդ պատ-
ճառաւ Ուտիք և Փայտակարան անունը զա-
նազան տեղերուն են տալիս. թէպէտ ստոյգը
դեռ կարօտ է հաստատու թեան:

4. 9. Եքուլիս. Ագուլիս. Ա, Է և Լոյս խօսքերուն:

4. 30. Կազովիտ, Կոզովիտ, Կոզոյովիտ:

5. 23. Երրորդ Հայք. Երրորդ Հայք:

7. 18. Գաղիդ. Գաղիկ:

Երեւ. Տող.

7. 19. Ռուբէն, Ռուբեն, Ռուբէնեան, Ռուբենեան :
Խառն են գործ ածուած : Նոյնպէս և Լեոն,
Լեւոն, Լէոն՝ դրված են անխտիր :
10. 25. Սղարկեց, ուղարկեց. տառասխալք կան ս,
ո, բ, ը, ա, տ, ե, է, մէկ մէկու տեղ վը-
րիպակաւ դրած : Ինչպէս որ շատ բառեր-էլ՝
ականջ, անկաջ, վրայ, վերայ, նորանով,
նրանով, նրամով, նորայ, նրայ. քո, քու,
խմանալով անխտիր են գործ ածուած : Շատ
տեղ-էլ՝ բայն ու անուն-բային մէկ-մէկու հետ
համաձայն սրահած չեն, զորօրինակ՝ նորա
զօրքը՝ երեք հարիւրէն աւելի չէր, կամ
աւելի չէին : Արուն, որին, նահապետներին,
նահապետներուն. իւր, իրայ. իւրմէն, իր-
մէն. իւրեան, իւրեանց, իրան, իրանց. բաղ-
մութիւնով, բաղմութենով : Եւ սոցա նը-
ման անհամար վերջաւորութիւններ խառն
են գործ դրված՝ աշխարհաբառի սլարզու-
թեան հպատակելով :
13. 32. Աղքիսացւոց (որ է Չէրսէզ) :
14. 3. Որդւոց : Խառն են գործ-ածուած՝ որդւոց,
որդոց. Հռոմայեցոց, Հռոմայեցւոց. դրուած,
դրված, դրուած, դրված. ընդհանրապէս՝
շատ տեղ ւ թողած է, և ու՝ չ է փոխած :
23. 18. Քարղանէս : Շատ կարելի է որ Քարշամի
անունն են լսել Յոյնք, և նորա ժամանա-
կակից Արամի հետ խառնել և Քարշամի
անունով Արամի անունը Քարղանէս դրել :
25. 22. Արամաղդ . Պարսից արտասանութեամբ
Ահարամաղ-դ :
33. 12. Նարուգոտոնոսոր, Նարուքոդոնոսոր :

Երեւ. Տոչ.

34. 28. Եյս միջոցները... Հայոց տէրութիւնը հասաւ... ծովափներին: Յ երեսի մէջ 7 տողումը գրած է՝ որ Միջագետքը Պարոյրի և Տիգրանի գրաւածն են. իսկ Ասորիք՝ Արշակունեաց: Հասկանալի է, որ Տիգրան այն տեղերը առաւ, բայց չ'տիրապետեց. և ո՛չ նորա յաջորդք սրահեցին. այն տեղերը էլի Փոքր-Ասիայի Յունաց ձեռին էին, որ Պարսիկք կռուով էին տիրապետում, և այս պատճառաւ Պելոպոնէսի պատերազմներն էին դուրս գալիս:

51. 3. Երգարի համար. Արգարի վրայ, կամ Արգարի դէմ:

52. 9. Երբայորդու, արքայորդոց:

56. 13. Պատճառներ-որով. պիտի կարդալ՝ պատճառներով:

71. 14. Կոստանդիանոսը՝ կարդալ պիտի Կոնստանտինոս. և Կոստանդնուպօլիսը՝ Կոնստանտինոպօլիս, և Կոստանդը՝ Կոնստանտ, Յունաց յարմարագրութեամբ, և Բիւզանդիոնը՝ Բիւզանտիոն՝ ամեն տեղ. իսկ Հայոց անուանց մէջ Կոստանդին է գործ-ածած գիտութեամբ:

81. 7. Հասուհին տուած է հարիւր տասը տարի թագաւորութեան: Սխալ է: Երկու Շասուհ են, մէկը Տրդատայ ժամանակակից, որ թագաւորել է Արտաշիր 1-դէն յետ, 240—271: Յետոյ Որմիզդ 1-դ 271—272: Յետոյ Վաամ 1-դ 272—275: Յետոյ Վաամ 2-դ 275—292: Յետոյ Վաամ 3-դ 292: Յետոյ Ներսէս 292—301: Յետոյ Որմիզդ 2-դ 301—309: Վերջապէս

ԵՒՒ. ՏՊՂ.

Շապուհ 2-դ 309—380 : Այս երկու Շապուհները մէկ են արած, և միջոցի այնքան թագաւորները զանց առած՝ մէկ ուրիշ աղբիւրի հիման վրայ՝ վրիպակաւ :

262. 13. Օսմանցոց աշխարքի Հայերու թիւը դրած է երեք-միլիոն-ու-կէս. 3,500,000, ախտի կարգալ երկու-միլիոն-ու-կէս. 2,500,000. մինչև նոցա ստաց թիւը իմացուի : Վերջերումը մէկ-քանի երևելի մարդոց անունները չեն դրած, և մէկ-քանի նշանաւոր անցքեր զանց են-ստած, և մէկ-քանի ականաւոր դարոցներու համար յիշատակքը լռութեան են տուած :

Տաղում ուրեք կան տառախալք, որք.....
ինչպէս վերնագրերու զանազանութիւնը, և այլն :



Հայաստանի Ազգային գրադարան



NL0428350

